

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱՆՍԱՐԱՆ



ՑԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ (1922)

ԹԵՀՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԵՀՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ (1922)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Մ 396

Տպագրվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

Մասնագիտական խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Հայրունի

Լեզվական խմբագիր՝ Աշոտ Մկրյան

Գրախոսներ՝ պ.գ.թ., դոցենտ Վահրամ Պետրոսյան

պ.գ.թ. Ռոբերտ Սուքիասյան

Մարտոյան Թեհմինե

Մ 396 Ցեղասպանության քաղաքականության շարունակությունը
Զմյուռնիայում (1922) / Թ. Մարտոյան.- Եր.: ԵՊՀ հրատ.,
2024.- 304 էջ + 44 էջ ներդիր:

Գրքում ներկայացված են Զմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման, նրանց թաղամասերի հրկիզման պատմական իրողությունները: Քեմալական վարչակարգը, հայերի դեմ գործադրված ցեղասպան քաղաքականության շարունակման ծրագիրը որդեգրելով, քաղաքական ու կրոնական անհանդուրժողականության ծայրահեղ միջոցներ է կիրառել Զմյուռնիայում 1922 թ. սեպտեմբերին: Զմյուռնիայի հայերի ու հույների բնաջնջումը ցեղասպանության քաղաքականության շարունակության համատեքստում ներկայացնելը կարևորվում է Հայոց և Հունաց ցեղասպանությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից. մենագրությունը շարադրվել է միջազգային կոնվենցիաների, մարդու իրավունքների վերաբերյալ հռչակագրերի, հանցավոր պետության ընդունած հրամանների, այդ ժամանակահատվածում Զմյուռնիայում հավատարմագրված դիվանագետների հավաստի և արժեքավոր վկայությունների, ակադեմիկոսների օրագրային գրառումների վերլուծության հիման վրա:

Նախատեսված է ցեղասպանագետների, արևելագետների, պատմաբանների և ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8084-2678-8

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426788>

© ԵՊՀ հրատ., 2024

© Մարտոյան Թ., 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ	5
ԽՈՍՔ ԽՄԲԱԳՐԻ	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
ՄԱՍ ԱՌԱՋԻՆ	
ԶՄՅՈՒՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ	24
Զմյուռնիայի հայ համայնքը 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին.....	24
Զմյուռնիայի հունական համայնքի պատմությունից	37
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ	
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԶՄՅՈՒՆԻԱՅՈՒՆ	41
Մասնակի տեղահանություններ	41
Հայերի և հույների բնաջնջումը Զմյուռնիայում.....	82
Հայկական և հունական թաղամասերի հրկիզումը. իրարամերժ տեսակետներ.....	117
ՄԱՍ ԵՐՐՈՐԴ	
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ	
ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ	137
Զմյուռնիայի հայերի և հույների փրկուղին. «Հերոստրատոսի փա՞ռք», թե՞ այլսփրություն.....	137
Ականատես-վերապրողների տարագրությունը Հունաստան	149
Ողբերգական իրականությունից հավաքական ստեղծագործ կյանք	158
Միջազգային իրավական գնահատականը և պետության պատասխանատվությունը	165

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	175
Հայոց ցեղասպանության պարբերական շարունակման նորագույն դրսևորումներն Արցախում	175
ՀԱՎԵԼՎԱԾ ԱՌԱՋԻՆ	181
ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ	198
ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐՐՈՐԴ.....	214
ՀԱՎԵԼՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ.....	225
SUMMARY	
THE CONTINUATION OF THE GENOCIDAL POLICY IN SMYRNA (1922).....	269
ΠΕΡΙΛΗΨΗ	
Η ΣΥΝΕΧΙΣΗ ΤΗΣ ΓΕΝΟΚΤΟΝΙΚΗΣ ΠΟΛΙΤΙΚΗΣ ΣΤΗΝ ΣΜΥΡΝΗ (1922)	273
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	278
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....	294
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....	300

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Հետազոտությունը հրատարակելու գաղափարը պատկանում է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ԵՊՀ ռեկտոր (2006-2019), ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ (2011-2021), ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն (2008-2022) Արամ Հրաչիկի Սիմոնյանին. նրա նվիրումը, պատրաստակամությունը, հարգալից և քաջալերող վերաբերմունքը հատկապես երիտասարդ հետազոտողների նկատմամբ անգնահատելի են: Զմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման ականատես-վերապրողի շառավիղներից էր Արամ Սիմոնյանը. առանձնակի ոգևորությամբ էր պատմում զմյուռնիացի տատիկի հերոսական պատմությունը:

Խորապես շնորհակալ եմ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, պ.գ.թ., դոցենտ Վահրամ Պետրոսյանին, ԵՊՀ ՀՀԻ ցեղասպանագիտության բաժնի վարիչ, պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Հայրունուն, ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Վարուժան Պողոսյանին, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր Արմեն Մարուքյանին հետազոտական աշխատանքի ընթացքում մասնագիտական և մեթոդական աջակցության ու խորհրդատվության համար:

Երախտապարտ եմ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի՝ Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժնի գիտական աշխատող, պ.գ.թ. Արամ Միրզոյանին:

նին, Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի գիտական աշխատող, ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոս, թյուրքագետ, բ.գ.թ. Էլինա Միրզոյանին, Արտաքին կապերի և լրատվության բաժնի հասարակայնության հետ կապերի պատասխանատու, թյուրքագետ Սերինե Մուրադյանին, պ.գ.թ., դոցենտ Եվգենյա Մանուկյանին՝ խորհրդատվության և ուղղորդման համար:

Թեհմինե Մարտոյան

Պատմական գիտությունների թեկնածու
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի՝
Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և
ուսումնասիրության բաժնի ավագ գիտական աշխատող

ԽՈՍՔ ԽՄԲԱԳՐԻ

Հայոց ցեղասպանության համատեքստում Ջմյուռնիայում կատարված իրողությունների ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն ոչ միայն դրանք ի լույս հանելու, այլև ցեղասպանության՝ որպես մեկ միասնական և համակարգված գործընթացին առնչվող որոշ առանցքային հարցերի պարզաբանման համար:

1915-1916 թթ. Օսմանյան պետությունում հայ ժողովրդի զանգվածային տեղահանության և սպանդի ընթացքում Ջմյուռնիայի հայերը մի շարք մասնակի տեղահանություններից հետո զերծ մնացին համընդհանուր տեղահանությունից, և դա հնարավոր եղավ գերմանական ռազմական առաքելության ղեկավար, օսմանյան 5-րդ բանակի հրամանատար գեներալ Լիման ֆոն Սանդերսի կոշտ միջամտության շնորհիվ, որը, ընդհուպ զենքի գործադրման սպառնալիքով, արգելեց Ջմյուռնիայի հայության տեղահանությունը: Եթե նույնիսկ անտեսվեն ցեղասպանությանը Գերմանիայի մեղսակցության բազմաթիվ այլ փաստարկները, ապա միայն Սանդերսի հարուցած այդ արգելքն արդեն իսկ ի դերն է հանում դեռ ցեղասպանության շրջանում կայսերական Գերմանիայի քարոզած, նաև պատմագրության մեջ հաճախ ի հայտ եկած այն պնդումը, թե Գերմանիան չէր կարող կանխել ցեղասպանությունը:

Ջմյուռնիայի հայերը և հույները, սակայն, ցեղասպանության ենթարկվեցին Աշխարհամարտի ավարտից տարիներ անց, ինչը ծրագրեց և իրագործեց ոչ թե երիտթուրքական, այլ քեմալական վարչակարգը: Ջմյուռնիայում իրագործված ցեղասպանական գործողությունների հանգամանալից լուսա-

բանումը, որն առ այսօր դեռ չէր կատարվել, ունի ոչ միայն գիտական, այլև պատմաքաղաքական կարևոր նշանակություն, քանի որ փաստում է Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալի և նրա վարչակարգի՝ արդու-համիդյան և երիտթուրքական ցեղասպան քաղաքականության որդեգրումն ու շարունակումը:

Թեհմինե Մարտոյանն իր արժեքավոր ուսումնասիրությամբ լրացնում է պատմագիտության մեջ առկա այդ բացը: Նա իր աշխատության մեջ ոչ միայն քննական լուսաբանման է ենթարկում Զմյուռնիայում իրագործված ցեղասպանությունը, այլև բազմակողմանի տեղեկություններ է հաղորդում Զմյուռնիայի հայ և հույն համայնքների, նրանց պատմության, ցեղասպանության նախընթաց շրջանում Զմյուռնիայում կատարված իրողությունների, դրա հետևանքների և վերապրածների ճակատագրի մասին:

Գնահատելի է, որ հեղինակը մեծաքանակ աղբյուրագիտական նյութն ու գրականությունն ամբողջացրել է ականատես-վերապրողների, նաև զանազան հետազոտողների հետ վարած հարցազրույցների արդյունքներով. հանգամանք, որը, պարզաբանումներն առավել ամբողջական և անխոցելի դարձնելով հանդերձ, լրացուցիչ գրավչություն է հաղորդում շարադրանքին:

Աշխատությունը, որի ինչպես հետազոտական, այնպես էլ հավելվածային մասում օգտագործված են դեռևս գիտական շրջանառության մեջ չդրված բազմաթիվ փաստավավերագրական նյութեր, անկասկած, նշանակալի ներդրում է պատմագիտության և ցեղասպանագիտության մեջ:

Աշոտ Հայրունի

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ ՀՀԻ ցեղասպանագիտության բաժնի վարիչ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցեղասպանության քաղաքականության պարբերական և շարունակական բնույթի մեխանիզմները մշակվում և իրագործվում են ոճրագործ պետության հանցավոր վարչակարգի ձեռքով: Թուրք հասարակության մեջ մշտապես վառ է պահվել քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ ատելության զգացումը: Միմյանց հաջորդող իշխանությունները (արդուլիամիդյան, երիտթուրքական, քեմալական) անշեղորեն պահպանել, կազմակերպված փոխանցել և անթաքույց իրագործել են ցեղասպանության պետական քաղաքականությունը:

Ժխտողականությանը զուգընթաց՝ Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքական օրակարգում ցեղասպանության անընդհատությունը՝ իբրև համաթյուրքականության դրսևորում, հարկ է դիտարկել որպես մշտառկա սպառնալիք: Նկատի ունենալով քրիստոնյաների հալածանքների շարունակականության պատմական հիմքերը՝ պետք է մեկընդմիջտ դադարեցնել ոճրագործ պետության ամենաթողությունը և բռնությունների անարգել քաղաքականությունը:

Հայերի դեմ գործադրված ցեղասպան քաղաքականության պարբերական շարունակման ուսումնասիրությունն այժմեական է հատկապես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության կարևորագույն խնդիրների և մարտահրավերների հնարավոր կարգավորման առումով. այս համատեքստում դիտազննել ենք Ձմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման, նրանց թաղամասերի հրկիզման պատմական իրողությունները: Քեմալական վարչակարգը, որդեգրելով երիտթուրքերի

ցեղասպանական ծրագիրը, քաղաքական ու կրոնական անհանդուրժողականության ծայրահեղ միջոցներ է կիրառել Զմյուռնիայում 1922 թ. սեպտեմբերին:

**Հույների ցեղասպանության պատմության
հիմնահարցը հայ պատմագրության մեջ.
գրականության տեսություն¹**

Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Սփյուռքում քիչ են այն հայ պատմաբանները, որ հետազոտել են Առաջին աշխարհամարտի և դրան հաջորդած տարիներին Օսմանյան պետության հակահունական քաղաքականության շարժառիթներն ու հետևանքները: Ուսումնասիրողները հարցին անդրադարձել են կա՛մ Հայոց ցեղասպանության և թուրքական կառավարության հակահայկական քաղաքականության, կա՛մ ժամանակի հույն-թուրքական հարաբերությունների համատեքստում:

20-րդ դարասկզբին Օսմանյան պետության իրագործած ցեղասպանության հետևանքով հայերից զատ բնաջնջվում, բռնի իսլամացվում և տարագրվում են քրիստոնյա այլ ժողովուրդներ (հույներ, ասորիներ). Թրակիայում, Փոքր Ասիայում և Պոնտոսում վերջ է դրվում հունական քաղաքակրթությանը²: Հայ պատմագրության մեջ օսմանահպատակ հույների պատմության նախացեղասպանական և բուն ցեղասպանա-

¹ Տե՛ս Թեհմինե Ռ. Մարտոյան, Հույների ցեղասպանության պատմության հիմնահարցը հայ պատմագրության մեջ, *Ցեղասպանագիտական հանդես* 7 (1), 2019, 116-125:

² Թեոֆանիս Մակիդիս, *Հույների ցեղասպանությունը, Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս*, հեղինակագործված թարգմանությունը՝ Թեհմինե Մարտոյանի (Ալեքսանդրոպոլիս, 2014), 18:

կան ժամանակաշրջաններին որոշակիորեն անդրադարձել են ոլորտի մասնագետներ Մանվել Ջուլայանը³, Ջոն Կիրակոսյանը⁴, Հրաչ Բարթիկյանը⁵, Վահագն Դադրյանը⁶, Ռիչարդ Հովհաննիսյանը⁷, Հովհաննես Ինճիկյանը⁸, Հրաչիկ Սիմոնյանը⁹, Արման Կիրակոսյանը¹⁰, Արսեն Ավագյանը¹¹, Գևորգ

³ Մանվել Ջուլայան, ««Դեվլիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների», *Պատմա-քանասիրական հանդես* 2-3 (1959), 247-256:

⁴ Ջոն Կիրակոսյան, *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.)* (Երևան, Հայաստան, 1978):

⁵ Հրաչ Բարթիկյան, *Հայ-բյուզանդական հետազոտություններ*, հատոր 1 (Երևան, Աճեմյան մատենաշար, 2022): Հմմտ. Նույնի՝ «Ռուսաստանի և Խորհրդային Միության հույները: Վերաբնակեցումներ և տեղահանություններ», *Պատմաքանասիրական հանդես* 2-3 (1999), 397-407: Նույնի՝ «Հունական «Հիդրա» հանրագիտարանը Հայաստանի և հայերի մասին», *Պատմա-քանասիրական հանդես* 2 (1981), 290-299:

⁶ Vahakn Dadrian, “The Determinants of the Armenian Genocide,” *Working paper* GS 02 (Yale Center for International and Area Studies, H. F. Guggenheim Foundation, 1998), 1-32; Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Province-Oxford: Berghahn Books, 1995); Dadrian, *Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict* (New Brunswick: Transaction Publishers, 1999).

⁷ Ռիչարդ Հովհաննիսյան, *Հայաստանի Հանրապետություն*, հատոր 1 (Երևան, ՀՀ ԳԱԱ, 2005), “Armenian Pontus, The Trebizond-Black Sea Communities,” ed. by Richard G. Hovannisian (California: Mazda Publishers, 2009); Hovannisian, *Armenia on the Road to Independence, 1918* (Los Angeles: University of California Press, 1967):

⁸ Հովհաննես Ինճիկյան, *Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ* (Երևան, Հայաստան, 1984), Оганнес Инджикян, *Буржуазия Османской империи* (Երևան: АН Арм. ССР, 1977):

⁹ Հրաչիկ Սիմոնյան, *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը* (Երևան, Հայաստան, 1986):

¹⁰ Արման Կիրակոսյան, *Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ.-1914 թ.)* (Երևան, Գիտություն, 1999):

¹¹ Арсен Авакян, *Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений* (Երևան: Гитутюн, 1999); Авакян, *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)*, отв. ред. Г. Аветисян (Երևան: Гитутюн, 2001).

Քիլիմյանը¹², Արտեմ Ուլունյանը¹³ և այլք: Պատմաբան Գևորգ Քիլիմյանի հետազոտությունները նվիրված են Բալկանյան պատերազմներից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբն ընկած ժամանակահատվածում հույն-թուրքական հարաբերությունների և հույների առաջին բռնի տեղահանությունների քննարկմանը: Պատմաբան Գևորգ Վարդանյանի «Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923)» մենագրությունը 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Օսմանյան պետության մեջ հույների դրությունը, բնակության շրջանները, թուրքական իշխանությունների՝ հույն ժողովրդի բռնի տեղահանությունների և կոտորածների հետևողական քաղաքականությունը համապարփակ ներկայացնելու առաջին փորձն է հայ պատմագրության մեջ¹⁴:

Հայոց ցեղասպանության քաղաքականության շարունակություն

Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության պարբերական շարունակման թեզին իրենց հետազոտություններում անդրադարձել են Վահագն Դադրյանը, Ռի-

¹² Գևորգ Քիլիմյան, *Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թթ.* (Երևան, Երևանի համալսարան, 1988), Քիլիմյան, «Երիտթուրքերի ազգային քաղաքականության հարցի շուրջը», *Լրաբեր հասարակական գիտությունների* 8 (1970), 11-16, Քիլիմյան, «Թուրք-հունական հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913-1914)», *Լրաբեր հասարակական գիտությունների* 10 (1976), 32-41:

¹³ Артем Улунян, *Политическая история современной Греции (конец XVIII в. – 90-е гг. XX в.)* (Москва: ИВИ РАН, 1998), 233.

¹⁴ Գևորգ Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը, 1914-1923 թթ.* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012):

չարդ Հովհաննիսյանը, Բենի Մորիսը, Դրոր Ջեկին, Ռոնալդ Սյունին և այլք¹⁵:

Թուրքական ժխտողական պատմագրությունն առաջ է քաշում թեզեր, թե իբր քրիստոնյա փոքրամասնությունները, հատկապես հայերը, ապակայունացրել են Օսմանյան պետությունը, հետագայում՝ նաև Թուրքիայի Հանրապետությունը, իրենց գործողություններով *նպաստել երկրի մասնալուծմանը*¹⁶՝ փաստորեն առաջացնելով իբրև թե ցեղասպանությունը շարունակելու անհրաժեշտություն: Հետաքրքիր է՝ այդ դեպքում ինչպե՞ս կարող են բացատրել ժխտողաբանները, օրինակ, Օսմանյան պետության սահմաններից դուրս իրագործված ցեղասպանական գործողությունները¹⁷, քեմալականների՝

¹⁵ Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, The Armenian Genocide in Perspective*, ed. Richard G. Hovannisian (New Brunswick, New Jersey: Transaction Books, Rutgers University, 1986); *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992); Benny Morris & Dror Ze'evi, *The Thirty-Year Genocide: Turkey's Destruction of its Christian Minorities, 1894-1924* (Cambridge, Massachusetts and London, England: Harvard University Press, 2019), Ronald Grigor Suny, *"They Can Live in the Desert but Nowhere Else," A History of the Armenian Genocide* (New Jersey: Princeton University Press, 2015), Ռոնալդ Գրիգոր Սյունի, *Հայոց ցեղասպանության պատմություն*, «*նրանք կարող են ապրել միայն անապատում*», թարգմ.՝ Մարիա Սաղոյան, թարգմ. խմբ. և վերիֆիկատ՝ Սևակ Ղազարյան, թարգմ. գիտ. խմբ. Թեհմինե Մարտոյան (Երևան, Մագաղաթ, 2022):

¹⁶ Նարինե Հակոբյան, «1894-96 թթ. արևմտահայերի կոտորածներն արևմտյան անգլալեզու պատմագիտական գործերում (1970-ական-2010-ական թթ.)», *Յեղասպանագիտական հանդես* 8 (2), 2020, 106:

¹⁷ Իրանի Խոյ ու Սալմաստ բնակավայրերի հայերի բնաջնջման ընդհանուր գործընթացը կարելի է բնութագրել իբրև կանխամտաձված գործողություն Օսմանյան պետության սահմաններից դուրս: Մանրամասն տե՛ս Թեհմինե Ռ. Մարտոյան, «Օսմանյան պետության սահմաններից դուրս. հայերի բնաջնջումը Իրանի Խոյ ու Սալմաստ քաղաքներում 1914-1915 թթ.», *Յեղասպանագիտական հանդես* 7 (2), 2019, 58-82:

Արևելյան Հայաստանի հայ բնակչության կոտորածը, որն ուղղված էր ոչ միայն ժողովրդի, այլև այն պետության դեմ, որտեղ բնակվում էր այդ ժողովուրդը¹⁸: Ինչպե՞ս կարող են բացատրել 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի՝ *Թուրքիայի աջակցությամբ* Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած լայնածավալ պատերազմը, 2022 թ. դեկտեմբերի 12-ից Արցախի շրջափակման հետևանքով մարդասիրական ճգնաժամի ստեղծումը, 2023 թ. սեպտեմբերի 19-ի ոազմական գործողություններն ու Արցախի հայության հարկադիր տեղահանությունը: Յեղասպանագետների միջազգային ընկերակցության անդամները համոզված նշել են, որ Թուրքիայի անմիջական ներգրավվածությունը տասնամյակներ տևած հակամարտությանն այլևս միայն սպառնալիք չէ, որից Արցախի, Հայաստանի և Թուրքիայի հայերը պետք է վախենան, այլ փաստ է, որը սպառնում է Արցախում և դրա սահմաններից դուրս *հայերի ֆիզիկական գոյությանը*¹⁹:

Հայոց ցեղասպանությունը շարունակելու ուղղակի սպառնալիք էր նաև Թուրքիայի Հանրապետության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի այն հայտարարությունը, որ Թուրքիան պատրաստվում է «շարունակել իր պապերի առաքելությունը, որն իրագործվել է մեկ դար առաջ Կովկասում»²⁰:

¹⁸ Ռուբեն Սաֆրաստյան, *Օսմանյան կայսրություն. Յեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)* (Երևան, Լուսակն, 2009), 190-191:

¹⁹ Յեղասպանագետների միջազգային ընկերակցության հայտարարության տեքստը՝ Արցախի նկատմամբ Ադրբեջանի և Թուրքիայի՝ անխուսափելի ցեղասպանության սպառնալիքի վերաբերյալ ամբողջությամբ տե՛ս <http://www.genocide-museum.am/arm/23.10.2020.php>, դիտվել է՝ 08.06.2023:

²⁰ Թուրքիան պաշտոնապես և շարունակաբար ժխտում է Հայոց ցեղասպանության փաստը, միաժամանակ տարբեր պաշտոնյաներ, այդ թվում՝ նախագահը, բազմիցս ակնարկել են, որ Թուրքիան պատրաստ է հնարավորության դեպքում

2019 թ. մարտի 17-ին Իզմիրում «Արդարություն և զարգացում» (թուրք.՝ Adalet ve Kalkinma Partisi) և «Ազգայնական շարժում» (թուրք.՝ Milliyetçi Hareket Partisi) կուսակցությունների առաջին համատեղ նախընտրական հանրահավաքի ժամանակ Էրդողանն իր ելույթում արտասանել է հետևյալ խոսքերը. «[...] Իզմիր, մեր երկրի բոլոր գույները և հարստությունները մեջդ կրող, Իզմիր, սեպտեմբերի 9-ին Ղազի Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի²¹ գործի միջոցով դարձյալ ազատությանդ հասած, գյավուրին ծովը թափած, դարիբին (անտունին) գիրկդ առած Իզմիր [...]»²²:

2022 թ. սեպտեմբերի 3-ին Սամսունում «Սևծովյան տեխնոֆեստ 2022»-ի շրջանակում Էրդողանը նշել է, որ Ալեքսանդրուպոլսում տեղակայված ամերիկյան բազան և «Ս-300»-ները սպառնալիք են իրենց համար՝ հավելելով. «Հե՛յ Հունաստան, նայի՛ր, պատմությանը նայիր, հետ գնա

նորից իրականացնելու հայերին «դաս տալու» ծրագիրը, և որ 1915 թ. հայերի «տեղահանությունը» ժամանակի ամենաողջամիտ որոշումն էր: «Հայ» բառը Թուրքիայում սովորաբար գործածվում է որպես անեծք, իսկ «սրի ավելցուկ»-ը մեկ այլ ստորացուցիչ արտահայտություն է թուրքերենում՝ ցեղասպանությունը վերապրածներին բնորոշելու համար, որն Էրդողանը հրապարակավ գործածել է 2020 թ. մայիսին կայացած ճեպագրույցի ժամանակ: Տե՛ս <http://www.genocidemuseum.am/arm/23.10.2020.php>, դիտվել է՝ 08.06.2023:

²¹ *Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրք* (Ալի Ռեզաօղլու Մուսթաֆա), Թուրքիայի Հանրապետության հիմնադիր և առաջին նախագահ (1923-1938): Քեմալի ձեռքում կենտրոնացած էր գործադիր և օրենսդիր իշխանությունը: Նա միաժամանակ հանրապետության ցմահ նախագահն ու իշխող Հանրապետական ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) անփոփոխ ղեկավարն էր: Տե՛ս *Թուրքիայի Հանրապետության պատմություն*: Բուհական դասագիրք, պատասխանատու խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան (Երևան, ՎՄԿ-ՊՐԻՆՏ, 2018), 335-336: Տե՛ս նաև Ռուբեն Սաֆրաստյան, *Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ* (1919-1921 թթ.) (Երևան, Տիր, 2019):

²² Էրդողանի ելույթը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=bFn9zEAOuHY>, դիտվել է՝ 09.06.2023:

պատմության միջոցով, եթե այդպես շարունակեք, ապա դրա համար ծանր կվճարեք, ծանր: Հունաստանին մեկ նախադասություն ունենք ասելու՝ մի՛ մոռացիր Իզմիրը [...]: Կգա ժամանակը, և մենք կանենք այն, ինչ անհրաժեշտ է: Ինչպես ասում ենք՝ մենք կարող ենք հանկարծակի գալ գիշերով»²³:

Էրդողանի նմանօրինակ հոետորաբանությունն ուղղակի սպառնալիք է և հետևաբար արտացոլում է նաև «Իզմիրը» կորցնելու վախը²⁴:

²³ <https://www.aa.com.tr/tr/gundem/cumhurbaskani-erdogan-yunanistana-tek-cumlemiz-var-izmiri-unutma/2675987>, դիտվել է՝ 08.06.2023: 2024 թ. մարտի 10-ին Իզմիրում քաղաքային ընտրություններին ընդառաջ կազմակերպված հանրահավաքի ժամանակ Էրդողանը հայտարարել է. «Թշնամուն ծովը նետելով ոչ միայն Իզմիրի գլխին կուտակված սև ամպերը ցրվեցին, այլև երկրի անկախությանը սպառնացող դավաճանական ձգտումներն ի դերև ելան. Իզմիրի վերքերի բուժմանը քիչ է մնացել՝ քան օր», <http://surl.li/thzvno>, դիտվել է՝ 30.04.2024:

²⁴ Հովհաննես Ավետարանիչը Պատմոս կղզում (Փոքր Ասիա) իր աշակերտ Պրոխորոնի միջոցով հայտնությունները շարադրելիս ողջույն է հղել յոթ եկեղեցու: Զմյուռնիային հղած պատգամում ընթերցում ենք. «Այսպես է ասում Անսկիզբը եւ Անվախճանը, որ մեռաւ եւ կենդանացաւ. տեսայ քո գործերը, նեղութիւնը եւ աղքատութիւնը (իսկ քո աղքատութիւնը հարստութիւն պիտի դառնայ), նաեւ հայիոյութիւնը նրանց, որ իրենք իրենց մասին ասում էին, թէ հրեաներ են, բայց այլ բան չէին, քան Սատանայի ժողովուրդ: Մի՛ երկնչիր այն բանի համար, որ պիտի չարչարուես. ահա բանսարկուն պատրաստ է ձեզնից մի քանիսին բանտ նետելու, որպէսզի փորձուէք եւ տասը օր նեղութիւն կրէք. եղի՛ր հաստարիմ մինչեւ մահ, եւ ես քեզ կեննքի պսակը պիտի տամ: Ով ականջ ունի լսելու, թող լսի, ինչ որ Սուրբ Հոգին ասում է եկեղեցիներին. ով յաղթի, չպիտի վնասուի երկրորդ մահից» (Յայտ. 2:8-11): 20-րդ դարի համատեքստում Զմյուռնիայի եկեղեցու պատգամի մեկնությունը փորձ է նորովի արժևորելու հիշատակված մարգարեությունը. «Այսպես է ասում Անսկիզբը եւ Անվախճանը, որ մեռաւ եւ կենդանացաւ. տեսայ քո գործերը, նեղութիւնը եւ աղքատութիւնը (իսկ քո աղքատութիւնը հարստութիւն պիտի դառնայ), նաեւ հայիոյութիւնը նրանց, որ իրենք իրենց մասին ասում էին, թէ հրեաներ են, բայց այլ բան չէին, քան Սատանայի ժողովուրդ» (Յայտ. 2:8-9): Հիսուս Քրիստոսի այս խոսքերը կարևոր նշանակություն ունեն բուն պատգամի համար. Զմյուռնիան, որ աստվածաշնչյան համատեքստում քիչ է ներկայացվում, յոթ եկեղեցիներից մեկն էր և համարվում էր ամենահավատավորը, թեև չարչարանքի, նեղության ու տառապանքի մեջ էր: Զմյուռնիայի հրեական համայնքը թշնամա-

Թեմայի ուսումնասիրության հարցի շուրջ

Զմյուռնիայի հայերի ու հույների բնաջնջումից և նրանց թաղամասերի հրկիզումից ավելի քան մեկ դար է անցել: Թուրքիայում իշխանության եկած քեմալականների ջարդա-

կան վերաբերմունք ուներ քրիստոնյաների նկատմամբ: Թեև Զմյուռնիան հարուստ քաղաք էր, և բնակչությունն ընդհանուր առմամբ բարեկեցիկ կյանք էր վարում, քրիստոնեական համայնքն աղքատ էր, իսկ եկեղեցին՝ ճնշված: Հայտնի է, որ քրիստոնյաները հանուն հավատքի են զրկվել իրենց արհեստներից: Սակայն Քրիստոս ասում է, որ իրենք աղքատ չեն: Զմյուռնիայի քրիստոնյա համայնքը գիտակցում էր, որ հարուստ է Քրիստոսով: Զմյուռնիայի հրեաները չարախոսում էին իշխանությունների, պատասխանատու անձանց մոտ՝ քրիստոնյաներին որպես վտանգ ներկայացնելով: Չարախոսությունը, որպես կանոն, հետևանք է ունենում: Նրանք Զմյուռնիայի եկեղեցին համարում էին աղանդ և ճնշում էին հավատացյալներին: Ահա թե ինչու են Հայտնության գրքում նրանք անվանվում «սատանայի ժողովուրդ», որ կատարում է նրա հրահանգները:

«Մի՛ երկնջիր այն բանի համար, որ պիտի չարչարուես. ահա բանասարկուն պատրաստ է ձեզնից մի քանիսին բանտ նետելու, որպեսզի փորձուիք եւ տասը օր նեղութիւն կրէք» (Յայտ. 2:10): Կապելով այս վկայությունը ցեղասպանական գործողությունների հետ, նկատենք, որ, ըստ պահպանված տվյալների, հրեաները չարախոսում էին քրիստոնյաներին, զրպարտում, ձեռբակալել տալիս («Փորձվել»-ն այս համատեքստում և՛ հոգևոր, և՛ քաղաքական իմաստ ունի: Տասն օրը խորհրդանշական է. որպես ամբողջացնող թիվ կարելի է նկատի ունենալ Զմյուռնիայի հայերի ու հույների բնաջնջման և նրանց թաղամասերի հրկիզման 100-րդ տարեկիցը):

«Եղի՛ր հաւատարիմ մինչեւ մահ, եւ ես քեզ կեանքի պսակը պիտի տամ: Ով ականջ ունի լսելու, թող լսի, ինչ որ Սուրբ Հոգին ասում է եկեղեցիներին. ով յաղթի, չպիտի վնասուի երկրորդ մահից» (Յայտ. 2:10-11): Հիսուս Քրիստոս Զմյուռնիայի համայնքին հիշեցնում է, որ բանտարկվելու են, սակայն հորդորում է հավատարիմ մնալ: Հիմնական ու կենտրոնական պատգամը հավատարիմ մնալն է. այն վարձատրություն ունի՝ «կենաց պսակ»-ը: Տիրոջ պարգևատրությունը քրիստոնյա համայնքին ակնհայտ է: Քրիստոնյաների ինքնազոհաբերումը վարձատրվելու է:

«Նա, ով ականջ ունի թող լսի»-ն գործնական քայլեր է ազդարարում: Ի՞նչ է սպասվում: Առաջին մահը բոլոր մարդկանց ֆիզիկական մահն է: Սակայն մարդու հոգևոր էությունը չի մահանում: Այն հավիտենական է: Անօրենի հոգին մահից հետո դժոխքում է հայտնվում: Յուրաքանչյուր ոք դատապարտվելու է ըստ իր գործած մեղքերի: Եվ ո՞րն է լինելու երկրորդ մահը: Ըստ մարգարեության խորհրդի՝ ով կհամբերի ու հավատարիմ կլինի մինչև վերջ, երկրորդ մահ չի ունենալու, դրանից չի վնասվելու. փառավորված կյանք է սպասվում նրան:

րար քաղաքականության անհամար անմեղ զոհերը մեծամասամբ ծերեր էին, կանայք և երեխաներ: Զմյուռնիայի ողբերգությունը ծանր տպավորություն է թողել ժամանակակիցների վրա և առ այսօր շարունակում է իր վրա սևեռել բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը, ինչը կարևորվում է հայերի և հույների ցեղասպանությունների պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Թեմային նվիրված գիտական գրականության մեջ հաճախ կիրառվում են «աղետ», «հրդեհ», «կոտորած», «ողջակիզում» բառերը: Հետազոտության նպատակը Զմյուռնիայի հայերի ու հույների բնաջնջումը ցեղասպանության քաղաքականության շարունակության համատեքստում ներկայացնելն է: Ոճրագործության ճշգրիտ գնահատումը հնարավոր է թե՛ միջազգային իրավական համընդհանուր չափորոշիչների և սկզբունքների, թե՛ միջազգային կոնվենցիաների, մարդու իրավունքների վերաբերյալ հոչակագրերի, հանցավոր պետության ընդունած հրամանների և թե՛ այդ ժամանակահատվածում Զմյուռնիայում հավատարմագրված դիվանագետների հավաստի ու արժեքավոր վկայությունների, ականատեսների օրագրային գրառումների վերլուծության հիման վրա: Ուսումնասիրությունն իրականացնելիս առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ա. ներկայացնել Զմյուռնիայի հայ և հույն համայնքների պատմության ուրվագիծը,
- բ. լուսաբանել հայերի ու հույների մասնակի տեղահանությունների, նրանց թաղամասերի հրկիզման դրդապատճառները,
- գ. ականատեսների, վերապրածների վկայությունների հիման վրա ներկայացնել հայերի ու հույների բնաջնջման գործընթացը,

- դ. վերհանել հետևողականորեն իրագործված ցեղասպան քաղաքականության պատճառները,
- ե. պարզաբանել հակասական գնահատականներ ստացած իրողությունները,
- զ. հետազոտել Հունաստան տարագրված վերապրածների պատմությունը,
- է. անդրադառնալ Հայոց ցեղասպանության քաղաքականության շարունակման մերօրյա դրսևորումներին,
- զ. ներկայացնել միջազգային իրավական գնահատականը և պետության պատասխանատվությունը:

Հետազոտվող թեման ուսումնասիրվել է ծագման և զարգացման ամբողջության մեջ՝ հիմնվելով պատմականության սկզբունքի վրա: Համակարգված և արդյունավետ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով պատմագիտական բնույթի մեթոդներից կիրառվել է խնդրահարույց ժամանակագրականը, որը հնարավորություն է տվել գնահատելու զարգացումները, ինչպես նաև կատարելու իրողությունների համեմատական քննություն:

Թեմայի ուսումնասիրությունն ու եզրահանգումները հերքում են այն վարկածը, որ շահարկում է թուրքական ժխտողական պատմագրությունը, թե իբր հայերն ու հույներն են հրկիզել քաղաքը: Փաստորեն, պատասխանատվությունից խուսափելու և արդարանալու նպատակով մերժվում է բնաջնջման վերաբերյալ որևէ դիտավորության, նպատակի կամ ծրագրի գոյություն:

Ուսումնասիրությունն իրականացվել է «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտական

Ֆոնդերի²⁵, Հայաստանի Ազգային արխիվի²⁶, ՀՀ Ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գրադարանի, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գրադարանի, Աթենքի Ազգային գրադարանի, Փոքր Ասիայի ուսումնասիրությունների կենտրոնի (Աթենք), Պոնտոսի հույների թանգարանի (Աթենք), Նոր Զմյուռնիայի ազգային, հոգևոր, պատմամշակութային կենտրոնի (Աթենք) գրադարանների, Կենտրոնական եվրոպական համալսարանի գրադարանի (Բուդապեշտ), Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանի սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, անտիպ և տպագիր հուշագրությունների²⁷, ժամանակի մամուլի տվյալների և գրականության ուսումնասիրության հիման վրա:

Սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող հուշագրություններից են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանի հոր՝ ականատես-վերապրող Միքայել Բարթիկյանի²⁸, մեկ այլ վերապրող Օհանես (Օննիկ) Ղազերյանի²⁹, Մկրտիչ Ավետյանի հուշագրությունները³⁰, հայտնի լեզվաբան, հայագետ և գերմանագետ Դորա Սաքայանի մեծ հոր՝

²⁵ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդեր (այսուհետ՝ ՀՅԹԻ), բաժին 8, ֆ. հ. 263, թղթ. 165; բաժին 8, ֆ. հ. 128, թղթ. 92; բաժին 32, թղթ. 1:

²⁶ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 308, 744, 748:

²⁷ Տիգրանուտի Արթինեան, Հայ մօր յուշեր (Տորոնտո, 2005), Բիզանդ Ճամպագեան, Պարանի կեանքի մը պատմությունը (Լիբանան, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960), Ալիս Թորեան, Մանկութիւնս առանց զարունի (ականատեսի վկայութիւններ Իզմիրի աղէտէն) (Պէյրութ, Ատլաս, 1975):

²⁸ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 263, թղթ. 165:

²⁹ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 128, թղթ. 92:

³⁰ ՀՅԹԻ նախնական ֆոնդ, թ. 231:

բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը³¹: Արժեքավոր են հատկապես Հայաստանի ազգային արխիվում պահվող հայ ազգային պատվիրակության³², Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի տեղեկագրերը³³:

Ձմյուռնիայում հայերի և հույների բնաջնջման, նրանց թաղամասերի հրկիզման ուսումնասիրության համար առավել հարուստ նյութ պարունակող սկզբնաղբյուրների թվին են պատկանում Ձմյուռնիայում հավատարմագրված ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնի աշխատությունները³⁴: Աղբյուրագիտական նշանակության ուսումնասիրություններից հարկ է առանձնացնել Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի³⁵, Լոնդոնի համալսարանի (թագավորական քոլեջ)՝ Ժամանակակից հույների և Բյուզանդիայի պատմության հետազոտող Լիսիմախոս Օեկոնոմոսի և Մերձավոր Արևելքի փախստականների հարցերով գործադիր քարտուղար Էդվարդ Հեյլ Բիերսթադթի աշխատությունները³⁶: Կա-

³¹ Դորա Սաքայան, *Ձմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* (Երևան, Նահապետ, 2005):

³² ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 740, 745, 747:

³³ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748:

³⁴ George Horton, *The Blight of Asia, An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna* (Indianapolis: The Bobbs-Merrill Company, 1926), Horton, *Report on Turkey, USA Consular Documents* (Athens: Journalists' Union of the Athens Daily Newspaper, 1985).

³⁵ Henry Morgenthau, *I was Sent to Athens* (New York, Doubleday: Doran & Company, 1929).

³⁶ Lysimachos Economos, *The Tragedy of the Christian Near East*, Charles Dobson, *The Smyrna Holocaust* (London: The Anglo-Hellenic League, 1923), Lysimachos Economos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom* (London: George Allen and Unwin, 1922), Edward Hale Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem* (N. Y.: R. M. McBride & Company, 1924).

րևոր ներդրում են բանահավաք, ազգագրագետ, ցեղասպանագետ Վերժինե Սվազյանի արժեքավոր ուսումնասիրությունները³⁷: Արծարծվող հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել է Վարդանյանի հետազոտությունը³⁸: Վերոնշյալ աշխատությունների շրջանակում ներկայացված հարցադրումների քննարկման ընթացքում դիտարկվել են նաև հույն պատմաբանների՝ Իոանիս Խասիոտիսի, Թեոֆանիս Մալկիդիսի և այլոց ուսումնասիրություններում արտահայտված տեսակետները³⁹: Ուսումնասիրության ընթացքում կարևորվել են հարցազրույցների վարումը թե՛ ակնանատես-վերապրողների ժառանգների⁴⁰, թե՛ հետազոտողների հետ:

³⁷ Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն, Ականաբես վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2011), Վերժինե Սվազյան, *Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հղիվոյթում* (Երևան, Գիտություն, 2021):

³⁸ Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը*:

³⁹ Իωάννης Χασιώτης, *Οι διωγμοί των Ελλήνων και η γενοκτονία στο Σμύρνη. Μικρασία* (Αθήνα: Κυκλοφορεί, 2006). Θεοφάνης Μαλκίδης, *Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος* (Λευκωσία: Εκδόσεις Αιγαίον, 2010), Τρακάκης, *Η βιομηχανία εν Σμύρνη και εντη ελληνική Μικρασία: Οικονομική μελέτη* (Σμύρνη: Τροχαλία 1920), Χρήστος Σωλομονίδης, *Η Εκκλησία της Σμύρνης* (Αθήνα: 1960), Χρήστος Σωλομονίδης, *Σμύρνης Χρυσόστομος* (Αθήνα, Ειρμός, 1993), *The Genocide of the Ottoman Greeks, Studies on the State-Sponsored Campaign of Extermination of the Christians of Asia Minor (1912-1922) and its Aftermath: History, Law, Memory*: Edited by Tessa Hofmann, Matthias Bjørnlund, Vasileios Meichanetsidis (New York & Athens: Aristide D. Caratzas, 2011):

⁴⁰ Վերժինե Սվազյան, Դորա Սաքայան, Նուբար Բերբերյան, Հարություն Բերբերյան, Սարգիս Զրոխյան-Ճարպիկյան, Նունե Բարթիկյան, Մելիք Մավիսապայան, Սարգիս Ավետյան, Պերճուհի Ավետյան, Հոկտեմբերիկ Ավետիքյան:

Կիրառական նշանակությունը

Հետազոտության հիմնադրույթները կարող են օգտագործվել թեմային առնչվող ուսումնասիրություններում, ինչպես նաև մասնագիտական կիրառական նշանակություն ունենալ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագրի, համալսարանական ընդհանուր և հատուկ դասընթացների համար: Աշխատանքը նպաստում է նաև մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանության, ցեղասպանությունների դատապարտման վերաբերյալ նյութի ամբողջացմանը և ներդրում է ցեղասպանագիտության մեջ⁴¹:

⁴¹ 2022 թ. սեպտեմբերի 14-ից 16-ը տեղի ունեցավ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կազմակերպած «Զմյուռնիան Հայոց և Հունաց ցեղասպանությունների ուղեծիրում. բնաջնջում, հրկիզում և տարագրություն (սեպտեմբեր, 1922 թ.)» խորագրով եռօրյա միջազգային գիտաժողով (համակազմակերպիչներ՝ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Իսախանյան Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Բեյրութի Հայկազյան համալսարան, Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանի Պոնտագիտության ամբիոն): Գիտաժողովին մասնակցում էր ցեղասպանագիտության և հարակից ոլորտների շուրջ 40 մասնագետ Հայաստանից, Հունաստանից, Լիբանանից, Նիդերլանդներից, ԱՄՆ-ից, Կանադայից, Իտալիայից և Չեխիայից: Գիտաժողովը տեղի էր ունենում Հայաստանի համար դժվար ժամանակներում՝ հայադրբեջանական սահմանագոտում Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների պայմաններում: Գիտաժողովի բացման արարողությանը հաջորդեց «Զմյուռնիան Հայոց և Հունաց ցեղասպանությունների ուղեծիրում. բնաջնջում, հրկիզում և տարագրություն (սեպտեմբեր, 1922 թ.)» խորագրով ժամանակավոր ցուցադրության բացումը: Գիտաժողովի աշխատանքների ընթացքում հանդիսավոր ներկայացվեց նաև «Հայոց պատմություն. Զմյուռնիա» խորագրով փոստային բացիկը: Նուբարաշեն ավանում տեղի ունեցավ Նոր Զմյուռնիայի փողոցի անվանակոչման արարողությունը բանախոսների մասնակցությամբ: Նուբարաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Բարդուղիմեոս քնն. Հակոբյանը հոգեհանգստի կարգ կատարեց՝ ի հիշատակ 1922 թ. Զմյուռնիայի հայ և հույն անմեղ նահատակների: Արարողությանը ներկա էին ինչպես Նուբարաշենի վարչական շրջանի ղեկավարի տեղակալ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԶՄՅՈՒՆԻԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

Զմյուռնիայի հայ համայնքը 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին

Զմյուռնիան, որ միջնադարում արժանացել է «Արևելքի աստղ», «Արևելքի փոքր Փարիզ», «Հոնիական ծովի թագուհի» և այլ «տիտղոսների», մեծ հռչակ վայելող քաղաք էր⁴²:

Զմյուռնիայի բնակչությունն ըստ ազգությունների (հույներ, հայեր, հրեաներ, թուրքեր ևն) տեղաբաշխված է եղել առանձին թաղերում: Զմյուռնիայում հայերի բնակության մա-

Աշոտ Ղադյանը և աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գոհարիկ Ոսկանյանը, այնպես էլ՝ Նուբարաշենի ամենատարեց բնակիչները, որոնք Զմյուռնիայի հայ վերապրողների շառավիղներն են՝ Նուբար Բերբերյանը և Սարգիս Ջրտիսյան-Ճարպիկյանը, <http://www.genocidemuseum.am/arm/17.09.22.php>, դիտվել է՝ 29.06.2023:

⁴² Հին հունական ավանդազրույցներում Զմյուռնիան Կիպրոսի թագավոր Կինիրասի և Կենչրիսի դուստրն էր: Նա պարծենում էր, որ ինքն ավելի գեղեցիկ է, քան Աֆրոդիտեն: Երբ հրաժարվում է Աֆրոդիտեին երկրպագելուց, աստվածուհին զայրանում և պատժում է նրան. Զմյուռնիան սիրահարվում է իր իսկ հորը: Անկառավարելի ու անբնական կրքից հրաժարվելու անհաջող փորձերը Զմյուռնիային ստիպում են վերջ դնել սեփական կյանքին: Սակայն արքայադստեր ծեր դայակը փրկում է նրան ու խոստանում օգնել: Դայակը Կինիրասին հայտնում է, որ մի գեղանի օրիորդ սիրահարված է արքային և հանդիպում է խնդրում: Արքան համաձայնում է: Հերթական՝ տասներկուերորդ գիշերը, երբ Կինիրասը մոտեցնում է լամպն իր խորհրդավոր սիրուհուն տեսնելու նպատակով, կաթվածահար է լինում՝ անկողնում սեփական դստերը գտնելով: Հայրը փորձում է սպանել դստերը, սակայն Զմյուռնիայի աղոթքն արժանանում է աստվածների գթասրտությանը, և աղջիկը փոխակերպվում է զմռնենու (*myrrh tree*): Ահա ինչու է սկզբնաղբյուրներում հիշատակվում նաև Միռա անվանումը: Միռայի և Կինիրասի որդին՝ Ադոնիսը, համաձայն ավանդազրույցի, ծնվում է ծառի բնից, Տե՛ս Luke Roman and Monica Roman, *Encyclopedia of Greek and Roman Mythology* (New York, 2010), 11:

սին առաջին հիշատակումները վերաբերում են 1179 թ.: Հայերը սկզբնական շրջանում քաղաքի բարձրադիր վայրում կառուցում են Սուրբ Հովակիմ-Աննայի մատուռը և մի գերեզմանատուն թուրքական թաղամասի մոտ: Հայտնի է, սակայն, որ հայերը թուրք բնակչության անբարյացակամ վերաբերմունքի պատճառով 1500-ականներին տեղափոխվում են մեկ այլ թաղամաս, որը կրում էր Հայնոց անունը⁴³:

Դենիզլիցի⁴⁴ ականատես-վերապրող Մկրտիչ Ավետյանը, անդրադառնալով Ջմյունիայի բազմամշակույթ բնակչության հարաբերակցությանը, հաղորդում է. «Իզմիրի ժողովուրդը չորս ազգերէ բաղկացեալ էր. յոյները մեծամասնութիւն կը կազմէին՝ ներքնապէս թէ արտաքին, տիրող լեզուն յունարէնն էր [...] երկրորդը՝ թուրքերը ներքնապէս, առանց արտաքինը հաշուելու. երրորդը՝ հայերն էին, իսկ չորրորդը՝ հրեաները: Կային փոքր ուրիշ ազգեր եւս [...]: Հակառակ յոյներու մեծամասնութեան, հայերու հսկողութիւնը պետական աջալրջութեան տեղը կը գրաւէր թէ՛ հրապարակային, եւ թէ՛ ազգային

⁴³ Տե՛ս Հ. Յակոբ վ. Քօսեան, *Հայք ի Ջմիւռնիա եւ ի շրջակայս*, հատոր Ա, Ջմիւռնիա եւ Հայք (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1899), Այսա Գրիգորյան, Վաչիկ Բրուտյան, *Ջմյունահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.)* (Երևան, Իրավունք, 2007), Ծատուր Աղայան, *Հայերը՝ Թուրքիայում* (Երևան, Հայաստան, 1994):

⁴⁴ Դենիզլիցի հայերը ներգաղթել են 17-րդ դարում, Իրանից: Նախապես ցրված լինելով քաղաքի տարբեր մասերում՝ ստեղծել են իրենց թաղամասը՝ Վերի և Վարի թաղերով, որոնց կենտրոնում կառուցել են եկեղեցի ու հայկական դպրոց: Ծերերը խոսել են բացառապես հայերեն, իսկ երիտասարդները՝ հայերեն և թուրքերեն: Դենիզլիցի գերեզմանոցի տապանաքարերից մեկի վրա պահպանվել է արձանագրություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Ջմիւռնիացի Խաչատուր որդի Յովհաննու Տէր Խաչատուրեան, ծաղկեալ ձրիք եւ շնորհօք, ի հասակի երեսուն եւ վեց ամաց, աստ ընդ օտար աստեղօք, հանգեաւ ի Քրիստոս ի 29 Յուլիս 1878»: Տե՛ս *Մեր Ջմիւռնիան* (Նիւ Եորք, Ջմիւռնահայ միութիւն, 1961), 181:

հարցերուն մէջ, հայը կ'ուզէր հպարտ ապրիլ իր բնածին ուշի-մութեամբ եւ քաջութեամբ»⁴⁵:

Կիլիկիայի թագավորության անկումից հետո՝ 1380-ականներին, Զմյուռնիայի հայ համայնքը համալրվում է նոր գաղթյալներով⁴⁶: Հայերի երրորդ գաղթը ծովեզրյա և վաճառաշահ քաղաք Զմյուռնիա իրականացել է պարսից շահ Աբաս Ա-ի կառավարման տարիներին (1587-1629): Հայերի հաջորդ խոշոր հոսքը Զմյուռնիա և կից շրջաններ իրականացել է 1730-1740-ականներին վերսկսված թուրք-պարսկական պատերազմների, ապա Նադիր շահի կեղեքումների հետևանքով⁴⁷: 1750-ականներին Արևելյան Հայաստանից Զմյուռնիա են գաղթում հայերի նոր խմբեր, իսկ 1790 թ. բնակավայրը համալրվում է գալաթացի կաթոլիկ հայերով⁴⁸: 1899 թ. Վիեննայում հրատարակված «Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս» մեծարժեք աշխատության մեջ Մխիթարյան միաբանության հայրերից Հակոբ Քոսյանը վկայակոչում է. «Պարսկահայոց դէպ ի Զմիւռնիա գաղթելէն քանի մը տասնեակ տարիներ յետոյ երկրորդ գաղութ մը եւս եղած գտնենք [...]: Զմիւռնիա եկող եւ հաստատուող գաղատացիներուն թիւը կ'անցնի հարիւր ընտանիքը»⁴⁹:

⁴⁵ Մկրտիչ Աւետեան, *Յուշեր. ընտանիքի մը հայապահպանման կեանքի այլազան դժնդակ պայմանները*, ՀՅԹԻ նախնական ֆոնդ, թ. 231: Տե՛ս Թեհմինե Ռ. Մարտոյան, «Զմյուռնիայից Միտիլինի. Մկրտիչ Ավետյանի վերապրման պատմությունը», *Յեղասպանագիտական հանդես* 10 (2), 2022, 90-109:

⁴⁶ Հրաչյա Աճառյան, *Հայ գաղթականության պատմություն* (Երևան, Զանգակ, 2002), 550:

⁴⁷ *Հայ գաղթաշխարհի պատմություն, միջնադարից մինչև 1920 թ.*, հատոր 2 (Երևան, Գիտություն, 2003), 183:

⁴⁸ Աճառյան, *Հայ գաղթականության պատմություն*, 553-554:

⁴⁹ Քոսեան, *Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս*, 320-321:

17-րդ դարից և ավելի վաղ սկսված գաղթերը Սյունիքից ու Արևելյան Հայաստանից Ջմյունիա և կից բնակավայրեր շարունակվել են մինչև 19-րդ դարի սկիզբ, որը բացատրվում է պրոֆեսոր Ալբերտ Խառատյանի⁵⁰ բնորոշմամբ՝ «շարունակաբար կրկնվող գաղթերի սովորությանին տրամաբանությամբ, տեղաշարժերի նպատակակետի սոցիալ-տնտեսական և հանրային ապահովության վերաբերյալ գաղթողների պատկերացումներով և ծանոթությամբ»⁵¹:

Ջմյունիայի տերունի թեմի բնակավայրերի մասին, որոնք Սիմեոն կաթողիկոս Երևանցին հիշատակում է որպես օսմանցիների իշխանության ներքո գտնվող, կարդում ենք նրա «Ջամբռ» աշխատության մեջ. «Ջմիւռին քաղաք, ընդ որով են և սոքա: Գեօզալ-Հիսար, Մանիսայ, Մանաման, Գիրիդ, Սախզըզ, Միտիլու, Այազմայ, Քամար, Բէրդամայ, Դը-

⁵⁰ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի վարիչ, ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի, հայ գաղթօջախների պատմության մասնագետ է: Խառատյանի աշխատությունները վերաբերում են արևմտահայերի լուսավորական շարժմանը XIX դարում, Ազգային սահմանադրությանը, հայ հասարակական-քաղաքական հոսանքներին, արևմտահայ մամուլին (1840–1922), Կոստանդնուպոլսի և Ջմյունիայի համազգային նշանակությանը: «Հասարակական միտքը Ջմյունիայի հայ պարբերական մամուլում (1840–1900)» աշխատության մեջ Խառատյանը ներկայացրել է Ջմյունիայի հայ պարբերական մամուլի և հասարակական կյանքի 60-ամյա պատմությունը, գաղափարական ու մշակութային նշանակությունը ազգային գարթնքի, լուսավորության, ժողովրդավարական մտքի ծավալման գործում:

⁵¹ Ալբերտ Խառատյան, *Ջմյունիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես)* (Երևան, Գիտություն, 2022), 469:

Ջմյունիայի բազմամշակույթ և բազմալեզու համայնքում տարագիր արցախցիների ներգրավման խնդրի մասին տե՛ս Թեմինե Մարտոյան, Աշոտ Մկրյան, «Տարագիր արցախցիները Ջմյունիայում», *Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրապու* 29 (1), 2023, 42-52:

նըխ, Սովմայ, Ղրխաղաճ, Աղասար, Գէօրդաստ, Ատալիայ, Մառմառայ, Ալաշհար, Դուրդուֆ, Բայինտուր, Թիրայ, Օտամիշ, Ենկիբազար, Նազլու, Տենկեզլու, Բերգի, Հօնաս, Ռոտուֆ, Իստիանքօյ, Բօղըռում, Մուլլա, Մալաս, Մանդալիաթ, Ղուշատայ, Սօքա, Քեօշք, Մարտամ, Գեալամբայ, Սօպրուջայ, Բօզդօղան»⁵²:

Զմյուռնիայի հայ գաղթավայրը սերտ փոխառնչություններ է ունեցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ: Զմյուռնիան ներկայացնում էր Էջմիածնի տերունի թեմը: Տեղի հայերն ունեին իրենց հոգևոր Առաջնորդը (եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս): Առաջնորդարանում էր գտնվում նաև դիվանը, որտեղ պահվում էին հաշվետետրեր, արձանագրություններ և այլ կարևոր փաստաթղթեր⁵³:

Եկեղեցաշինությունը հայ գաղթաշխարհի պատմության մեջ հայապահպանության անհրաժեշտ պայման և նախադրյալ է եղել: Սուրբ Թադևոս-Բարդուղիմեոսը, որ հետագայում վերանվանվում է Սուրբ Ստեփանոս⁵⁴, Զմյուռնիայում կա-

⁵² Սիմեոն Երեւանցի, *Ջամբռ* (Վաղարշապատ, տպարան Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 1873), 48:

⁵³ Գրիգորյան, Բրուտյան, *Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուղիվազներ*, 15-16:

⁵⁴ Սուրբ Ստեփանոս եկեղեցու ճարտարապետներն էին Մելքոն Երամյանը, Սիմոն Կեսարացին, Պոլսի Կոնստիկ Մինասը: Եկեղեցին շրջապատված է եղել ընդարձակ այգիներով: Գերեզմանոցի շիրմաքարերի արձանագրությունները վկայել են այն մասին, թե հայերը որտեղից են գաղթել Զմյուռնիա (Ջուլա, Թիֆլիս, Երերուկ, Գանձակ, Գողթն, Շաշիգետ): Հոգևոր առաջնորդների կողքին ամփոփված են եղել պետական գործիչներ, գրողներ (Պողոս Թաքթաքյան, Մելիքսեթ Մուրադյան, Տեր Հովնան Միրզայան Վանանդեցի, Պողոս Չելեքի, Ռուբեն Անդրեաս Փափազյան և այլք): Եկեղեցու առաջին վերանորոգումը կատարվել է 1688 թ. կաթողիկոս Եղիազարի ու հոգևոր առաջնորդ Հովսեփ վարդապետի, իսկ երկրորդը՝ 1743 թ. Ղազար կաթողիկոսի և Ալեքսանդր արքեպիսկոպոսի օրոք: Իր մեծությամբ հայկական երկրորդ եկեղեցին Սուրբ Կիրակոսն էր,

ռուցված եկեղեցիների շարքում առանձնանում է իր ինքնատիպությամբ: Պատմաբան, հասարակական գործիչ, Ֆրանսիայում ապաստանած զմյուռնիաբնակ հայ Պետրոս (Պիեռ) Սիմոնյանը (Հեփես Պիեռ) հաղորդում է հետևյալը. «Յոյները ունեին վեց մեծ եկեղեցի, բայց ասոնց մէջ չկար եկեղեցի մը, որ հաւասարէր տաղանդաւոր ճարտարապետ Մելքոն Երամեանի շինած Սուրբ Ստեփանոս եկեղեցիին, որ իր կառուցուածքով, արտաքին եւ ներքին հոյակապ յօրինուածութեամբը, ճարտարապետական զանազան ոճերու հիանալի արտացոլումով, հայկական արուեստի հրաշալի համադրութիւն մը կը ստեղծէր: Տաճարին այս ուրոյն ոճը երոպացի զբօսաշրջիկներուն զարմանք կ'ազդէր»⁵⁵:

Զմյուռնիայի հայերը վաճառականի բնատուր խելքի և ընդունակության շնորհիվ մեծ համբավ ունեին ոչ միայն Զմյուռնիայում, այլև նրա սահմաններից դուրս. «Վաճառականի նկարագիրն, որ կատարեալ կերպով դրոշմուած է այս ազգին վրայ, անկեղծութեան պակասութիւնն ենթադրելուն կասկած մը թերեւս տայ. սակայն ընդհակառակն՝ մտադրութեան արժանի է, որ ստորին ժողովուրդը բնաւ յանցանքի մը համար դատապարտուած չէ, եւ երբեք արդարութեան ատեանը հայ մը իբր գող կամ մարդասպան պատժած չէ գէթ Զմիւռնիոյ մէջ»⁵⁶:

այնուհետև՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Սուրբ Հարությունը, Սուրբ Խաչը, Սուրբ Կարապետը, Սուրբ Աստվածածինը, Սուրբ Հոգեգալուստը (Սուրբ Երրորդություն), Սուրբ Թագվորը ևն: Տե՛ս Զմյուռնիա (Իզմիր)-Մորթաքիա-Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցին, <http://akunq.net/am/?p=17711>, դիտվել է՝ 24.06.2023:

⁵⁵ Պետրոս Սիմոնեան, *Յուշամարեան, Հայկական Զմիւռնիան*, հրատարակութիւն Զմիւռնիոյ եւ շրջաններու հայրենակցական վերաշինաց միութեան (Փարիզ, Արաքս, 1936), 13-14:

⁵⁶ Քօսեան, *Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս*, 34:

17-րդ դարում Չմյունիան Փոքր Ասիայի, Իրանի և Եվրոպայի միջև ապրանքաշրջանառության կարևոր կենտրոն էր: Հայ վաճառականներն իրենց ապրանքները Փոքր Ասիայից և Իրանից ուղտերի քարավաններով բերում էին Չմյունիա և հուլանդական նավերով փոխադրում Եվրոպա՝ Վենետիկ, Մարսել, Հոլանդիա⁵⁷:

17-19-րդ դդ. Չմյունիայի հայ, հույն և հրեա վաճառականները գերիշխող դիրքեր ունեին Այդընի, Ալաշեհիրի, Մանիսայի, Էգեյանի առափնյա շրջաններում և բավարարում էին ոչ միայն տեղական սպառողի, այլև եվրոպական արտադրության հումքի պահանջարկն այդ վայրերում, խթանում գյուղատնտեսական արտադրության զարգացումն Օսմանյան պետության մեջ⁵⁸: Այս առնչությամբ Քոսյանը հաղորդում է հետևյալը. «Չմիունիոյ հայերն ընդհանրապես վաճառական են. Եւրոպայի հետ ուղղակի յարաբերութեան մէջ մտած են, ի մասնաւորի Մանչեսթերի եւ Լոնտոնի»⁵⁹:

Ավետյանը, անդրադառնալով առևտրում հայերի ներգրավվածությանը, գրում է. «Առետրական շրջանակը հայերուն գրաման տակ կը գտնուէր. երեք մեծ մանիֆաթորայի⁶⁰ մեծ մթերանոց ունեցող հայեր կային, իսկ արհեստաւորները հայ եւ յոյներ էին»⁶¹: Ապա մեկ այլ հատվածում հավելում է. «Իզմիրը առետրական տեսակէտէն երեք լայնածաւալ նահանգներու բաց դուռն էր: Մանիֆաթորայի սպառումը հայ վաճառականներու հսկողութեան ներքեւ կ'ընթանար: Կային

⁵⁷ Աճառյան, *Հայ գաղթականության պատմություն*, 551:

⁵⁸ Նույն տեղում, 196:

⁵⁹ Քոսեան, *Հայք ի Չմիունիա եւ ի շրջակայս*, 33:

⁶⁰ *Մանիֆաթորա*, մանուֆակտուրա:

⁶¹ Աւետեան, *Յուշեր*, 9:

2 հայ վաճառականներու մեծ մթերումներ, նաեւ վերջին արդիականութեամբ շինուած մեծ վաճառատուներ, որոնց մէջ մտնելէ յետոյ ելքը դժուարին կը թուէր մտնողին: Սիվրի Հիսարլեան եւ Ազնաուրեան, Սպարդալեան, Իփլիքճեան, Կոճամանեան եւ Անտոնեան, Պաքըրճեան, Եսայեան, Իպրանուսեան մանիֆաթուրայի մեծ վաճառատուներ էին, որոնց մէջ մարդ կը կորսնցնէր իր ելքի դուռը: Կար վերէն վար մեծ շուկայ մը Արաբեան անունով»⁶²:

Պատահական չէ, որ Զմյուռնիայի մասին ժամանակին ասել են, թէ այն տնտեսապէս շատ ավելի կարևոր է Փոքր Ասիայի համար, քան Նյու Յորքի նավահանգիստը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների⁶³:

Զմյուռնիայի հայերը նաև գիտակրթական, գիտահրատարակչական, մշակութային, արհեստագործական կարևոր գործունեություն են ծավալել: Բազում են այն օրինակները, որոնք վկայում են նրանց հասարակական, կրթական, մտավոր կյանքի զարգացման մասին: Գրեթե բոլոր հայերը տիրապետում էին թուրքերենին, շատերը՝ հունարենին, իսկ վերնախավը հաղորդակցվում էր ֆրանսերենով, իտալերենով, անգլերենով: Տեղի հայ բնակչությունը դարերի ընթացքում ձեռք

⁶² Ավետյանը, ներկայացնելով Զմյուռնիայի հայ վաճառականների գործունեությունը, ընթերցողին է փոխանցում նրանց հետագա ճակատագրի մանրամասները. «Այս մարդիկը Իզմիրի Քեմալի գրաման ժամանակ վաճառատուները հրկիզուելով՝ արքորութեան Իզմիրէն հեռու վայրեր, ուր հողատէրերու մօտ վասն ատուր հացի աշխատեցան եւ ուրիշներ ճամբու շինութեան վրայ քարեր կտորելով փճացան: Սոյն տեղեկութիւնս ինձի յայտնող ուշակեցի Միհրան էֆենտի Եաքուպեանն է, որ մագապուր ազատած է ուշակցի իր թուրք բարեկամի մը միջնորդութեամբ, Աթենք եկած էր մերկ վիճակի մէջ: Ասիկա փոքր միջադէպ մըն է՝ նայած Իզմիրի հայութեան պէկոծ եւ դառն սպառնալիքներու դէմ», Աւետեան, *Յուշեր*, 10:

⁶³ William Linn Westermann, "Who are the Turks?" *Asia*, December, 1922, 989.

էր բերել մշակութային ուրույն դիմագիծ: Հայտնի դպրոցներից Սուրբ Մեսրոպյանի⁶⁴ և Սուրբ Հռիփսիմյանցի⁶⁵ շրջանավարտների զգալի մասը (Ստեփան Ոսկանյան, Գալուստ Կոստանդյան, Գրիգոր Չիլինկիրյան, Մարկոս Աղաբեկյան, Մատթեոս Մամուրյան, Մեսրոպ և Գրիգոր Նուպարյաններ, Մսեր և Գրիգոր Տետեյան եղբայրներ և այլք) հետագայում դառնում են հասարակական, քաղաքական, մշակութային և հոգևոր գործիչներ⁶⁶:

Զմյուռնիան հայ գրատպության խոշոր կենտրոն էր. հայտնի էին Թաթիկյան, Տետեյան, Մամուրյան, Մեսրոպյան դպրոցների տպարանները, որոնց հրատարակությունները մեծապես նպաստել են լուսավորության տարածմանը: Զմյուռնիայում հայկական առաջին տպարանը հիմնադրվում է մանիսացի Ղազարի որդի Մահտեսի Պողոսի և նրա ավագ որդու՝ Հովհաննես Չելեպի (1675), իսկ երկրորդը՝ Մահտեսի Մարկոսի գլխավորությամբ (1759): Հայտնի էր հատկապես Սուրբ Մեսրոպյան տպարանը (1832-1840): Տետեյանների

⁶⁴ Հիմնադրվել է 1779 թ., ուսումնական ծրագիրը մշտապես փոփոխվել և հարմարեցվել է ժամանակի ու միջավայրի պահանջներին, կարևորվել են հայոց պատմությունն ու գրականությունը, հայոց և օտար լեզուները, բնագիտական առարկաները ևն: Առաջինն էր, որ աշխարհաբարը դարձրել է ուսուցման լեզու:

⁶⁵ Հիմնադրվել է 1820 թ., դասավանդվել են հետևյալ առարկաները՝ կրոն, բարոյագիտություն, հայերենի քերականություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, ֆրանսերեն ևն:

⁶⁶ Զմյուռնիայի հայ պարբերական մամուլի, հասարակական մտքի, մտավորականների հայացքների, նրանց հրապարակախոսական ու խմբագրական գործունեության մասին մանրամասն տե՛ս Ալբերտ Խատատյան, *Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900)* (Երևան, Գիտություն, 1995): Տե՛ս նաև Albert Kharatian, “The Armenian Communities of Smyrna and the Aegean Region from the Middle Ages to the Nineteenth-Century Tanzimat,” *Armenian Smyrna/Izmir, The Aegean Communities*, edited by Hovannisian R. (C. Mesa: California, 2012), 55-80.

հռչակավոր տպարանի հիմնադիրը Մեսրոպյան դպրոցի շրջանավարտներից Հարություն Տետեյանն էր (1832-1868): Նա հրատարակել է «Արփի Արարատեան» հանդեսը (1853-1855), ապա 82 անուն գիրք՝ թարգմանություններ, դպրոցական դասագրքեր, հանդեսներ ևն⁶⁷:

1835 թ. Զմյուռնիա ժամանած միսիոներները հիմնում են հայկական չորրորդ տպարանը. նրանց հրատարակած կրոնական տետրակները մեծ մասամբ հայատառ թուրքերենով էին: Ամերիկացի բողոքականների ջանքերով գրական հայերենով լույս է տեսնում «Շտեմարան պիտանի գիտելեաց» ամսագիրը (1839-1842, 1844-1846, 1854): Գիտական, կրոնական բովանդակությամբ այդ պատկերազարդ թերթի գլխավոր թարգմանիչը շուրջ չորս տարի Վաղարշակ-Սարգիս Հովնանյանն է եղել: Զմյուռնիայում ընդմիջումներով հրատարակվել է մինչև 1854 թ., ապա՝ տեղափոխվել Կոստանդնուպոլիս՝ ստանալով «Ավետաբեր» անվանումը⁶⁸:

Ղուկաս Պալտազարյանը 1840 թ.-ից հրատարակում է առաջին աշխարհաբար երկշաբաթաթերթը՝ «Արշալույս Արարատյանը» (1840-1887): Այն իր բովանդակությամբ և բարձրորակ խմբագրությամբ մեծ ընդունելության է արժանանում հայերի շրջանում: Պալտազարյանի մահից հետո (1878) խմբագրի պաշտոնը ստանձնում են նախ Հայրապետ Սավալանյանը, ապա՝ Հարություն Սվաճյանը: 1886 թ. վերջինս բանտարկվում, իսկ թերթի հրատարակությունն արգելվում է⁶⁹:

⁶⁷ Խառատյան, *Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում* (1840-1900), 32-33:

⁶⁸ Աճառյան, *Հայ գաղթականության պատմություն*, 557:

⁶⁹ Նույն տեղում, 557-558:

Զմյուռնիայի «Սյունյաց» անունը կրող հայկական առաջին ընկերությունը (1841-1845, 1879-1880) կարճ ժամանակում ազգային դպրոցներ է հիմնում Այդընում, Բայանդուրում, Մանիսայում և Սենեմենում: 1843 թ. Զմյուռնիայի ուսումնասեր երիտասարդների ջանքերով հիմնվում է «Արագածունյաց» ընկերությունը, որի նպատակը կրթական գործին աջակցելն էր: Համառությունն ու աշխատասիրությունը ճանապարհ են հարթում «Արագածունյաց» անվամբ սեփական տպարանի բացման համար⁷⁰:

Հռիփսիմյանց դպրոցի վերաբացման տարում (1849) հիմնվում է «Մարկոս Աղաբեկյան» մասնավոր վարժարանը, որի հիմնադիրները Մարկոս Աղաբեկյանն ու Մատթեոս Մամուրյանն էին⁷¹:

Արվեստաբան, գրականագետ Գառնիկ Ստեփանյանը նշում է, որ մշակութային նմանօրինակ եռուն կյանքով ապրող մի քաղաք չէր կարող հետ մնալ թատերական տեղաշարժերից⁷²: 1860 թ. Սարգիս-Միրզա Վանանդեցին թատերական խումբ է ստեղծում և հիմնում Զմյուռնիայի հայկական առաջին թատրոնը՝ «Վասպուրականը», որտեղ ելույթներ են ունեցել Զմյուռնիայի եվրոպական օպերետային «Կամարանո» թատրոնը, արտասահմանցի դերասաններ, բեմադրվել են հունա-

⁷⁰ Նույն տեղում, 558:

⁷¹ Աղաբեկյանը հրապուրված է եղել Ժան-ժակ Ռուսոյի, իսկ Մամուրյանը՝ Ջոն Լոկի մանկավարժական սկզբունքներով, որի «Խորհրդածություններ դաստիարակության մասին» մանկավարժական երկից կատարել է աշխարհաբար թարգմանություններ, ապա 1860-1863 թթ. գետեղել Թիֆլիսում Աղաբեկյանի խմբագրությամբ լույս տեսնող «Կոունկ Հայոց աշխարհի» արևելահայ առաջին հանդեսում: Տե՛ս Գրիգորյան, Բրուտյան, *Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր*, 79:

⁷² Գառնիկ Ստեփանյան, *Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության*, հատոր Ա (Երևան, ՀԽՍՀ ԳԱ, 1962), 270:

կան պիեսներ: Հայկական թատրոնը նպաստել է թուրքական թատրոնի սկզբնավորմանը⁷³: Թատրոնի թարգմանված խաղացանկը կազմված է եղել ֆրանսիացի և իտալացի հեղինակների պիեսներից⁷⁴: «Արևելյան թատրոնի» անդրանիկ ներկայացումը ողջունող Միքայել Նալբանդյանը ջերմորեն է արտահայտվել նաև «Վասպուրական» թատրոնի մասին. «Պակաս ուրախություն չզգացինք մենք տեսանելով Ջմյունիո մեջ «Վասպուրական» անձնուրաց ընկերության հայախոս թատրոնը. այստեղ հաջող ենք համարում և դեպի նույն ուղղել մեր առ ի սրտե շնորհակալությունը և ընթացք ու հաջողություն մաղթել յուրյանց չնաշխարհիկ ասպարեզի մեջ»⁷⁵:

«Ազգային սահմանադրությունը» Ջմյունիայում գործել է 1861 թ.-ից, վերստին գործադրվել 1863 թ.: Համաձայն սահմանադրության՝ գաղթօջախն ընտրել է ազգային վարչություն, որն ունեցել է գավառական, երեսփոխանական, կրոնական, քաղաքական, ուսումնական, տնտեսական, դատաստանական ժողովներ և հիվանդանոցի հոգաբարձություն: Երեսփոխանական ժողովը կազմված է եղել 35 անդամից, որոնցից 25-ը՝ Ջմյունիայից⁷⁶: Այն եվրոպական պետությունների դիվանագիտական գործունեության կարևոր կենտրոն էր, որտեղ իրենց գործունեությունն են ծավալել Անգլիայի, Հունաստանի, Ռուսաստանի, Գերմանիայի, Իրանի և այլ պետությունների հավատարմագրված հյուպատոսներն ու դիվա-

⁷³ Հայ գաղթաշխարհի պատմություն, հատոր 2, 214:

⁷⁴ Խառատյան, Հասարակական միտքը Ջմյունիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), 48:

⁷⁵ Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատոր Ա, 271:

⁷⁶ Հայ գաղթաշխարհի պատմություն, հատոր 2, 209:

նագիտական այլ ներկայացուցիչները: 1914 թ. Զմյուռնիայում օտարերկրյա 16 հյուպատոսություն է եղել⁷⁷:

Զմյուռնիան իր բազմազգ ու բազմամշակույթ գոյությամբ մեծապես նպաստել է թե՛ հայերի ու հույների, և թե՛ զմյուռնիաբնակ այլազգիների առաջընթացին: Հայերի թիվը Զմյուռնիայում հաճախակի նվազել և աճել է: 1631-1898 թթ. եվրոպացի ճանապարհորդների հաղորդած և վիճակագրական այլ տեղեկությունների համաձայն՝ Զմյուռնիայում բնակչության ընդհանուր թվաքանակը հետևյալն էր.

<i>Թվական</i>	<i>Ընդհանուր բնակչություն</i>	<i>Հայեր</i>
1631	90 000	8 000
1731	76 000	7 000
1776	102 000	6 000
1812	106 000	10 000
1836	150 000	10 000
1837	130 000	6 000
1840	130 000	5 000
1857	180 000	10 000
1861	123 788	7 000
1868	187 000	12 000
1890	250 000	6 683
1898	340 000	11 000 ⁷⁸

⁷⁷ Юрий Петросян, *Измир* (совм. с А. Р. Юсуповым) (Москва: Наука, 1973), 31.

⁷⁸ Քութան, *Հայր ի Զմյուռնիա եւ ի շրջակայս*, 43:

Զմյուռնիայի հունական համայնքի պատմությունից

Զմյուռնիայի հույն բնակչության պատմական հիշողությունը խարսխվում է վաղնջական ժամանակների առասպելների ու ավանդույթների վրա՝ կապված Հոմերոսի քարանձավների, հունահռոմեական և բյուզանդական դարաշրջանների ճարտարապետական կիսականգուն կոթողների հետ: Հոմերոսի տապանն ու նվիրական հնությունները Զմյուռնիայի հույները համարում էին իրենց դարավոր հարուստ կենսագրության ժառանգությունը⁷⁹: Քաղաքի հունական համայնքն իր զարգացումն ապրել է Հունաստանի և տեղի հարյուրավոր հույների նախաձեռնությունների շնորհիվ: Զմյուռնիայի հույն բնակչությունը նկատելիորեն աճել է 19-րդ դարակզբին⁸⁰:

Հունական համայնքը Զմյուռնիայում ամենահինն է եղել՝ տեղաբաշխված նավահանգստի մերձակա Սուրբ Կատինա թաղամասում: Կրթօջախներից առավել հայտնի էին «Հոմերիոնը» (իգական) և բրիտանական հովանավորության ներքո գործող «Ավետարանականը» (արական), որն ուներ նշանավոր գրադարան՝ ձեռագրերի և արձանագրությունների արժեքավոր հավաքածուով⁸¹:

⁷⁹ Ալբերտ Խառատյան, *Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները*, 71:

⁸⁰ *Ιστορία του Ελληνικού Έθνους* (Αθήνα: Εκδοτική Αθηνών, 1977), Μαλκίδης, Η Γενοκτονία των Ελλήνων, Τρακάκης Γ., *Η βιομηχανία εν Σμύρνη και εν τη ελληνική Μικρασία: Οικονομική μελέτη* (Σμύρνη, 1920), *Οι Έλληνες στη Μικρασία* (Αθήνα, 1997), Θωμοπούλου Α., *Σμύρνη. Ο εξαστισμός μίας μικρασιατικής πόλης στο Σμύρνη* (Αθήνα, 2008).

⁸¹ Νικόλας Παπαδημητρίου, *Η Σμύρνη κάποτε, μέσα από 77 σπάνιες εικόνες*, <https://www.lifo.gr/san-simera/i-smyrni-kapote-mesa-apo-77-spanies-eikones>, դիտվել է՝ 03.11.2022:

Զմյուռնիայի հույները մեծ դերակատարություն են ունեցել նաև տնտեսության, հատկապես ներքին ու արտաքին առևտրի զարգացման մեջ: Նազլիի (Զմյուռնիայի արվարձան) հացահատիկի հունապատկան մեծ ջրաղացները բարձրորակ այլուր են մատակարարել ոչ միայն նահանգին, այլև ամբողջ կայսրությանը: 17-18-րդ դարերում հույն առևտրականները ծավալել են խաղողի տնկարկների և բարձրորակ ծխախոտի վաճառք՝ առաջատար տեղ զբաղեցնելով Արևմուտքի հետ առևտրային հարաբերություններում⁸²:

Համայնքը կարևորել է մշակույթի, կրթության զարգացումը, եկեղեցու դերը: Հունական եկեղեցիների շարքում առանձնացել է Սուրբ Ֆոթինի տաճարը⁸³: Նրա շքեղության մասին ամբողջական պատկերացում է տալիս Քոսյանի հետևյալ հիշատակությունը. «Յունաց Այիա Ֆոթինի եկեղեցին անուանի է, որուն աշտարակը կարծես թե կը տիրէ Զմիւռնիոյ ամենաբարձր շէնքերուն վրայ եւ կը տեսնուի ամէն կողմանէ, որուն գագաթին վրայ կանգնուած շողշողուն խաչին գոյնզգոյն բիրեղաւոր ապակիներն, արեւու ճառագայթներէն լուսաւորուելով, աջ ու ձախ սիրուն ցոլացումներ կը սփռեն, եւ որուն զանգակին հնչիւնը մերձակայ գիւղերեն անգամ՝ կը լսուի»⁸⁴:

Չեխ գրող, ազգագրագետ և թարգմանիչ Յիրի Ստանիսլավ Գութ-Յարկովսկին գրում է, որ թեև Զմյուռնիան քաղաքական իմաստով հունական չէր, սակայն լեզվական առումով

⁸² Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922, the Destruction of a City* (New York: Newmark, 1998), 29-30.

⁸³ Այա Ֆոթինի եկեղեցին վերակառուցվել է Աթենքի Նեա Զմիռնի (Նոր Զմյուռնիա) արվարձանում:

⁸⁴ Քոսեան, *Հայրի Զմիւռնիա եւ ի շրջակայս*, 46:

և վարքուբարքով հունական էր⁸⁵: Բազմազգ, բազմամշակույթ և բազմակրոն Ջմյունիայում «շատ գեղեցիկ ու մաքուր էին հունական և հատկապես հայկական թաղամասերը, որտեղ երեկոյան կանայք և աղջիկները դուրս էին գալիս, հովանալու համար նստում տաղավարներում [...]»⁸⁶:

Ջմյունիան ներկայացվում է իբրև Եվրոպայից Ասիա լայնարձակ մայրուղու ամենամեծ առևտրական կենտրոն իր մեծ ու փոքր սրճարաններով, որտեղ խոսում էին աշխարհի բազում լեզուներով. «Ջմյունիան հազնում էր ֆրանսիական ու ավստրիական կոշիկներ, բուրում էր ֆրանսիական օժանելիքով, բժշկվում գերմանական դեղերով, որսի էր գնում բելգիական հրացաններով ու կրակում անգլիական արճիճով [...]»⁸⁷:

Պրահայի Սվիետոզոր (Աշխարհայացք) չեխական պարբերականի հրապարակումներից մեկում գրված է. «[...] Մինչ թուրք կամ արաբ խանութպանը կամ վաճառողը, իր կրակում ապրանքի կույտով շրջապատված, անտարբեր նստած նարգիլ էր ծխում, հայ կամ հույն վաճառականը պատեհությունը բաց չէր թողնի, որպեսզի անցնող օտարերկրացուն ուղղակիորեն սարդի նման զցեր իր ոստայնը [...]: Իսկ եթե ո՛չ թուրքերեն, ո՛չ հայերեն, ո՛չ հունարեն չէր խոսում, հետո՞ ինչ: Պարոն Պապադոպոլոսը կամ Բաբաջանը տիրապետում էին անգլերենին, ֆրանսերենին, իտալերենին, ռուսերենին, գերմաներենին, իսպաներենին, և Աստված գիտի՝ էլ ինչ լեզվի»⁸⁸:

⁸⁵ Աննա Կ. Կարապետյան, «Ջմյունիան և Մեծ աղետը չեխական աղբյուրներում», *Յեղասպանագիտական հանդես* 11 (1), 2023, 64:

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ Նույն տեղում:

⁸⁸ Նույն տեղում, 66-67:

Հեղինակը հավելում է նաև, որ «առևտրում հաջողելու համար հայը կամ հույնը հաճախորդին նախ սև սուրճ կհրամցնենին, կխոսենին նրա հայրենիքի մասին, հազար ու մի ապրանք կներկայացնենին, անգամ կառաջարկենին գնումը փոստով ուղարկել»⁸⁹:

Հայ-հունական հնագույն, հազարամյա պատմամշակութային փոխառնչությունները նկատելի են իրենց հոգևոր, նյութական մշակույթի, սովորույթների, կենցաղի, ավանդությունների, բարքերի ետնախորքի վրա⁹⁰ և վկայում են Ջմյունիայի հայերի ու հույների խաղաղ և ստեղծագործ համագոյակցության մասին:

Ջմյունիան՝ որպես քաղաքակրթության օրրան, կարևոր դեր է խաղացել ազգային արժեքների ստեղծման գործընթացում. այն հայկական և հունական մշակույթի, պատմական հիշողության, ազգային ինքնագիտակցության կրողն էր: Կրթության, գիտության, գրականության, մամուլի բնագավառներում հաջողությունները մշակույթի զարգացման և ազգապահպանության տեսանկյունից անգնահատելի են: Սերունդներին փոխանցված Ջմյունիայի հայերի ու հույների մշակութային ժառանգությունը նպաստել է երկու ժողովուրդների ազգային ինքնագիտակցության և ոգու պահպանությանը:

⁸⁹ Նույն տեղում, 67:

⁹⁰ Ըստ հին հունական ավանդագրույցներից մեկի՝ Պրոմեթևսի որդի Դևկալիոնն ու նրա կին Պիրրան ունեցել են Հելլեն և Անդրոպոմոս անուններով զավակներ: Հելլենից սերել են հելլենները, իսկ Անդրոպոմոսից՝ հայերը: Հայերի և հույների ազգակցական, արյունակցական կապի մասին տեղեկություններ են պահպանվել նաև հայ մատենագրության մեջ: Հովհաննես Դրասխանակերտցին Հայկ նահապետի պապ Թիրասին համարում է թրակիացիների նախահայրը: Անժելա Տերյան, *Հայաստանը Արարչագործության և Քաղաքակրթության բնօրրան* (Երևան, Ոսկան Երևանցի, 2002), 107:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ

Մասնակի տեղահանություններ

Տեղահանության նպատակները տարբեր են՝ ոչ ցանկալի ազգային տարրով բնակեցված վայրերը դատարկելը, ապա տեղահանված բնակչությանը երկրի խորքերը քշելը կամ երկրից վտարելը, իսկ տեղահանվածների փոխարեն ազգային այլ տարրով այդ տարածքները բնակեցնելը և վերջապես բնաջնջումը: «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, ռազմական նախարար Իսմայիլ Էնվերի (1881-1922) «Չկա օրենք, ստեղծի՛ր այն» սկզբունքով հրապարակվեցին բազմաթիվ ժամանակավոր օրենքներ, այդ թվում՝ «Տեղահանության» և «Լքյալ գույքի»⁹¹: «Տեղահանության մասին» օրենքի ընդունման նպատակը հանցագործության օրինականացումն էր:

Հայոց ցեղասպանության թեմայի ժամանակակից ուսումնասիրող, թուրքագետ Մելինե Անումյանը նշում է, որ ժամանակի օսմանյան մամուլը, ինչպես նաև Ստամբուլում լույս տեսնող այլալեզու թերթերը մեծ տեղ հատկացրին հայերի

⁹¹ Ցեղասպանությանն «օրինականություն» հաղորդելու նպատակով ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթը 1915 թ. մայիսի 14/27-ին հրապարակում է «Տեղահանության մասին» օրենքը, որը վարչապետ Սայիդ Հալիմ փաշան ստորագրել էր նախքան խորհրդարանի հավանությանն արժանանալը: Տե՛ս Մելինե Անումյան, *Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատարկարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի*, մատենաշար 2 (Երևան, Էդիթ Պրինտ, 2011), 28:

տեղահանությունը և կոտորածները նկարագրող ու լուսաբանող հրապարակումներին⁹²:

Տեղահանությունների նշանակության և իրական նպատակների մասին առավել ճշգրիտ պատկերացում կազմելու համար հարկ է անդրադառնալ Ահմեդ Ջեմալ փաշայի նշանակած «հայ տեղահանվածների տեսուչ» Հասան Ամջայի (Հասան Վասֆի)՝ տեղահանությունների վերաբերյալ սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն ունեցող հուշերին, որտեղ նա՝ որպես հայերի բնաջնջման քաղաքականության իրագործման ականատես, մանրամասն տեղեկություններ է հաղորդում տեղահանությունների մասին⁹³: Ամջայի հետևյալ նամակը լույս է տեսել թուրքական «Ալեմդար» (Դրոշակակիր)⁹⁴ օրաթերթի 1919 թ. ապրիլի 5-ի համարում. «Օրենքի ամենապայծառ, ամենապարզ բացատրությունը, վստահ եմ, դարձյալ Ձեզնից բացի, շատ քիչ քաղաքացի կարող է տալ: Դա Ձեզ ընկալել ստիպելու համար, Ձեր կողմից տեղահանություն անվանվող օրենքը պետք է կիրառել նախևառաջ Ձեր ընտանիքի նկատմամբ: Այդ ժամանակ մի օրենքի կիրառման իմաստը հասկանալու համար ուժ կունենաք խոր փիլիսոփայական եզրահանգումներ անել, որ անհրաժեշտ է համապա-

⁹² Մելինե Անույան, *Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)* (Երևան, Կոլաժ, 2013), 27:

⁹³ Հասան Ամջա, *Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը)* (Երևան, Գասփրինթ, 2007), 6: Ամջան «Ազատություն և համաձայնություն» (Հյուրիդեթ վե Իթթիլյաֆ) կուսակցության անդամ է եղել. բանտարկել են իթթիհաթականները:

⁹⁴ «Ալեմդար» օրաթերթը հրատարակվել է Ստամբուլում 1912-1921 թթ: Պատասխանատու խմբագիրն էր Ռեֆի Ջեադ Ուլունայը, իսկ տնօրենը՝ Ահմեդ (Փեյլիվան) Քադրին: Օրաթերթը հրատարակվել է նաև «Թաքվիմի գազեթե» (Օրացույց-օրաթերթ) և «Թեշրիհ» (Մեկնաբանում) անվանումներով: Տե՛ս Մելինե Անույան, «Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում (1919 թ.)», *Բանբեր Հայաստանի արխիվների* 1 (107), 2006, 310:

տասխանի Աստծու օրենքներին, խղճին և տրամաբանությա-
նը»⁹⁵: Ամջայի հաղորդմամբ՝ տեղահանված հայերի խնդրի
լուծման միջոց համարվել է «մաքրումը» (temiz), այսինքն՝
բնաջնջումը⁹⁶:

Տեղահանությունը՝ որպես ցեղասպանության բաղկացու-
ցիչ մաս, պետք է ընդգրկեր նաև Կոստանդնուպոլսի և
Զմյուռնիայի հայ համայնքը, սակայն այն զերծ մնաց զանգ-
վածային տեղահանությունից և հետևաբար բնաջնջումից՝ են-
թարկվելով մասնակի, սահմանափակ հետապնդումների⁹⁷:

1919 թ. դեկտեմբերի 3-ին Զմյուռնիայի առաջնորդարա-
նի՝ Կոստանդնուպոլսի պատրիարքին ներկայացրած հաղոր-
դագրության մեջ նշվում է, որ 1915 թ. նոյեմբերի 15-ին և 1916
թ. նոյեմբերի 25-ին տեղահանվել են Քուշադասի, Դիքիլիի,
Քըրքաղաչի և Էոդեմիշի հայերը: Տեղահանության նախօրեին
Զմյուռնիայում բնակվում էր 10 205, Մանիսայում՝ 1 828, Էո-
դեմիշում՝ 1 336, Քըրքաղաճում՝ 850, Դենիզլիում՝ 1 350, Այ-
դընում՝ 510 հայ, իսկ ամբողջ վիլայեթում հայերի թիվը կազ-
մում էր ավելի քան 19 000⁹⁸:

Տեղահանությունը կազմակերպել և իրագործել է Զմյուռ-
նիայի նահանգապետ Ռահմի բեյը⁹⁹, որ հայտնի էր իր հայա-

⁹⁵ Ամջա, *Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը)*, 24:

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ Ալբերտ Խառատյան, «Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ ազգաբնակչության տեղա-
հանումների շուրջ (1915-1916 թթ.)», *Պատմաբանասիրական հանդես* 1, 2016, 1:

⁹⁸ Ալբերտ Խառատյան, «Զմյուռնիայի հայ գաղթօջախը եղեռնի տարիներին»,
Հայոց Մեծ եղեռն-90, Հոգվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ, 2005), 113, Խա-
ռատյան, «Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ ազգաբնակչության տեղահանումների
շուրջ (1915-1916 թթ.)», 10-11:

⁹⁹ Ռահմի բեյը (թուրք.՝ Evrenoszade Rahmi Bey, 1874-1947) Այդընի նահանգա-
պետն է եղել (1913-1917): Ծնվել է Սալոնիկում, Էվրենոսների ընտանիքում: Ազ-
գանունների օրենքի ընդունումից հետո ընդունել է Արսլան ազգանունը:

տյաց կեցվածքով: Հայերին բնաջնջելը Թալեաթի համար հստակ գաղափար է եղել, իսկ Ռահմիի՝ պաշտոնական դիրքն ամրապնդելու երաշխիք¹⁰⁰: Հայտնի է, որ Ռահմին կազմակերպել է նաև հույների զանգվածային տեղահանությունը 1914 թ.¹⁰¹:

Կոստանդնուպոլսում Գերմանիայի գործերի ժամանակավոր հավատարմատարի՝ ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին հղած 1916 թ. նոյեմբերի 13-ի զեկուցագրում նշված է. «Ինչպես հաղորդում է Զմյուռնիայի կայսերական հյուպատոսը՝ իշխանությունները սկսել են հայ բնակչության տեղահանությունը: Դա պայմանավորված է եղել այն հանգամանքով, թե իբր մի քանի շաբաթ առաջ կաթոլիկական գերեզմանոցում հայտնաբերվել են հին ռումբեր և նմանատիպ այլ նյութեր, որոնք, ինչպես ասում են, թաքցրել են հայերը: Հետևաբար, վալին պահանջել է հայ եպիսկոպոսից, որ նա ներկայացնի կասկածելի անձանց անունները և հանձնի իրենց մոտ եղած զենքերը: Եպիսկոպոսը, այնուամենայնիվ, բացատրել է՝ այդ անձանց չի ճանաչում և թաքցրած զենք չկա»¹⁰²:

Գերմանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Լիման ֆոն Սանդերսի՝ 1916 թ. նոյեմբերի 17-ին Կոստանդնուպոլսից Գերմանիայի դեսպանությանը հղած զեկու-

Ընտրվել է պատգամավոր Սալոնիկից (1908, 1912): Անդամակցել է «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը:

¹⁰⁰ Ալբերտ Խառատյան, «Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ ազգաբնակչության տեղահանումների շուրջ (1915-1916 թթ.)», 11:

¹⁰¹ Նույն տեղում, 15:

¹⁰² From the Chargé d’Affaires at the Embassy in Constantinople (Radowitz) to the Reichskanzler (Bethmann Hollweg), Report No. 703, Pera, 13 November, 1916, <http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/WebStart-En?OpenFrameset>, դիտվել է 13.09.2023:

ցագրում նշվում է, որ տարբեր ծառայություններից Սանդերսը տեղեկացել է Զմյուռնիայից հայերին երկաթուղով երկրի խորքեր տեղափոխելու մասին. «Նոյեմբերի 10-ի առավոտյան ես 5-րդ բանակի շտաբի պետին՝ գնդապետ Քյազիմ բեյին ուղարկեցի վալիի մոտ,– նշում էր այդ առթիվ գեներալը դեսպանությանն ուղղված իր տեղեկագրում,– և կարգադրեցի նրան ասել, որ ես այլևս չէի հանդուրժելու նման զանգվածային ձերբակալությունները և փոխադրումները, որոնք, կատարվելով թշնամու սպառնալիքի տակ գտնվող մի քաղաքում, մուտք էին գործում ռազմական տարածաշրջան»¹⁰³: Նույն զեկուցագրում Սանդերսն ուղղակիորեն սպառնում է ոստիկանությանը. «Իսկ եթե այնուամենայնիվ ոստիկանությունն այդ միջոցառումները շարունակեր, ապա ես իմ ենթակայության տակ գտնվող զորամասերի միջոցով դրանք արգելելու էի: Ես վալիին մինչև կեսօր ժամանակ տվեցի վճիռ կայացնելու համար: Զմյուռնիայում հրամանատարող գեներալ, պրուսական գնդապետ Թրոմերին, որն արդեն իրազեկ էր իրադրությանը, ես մայր Պրիդգեի միջոցով ծանուցեցի վերոնշյալի և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Մոտավորապես կեսօրվա ժամը 1:30-ին մայր Քյազիմ բեյը վալիի մոտից (որը Բուռնաբադում էր) վերադարձավ և ինձ հայտնեց, որ ձերբակալություններն ու փոխադրումները կանգնեցվել էին և այլևս տեղի չէին ունենալու»¹⁰⁴:

Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Կյուլմանի՝ 1916 թ. նոյեմբերի 25-ի թվակիր պատասխանը հայերի տեղահանությունների վերաբերյալ եղել է հետևյալը. «Հայերի

¹⁰³ Աշոտ Հայրունի, *Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը* (Երևան, Նաիրի, 2002), 261:

¹⁰⁴ Նույն տեղում:

տեղահանությունը Չմյուռնիայում այդ ընթացքում դադարեցվել էր: Գործը դրանով ավարտվել էր»¹⁰⁵:

Հայերին տեղահանելու ծրագիրը երիտթուրքական կառավարությունը ռազմական իրավիճակով էր պատրվակում: Գերմանական բարձրաստիճան զինվորականությունն այդ ծրագիրը, որ նույնիսկ Օսմանյան պետության ներքին գործերին չմիջամտելու գերմանական կառավարության որդեգրած դիրքորոշմամբ ոչ մի կերպ չէր արդարացվում, մասամբ կամ ամբողջապես կանխելու բոլոր լծակներն ունեցել է: Պատահական չէ, որ ինչպես ֆոն դեր Գոլթցը Մոսուլի, այնպես էլ Լիման ֆոն Սանդերսը Չմյուռնիայի հայերի տեղահանության կանխումը հիմնավորում էին հենց ռազմավարական նկատառումներով¹⁰⁶:

Տեղահանությունը թեև մասնակի էր, սակայն հալածանքներն ուղեկցվում էին առանձնակի դաժանությամբ: Չմյուռնիացի ականատես-վերապրող, անվանի հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ, խմբագիր Միքայել Բարթիկյանը «Արնաշաղախ Իզմիրը» հուշագրության մեջ գրում է. «Բողոքոյից ճամփա ելանք հոկտեմբեր 13-ին: Ժամ ու կեսից հասանք Մաղնիսա: Մի անկյուն քաշված կառքի վրա բարձրացած մի թուրք, երբ մեր շարքն էր անցնում իր առաջից, հանկարծ ինձ մատնանշելով, սկսեց գոչել. «Չավո՛ւշ, չավո՛ւշ, տեսնո՛ւմ ես այս գյավուրին, հայ է, Մաղնիսայից է, ինչու եք բերել այստեղ, սատկացրե՛ք պրծնի, գլորեցե՛ք սա ձորից վար: Կողքիս գնացող պահակ զինվորը, որի կռնակի պայուսակը կամովին վերցրել էի Բունարբաշուց և կրել էի մինչև

¹⁰⁵ Նույն տեղում, 347:

¹⁰⁶ Հայրունի, *Յոհաննես Լեվսիոսի առաքելությունը*, 264:

Բողբյոյ, այն նախատեսությամբ, որ այդ պատճառ լինելու էր, որ զինվորը ինձ խնայեր և ավելին, ճամփան իր հետ ես էլ կկարողանայի մի պուտ ջուր խմել, չէի սխալած: Մինչև Բողբյոյ ոչ մի կերպով վնասված չէի [...]: Տարակույս չկա, որ պայուսակը, որ կոնակս ունեի, փրկել էր ինձ»¹⁰⁷:

Թե ինչպիսի բնույթ էր կրում տեղահանությունը, կարդում ենք հուշագրության էջերում. «Սեպտեմբերի 23-ի կարավանը, որ բաղկանում էր 3700 հոգուց, հազիվ մի քառորդը հասել էր Մաղնիսա: Իզմիր, անկետաների հիման վրա պատրաստված ցանկից երևան գալով, որ մեծամասնությունը հայեր էին, անխնա ջարդվեցին: Ողջ մնալով Մաղնիսա հասածներից այդտեղացի 40 հայերն էլ տեղվույն վրա «դատվելով» տարվեցին քաղաքապետական պարտեզից և չվերադարձան այլևս: Նրանց մեջ էր գտնվում և Պողոս Վանյան իր երկու որդիներով, որոնցից միայն 10 տարեկան կրտսերը ողջ մնաց, իսկ մյուսները սպանվեցին»¹⁰⁸:

Տեղահանության ճանապարհին ծիսականացված սպանություններն ու ապամարդկայնացման օրինակներն ավելի շուտ կանոն էին, քան բացառություն. «Մաղնիսացի, արհեստով պայտահար մի հայու ներբաններին գամեցին ձիու պատեր, մի քահանայի քթից օղակ անցկացրած և շղթայով կապած, պտտեցրին քաղաքի շուկան և անասելի լուտանքներով և խայտառակությամբ սպանեցին: Ահմեդլի կոչված գյուղում,

¹⁰⁷ Միքայել Բարթիկյան, *Արնաշաղախ Իզմիրը*, Օհանէս (Օննիկ) Ղազերեան, *Կենսագրական նօթեր*, (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2022), «Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններ» 9, Խմբագիր, առաջաբանների և ծանոթագրությունների հեղինակ՝ Թեմիսե Մարտոյան, 138: Հուշագրությունների մասին տե՛ս հետևյալ հաղորդումը՝ <https://www.youtube.com/watch?v=7KIQMRQ8uRk>, դիտվել է՝ 08.11.2023:

¹⁰⁸ Նույն տեղում, 147:

17 հոգի գլխիվայր և ողջ ողջ թաղվեցին արաբ Ազիզ Բեյի հրամանով: Սակայն գառնիզոնի ետևը մի իտալացու պատկանող այդ պարտեզում կատարվող այս հրեշտությունից ի վերջո խելագարել էր այս սադայել Ազիզը: Այնքան էր սարսափել իր կատարածներից, որ նույնիսկ գերիների մեջ գտնվող մի քահանայից խնդրել էր, որ աղոթի իր համար [...]»¹⁰⁹:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության գլխավոր քարտուղար Մահմուդ Ջելալը (Բայար), իր հուշերում անդրադառնալով «ազգային զտման» և «թուրքացման» քաղաքականությանը և որպես օրինակ առանձնացնելով Ջմյունիան և նրա շրջակայքը, նշում է կառավարության, բանակի և կուսակցության առաջնահերթ դերակատարության մասին¹¹⁰:

Մասնակի տեղահանությունները չեն ապահովագրում հազարամյակների պատմություն ունեցող երկու ստեղծագործ ժողովուրդների ապրելու իրավունքը Ջմյունիայում: Միջազգային ասպարեզում տեղի ունեցած քաղաքական զարգացումները հմտորեն օգտագործելով՝ Անկարայի կառավարությունը զերծ էր մնում միջազգային հանրության ուշադրությունից, ինչը հանգեցնում է տեղաբնիկ քրիստոնյա ժողովուրդների բնաջնջման և էթնիկ զտումների գործում թուրքական պետության պատասխանատվության քողարկմանը, իսկ հետագայում էլ՝ դրա ժխտմանը:

¹⁰⁹ Նույն տեղում:

¹¹⁰ Танер Акчам, *Турецкое национальное 'Я' и Армянский вопрос* (Москва, Арионикс, 1995), 106.

Քեմալականությունը և քրիստոնյա փոքրամասնությունները

Առաջին աշխարհամարտում Քառյակ դաշինքի պարտությունից հետո՝ 1919 թ. հունվարին, Փարիզում իր աշխատանքներն է սկսում հաղթանակած պետությունների վեհաժողովը, որտեղ պետք է քննարկվեին նոր՝ հետպատերազմյան աշխարհակարգի հաստատման, այդ թվում՝ պետությունների միջև նոր սահմանների որոշման հարցերը:

Հունաստանը, մասնակցելով պատերազմին և կատարելով դաշնակցային իր պարտավորությունները, ակնկալում էր թուրքահպատակ հույների խնդրի արդարացի լուծում, այդ թվում՝ Օսմանյան պետության կազմում եղած հունաբնակ հողերի միավորումը: 1919 թ. մայիսի 15-ին սկսվում է հույն-թուրքական պատերազմը. հունական զինված ուժերը, Փարիզի հաշտության համաժողովի որոշումների համաձայն, իրենց հսկողության ներքո են վերցնում Ջմյուռնիա քաղաքը¹¹¹:

Անդրադառնալով Քեմալին ու քեմալականությանը՝ Բարթիկյանը նշում է, որ օսմանյան պետական գործիչ Դամատ Ֆերիդ փաշայի¹¹² բնութագրմամբ՝ Քեմալը հրեական ծագում ուներ, պատկանում էր Ռումելիայի¹¹³ այն հրեաների շառավ-

¹¹¹ Arnold Toynbee, *The Western Question in Greece and Turkey, A Study in the Contact of Civilizations* (London: Constable and company, 1922), 77.

¹¹² *Դամադ Ֆերիդ փաշան* (Դամադ Մեհմեդ Ադիլ Ֆերիդ, 1853-1923) սուլթան Մեհմեդ VI Վահիդեդինի օրոք երկու անգամ զբաղեցրել է Մեծ վեզիրի պաշտոնը:

¹¹³ *Ռումելիա* (հուն.՝ Ρούμελη), Բալկանների, ինչպես նաև Արևելյան Հռոմեական կայսրության անվանումն էր, ներկայում՝ Բուլղարիայի հարավարևելյան մասը: Երբեմն Ռումելիա էին անվանում Թուրքիայի եվրոպական հատվածը՝ Արևելյան Թրակիան:

ղին, որոնք 18-րդ դարում Շաբաթայի ապստամբության¹¹⁴ հետևանքով իսլամ էին ընդունել¹¹⁵: Բարթիկյանը, Քեմալին բնութագրելով որպես «մոլեռանդ օտարատյաց» և «հավատացյալ ձևացնող», հաղորդում է, որ ազգայնական թուրքերը այնուամենայնիվ հենց նրա մեջ էին տեսնում «ապագա պետական մի նոր տան հիմնադրի»¹¹⁶:

Քեմալը ստանձնել էր Ջմյուռնիայի համար թուրքական հանրահավաքների կազմակերպման գործընթացը: Այս առնչությամբ թյուրքագետ, բ.գ.թ. էլինա Միրզոյանի հետ մեր զրույցի առանցքային թեմաներից էր թուրք կանանց ներգրավվածության խնդիրը հանրահավաքներին: Միրզոյանն այս առնչությամբ նշում է. «Կ.Պոլսում արդեն ձևավորված ցուցարար կանանց խումբը սկսում է կենտրոնացնել իր ողջ ներուժը՝ արծագանքելու և դատապարտելու Ջմյուռնիայի գրավումը: Թուրք կանայք մայիսի 16-ից սկսում են իրենց բողոքի ձայնն արտահայտել Կ.Պոլսի գրեթե բոլոր թաղամասերում: Նրանք, որպես Ջմյուռնիայի համար սգի դրսևորում, որոշում են չայցելել ժամանցի վայրեր, կինոթատրոններ և

¹¹⁴ *Շաբաթայ Յվի* (եբր.՝ יְבֵי שַׁבָּת) (1626-1676), հայտնի կաբալիստ (գաղտնուտյց թեոսոֆիական համակարգ հրեաների շրջանում) և կեղծ Մեսիա: Հրապարակայնորեն հրաժարվել է հուդայական հավատքից և իսլամ ընդունել: Օսմանյան պետության մեջ և Թուրքիայի Հանրապետությունում Շաբաթայ Յվիի հետևորդները հայտնի էին դյոնմե (թուրք.՝ Dönme, հավատորացներ) անվան ներքո: Մանրամասն տե՛ս *The Role of the Sabbatean DONME “Jewish-Turkish” Sect in the Armenian Genocide*, The Planned, Organized, Executed Genocide of Armenians by Jack Manuelian, April 24, 2005, *Sabbatai Zevi*, <https://www.jewishhistory.org/sabbatai-zevi/>, դիտվել է 07.07.2021, Marc David Baer, *The Dönme: Jewish converts, Muslim revolutionaries, and secular Turks* (California: Stanford University Press, 2010).

¹¹⁵ Բարթիկյան, *Արևաշաղախ Իզմիրը*, Ղազերեան, *Կենսագրական նօթեր*, 23:

¹¹⁶ Նույն տեղում, 24:

թատրոններ: Կարճ ժամանակով փակվում են նաև դպրոցներն ու աշխատատեղերը: Դասադուլ և գործադուլ է հայտարարվում ամբողջ Կ.Պոլսում»¹¹⁷:

Միրզոյանն ընդգծեց, որ Աթաթյուրքի հանձնարարականով հանրահավաքների կազմակերպչական աշխատանքները համակարգում էր «Հավգա» շրջաբերականը (թուրք.՝ Havza Genelgesi), որը լույս էր տեսնում 1919 թ. մայիսի 28-ից Սամսունում և Աթաթյուրքի կարգադրությամբ ստանձնում է կոնկրետ Ջմյուռնիայի համար ամբողջ Թուրքիայի տարածքում հանրահավաքները կազմակերպելու գործառույթը՝ առաջին պլան բերելով ներքին համայնք ներկայացնող թուրք էլիտար կանանց (Հալիդե Էդիփ Ադըվարն իր ելույթներով դառնում է թուրքական ազգայնական շարժման հանրահավաքների խորհրդանիշը)¹¹⁸:

1919 թ. հուլիսի 23-ից օգոստոսի 7-ը էրզրումում (Կարին) տեղի է ունենում թուրք ազգայնականների համաժողովը, որի ընդունած փաստաթղթերն ուղղված էին Հայաստանի, Հունաստանի, այն է՝ հայ և հույն ժողովուրդների դեմ: Համաժողովը Արևմտյան Հայաստանն ու Տրապիզոնը հռչակում է թուրքական տարածքներ: Հայկական նահանգները Թուրքիայի կազմում պահելն ու «հայկական համայնքի ստեղծումը» թույլ չտալը համարվում էր պարտադիր և «սրբազան գործ»: Ընդունված հռչակագրի երկրորդ կետում նշված է, որ հունական կամ հայկական համայնքների՝ թուրքերի որևէ տարածք օտարելու կամ իրենց գործերին միջամտելու ամեն մի փորձի պարագայում թուրքերը փոխադարձ օգնության

¹¹⁷ Էլեկտրոնային նամակ հեղինակին, 01.07.2023 թ.:

¹¹⁸ Էլեկտրոնային նամակ հեղինակին, 03.07.2023 թ.:

սկզբունքի հիման վրա պետք է դիմեն ինքնապաշտպանության¹¹⁹: Իրականում խոսքը ոչ թե թուրքերի ինքնապաշտպանվելու մասին էր, այլ որևէ կասկածի առկայության դեպքում հույների կամ հայերի նկատմամբ բռնություններ գործադրելու: Նույն կետում նշված է, որ Օսմանյան պետության տարածքում բնակվող քրիստոնյաները համարվում են եկվորներ, որոնք «երկար ժամանակ բնակվում են թուրքերի հայրերի հողերի վրա»: Հայտարարվում է, որ նրանց ունեցվածքի, կյանքի և պատվի անվտանգությունն ապահովված է և ապագայում նույնպես ապահովված կլինի: Սակայն միևնույն ժամանակ նշվում է, որ երբեք թույլ չի տրվի, որ հույները կամ հայերը պետության մեջ այնպիսի դիրք գրավեն, որը վտանգավոր կլինի թուրքերի գոյության, մահմեդականների իրավունքների և օսմանյան ինքնիշխանության համար: Այս ամենից ելնելով՝ պատրաստակամություն էր հայտնվում կիրառել հնարավոր բոլոր միջոցները՝ կանխելու «հայերի և հույների ամեն մի փորձ, որ նպատակ ունի վնաս հասցնելու թուրքերի հայրենիքին»: Բանաձևում մերժվում է նաև «Անտանտի մեծ տերությունների ցանկացած ներխուժումը»՝ դա համարելով «իրենց համար մերժելի ծրագրերի ու նախագծերի իրականացմանն աջակցելու փորձ»: Հռչակագիրն անդրադառնում է հույներին և հայերին, Ջմյուռնիային, պոնտական պետությունն ստեղծելու փորձին ևն¹²⁰:

¹¹⁹ Мустафа Кемаль, *Путь новой Турции 1919-1927, Первые шаги национально-освободительного движения* (Москва: Литиздат НКВД, 1929), т. I, 374, էրզրումի համաժողովի բանաձևի ամբողջական տեքստը տե՛ս նաև Stanford J. Shaw, Ezel Kural Shaw, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, v. II (New York: Cambridge University Press, 1977), 344-345.

¹²⁰ Кемаль, *Путь новой Турции 1919-1927*, 374-375.

Համաձայն հակաքրիստոնեական ուղղվածություն ունեցող 7-րդ կետի ենթակետերից մեկի, հայրենակից բոլոր մահմեդականները համարվում էին «հասարակության անդամներ»: Քրիստոնյաները, ըստ այդմ, հայրենակից կամ հասարակության անդամ լինել չէին կարող և հետևաբար չէին կարող հավասար իրավունքներ ունենալ¹²¹:

Քեմալական գաղափարախոսությունը պետության մեջ հայերի և հույների խաղաղ գոյակցությունը սպառնալիք էր համարում «թուրքերի անվտանգության» համար: Այդ «մտահոգությամբ» 1919 թ. սեպտեմբերի 4-ից 11-ը Սեբաստիայում (Սվազ) համաժողով է հրավիրվում, որը զարգացնում և էլ ավելի է որոշակիացնում էրզրումի համաժողովի դրույթները: Հայտնի է, որ Սեբաստիայի համաժողովն է ազդարարել թուրքերի ազգային պետության ստեղծման սկիզբը: 1919 թ. դեկտեմբերի 31-ին Քեմալը հայտարարել է. «[...] Ոչ մի այլ ժողովուրդ հավատքով և ավանդույթներով այլադավան տարրերի հանդեպ հանդես չի բերել այնպիսի հարգանք, ինչպես մեր ժողովուրդը: Անգամ կարելի է ասել, որ մեր ժողովուրդը միակն է, որը հարգում է նրանց կրոնն ու ազգությունը, ովքեր պատկանում են այլ հավատի [...]»¹²²:

Քեմալի նմանօրինակ հայտարարությունները, որպես կանոն, քրիստոնյաների շրջանում ապահովության զգացում առաջացնելու հոգեբանական հնարքներ էին, որոնք նպա-

¹²¹ Արամ Ալավերդյան, «Ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված քեմալականության դրույթների մշակումը էրզրումի 1919 թ. համաժողովում», *Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, հոդվածների ժողովածու (Երևան, Գիտություն, 2011), 29:

¹²² Мустафа Кемаль, *Путь новой Турции 1919-1927, Подготовка Ангорский базы, 1919-1920*, т. II (Москва: Государственное социально-экономическое издательство, 1932), 300.

տակ ունեին դյուրացնելու բռնության ծրագրված գործընթացը: Մյուս կողմից՝ «Միլլի»¹²³ ուժերին չհամակերպվողները, Քեմալի հրամանին չենթարկվողներն անխնա հալածվում և պատժվում էին. Քեմալը նոր պաշտոնյաներ և կառավարիչներ էր նշանակում: Զինվորական հրամանատարներն իթթի-հաթականներ էին. ընդդիմադիրները հեռացվում կամ բանտարկվում էին¹²⁴:

Սերբ ուղղափառ եկեղեցու սուրբ՝ Նիկոլայ Սերբացու մեկնաբանմամբ՝ խաղաղության ամենապերճախոս քարոզչությունը մեծամասամբ ծառայում է ռազմական նպատակների իրականացմանը¹²⁵:

Սկզբնական շրջանում մեծ տերությունները, քեմալականների գործողությունները լուրջ չընդունելով, նախընտրում էին Օսմանյան պետության օրինական իշխանությունների հետ հարաբերությունների պահպանումը: Քեմալականները, իրենց հերթին, քննադատում էին Կ.Պոլսի կառավարությանը՝ Անտանտի պահանջներին ենթարկվելու համար և մեղադրում պետական դավաճանության մեջ:

Քեմալականների արտաքին քաղաքականության ռազմավարության հիմքում դրվում է 1920 թ. հունվարի 28-ին ընդունված «Ազգային ուխտը» (Misak-i Mills), որում ամրագրված

¹²³ *Միլլի* (թուրք.՝ Milli Mücadele), Ազգային ուխտով տարածքային ամբողջականության պահպանմանն ուղղված ազգային շարժում (1919-1922), որի նպատակն իրականում Օսմանյան պետությունն ազգային փոքրամասնություններից, մասնավորապես հայերից և հույներից «մաքրելն» էր: Շարժումն առաջնորդել է Քեմալը: Մանրամասն տե՛ս Ռեզիսա Գալուստյան, «Մուստաֆա Քեմալի 1927 թ. ճառը՝ որպես թուրքական պատմագրության կառուցման հիմնաքար», *Յեղասպանագիտական հանդես* 2 (2), 2014, 79:

¹²⁴ Բարթիկյան, *Արնաշաղախ Իզմիրը*, Ղազբեթեան, *Կենսագրական նօթեր*, 28:

¹²⁵ Նիկոլայ Սերբացի, *Պատերազմ և Աստվածաշունչ* (Երևան, Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի, 2023), 31:

նպատակներին հասնելու համար հնարավոր էին համարվում ցանկացած երկրի, նույնիսկ վաղեմի թշնամիների հետ դաշինքները¹²⁶: Անտանտի երկրները թուրքական ազգայնական շարժումը ճնշելու նպատակով օգտագործում էին Փոքր Ասիայում գտնվող հունական զինված ուժերը: 1920 թ. հունիսին հունական զորքը հարձակման է անցնում և գրավում Բալքեսիքը, Բրուսան: Մեկ այլ զորախումբ, մտնելով Արևելյան Թրակիա, գրավում է Ադրիանուպոլիսը (Էդիրնե):

1920 թ. օգոստոսի 10-ին կնքվում է Սևրի հաշտության պայմանագիրը, ըստ որի՝ Ջմյուռնիան պետք է անցնի Հունաստանին և կառավարվի հինգ տարով, սակայն նավահանգստում պետք է բարձրացված մնար սուլթանական դրոշմը: Անկարայի քեմալական կառավարությունը, սակայն, չի ճանաչում պայմանագիրը¹²⁷:

Սևրի պայմանագրի կնքումից հետո հայ-հունական ռազմաքաղաքական կապերն ավելի են սերտանում: Հունաստան է այցելում Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, հանդիպում Հունաստանի վարչապետ Էլեվթերիոս Վենիզելոսի¹²⁸ և ԱԳ նախարար Նիկոլաոս Պոլիտիսի հետ: Հունաստան և Փոքր Ասիա կատարած տասնօրյա այցի ընթացքում Խատիսյանը հանդիպում է Աթենքի, ապա՝ Ջմյուռնիայի

¹²⁶ *Թուրքիայի Հանրապետության պատմություն*, 41:

¹²⁷ Harry N. Howard, *The Partition of Turkey, A Diplomatic history 1913-1923* (New York: Howard Fertig, 1966), 245, Alexes Alexandres, *The Greek Minority of Istanbul and Greek-Turkish relations 1918-1974* (Athens: Center for Asia Minor Studies, 1983), 66.

¹²⁸ *Էլեվթերիոս Կիրիակոս Վենիզելոս* (1864-1936) (հուն.՝ Έλευθέριος Κυριάκος Βενιζέλος), հույն պետական և քաղաքական գործիչ, Հունաստանի վարչապետ (1910-15, 1917-20, 1924, 1926-32 և 1933-35):

հայ համայնքի հետ¹²⁹: Ականատես-վերապրող Օհանես (Օն-նիկ) Ղազերյանը «Կենսագրական նոթեր» հուշագրության մեջ անդրադառնում է վերոհիշյալ իրողությանը. «Այս օրերուն Հայաստանի վարչապետ Ա. Խատիսեան Իզմիր եկած էր մասնաւոր Յունական նաւով մը. ի՞նչ խանդավառութիւն: Պարոն Խատիսեան հիրասիրուեցաւ պարոն Մարտիրոս Սարըեանի¹³⁰ հսկայ պալատին մէջ՝ Քորտելիոյի ծովեզրին վրայ: Քանի մը հարիր ընկերներ ու բարեկամներ ներկայ էին այս ընդունելութեան՝ տեսակ մը «Կարտըն փարթի», ուր պարոն Խատիսեան երկար բացատրեց Հայաստանի ներկայ վիճակը, անմիջական կարիքները, ու ոսկիի ֆոնտ [հիմնադրամ] մը հիմնելու ծրագիրը Հայաստանի պետական Սնտուկին համար: Իզմիրի եւ շրջակայ քաղաքներուն մէջ մասնաւոր եկեղեցական պատարագներ տեղի ունեցան, ուր ճառախօսներ պարզեցին պարոն Խատիսեանի այցելութեան նպատակը: Ես ներկայ եղայ Իզմիրի Սուրբ Ստեփաննոս հսկայ մայր տաճարին մէջ հազարաւոր բազմութեան առջեւ պարոն Խատիսեանին խօսած ճառին: Ժողովուրդը, որ 600 տարիէ վերջ, առաջին անգամ ըլլալով, անկախ Հայաստանի մը գոյութիւնը կ'ողջունէ, իր առաջին վարչապետին խանդավառ ճառէն կը

¹²⁹ Σαμβέλ Ραμαζιάν, *Ιστορία τών Αρμενο-Ελληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας* (Αθήνα, 2010), Սամվել Ռամազյան, *Հայ-հունական ռազմական առնչությունների և համագործակցության պատմություն* (Աթենք, 2010), 173: Տե՛ս նաև Ալեքսանդր Խատիսեան, Քաղաքապետի մը յիշատակները (Պէյրոս, Համազգայինի Վահէ Սէթեան, 1991):

Զմյուռնիայում ՀՀ հյուպատոս է նշանակվել Վահան Պարտիզպանյանը (1918-1920), իսկ խորհրդատու՝ Հրանտ Նիկոսյանը (1874-1951), տե՛ս Րաֆայիլ, *Ιστορία τών Αρμενο-Ελληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας*, 177:

¹³⁰ *Մարտիրոս Սարյան* (1870-1940), Մանիսայում հայտնի առևտրական:

հան է իր վրայ ունեցած որեւէ ոսկիէ զարդ ու կը նետէ եկեղեցիին ճիշդ մէջտեղը փռուած հսկայ սաւանի մը վրայ [...]»¹³¹:

Աշխարհաքաղաքական իրողությունները, սակայն, հետզհետեւ ավելի անբարենպաստ էին դառնալու Հայաստանի Հանրապետության համար: Քեմալական Թուրքիան սկսում է համագործակցել Խորհրդային Ռուսաստանի հետ՝ ընդդեմ Արևմուտքի. «Թուրքիայի հետ համագործակցությունը Խորհրդային իշխանությանը սնուցանում էր համաշխարհային հեղափոխության պատրանքներով, որի դիմաց Թուրքիան ստանում էր ամենևին էլ ոչ պատրանքային, այլ իրական նյութական օգնություն, զենք ու զինամթերք՝ մասնավորապես հույների դեմ մղած պատերազմում»¹³²:

Քեմալականներն Արևմուտքում ռազմական գործողություններ են ծավալում հույների, Կիլիկիայում՝ տեղի հայ բնակչության և արևելքում՝ Հայաստանի Հանրապետության դեմ: Նրանց կարևոր ձեռքբերումն էր Մոսկվայի 1921 թ. պայմանագիրը:

Մկրտիչ Ավետյանի հուշագրությունը սկզբնաղբյուրային նշանակության տեղեկություններ է հաղորդում ոչ միայն Զմյուռնիայի, այլև՝ արվարձանների վերաբերյալ: Հուշագրությունը համապարփակ տեղեկություններ է հաղորդում Ա՛նախացեղասպանական, Ա՛ հետցեղասպանական ժամանակաշրջանների վերաբերյալ: Ավետյանն ականատես է լինում, թե ինչպես է հունական բանակն ազատագրում Զմյուռնիան. «1918 թուին պատերազմի վերջաւորութեան կը գտնուիմ Իզմիր, գաղտնի զրոյցներ կը շրջին Իզմիրի ապագայի գրաման

¹³¹ Բարթիկյան, *Արնաշաղախ Իզմիրը*, Ղազերեան, *Կենսագրական նոթեր*, 294:

¹³² *Խառապոյան*, Զմյուռնիայի հայ գաղթօջախը Եղեռնի տարիներին, 116:

մասին: Օր մը յոյն բանակին կողմէ Իզմիրի գրաւումը Պատերազմական ժողովը որոշում կու տայ, յոյն կարեւոր անձնաւորութիւն մը գաղտնի կերպով ինձի կը յայտնէ եւ խորհուրդ կու տայ նոյն օրը տունէս չմեկնիմ շուկայ»¹³³:

93-ամյա վավերագրողը գրի է առել իր հիշողության մեջ պահպանված հետաքրքիր մանրամասներ. «Ես կը բնակէի Իզմիրի Քորտելիո արուարձանը, որ օդափոխութեան վայր մըն է Իզմիրի դիմաց, ունի ծովէն ու ցամաքէն երթեւեկութեան ճամբաներ: Գրաւման օրը մնացի Քորտելիո (Քարշը եաքա), ծովեզերքէն հեռադիտակով կը դիտեմ առտուան ժամը 6-ին յոյն բանակը գէնքերնին դէպի վար բռնած ծովեզերք կ'ելլեն նշանաւոր Քորտոն պոյր: Նախապէս կուսակալութեան հետ, հակառակ համաձայնութեան, թուրքերը ծովէն ու ցամաքէն գէնքով կը դիմաւորէն յոյն բանակը: Դիմաւորելով թուրքերը՝ կը յառաջանայ գրաւելու պաշտօնական տեղերը: 24 ժամուան մէջ խաղաղութիւն տիրեց եւ Իզմիրը անցաւ յոյն բանակի գրաւման տակ»¹³⁴:

1921 թ. հունվարի 10-ին և մարտի 31-ին Ինոնյու գլուղի մոտ հունական բանակը պարտվում է, սակայն ամռանը նոր հարձակում է ձեռնարկում՝ հուլիսին գրավելով Էսքիշեհիրը, Աֆիոն Գարահիսարը, իսկ օգոստոսին մոտենում է Անկարային: 1921 թ. օգոստոսի 23-ից սեպտեմբերի 13-ը Սանգարիոս (Սաքարիա) գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հունական բանակը պարտվում է: Թուրքերը, օգտվելով հունական գլխավոր հրամանատարության անգործությունից, համալրելով իրենց ուժերը, հարձակման են անց-

¹³³ Աւետեան, *Յուշեր*, 6:

¹³⁴ Նոյն տեղում:

նում և 1922 թ. օգոստոսի 30-ին Դումլուփընսարի մոտ նոր պարտության մատնում հունական բանակին:

Քեմալը և նրա կողմնակիցներն օրինականացնում են քրիստոնյաների նկատմամբ իրականացվող չարաշահումներն ու հալածանքները: Միաժամանակ հրաժարվելով անցանկալի միջազգային իրավական ակտերից ու պայմանագրերից՝ Թուրքիան փորձում էր «ազատել» իրեն միջազգային պարտավորություններից և պատասխանատվությունից: Էրզրումի և Սեբաստիայի համաժողովների՝ նախազգուշացումից մինչև անթաքույց սպառնալիք պարունակող որոշումները միտված էին նաև հետագա գործողություններն արդարացնելուն:

Զմյուռնիայի հայերի և հույների անտարբերությունը բնաջնջման լուրերի նկատմամբ¹³⁵

Հասարակությանը բնորոշ է սոցիալ-հոգեբանական մի օրինաչափություն, որը չի շրջանցում թե՛ անհատին, թե՛ մարդկանց խմբին: Հանգամանքների բերումով և տարբեր իրադրություններում այն արթնացնում է մարդու հոգու խորքում նիրհող կենդանական վայրենի բնազդները: Այդ երևույթը հոգեբանության մեջ հայտնի է հոգեբանական նահանջ (ռեգրեսիա) անվամբ: Մարդկանց խմբերի վրա առավել ակտիվ դրսևորումներ ունի հասարակության ֆիլոգենետիկ (էվոլյուցիոն) նահանջը, որի էությունն այս կամ այն չափով քաղա-

¹³⁵ Այս թեմայի շուրջ մանրամասն տե՛ս Թեհմինե Մարտոյան, «Զմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր)», *Հայագիտության հարցեր* (2014), 61-75, Tehmine Martoyan, “Denying the Possibility of Annihilation during Genocide: A Case Study of the Armenians and Greeks, 1915–1922,” *New Perspectives on the Genocide of the Greeks in the Ottoman Empire, 1913–1923*, edited by George N. Shirinian (Chicago, IL: Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2019), 253-268.

քակիրթ մարդու կամ մարդկանց խմբի հոգևոր վերադարձն է դեպի նախնադարյան հոտի մակարդակ: Այս երևույթն ի հայտ է գալիս հատկապես զանգվածային ագրեսիայի պայմաններում, որի ամենացայտուն դրսևորումը ցեղասպանությունն է¹³⁶:

Փաստորեն, ոճրագործը դառնում է տվյալ անձի կամ անձանց խմբի դեմ ուղղված հանցագործության կատարածուն, մասնակիցը և մեղսակիցը և, հանուն իր պետության շահի, ավարտին է հասցնում հանձնարարությունը: Մինչդեռ, ինչպես նշում է հոգեբան Կարինե Նալչաջյանը, մարդն իր ագրեսիվ վարքագիծն արդարացնելու ներքին պահանջ է զգում, որը և բավարարվում է զոհի վարկաբեկմամբ: Այս մեխանիզմը մեծապես օգնում է ագրեսորին ապագա զոհին անմարդկային հատկանիշներ և վտանգավոր դիտավորություններ վերագրելու հարցում¹³⁷:

Քրիստոնյաների բնաջնջումն օրինական դարձնելու նպատակով հորինված և հարմարեցված արդարացումների լավագույն օրինակներից է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներից մեկի՝ դիվանապահ բժիշկ Նազըմի հետևյալ հայտարարությունը, որ ինչել է Օսմանյան ներքին գործերի նախարար Թալեաթի նախագահությամբ անցկացված գաղտնի խորհրդակցության ընթացքում. «Վայրագութիւնը բնութեան օրէնքն է, հարցը ասոր ընդունելի կամ մերժելի ըլլալը տրամաբանելու մէջն է: Ամբողջ կենդանիները, նոյնիսկ բոյսերը զիրար ուտելով, զի-

¹³⁶ Կարինե Նալչաջյան, «Ցեղասպանությունը՝ որպես հոգեբանական ֆենոմեն», *Հայոց Մեծ եղեռն-90*, հոդվածների ժողովածու, 339:

¹³⁷ Նույն տեղում, 341-342:

րար ջնջելով չե՞ն սնանիր, ուրեմն ասոնց զիրար ուտելն եւ զիրար ջնջելը արգիլեցէք. բայց վայրագութիւն է կրնա՞նք ըսել»¹³⁸:

«Միութիւնն և առաջադիմութիւնն» կուսակցության՝ Կաստամոնուլի պատասխանատու քարտուղար, պատգամավոր, հոգևոր գործիչ Հասան Ֆեհմին վկայակոչում է արևելյան գիտությունն ու մահմեդական սուրբ օրենքը՝ շարիաթը, ըստ որոնց՝ այն ամենը, ինչը վնասակար է, պետք է կործանվի¹³⁹: Այս առումով հետաքրքիր է դոկտոր Հակոբ Պողոսյանի դիտարկումը. «Բնութեան մէջ ոչինչ կայ յեղակարծ, հոգեկան աշխարհի մէջ ոչինչ յանկարծակի տեղի կ'ունենայ: Ամեն արդիւնք պատճառ մը, եւ ամեն հոգեկան երեւոյթ (Psychic Phenomenon) հոգեկան նախագործողութիւն մը կ'ենթադրէ [...] թշնամին ջարդերէ ու տեղափոխութիւններէ առաջ կ'սկսի իր ներքին թշնամութեան եւ չարամտութեան նշանները ցոյց տալ: Նախ կեդրոնը իր մէջ դիւային ծրագիրներ կը դարբնէ, եւ յետոյ զայն գործադրելու համար երկրին ամեն կողմը, եւ կամ մասնաւոր կեդրոններ գտնուող պաշտօնեաներու, խաֆիյէներու, կրօնամոլ մօլլաներու եւ կարելոր ու ազդեցիկ պէյերու եւ անձնաւորութիւններու կը դիմէ: Այս վերջիններն ալ իրենց կարգին կանխամտածուած այս դիւային ծրագիրները յարմար միջոցաւ մը իրենց մարդոց կը պարզեն, անոնց միտքը կը թունաւորեն, որպէս զի որոշեալ օրուան համար խուժանային միտքը կազմ ու պատրաստ ըլլայ [...]»¹⁴⁰:

¹³⁸ Մէվլան Չատէ Ռիֆաթ, *Օսմանեան յեղափոխութեան մուրթ ծալքերը եւ իթթի-հապի հայաջինջ ծրագիրները* (Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ որդիք, 1968), 98:

¹³⁹ Նույն տեղում, 100:

¹⁴⁰ Յակոբ Պողոսեան, *Հայ ցեղը եւ հալածանքները հոգեբանութեան լոյսին փակ* (Բոստոն, Երան, 1919), 24-25:

Փաստորեն, ցեղասպանության կազմակերպիչները ստեղծում են որոշակի հասարակական մթնոլորտ այն հնարավորինս դյուրին ձևով իրականացնելու նպատակով: Այսպես, մշակվում է գործողությունների որոշակի ծրագիր, որը նպատակաուղղված է թե՛ ցեղասպանության զոհերի և թե՛ այն իրականացնողների հոգեբանության համապատասխանաբար ընդարմացմանն ու խեղաթյուրմանը:

Ցեղասպանության կազմակերպիչները մահվան դատապարտված մարդկանց խմբին հնազանդ և կառավարելի դարձնելու նպատակով ստեղծում են հոգեբանական այնպիսի մթնոլորտ, որը ինչ-որ կերպ փրկվելու հավատ է սերմանում նրանց մեջ: Ըստ այդմ՝ զոհի կարգավիճակում գտնվող ժողովուրդը կամ մարդկանց խումբը հոգեբանորեն կախման մեջ է ընկնում ոճրագործից: Հետևաբար այդպիսի պայմանները հարկադրում են մարդկանց ծանրութթա անել իրենց վարքագիծն ու պահվածքը և լինել ավելի հնազանդ¹⁴¹: Ամերիկացի հոգեբան Սթենլի Միլգրամը մի փորձ է կատարել և այն համեմատել ցեղասպանության հետ¹⁴²: Նա հանգել է միակ

¹⁴¹ Հասմիկ Աբրահամյան, «Վահե Փանոսյան. ցեղասպանության հոգեբանությունը», *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր*, հատոր 10-11 (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005), 252:

¹⁴² 1960-ական թվականներին հոգեբան Սթենլի Միլգրամը կատարել է հետևյալ փորձը. նա նախօրոք տարբեր սենյակներում առանձնացրել է երկու հոգու: Նրանցից առաջինը պետք է ժամանակ առ ժամանակ հատուկ սարքավորումների միջոցով էլեկտրական հարվածի օգնությամբ ազդեր երկրորդի հիշողության կենտրոնի վրա: Հոգեբանական այդ փորձի նպատակն էր որոշել առաջինի՝ էլեկտրական հարվածներ հասցնելու ունակության պատրաստակամությունը: Առաջին սենյակում գտնվողը որքան ուժգնացնում էր հարվածները, այնքան ավելի էր լարվում երկրորդի հոգեբանական կոնֆլիկտային իրավիճակը: Ընդ որում՝ երկրորդի տառապանքները ստիպում էին առաջինին դադարեցնել այդ ամենը և ամեն անգամ, երբ նա հապաղում էր հարված հասցնել, նրա «վե-

հնարավոր եզրակացության, ըստ որի՝ շարքային մարդիկ, այս կամ այն հանձնարարությունը կատարելիս չունենալով թշնամական որևէ մտադրություն, կարող են դառնալ կատարածուններ, նույնիսկ այն դեպքում, երբ գիտակցում են դրանց կործանարար բնույթը, բարոյականության չափանիշներին դեմ լինելը, սակայն անում են այն, ինչն իրենց պարտադրված է¹⁴³:

Անկախ այն բանից՝ անմեղ մարդկանց կյանքն են խլում, թե ոչ, հանցագործության անմիջական կատարողները հիմնականում շարքային մարդիկ են, որոնք այդ հանցանքը կատարելու պարտավորություն են զգում, այսինքն՝ կատարում են իրենց վերագրված սոցիալական դերը¹⁴⁴:

Ցեղասպանական գործողությունների ընթացքում հանցագործությունը կատարող ոճրագործների և նրանց զոհերի

րադասը» հարկադրում էր այդ անել: Առաջինին մնում էր ընտրություն կատարել. ենթարկվել «վերադասին» և շարունակել հարվածները կամ հնազանդվել ներքին ձայնին՝ խղճին: Երբ նա ընտրում էր երկրորդ տարբերակը, նրա և «վերադասի» միջև տեղի էր ունենում խզում: Այս փորձը կատարվել է քառասուն անձանց շրջանում, որոնցից քսանհինգը շարունակել է չորս հարյուր հիսուն վոլտ հզորությամբ էլեկտրական հարվածներ հասցնել: Միլգրամը հանգել է հետևյալ եզրակացությանը. ցանկացած ուժի կամ հարկադրանքի դեպքում անհնազանդությունը նվազում է: Վերոհիշյալ փորձի և ցեղասպանության միջև զուգահեռ անցկացնելու նպատակով Միլգրամը փորձի մասնակիցներից առաջինին փոխարինել է զինվորով, որը ենթարկվում էր իր վերադասի կարգադրությանը: Սկզբում զինվորի առջև դրված պահանջի մեջ արտաստվող ոչինչ չկար, որը կապ ունենար հրամանը կատարող զինվորի բարոյական սկզբունքների հետ: Վերադասի հետագա հրամանների հետևանքով զինվորի՝ առաջին հայացքից սովորական թվացող գործողությունները դառնում էին անմարդկային: Չինվորը սկսում էր գիտակցել, որ անհրաժեշտ է սահմանափակվել, սակայն չէր կողմնորոշվում սահմանների ընտրության հարցում: Երբ նոր հրամաններ էին տրվում, խուճապի էր մատնվում, քանի որ բարոյական տեսակետից վերջին հրամաններն առաջինների համեմատությամբ թվում էին անիրագործելի, տե՛ս Աբրահամյան, «Վահե Փանոսյան. ցեղասպանության հոգեբանությունը», 250:

¹⁴³ Նույն տեղում, 250-251:

¹⁴⁴ Նույն տեղում, 251:

միջև ստեղծվող յուրահատուկ հոգեբանական մթնոլորտի վերաբերյալ բերված տեսական դատողությունները հաստատվում են Բարթիկյանի հետևյալ վկայությամբ. «[...] Մի օր, կեսօրվա ժամանակ, Իզմիրի Բաշ Օթուրաք թաղամասի մուտերը ժողովուրդը խառնված, իրենց աչքերը երկինք հառած, մի բան էին դիտում: Խորհրդավոր լռություն էր տիրում և իմաստալից ակնարկներ էին փոխանակվում: Ոմանք իրենց մորուքը բռնած գլուխ էին ջարդում, իսկ ուրիշների դեմքի վրա ուրախության զգուշավոր նշաններ էին նշմարվում: Կարելի չէր որոշել, թե աղէտ էր պատահել, թե ոչ բախտավոր մի դեպք. այնքան զուսպ էին արտահայտությունները [...]: Բազմության մեջ գտնվող գլխարկավոր քրիստոնյաների դեմքի վրա էլ նշմարվում էր վշտի կամ սրտնեղության ակնհայտ թթվածություն, դժգոհության և մտմտուքի սառը, բայց անխոս մռայլություն: Երկու ժողովուրդներ՝ իսլամ և քրիստոնյա, երկու հակոտնյա արտահայտության պատկերներն էին ներկայացնում [...]: Իսկապես հետաքրքրական էր, օր ցերեկով երկնքի վրա երևա մահիկն ու աստղը, այնպես, ինչպես է թրքական դրոշակի վրա, սովորական մի երևույթ չէր [...]: Թուրք ժողովուրդը այդ երևույթը մեկնում էր համաձայն իր ցանկությանը, թե Իզմիրը վերադառնալու է իր նախկին տիրոջը [...]: Իսկ այդ մեկնությունը չարագուշակ էր քրիստոնյաների համար: Իրենք էլ ականա տպավորվելով, համակվում էին ներքին սարսուռով, որի ազդեցությունը կարելի էր նշմարել դեմքերի վրա: Երկու պատկերներ [...] թրքերի դեմքերը քանի գնում պայծառանում, իսկ քրիստոնյաների դեմքերը քանի գնում մռայլվում էին»¹⁴⁵:

¹⁴⁵ Բարթիկյան, *Արնաշաղախ Իզմիրը*, Ղազերեան, *Կենսագրական նօթեր*, 58-59:

Ականատեսի՝ քաղաքական խաղ հիշեցնող վերոբերյալ վկայությունն առաջին հայացքից սովորական մի պատմություն է, սակայն ցեղասպանություն ծրագրող պետության գործողություններում պատահականություններ չեն լինում: Պետությունը միայնակ չի գործում: Նա ժողովրդի աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ է իրականացնում իր ծրագիրը: Հետևաբար Ջմյունիայի թուրքական թաղամասում կատարվածը պատահականություն չէր: Ճիշտ է, սնտիապաշտությունը դեմ է գիտությանը, և թուրքերի այդ պնդումը չէր, որ փոխեց Ջմյունիայի պատմության հետագա ընթացքը, սակայն անհերքելի փաստ է, որ կատարվածը խորապես ազդել էր քրիստոնյաների վրա: Այս վկայությունը ո՛չ վերապրողի երևակայությունն է, ո՛չ էլ իրավիճակի այլաբանական նկարագրությունը, այլ թուրքերի կիրառած քարոզչական հնարքը: Ինչպե՞ս բացատրել թուրքերի հետևյալ պնդումը. «Իզմիրը վերադառնալու է իր տիրոջը»: Դա կանխամտածված և «պարտադրված» մեմ¹⁴⁶ էր, «հոգեկան վարակ»¹⁴⁷, որը

¹⁴⁶ Մեմետիկան (memos, meme) որակական փոփոխություններ է իրականացնում մարդու մտքում, նրա մտավոր գործունեության և մշակույթի մեջ: Այն չի համապատասխանում իրերի մեր պատկերացումներին և աշխարհընկալմանը: Մեմերը մշակույթի կառուցվածքային հիմնական տարրերն են, ինչպես գենը՝ որպես կյանքի կառուցվածքային տարր: Մեմերը ձևավորում են ոչ միայն այնպիսի երևույթներ, ինչպիսիք են մշակույթը կամ պետությունը, լեզուն և կրոնը, այլև մտածողության տարրերը, ձևերը կամ ուղղությունները: Սրանք այն ծրագրերն են, որոնք աշխատում են թիկունքում, Richard Brodie, *The Virus of the Mind: The New Science of the Meme* (London/N. Y., Paperback, 2004), 31, Юрий Мухин, *Власть над властью* (Москва: Алгоритм-Книга, 2007), 38:

¹⁴⁷ «Հոգեկան վարակը» դրվում է զանգվածային կիրառության մեջ թե՛ որպես հասարակայնության հետ կապերի սև եղանակ, թե՛ որպես հասարակության մտածողության ուղղորդիչ միջոց, թե՛ որպես անհատի գիտակցության ծրագիր: Հար և նման վարակների (սոցիալական, տեղեկատվական) պարզագույն սահմանումը ձևակերպվում է հետևյալ կերպ. զբաղեցնելով գիտակցության մարտա-

նպաստում է ծրագրած գործը հաջողությամբ և անվրեպ իրականացնելուն: Այս պատմությունն ընդամենը մեկ օրինակ է՝ պատկերացնելու, թե ինչպես է հնարավոր դառնում քրիստոնյա բնակչության կազմակերպված և արագ բնաջնջումը: Փորձենք փնտրել այն մեթոդները, որոնց կիրառմամբ հնարավոր էր դյուրությամբ իրականացնել զանգվածային սպանություններ և, որն ամենակարևորն է, կազմակերպել ծրագրված «վարակներից» հաջող պաշտպանություն:

Էլինա Միրզոյանի դիտարկմամբ՝ թուրքական լեզվամշակույթում քաղաքական խոսույթը, որպես կանոն, ավանդաբար փոխանցվում է. թուրքական «... մերն է» ձևակերպումը շրջանառության մեջ է դրվում հանրահավաքների ժամանակ¹⁴⁸:

1922 թ. սեպտեմբերին Ջմյուռնիայում հայերի և հույների բնաջնջման հանցավոր ծրագիրը մշակելիս, որպես իրենց գործողությունների հաջողության ապահովման և դրանք ավարտին հասցնելու երաշխիք, քեմալականները շահարկել են հոգեբանական տարբեր գործոններ, որոնցից թերևս ամենապարզունակը քրիստոնյաներին հանկարծակիի բերելն էր: Այն է՝ դիմադրության չհանդիպելու նպատակով քաղաքի քրիստոնյա բնակչության մեջ չպետք է կասկած սերմանվել՝ կապված առաջիկա կոտորածների հետ: Այս տեսանկյունից կարևորվում է Ջմյուռնիայի հայերի և հույների դիրքորոշման

դաշտերը և ոչ ճիշտ կողմն ուղղորդելով հոգեկան վարակները՝ շեղում են մարդկանց կյանքի ամենակարևոր ոլորտներից և առաջացնում շփոթություն, հոգեճնշում, հիասթափություն, տե՛ս Brodie, *The Virus of the Mind: The New Science of the Meme*, 31:

¹⁴⁸ Այն դիտարկվում է նաև որպես ադրբեջանական «պայքարի» համատեքստում ներդրված «Karabağ bizimdir» (Ղարաբաղը մերն է) լեզվաքարոզական ձևակերպման նախատիպ: Էլեկտրոնային նամակ հեղինակին, 01.07.2023 թ.:

հիմնախնդիրը՝ կանխամտածված ոճրագործության առնչությամբ: Պարզաբանենք. բացառելով բնաջնջվելու հավանականությունը՝ քաղաքի հայ և հույն քրիստոնյա բնակիչներն իրականում «ազատ են արձակել» ոճրագործի ձեռքերը և ավելի դյուրին դարձրել նախապես ծրագրված գործողությունների անարգել կատարումը: Ջմյունիայի հայերն ու հույներն անտեսում էին իրենց բնաջնջվելու վերաբերյալ բոլոր նախագգուշացումները, դրանք համարում ստահող տեղեկություններ և ապավինում քաղաքում տեղակայված եվրոպական պետությունների ներկայացուցիչների «համոզիչ» հորդորներին, թե իբր վախենալու կարիքը չկար. կոտորած չի կարող տեղի ունենալ, քանի որ բոլոր քրիստոնյաներն իրենց պաշտպանության ներքո են գտնվում ևն: Այս առնչությամբ խիստ հատկանշական է Ջմյունիայի հայերի հոգևոր առաջնորդ, արքեպիսկոպոս Դուրյանի¹⁴⁹ 1922 թ. նոյեմբերի 23-ին Աթենքում

¹⁴⁹ Ղևոնդ Դուրյան (Ջմպայան) (1879-1933) սրբազանը՝ որպես պատրիարքական փոխանորդ, պաշտոնավարել է Իզմիրյան, Օրմանյան և Եղիշե Դուրյան սրբազանների իշխանության ներքո, տե՛ս *Պատմության համար, Հալածանքը Դուրեան Սրբազանի դեմ*, Մատենաշար Դուրեան Յանձնախումբի, թիւ 2, 4 (Նիւ Եորք, 1934): Նա 1931 թ. ընտրվում է ամերիկահայերի հոգևոր առաջնորդ: 1933 թ. դեկտեմբերի 24-ին՝ ժամը 10:30-ին, Նյու Յորքի Սուրբ Խաչ եկեղեցում արարողության ժամանակ դաշունահարվում է: Արքեպիսկոպոսի սպանության վերաբերյալ մանրամասները գրի են առնված «Արես» օրաթերթում. «[...] Առաւօտ կանուխէն լեցուած էր եկեղեցին: Ուշագրաւ է, որ այդ օրը եկեղեցի եկած էին շատ մը անծանօթ դէմքեր, որոնք բնաւ եկեղեցի չեն յաճախեր: Եկեղեցիէն դուրսն ալ փողոցի անկիւնները արդէն կը նշմարուէին խումբ խումբ դաշնակցականներ, որոնք մեծ մասամբ եկած էին տարբեր քաղաքներէ: Նիւ Ճըրզիի դաշնակցական կազմը ամբողջութեամբ հոն էր առաւօտ կանուխէն: Հոգաբարձութիւնը առ ի կանխատեսութիւն ոստիկան կանչած էր: Առաւօտեան ժամը 10ին Առաջնորդ Սրբազանը կը հասնի եկեղեցի, կը դիմաւորուի եկեղեցոյ հովիւ Կարապետեան Եպիսկոպոսէն և հոգաբարձութեան կողմէ կ'առաջնորդուի դրան մօտիկ սենեակ մը զգեստաւորուելու համար: Մինչ այդ Կարապետեան Եպիսկոպոս կը խնդրէ մօտ 200էն աւելի ժողովուրդէն, որ հանդարտ

գրած համառոտ տեղեկագիրը, որում նա նշում է. «Վտանգին լրջութեան առջեւ խորհրդակցութիւններ ունեցանք Զմիւռնիոյ մետրոպոլիտ Գեր. Խրիստոսթոմոս սրբազանի* հետ եւ որոշեցինք Սեպտեմբեր 2 Շաբաթ օր ստիպողաբար դիմում կատարել Հէլլէն բարձր Քօմիսէր եւ Զմիւռնիոյ կառավարիչ Պ. Սթէրիատիսի, դժբախտաբար, կառավարիչը մեզ չընդունեց՝ առարկելով, թէ նախապէս ժամադրութիւն չէինք խնդրած. յաջորդ օր՝ Կիրակի, մասնաւոր ժամադրութեամբ Յոյն, Հայ եւ Բողոքական եկեղեցեաց պետեր ներկայացանք Պ. Սթէրիատիսի, որ կացութեան ամենածանր կերպով վտանգուած ըլլալը յայտնեց եւ ազատ թողուց օտար հիւպատոսներու մօտ մեր ընելիք դիմումներուն մէջ [...]: Քրիստոնեայ հոգեւոր պետե-

ըլլան մինչև որ Սրբազանը պատրաստուի: Քանի մը վայրկեան վերջ Սրբազանը պատրաստ, իր պատարագի հագուստով կը մօտենայ խորանին և իր աղօթքը կատարելէ ետք Ուրախ Լեր շարականով թափօր կը կազմեն դպիր, դպրուհիներ և թափօրը կը սկսի յառաջանալ դէպի ժողովուրդը: Սրբազանի մէկ ձեռքը խաչը և միւսը գաւազանը կը սկսի իր օրհնութիւնները տալ ժողովուրդին: Թափօրը հագիւ քանի մը քայլ կը յառաջանայ երբ տասնեակ մը երիտասարդներէն, որոնք կը գտնուէին Սրբազանին մօտ, մէկը կը յարձակի Սրբազանին վրայ: Ժողովուրդը ի տես այս արարքին իրարանցումի կը սկսի... Կիներ, երախաներ կը պօռան, կուլան և ահա այս շփոթութեան մէջ է որ այդ երիտասարդներէն մին իր մօտ գտնուած ութը «հնչէզ» դաշունով երեք հարուած կուտայ տարաբաղդ Առաջնորդին կողքին և յետոյ դաշոյնը թերթի մի մէջ փայթելով կը նետէ խօրանին առջեւ [...]: Սրբազանը իր ստացած հարուածին ծանրութեան տակ հագիւ հագ ինքզինքը կրնայ քաշքշել մինչեւ մօտակայ սենեակը, ուր մահը վայրկեանական կ'ըլլայ: Միայն մէկ բառ կ'արտասանէ. «Կողէս զարկին»: Տե՛ս «Ի՞նչպէս սպաննուեցաւ Ղեւոնդ արքեպիսկոպոս Դուրեան», *Արեւ* օրաթերթ, քաղաքական, գրական եւ տնտեսական (Գահիրէ, 19 յունուար, 1934), 1, *Պարմոյթյան համար*, *Հալաճանքը Դուրեան Սրբազանի դէմ*, Մատենաշար Դուրեան Յանձնախումբի, թիւ 3, 8 (Նիւ Եորք, 1934): Ղեւոնդ եպիսկոպոս Դուրյանի սպանութեան մասին տե՛ս նաև ՀԱԱ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 3470, 3471:

* Խոսքը վերաբերում է 1910-1914 թթ. և 1919-1922 թթ. Զմյուռնիայի ուղղափառ հոյների մետրոպոլիտ (արքեպիսկոպոս), Նորին Սրբազնութիւն Խրիստոստոմոսին (1867-1922), ում քեմալականները սարսափելի խոշտանգումների ենթարկելուց հետո սպանել են:

րուն հիպատոսներու մօտ ըրած դիմումը մեր հասարակութեան մէջ եւս վստահութիւն ներշնչեց, որ Անգղիական, Ամերիկեան, Ֆրանսական եւ Իտալական միջամտութիւն մը կամ պաշտպանութիւն մը ահաւոր աղէտի մը առաջքը պիտի կրնայ առնել եւ այս թեզը միշտ առաջ կը տարուէր, ու այդ մասին շատ կը խօսուէր [...]: Քաջալերական խօսքերը բաւական եղան, որ ես զգուշանայի իմ ժողովուրդիս ընելէ կացութեան մասին այնպիսի աննպաստ յայտնութիւններ, որոնք զինքը սարսափի կրնային մատնել եւ յառաջ բերել վտանգավոր խուճապ մը»¹⁵⁰:

Հայ-հունական զինակցութիւնը. Հայկական լեգեոն

1920 թ. մայիսին Արևմտյան Թրակիայի ազատագրումից հետո հունական բանակ մասնակիորեն զորակոչվում են նաև տեղի հայերը: 1921 թ. հուլիսի հրամանագրով զորակոչի էին ենթակա ոչ միայն հունահպատակ հայերը, այլև Թրակիայի ազատագրված շրջանների հայ երիտասարդությունը, բացառությամբ ֆրանսիական գրավման ներքո գտնվող տարածքների: 1922 թ. սկզբին հունական բանակի փոքրասիական արշավանքի վերջին փուլում կազմավորվում է Հայկական լեգեոն¹⁵¹ (Αρμενική Λεγεώνα) զորամասը հունական բանակում

¹⁵⁰ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748:

¹⁵¹ Շփոթմունք չառաջացնելու նպատակով նշենք, որ երկու տարբեր «Հայկական լեգեոն»-ներ են կազմավորվել տարբեր ժամանակահատվածներում: Այսպես՝ 1916 թ. հոկտեմբերի 27-ին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները, Փարիզի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի մասնակցությամբ, Սայքս-Պիկոյի համաձայնագրի շրջանակում, որոշում են ստեղծել «օսմանյան իշխանությունների նկատմամբ չեզոք» զորամիավորում՝ «Արևելյան լեգեոն» (Légion d'Orient) անվամբ: Իբրև օժանդակ ուժ՝ այն պատերազմի տարիներին ֆրանսիական բանակի կազմում պետք է կովեր բացառա-

Ճառայության անցած զորավար Արշակ Թորգոմի հրամանատարությամբ¹⁵²:

պես Ասիական Թուրքիայի մաս կազմող Սիրիայում և Կիլիկիայում, իսկ թուրքերի դեմ հաղթանակից հետո պետք է ապահովեր Կիլիկիայի ինքնավարությունը՝ ֆրանսիական մանդատի ներքո: 1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվում է կամավոր հիմունքներով հավաքագրված Արևելյան լեգեոնը, որը հետագայում վերանվանվում է «Հայկական լեգեոն»: Այն առաջին զուտ հայկական զորամիավորումն էր՝ աշխարհի տարբեր երկրներից (ԱՄՆ, Եվրոպա, Եգիպտոս, Հարավային Ամերիկա, Ավստրալիա ևն) եկած 4000-5000 զաղթականների մասնակցությամբ: Լեգեոնն իր կազմությամբ՝ բարձրաստիճան հրամանատարական կազմով, աստիճանակարգված զինվորականներով, զենքով ու զինամթերքով, ռազմական այլ հատկանիշներով և կարգապահությամբ լիովին համապատասխանում էր ժամանակի առաջավոր բանակներին: Տե՛ս Քնարիկ Ավագյան, «ԱՄՆ-ի հայերի մասնակցությունն ու նպաստը կիլիկյան կամավորական շարժմանը (1916-1920) (1918 թ. Արարայի ճակատամարտում «Հայկական լեգեոնի» տարած հաղթանակի 100-ամյակի առթիվ)», *Պատմաբանասիրական հանդես 2* (2018), 82-101, մանրամասն տե՛ս Սամվել Պողոսյան, *Կիլիկիան ազալագրելու նախագծերը 1914-1918 թթ.: Հայկական (Արևելյան) լեգեոնը* (Երևան, Քոփի Փրինթ, 2023):

¹⁵² Ραμαζιάν, *Ιστορία των Άρμενο-Ελληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας*, 191.

Զորավար Թորգոմը (Արսեն-Արշակ-Խարիտոն Նազգաշյան) ծնվել է 1878 թ. Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: Կ.Պոլսում կրթություն ստանալով՝ խմբագրել է «Ազատական» (Le Libéral) ֆրանսալեզու պարբերականը, հանդես եկել կայսրության իշխանությունների քննադատությամբ, որի հետևանքով թերթը փակվել է, իսկ Թորգոմին բանտարկել և քսորել են Ջմյուռնիա: Դատավճռի վերատեսույթունից և անպարտ ճանաչվելուց հետո Թորգոմն անցել է Բուլղարիա, ավարտել Կնյաժևոյի ռազմական դպրոցը, ապա վերապատրաստվել ֆրանսիական Սեն-Սիրիի հատուկ ռազմական դպրոցում: 1918 թ. հունվարին գնդապետի կոչումով Թորգոմը նշանակվում է Կարինում տեղակայված զորքերի հրամանատար: 1919 թ. սկզբին հունական բանակում հայկական զորամասի կազմավորման առաջարկ է ներկայացվում, որի նպատակով Թորգոմի և հունական բարձրաստիճան իշխանությունների միջև երկարատև քննարկումներ են սկսվում Լոնդոնում՝ Հունաստանի վարչապետ Վենիզելոսի և դիվանագիտական ներկայացուցիչ Դիմիտրիոս Կակլամանոսի և այլոց, ինչպես նաև՝ Կ.Պոլսում հունական զինվորական առաքելության և Ջմյուռնիայի զինվորական իշխանությունների, տեղում գործող «Փոքր Ասիայի հունական ինքնապաշտպանության մարմնի» հետ: Հարցի համաձայնեցումից հետո զորավար Թորգոմն Աթենքում ներկայանում է Կոնստանդինոս թագավորին, ստանում «Հայկական լեգեոն»-ի կազմավորման թույլտվության հրամանը: Լեգեոնն առանձին զորա-

Նախքան 1922 թ. սեպտեմբերին Ջմյունիայի հայերի ու հույների բնաջնջումն ու թաղամասերի հրկիզումը՝ զորավար Թորգոմի զորամասը քաղաքից շուրջ 80 կմ հեռու գտնվող Չեշմե (Կրինի) ծովախորշ հերոսական ռազմերթ է իրականացնում՝ ճանապարհին գերությունից ազատելով տեղի հայ և հույն բնակչությանը, քաղաքի վրա վերջին անգամ պարզում հունական և հայկական դրոշները, ապա կազմակերպում տասնյակհազարավոր տարագիրների տարհանումը մերձակա կղզիներ¹⁵³:

Հայկական լեգեոնի գործողություններն այնքան կարգապահ ու կազմակերպված էին, որ հունական զորքերի թիկունքում գործող հակառակորդի լրտեսները քեմալական ուժերի հրամանատարությանը տեղեկացնում էին Ջմյունիայում «Հայկական զորաբաժանման» (թուրք.՝ Ermeni Firkasi) մասին: Ջմյունիայի շրջանում մարտեր մղելով՝ լեգեոնը նահանջում է Չեշմե, որտեղից էլ՝ հույն գնդապետ Նիկոլաոս Պլաստիրասի զորքերի հետ ռազմանավերով փոխադրվում Քիոս կղզի¹⁵⁴: Ականատես հույն լրագրող-լուսանկարիչ Մանոլիս Մեղալոկոնոմոսը նշում է. «Թուրքերի՝ Ջմյունիա մուտք գործելուց կես ժամ առաջ մի հայկական մեծ զորաբաժին հաս-

միավորում էր հունական բանակում՝ սեփական դրոշով (երկգլխանի արծվակիր), իր սպայակազմով և ենթասպաներով (շուրջ 1700 սպա և զինվոր), հրամաններն արձակվում էին հայերեն: Լեգեոնի տեղակայման վայրը Ջմյունիայի մերձակա Բաչրովա բնակավայրն էր: Հրամանատարական կազմում ընդգրկված է եղել ռուսական և օսմանյան բանակների մոտ քսան նախկին սպա (գնդապետ Շահբեկյան, կապիտան Հակոբյան, ավագ լեյտենանտներ Խասաբաբյան և Տեր-Հակոբյան, Արցախից սերող ռուսական բանակի նախկին սպա, ապա հայկական բանակի կապիտան Գուրգեն Բեկզադյան և այլք), Բաբաջիան, *Ιστορία των Αρμενο-Ελληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας*, 191-201:

¹⁵³ Բաբաջիան, *Ιστορία των Αρμενο-Ελληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας*, 213:

¹⁵⁴ Նույն տեղում, 217:

տատուն քայլքով «Քեի» սալահատակ ճանապարհի երկայնքին առաջացավ հելլեն զինվորի համազգեստով ու սվինը ձեռքին՝ առաջնորդությամբ ճերմակ նժույգ հեծած գեներալ Թորգոմի [...]: Ջորաբաժնի սկզբում երկու դրոշակակիրներ բռնել էին հունական ու հայկական դրոշները: Շատ աչքեր արտասվեցին հույսով՝ ի տես այս զորքին, որն առաջանում էր դեպի թուրքական մահալեներն ու Կառավարչատուն [...]]¹⁵⁵:

Հայտնի է, որ Ջնյունիայի ինքնապաշտպանության մարտիկներ Բուզանդ Ջամբազյանը և Հովհաննես Մելքոնյանը «Արևելյան մամուլ» օրաթերթի¹⁵⁶ տպարանում հայտարարել են բնաջնջման անխուսափելիության մասին և, որպես լավագույն միջոց, առաջարկել ժողովրդին տեղափոխել մոտակա կղզիներ¹⁵⁷: Մինչդեռ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը հորդորել է խուճապի չմատնվել և վստահաբար հայտարարել, որ քաղաքի քրիստոնյաներն անհանգստանալու կարիք չունեն, քանի որ լավ հարաբերություններ ունենալով մյուսֆթիի հետ՝ տեսակցել է վերջինիս և հավաստիացել, որ իր հոտին որևէ

¹⁵⁵ Նույն տեղում, 218:

Հայկական լեգեոնի հետ զորավար Թորգոմը տեղափոխվում է Քիոս կղզի, ապա՝ հաստատվում Աթենքում: 1922 թ. նոյեմբերին Աթենքում կայանում է զորամասի վերջին ստուգատեսը, ինչին հաջորդում է կազմացրումը: Թորգոմը, նրա սպաներից Եփրեմ Վարդանյանը և այլք արժանանում են հունական բանակի համար պաշտոնապես հանձնվող պարգևների և կանոնավոր թոշակի: Մինչև 1936 թ. բնակվել է Աթենքում, հիմնել «Նույն-հայկական ընկերակցություն» կազմակերպությունը, 1923-1934 թթ. հրատարակել և խմբագրել է թերթեր («Արևելքի արձագանք», «Կիլիկիա», «Հայաստան»): Վերջնականապես հաստատվել է Փարիզում, որտեղ և կնքել է մահկանացուն (1953), Ραμαζιάν, *Ιστορία τών Αρμενο-Ελληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας*, 227-229:

¹⁵⁶ Գրական-քաղաքական պարբերական: Հրատարակվել է Ջնյունիայում 1871-1909 և 1919-1922 թթ.: 1871-1893 թթ.՝ իբրև ամսագիր, 1894-1902 թթ.՝ կիսամյա հանդես, 1903-1909 թթ.՝ շաբաթաթերթ, 1919-1922 թթ.՝ օրաթերթ:

¹⁵⁷ Բուզանդ Ճամպազեան, *Պարսնի կեանքի մը պատմությունը* (Լիբանան, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960), 42:

վտանգ չի սպառնում¹⁵⁸: Այս առնչությամբ Զամբազյանը գրում է. «Ժողովուրդին մէջ աղմուկ, իրարանցում մը տեղի ունեցաւ: Եկան, հրեցին, հրմշտեցին զիս վար առին ու սկսան ծեծել [...]: Այդ ատեն Հայնոցի կողմէն ռումբ մը պայթեցաւ: Բակին մէջ մարդ չմնաց: Ամէն մարդ ծակ մը գտաւ մտնելու: Մէջտեղ մնացինք զինուածներս, Դուրեանին կողմէն ստահակ կամ չարագործ անուանեալներս, որոնք քիչ ետք պիտի դառնային ազատարարները վեց հազար հոգիի»¹⁵⁹:

Հունական ռազմական աղբյուրների վկայությամբ՝ Անկախ դիվիզիայի պաշտպանության ներքո Դիկիլի է հասել մոտ 6000 հայ և հույն, ապա նավերով տեղափոխվել մերձակա Միտիլինի: Զորավար Թորգոմի վկայությամբ՝ Հալքափինարի հատվածում անմիջական բախման մեջ գտնվելով հակառակորդի ուժերի հետ՝ անձամբ տեղեկություն է ստանում Սուրբ Ստեփանոս եկեղեցու շրջանում ապաստանած հայ գաղթականների և վիրավոր ու տկար հույն զինվորների մասին: Արագորեն կողմնորոշվելով՝ Հայկական լեգեոնից մի խումբ զինվորներ է ուղարկում, որոնք հերոսաբար մասնակցում են տեղի ինքնապաշտպանությանը (զոհվում են լեգեոնի երկու սերժանտ և երեք զինվոր)¹⁶⁰:

¹⁵⁸ Նույն տեղում:

¹⁵⁹ Նույն տեղում, 43: 1922 թ. սեպտեմբերի 9-ից 13-ը մղած հերոսական ինքնապաշտպանությանը զորավար Թորգոմի հրամանատարության ներքո մասնակցել են նաև Արսեն Չավուշը, Ավագ Վարդանյանը, Փանոս Մեսրոպը, Ավետիս Ալլախլերդյանը, Հովհաննես Մելքոնյանը, մանիսացի Աշճը Հակոբը, կեսարացի Թորոս Թորոսյանը և նրա կինը՝ Պայծառը, թոմարացի մի քահանա և ուրիշներ: Տե՛ս Բառազյան, *Իστοրիա Դոն Արմեո-Էլլիոնիկոն ստրատիոտիկոն սխեսեոն կալ սոներգասիոս*, 223:

¹⁶⁰ Բառազյան, *Իστοրիա Դոն Արմեո-Էլլիոնիկոն ստրատիոտիկոն սխեսեոն կալ սոներգասիոս*, 223.

Ջամբազյանը, որ 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ եղել է ընդամենը վեց տարեկան, իսկ պատանեկության տարիներին դարձել քրիստոնյաների նկատմամբ երիտթուրքական վարչակարգի իրագործած ցեղասպան քաղաքականության ականատեսը, քաջ գիտակցում էր, որ զմյուռնիաբնակ քրիստոնյաների ապրելու իրավունքը ոտնահարված էր, և Անկարայի կառավարությունը դաժանորեն իրականացնելու էր նրանց բնաջնջելու ծրագիրը:

Զմյուռնիայի հայերն ու հույները, սակայն, որքան էլ տարօրինակ թվա, համակված էին այն համոզմամբ, թե իրենց կյանքին վտանգ չի սպառնում, քանի որ գտնվում են, ինչպես իրենց էր թվում, օտարերկրյա ներկայացուցչությունների հուսալի հովանու ներքո, և միամտաբար հավատում էին, որ թուրքերը հերթական անգամ վայրագություններ չեն իրականացնի: Այդ մասին վկայում է ականատես-վերապրող Ռոզ Բերբերյան-Կաչոյանը. «Եղբայրս ասաց, որ պետք է հեռանանք քաղաքից, սակայն ծնողներս առարկեցին՝ ասելով, թե ինչ կարող է պատահել, երբ բոլոր ռազմանավերը հսկում են նավահանգիստը: Ոչինչ չի կարող պատահել այդքան շատ վկաների ներկայությամբ»¹⁶¹:

Այս առնչությամբ հիշարժան է նաև ականատես-վերապրող Մինաս Զիհանյանի ստուգապատում վկայությունը. «[...] 1922 ի ամրան, Կիրակի իրիկուն մը, ես ալ, թէեւ 16 տարեկան, զինուած կը շրջագայէի դրացի հայերու հետ մէկ խրճիթէն միւր: Կայարանին հեռագրատան պաշտօնեայ գրրգ-աղաճցի Մանուկ Դարբինեանին դիմեցի եւ օրուան վատ լուրե-

¹⁶¹ Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922, the Destruction of a City* (New York: Newmark, 1998), 120.

րուն մասին լուսաբանութիւն ուզեցի: Ան ալ, կիսատեղեակ անցուդարձերէն, լրիւ բան մը չըսաւ, բայց «կացութիւնը լաւ է» յարեց...: Անմիջապէս գացի ազգականներէս Ներսէս Գարանֆիլեանին խրճիթը եւ հօր ներկայութեան յայտնեցի օրուան մտահոգիչ զրոյցները: Չհաւատացին ինծի, տղայական զրոյց նկատեցին լրատուութիւնս եւ ծիծաղեցան վրաս»¹⁶²:

Մեկ այլ վերապրող Տիգրանուհի Արթինյանը (ծնունդով Կեսարիայի Թալաս գյուղից, 1911-2001), որը չորս տարեկանում կորցրել էր հորը և մոր հետ բնակություն հաստատել Չմյուռնիայում, փրկվել է՝ ամերիկյան նավերից մեկի օգնությամբ ապաստանելով Եգիպտոսում¹⁶³: Հետագայում նա իր հուշերում վկայում է. «Միամիտները լավատես են. Չէ՛, ճանըմ, Համաձայնականներու (Անտանտի – Թ. Մ.) նաւերը Իգմիրի առջեւ շարուած են, չեն թողուր որ բան մը պատահի [...]: Արդէն կը լսուին փողոցը խուճապահար վազողներու ձայներ ու քիչ ետք ձիերու սմբակներու դոփիւնը սալաքարերուն վրայ: Մուրթաֆա Քէմալի կանոնաւոր բանակն է, որ կ'անցնի մեր սրտերուն վրայէն: Չեմ գիտեր, թէ մեծերը ի՞նչ կը խորհէին, բայց ինձ թուեցաւ, թէ քարացած էր հայ ժողովուրդի Տան մէջ գտնուող իւրաքանչիւր անձ [...]:»¹⁶⁴:

Այն մասին, թե ինչպես են փրկվել իր ընտանիքի անդամները, Տիգրանուհին գրում է. «Որոշուած էր փոքր պատուհանէն նայիլ ու երբ տեսնուէր, թե օտար պետութեան մը հովանիին տակ խումբ մը կանցնէր, յանկարծ բանալ դուռը, ու

¹⁶² Մինաս Ճիհանեան, Չմիւռնիոյ աղէտը, Գըրգ-Աղաճի հայոց ազատումը (1922 սեպտեմբեր), 1915-1965, *Յուշամատենան Մեծ եղեռնի* (Պէյրուօ, Ատլաս, 1965), 888-889:

¹⁶³ Արթինեան, *Հայ մօր յուշեր*, *Տորոնտո*, 3:

¹⁶⁴ Նոյն տեղում, 21-23:

խառնուիլ օտարահպատակներուն: Այդպէս ալ եղաւ, եւ մենք հասանք ֆրանսական Գաթէտրալը: Հոն մեծ բազմութիւն մը խառնած էր արդէն [...]: Հրդեհը ծայր տուած էր արդէն ու հասած մինչեւ ծովեզերք, ու այդ գիշերն իսկ մենք ստիպուեցանք հեռանալ Գաթէտրալէն»¹⁶⁵:

Ինչո՞ւ Զմյուռնիայի քրիստոնյաները հավանական չէին համարում իրենց բնաջնջումը, ինչպե՞ս կարելի է դա բացատրել, ինչո՞վ էր պայմանավորված այդ հանգամանքը: Նալչաջյանն այդ համոզմունքը համարում է խնդրի հանդեպ մարդկանց խմբի ցուցաբերած պարզունակ մոտեցման դրսևորումը և շեշտում. «Էթնոգենեզը շատ տևական և բարդ գործընթաց է, և որևէ ազգի հոգեկերտվածքի ու էթնիկական բնավորության մեջ փոփոխությունների համար մի քանի տասնամյակն անգամ ընդամենը վայրկյան է, և այդ կարճ ժամանակահատվածում ազգի կերպարի մեջ կտրուկ փոփոխություններ ակնկալելն առնվազն միամտություն է [...]: Ուստի «թուրքը փոխվել է» դիրքորոշումը ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր ընդամենը ինքնախաբեություն է, իրականության ժխտման վրա հիմնված հոգեբանական ինքնապաշտպանական բարդույթ»¹⁶⁶:

Ուշագրավ է նաև ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի հետևյալ դիտարկումը, որը բնորոշ է Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության և նրա նկատմամբ ցեղասպան քաղաքականություն իրականացրած քեմալականների փոխհարաբերությանը՝ որպես զոհ-ոճրագործ. ««Զոհի» հասկացությունն անբաժան է ցեղասպանությունից [...]: Զոհը ցե-

¹⁶⁵ Նույն տեղում, 23-25:

¹⁶⁶ Նալչաջյան, «Յեղասպանությունը՝ որպես հոգեբանական ֆենոմեն», 347:

ղասպանության պահին չէ, որ դառնում է զոհ, և ոչ էլ դահիճն է դահիճ դառնում ցեղասպանության իրականացման ժամանակ»¹⁶⁷: Նա իրավացիորեն նկատում է, որ այդ երևույթը բարդ գործընթաց է, որն ավելի վաղ է սկսվում, քան բուն ցեղասպանությունը¹⁶⁸:

Հոգեբան Արմինե Վահանյանը մեր զրույցում ընդգծեց. «Հնարավոր վտանգի, օտարների կողմից հարձակման ենթարկվելու մասին լուրերը, կարծես թե, միշտ ուղեկցել են տարածաշրջանի բնիկներին և, որպես այդպիսին, չեն ընդունվել որպես բացառիկ մի բան, որից կարելի էր անորոշության տազնապ ունենալ կամ էլ առհասարակ լինել ապակողմնորոշված. զոհը՝ բռնության ենթարկված նախնիների համար «վրեժխնդիր լինելու նպատակով», իր անգիտակցական պայքարում մինչև վերջ գնալու ցանկություն է ունենում: Սա կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ բնիկ ժողովուրդների շրջանում մշակութային հակազդեցությունը՝ որպես վարքային ռազմավարություն, աֆեկտիվ-ահագնացող չէ և հեռու է քսենոֆոբ դրսևորումներից: Հետևաբար, մոտակա վտանգի առկայությունը երբեմն կարող է մղվել հետին պլան կամ էլ անտեսվել. զոհաբանության համատեքստում միանգամայն բացատրելի է այս ֆենոմենը. զոհը մինչև վերջ «հույս է փայփայում», որ այդ ամենն իր հետ կարող է և չպատահել: Սա ժխտման հոգեբանական մեխանիզմն է, երբ սոցիոգենետիկ հիշողության մեջ պահպանված տեղեկույթն այնքան սթրեսային է և կազմաքանդող, որ տեսակը, կարծես թե, հրաժարվում է այն ընդունել կամ էլ արտամղում է՝ այդ

¹⁶⁷ Նիկոլայ Հովհաննիսյան, *Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում* (Երևան, Ձևագակ-97, 2002), 18:

¹⁶⁸ Նույն տեղում:

կերպ նվազեցնելով նրա իրական տրավմատիկ ազդեցությունը: Եվ, ի վերջո, զոհին կարող է բնորոշ լինել ինքնավեհացման գործընթացը. ենթագիտակցական կամ անգիտակցական մակարդակում զոհը «կամովին փորձում է» իր հոգեվիճակը հասցնել փրկակար էկզիստենցիալ կատարսիսի, որի պայմաններում զոհը կարող է թվալ ճշմարիտ, իսկ իրավիճակն՝ անխուսափելի»¹⁶⁹:

Կրոնագետ-ցեղասպանագետ Շուշան Խաչատրյանը մեր գրույցի ընթացքում հետևյալ համոզմունքը հայտնեց. «Հայերի ու հույների՝ իրենց բնաջնջման հնարավորությունը բացառելը՝ ընդամենը հոգեբանական ինքնապաշտպանական բնազդ է: Քրիստոնյաներն իրենց զոհ չէին ընկալում, թեև քրիստոնեությունը հաճախ թյուրիմացաբար մեկնաբանվում է որպես «զոհի կրոն»: Փաստորեն, բացառելով իրենց զոհ դառնալու հանգամանքը, պաշտպանվում էին բացասական երևույթից»¹⁷⁰:

Ընդունելով Խաչատրյանի՝ երևույթը որպես ինքնապաշտպանական բնազդ ներկայացնելու մոտեցումը, այնուամենայնիվ, տարօրինակ ենք համարում մասնավորապես այն հանգամանքը, որ Զմյուռնիայի բազմաթիվ հայ և հույն բնակիչներ համոզված էին, թե թուրքական բանակը, մուտք գործելով քաղաք, չի իրականացնելու իրեն հատուկ բարբարոսությունները, որոնք սկզբից ևեթ բնութագրական են եղել Օսմանյան պետության համար: Ընդհակառակը՝ նրանց քրիստոնյա բնակչության մեջ կային անձինք, որոնց կարծիքով թուրքական բանակն այդ ժամանակ պետք է լիներ «օրինապահ և քաղաքակիրթ»: Այդ տեսակետը սատարողների թվում էին նաև Կարապետ Խաչերյանը, Ֆրանսիայի հյուպատոսա-

¹⁶⁹ Արմինե Վահանյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 22 հունիսի 2023 թ.:

¹⁷⁰ Շուշան Խաչատրյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 3 մայիսի 2019 թ.:

րանի իրավագետ, փաստաբան Հարություն Սիսյանը և այլք: Իսկ ինչո՞վ էր պայմանավորված նրանց լավատեսությունը: Բժիշկ Կարապետ Խաչերյանն իր օրագրում նշել է. «[...] Ինձ նման հազարավորներն այն համոզմունքին են, թե թուրքը չի կարող Իզմիր մտնել, իսկ եթե նույնիսկ դա նրան հաջողվի, նրան չպիտի թույլատրվի գործադրել իր սովորական խժոժությունները»¹⁷¹: Քաղաքում բնակվող քրիստոնյաների շրջանում վստահությունն առ այն, թե իրենց ոչինչ չէր սպառնում, բավականին մեծ էր: Խաչերյանը խոստովանում է. «[...] Երեք տարվա անընդմեջ աշխատանքիս շնորհիվ Իզմիրում ձեռք բերած նախանձելի դիրքս չեմ ուզում կորցնել քիչ հավանական ինչ-որ վտանգի պատճառով»¹⁷²:

Բերենք ևս մեկ օրինակ: Սիսյանը Չմյուռնիայում վերահաս հնարավոր անկարգություններին առնչվող լուրերին արձագանքում է հետևյալ կերպ. «Վախենալու բան չկա. թուրքական բանակը այս անգամ մուտք պիտի գործի խիստ օրինապահորեն և աշխարհին պիտի ցույց տա, որ թուրքը քաղաքակիրթ ազգ է [...]: Անխոհեմություն կլիներ տուն, աշխատանք, դիրք թողած՝ անձանոթ հորիզոններ փնտրելը»¹⁷³:

Մեր գրույցում մշակութաբան-ցեղասպանագետ Հասմիկ Գրիգորյանը հայտնել է հետևյալ կարծիքը. «Սոցիալ մշակութային միջավայրը, քաղաքացի լինելու փաստը, որպես կանոն, նպաստում են, որպեսզի զոհը բացառի իրեն ոչնչացնելու ոճրագործի նպատակադրումը: Բացի այդ, զոհը չի ուզում հավատալ, որպեսզի դրանով կանխարգելի տեղի ունենալիք

¹⁷¹ Սաքայան, *Չմյուռնիա 1922, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 59:

¹⁷² Նույն տեղում, 61:

¹⁷³ Նույն տեղում, 62:

չարիքը: Նա այդ ամենը դիտարկում է որպես սուտ լուր, ահաբեկություն»¹⁷⁴:

Զմյուռնիայի հայ և հույն բնակչության նման համոզմունքը մեկնաբանելի է: Չէ՞ որ միամիտ ու ազնիվ ժողովուրդը հավատում է այն ամենին, ինչն իրեն, որպես քարոզչական հնար, մատուցվում է: Այսպես, օրինակ, սեպտեմբերի 9-ին՝ շաբաթ առավոտյան, Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության շրջանում նվազագույն կասկածն անգամ փարատելու և թուրքերի նկատմամբ վստահություն ներշնչելու նպատակով, թուրքական բանակի ստորաբաժանումների ժամանմանը զուգընթաց, քաղաքի պատերին փակցվել են Քեմալի ստորագրությամբ հայտարարություններ, որոնք ազդարարում էին, թե մահապատժի կենթարկվեն բոլոր նրանք, ովքեր քրիստոնյաների նկատմամբ բռնություններ կկիրառեն: Հայ ավետարանական եկեղեցու քահանա Աբրահամ Հարթունյանը, ծանոթանալով դրանցից մեկին, որը եղել է միաժամանակ հունարեն և թուրքերեն, հաղորդում է. «Մուսթաֆա Քեմալն իր զինվորներին խստապահանջորեն հրամայել էր ոչ ոքի չկոտորել և չվնասել: Նրանք, ովքեր չեն հնազանդվի, կենթարկվեն մահապատժի: Թող մարդիկ համոզված լինեն իրենց անվտանգության հարցում»¹⁷⁵:

¹⁷⁴ Հասմիկ Գրիգորյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 6 սեպտեմբերի 2019 թ.:

¹⁷⁵ Abraham H. Hartunian, *Neither to Laugh nor to Weep. A Memoir of the Armenian Genocide* (translated from the Original Armenian Manuscripts by Vartan Hartunian) (Boston: Beacon, 1968), 193. Տե՛ս նաև՝ René Puaux, *La mort de Smyrne. Les derniers jours de Smyrne* (Réunis et présentés par Varoujean Poghosyan) (Erevan : Éditions de l'Université d'État d'Erevan, 2012), 81, Varoujean Poghosyan, *Le désastre de Smyrne de 1922* (recueil de documents) (Erevan : Éditions de l'Université d'État d'Erevan, 2011).

Քրիստոնյաները, որոնց այս հայտարարությունը որոշ չափով հուսադրել էր, երկուշաբթի օրն առիթ են ունենում զարմանքով տեսնելու, որ «մահապատիժ» բառը պարզապես փոխարինվել է «պատիժ»-ով¹⁷⁶:

Ի՞նչ կարող էր մտածել պետության այն քաղաքացին, որն արդար աշխատանքով էր վաստակել իր հացը և այն կիսել թուրք հարևանի հետ: Ինչո՞ւ պետք է չհավատար, որ իր կյանքն ու ունեցվածքն ապահով են: Ինչո՞ւ պետք է մեկընդմիջտ լքեր իր ծննդավայրը: Սակայն քրիստոնյա ժողովուրդները հուսախաբվեցին՝ լուրջ չընդունելով բնակավայրերից հեռանալու մասին հորդորները:

Մկրտիչ Ավետյանն այն բացառիկ հայերից էր, որ վտանգի լրջությունն իրատեսական էր համարում: Ավետյանի՝ հայերի «սեւ մուֆ ամպի մը տակ ապրելու» գիտակցման մասին կարդում ենք. «1914 թուին Իզմիր գործով գացեր էի, կը ստանամ հեռագիր մը՝ ապրանք զարնելու մասին, կը վերադառնամ, քաղաքը կը գտնեմ տակն ու վրայ: Մերսինի մեզի դրկած հեռագիրը կը հաստատէ, որ մենք՝ հայերս, սեւ մուֆ ամպի մը տակ ապրեր ենք, այլեւս հայութեան համար նոր բան, նոր գործ, որ ամէն հայու գիտցածն է, այս բանը աւելորդ կը համարեմ անոնց մասին գրել»¹⁷⁷:

Թե ինչպես փրկվեցին Մկրտիչ Ավետյանն ու ընտանիքի անդամները, հուշագրության մեջ կարդում ենք. «[...] Ես բարեբախտաբար Աստուածային հրաշքով ականատես չեղայ, շաբաթ մը առաջ 20 ընտանիքի 28 անդամներով 190 ոսկի

¹⁷⁶ Puaux, *La mort de Smyrne. Les derniers jours de Smyrne*, 81.

¹⁷⁷ Աւետեան, *Յուշեր*, 4:

գոհողութեամբ կրցած էի ողջ առողջ հասնիլ Իզմիրի դիմաց յունական Միտիլի կղզիի գիւղ մը»¹⁷⁸:

Անշուշտ, Ջմյունիայի հույները քաջատեղյակ էին Պոնտոսում, Թրակիայում և Փոքր Ասիայում, իսկ հայերն էլ՝ Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և կայսրության մյուս տարածքներում զուգահեռաբար իրականացվող ցեղասպանություններին: Ջմյունիայի հայ բնակչությունը չէր կարող անտեղյակ լինել քեմալականների իրագործած Կիլիկիայի հայերի զանգվածային կոտորածին: Այդուհանդերձ, Ջմյունիայի հունական և հայկական համայնքները թերևս իրենք իրենց ստիպում էին հավատալ, որ նավահանգստում օտարերկրյա պետությունների նավերի առկայությունը թուրքական բանակի և Քեմալի համար զսպող դեր կունենա, և իրենց հետ չի կատարվի այն, ինչ կայսրության այլ տարածքներում տեղի ունեցավ իրենց ազգակիցների հետ: Ջմյունիայի հայերի և հույների համոզմունքը, որ իրենց հետ որևէ աղետալի բան տեղի չի ունենա, իրականում կատարելապես հիմնազուրկ էր: Տասնյակ հազարավոր անմեղ հույներ և հայեր դարձան քեմալական վարչակարգի ցեղասպան քաղաքականության զոհը:

Հայերի և հույների բնաջնջումը Ջմյունիայում

1922 թ. սեպտեմբերին Ջմյունիայի քրիստոնեաբնակ թաղամասերի հայ և հույն բնակչության բնաջնջումը, ապա քաղաքի հրկիզումը թուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականության շարունակությունն էին¹⁷⁹: Ազգա-

¹⁷⁸ Նույն տեղում:

¹⁷⁹ Մանրամասն տե՛ս Tehmine Martoyan, “The Destruction of Smyrna in 1922: An Armenian and Greek Shared Tragedy,” *Genocide in the Ottoman Empire*,

յին քրիստոնյա փոքրամասնություններին Թուրքիայից արտաքսելու Քեմալի քաղաքականությունը հանգում էր համընդհանուր թուրքացմանը¹⁸⁰:

Զարդարար պետության ծրագրերը մշակված էին սառնասրտորեն, իսկ դերաբաշխումը կատարված էր հաշվենկատորեն: Անմեղ զոհին հատուկ էին վստահությունն ու հավատը, ոճրագործին՝ նենգությունն ու ծայրահեղ դաժանությունը: Քեմալականներն ամեն ինչ իրականացրին «անթերի, անշեղորեն և ճշգրիտ»: Երբ սեպտեմբերի 9-ին՝ առավոտյան ժամը 11-ին, թուրքական հեծելազորը մտնում է Ջմյունիա, թվում է, թե արտառոց ոչինչ տեղի չի ունենալու: Սակայն առիթն անհապաղ ընձեռվում է: Այդ մասին Աթենքում հրատարակվող «Նոր օր» պարբերականի 1924 թ. համարներից մեկում կարդում ենք. «Խիստ կարգապահութամբ գարափէն անցան: Միայն Բասափորթին առջև, անձանոթ մը ռումբ նետեց, որմէ վիրավորուեցաւ թուրք զինւորական մը ու կարծես այս դէպքը ազդանշան մը եղաւ սպանութիւններու, կողոպուտներու սկսելու»¹⁸¹:

Քեմալը հայերի զանգվածային բնաջնջումը ժամանակին անվանել էր «խայտառակություն», իսկ «Մինբեր» (Minber) օրաթերթն այն որակել էր որպես «պատմության նկատմամբ

Armenians, Assyrians, and Greeks, 1913-1923, ed. George N. Shirinian (New York: Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2017), 227-249; Թեհմինէ Մարտոյեան, «1922 Սեպտեմբեր. Ջմիւռնիայի հայերի եւ յոյների բնաջնջումը եւ քրիստոնէաբնակ թաղամասերի հրկիզումը», *Հայկազյան հայագիտական հանդես* 41 (2021), 199-220:

¹⁸⁰ Հակոբ Հակոբյան, *Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը* (Երևան, Ասողիկ, 2000), 114:

¹⁸¹ «Ջմիւռնահայ կեանքը զինադադարէն յետոյ, Ահաւոր փլուզումը», *Նոր օր* 3 (1924), 29:

կատարված ամենամեծ և ամենասաններելի» գործողություն¹⁸²: Վերոբերյալ բնորոշումները, ինչպես Քեմալի այն խոստումը, թե «կյանքն ու ունեցվածքը պետք է հարգվեն», փաստորեն արգելք չեն հանդիսանում, որ Զմյուռնիայի բնակչությունն անմիջապես ենթարկվի կողոպուտի, բռնության և զանգվածային կոտորածի:

Վերստին դիմենք ականատեսի վկայությանը: Սեպտեմբերի 10-ի առավոտյան Խաչերյանի կատարած գրառումից տեղեկանում ենք. «[...] Նավահանգստում հանդարտություն է տիրում: Ուրախանում ենք, որ թուրքական գրավումը տեղի ունեցավ առանց արյունահեղության: Սակայն պատշգամբից տեսնում ենք տասնհինգամյա մի պատանու դիակ, որին մի քանի հոգի մոտակա փողոցից տեղափոխում են նավամատուցի պատի մոտ: Ճանապարհին հանդիպում ենք օտարահպատակ մի քանի հայ երիտասարդների, որոնցից տեղեկանում ենք, որ թուրք զինվորը և խուժանը թալանել են Հայնոցը, առևանգել կանանց ու աղջիկներին և պաշարել Սուրբ Ստեփանոս եկեղեցին ու Առաջնորդարանը»¹⁸³: Այնուհետև շարունակում է. «[...] Հայնոցն ու շրջակա թաղերը դարձել են անմարդաբնակ, մինչդեռ ֆրանկների թաղի շուրջը գտնվող հույն թաղերում երևում են հատուկենտ անցորդներ: Հայնոցի վիճակը տեսնելուց հետո հասկացա, որ թուրքը միշտ նույն ջարդարար ու կողոպտիչ տարրն է, լինի Ալբանիայում, Մակեդոնիայում, թե Թրակիայում, լինի Արաբիայում, Սիրիայում, թե Հայաստանում: Թուրքը նույն արյունարբու գազանն է՝ անկախ այն բանից, թե սքողված է իթթիհաթական, թե իթիլա-

¹⁸² Անումյան, *Երիտթուրքերի 1919-1921 թթ. դադարավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի*, 34:

¹⁸³ Սաքայան, *Զմյուռնիա 1922, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 67:

Ֆական, համիդական, թե քեմալական դիմակի տակ: Թուրքը նույն գիշատիչ բորենին է՝ թե՛ Փոքր Ասիայի ներքին գավառների խորքերում, թե՛ Պոլսի և Իզմիրի նման եվրոպականացված քաղաքներում»¹⁸⁴:

1920-ական թթ. Լոնդոնի համալսարանի (Թագավորական քոլեջ)՝ Բյուզանդիայի և հույն ժողովրդի նոր պատմության դասախոս դոկտոր Լիսիմախոս Օեկոնոմոսը նկարագրում է, թե ինչպես է հայկական թաղամաս ներխուժած թուրքական անկանոն բանակը դանակներով և սվիններով կոտորել բնակչությանը¹⁸⁵:

Հիշարժան է Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանի հետևյալ հաղորդումը. «Սեպտեմբեր 9, շաբաթ առտու, թուրքերու մէջ տարածուած ըլլալով քեմալական բանակին Իզմիրին շատ մօտ գտնուիլը, խաժամութ ամբոխը ոտքէն ցզլուխ զինուած իջաւ շուկայ. նոյն առտու շուկայէն անցնող կարգ մը քրիստոնեաներ գանակոծուեցան, վիրատրուեցան, եւ ոմանք ալ խոշտանգումներու հետեանօք մեռան: Սոյն օրը՝ ժամը 10-էն սկսեալ, Իզմիրի այլեւ այլ կողմերէն քեմալական յառաջագնաց ջոկատներու ներս խուժելը աւելի խրախուսեց թուրք խուժանը, որ թրքական դրօշներով սկսաւ պտտիլ քաղաքին մէջ: Պասմախանէի հանդիպակաց պուլվարին վրայ հաւաքուած թուրք խուժանը սկսաւ Հայոց թաղին ուղղութեամբ հրացան արծակել. այս հրացանաձգութիւնը, որ քառորդ ժամ տեւեց, պատճառ եղաւ, որ Հայոց թաղի մերազնեայք Ս. Ստեփանոս եկեղեցին ապաստանին [...]: Ապաստանողների մէջ 2000-ի չափ մանուկներ կային»¹⁸⁶:

¹⁸⁴ Նույն տեղում, 69:

¹⁸⁵ Economos, *The Tragedy of the Christian Near East*, 4.

¹⁸⁶ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748:

Բնաջնջումն իրականացվում էր ռազմական գործողություններին զուգընթաց և շատ անգամ դրանցից անկախ¹⁸⁷: Ջորջ Հորթոնն այս առնչությամբ հաղորդում է. «Թուրքերի՝ Ջմյուռնիա մտնելուց անմիջապես հետո կողոպուտը, հափշտակությունը, բռնաբարությունը և կոտորածն ավելի մեծ թափ ստացան: Վրեժխնդրությունն ուղղված էր գլխավորապես հայերի դեմ. նրանց մեղադրում էին ռումբ օգտագործելու մեջ [...] Այդուհանդերձ, դա չի արդարացնում կանոնավոր բանակի դասակի երեք օր ու գիշեր տևած դաժան հաշվեհարդարը հայերի հետ [...]: Ոչ մի քարոզչություն չի կարող թաքցնել այն, ինչն իրականում կատարվեց Ջմյուռնիայում, որովհետև վստահության արժանի շատ վկաներ կան, և ճշմարտությունն անշուշտ բացահայտվելու է»¹⁸⁸:

Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը նախապես որոշել էր իբրև հայ հոգևորական ներկայանալ Ջմյուռնիայի զինվորական կառավարչի պարտականությունները կատարող գեներալ Մեհմեդ Նյուրեդդին փաշային¹⁸⁹ և գթություն աղերսել իր հոտի համար: Նա գրում է. «Առաջնորդարանին վրայ, թուրք խուժանին եւ անկանոն զինուորներու կողմէ եղած կատաղի

¹⁸⁷ Յակովու Ակցողլու, *Անիծված առյուծի բնաջնջումը: Մեր Անապոլիայի հեյլենականության մեթոդավորված բնաջնջման գործընթացի իրար հաջորդող փուլերը* (Երևան, Ճարտարագետ, 2007), 102:

Մինչև 1922 թ. սեպտեմբերի 18-ը հունական բանակը դուրս է գալիս Փոքր Ասիայից: 1922 թ. հոկտեմբերի 11-ին Մարմարայի ծովափնյա Մուդանիա քաղաքում Թուրքիայի և Անտանտի երկրների միջև ստորագրվում է զինադադար, որին հոկտեմբերի 13-ին միանում է Հունաստանը: Մուդանիայի զինադադարով, ապա Լոզանի պայմանագրով ավարտվում է հույն-թուրքական պատերազմը (1922-1923):

¹⁸⁸ Horton, *Report on Turkey, USA Consular Documents*, 20-21.

¹⁸⁹ Մեհմեդ Նյուրեդդին (Սաքալլը, 1873-1932), զինվորական և պետական գործիչ: 1922 թ. հունիսի 29-ին նշանակվում է Առաջին բանակի հրամանատար, իսկ օգոստոսի 31-ին ստանում է ֆերիքի (գեներալ-լեյտենանտ) կոչում:

յարձակումներն ու հրացանաձգութիւնները խորհիլ տուին ինձի, թէ Առաջնորդարանը թողլով ուրիշ տեղ մը ապաստանիլս եւ անկէ որեւէ միջոց գտնելով, Նուրէտտին փաշային ներկայանալովս, եւ ժողովուրդիս վրայ անոր գթութիւնը եւ բարեացակամութիւնը հայցելս անելի ճիշդ պիտի ըլլար [...]: Հրաշքով դուրս նետուեցայ [...]: Առաջնորդարանէն մինչեւ Այեա Ֆօթինիի երկարող Թավէրնէս կոչուած փողոցը, իւրաքանչիւր քայլափոխիս սպաննուած քրիստոնեայ մը կը տեսնէի»¹⁹⁰:

Այդ ճանապարհին նա տեսնում է թուրքական բանակին ողջունելու եկած թուրք բնակչությանը և նկարագրում հետևյալը. «1922 Սեպտեմբեր 9-ի առաւօտեան ժամը ճիշդ 11-ին, սարէն, ձորէն քով քովի եկած այլազան հագուստներով, երկու-երեք հարիւրի չափ թուրք չէթէներ, Փունթայի կողմէն հանդիսաւոր կերպով մտան Իզմիրի քարափը: Թէեւ քանի մը մէթր անդին՝ ծովածոցին մէջ խարսխած քրիստոնեայ պետութիւններու տօնական օրերու յատուկ զարդարանքներով պճնուած զրահաւորները, «խոր քունի» մէջ ըլլալ կը թուէին: [...] Բայց արթուն էր քաղաքին թուրք բնակչութիւնը, ու վաղ առաւօտէն խոնուած քարափին վրայ որոտընդոստ ծափերով ու բացազանչութիւններով կը ողջունէին եկուոր «ճերմակ ձեռնոցաւորները»¹⁹¹:

Ամերիկյան «Էյժը» (Asia) ամսագրի 1923 թ. փետրվարին տպագրված հոդվածը նկարագրում էր տեղի ունեցած ողբերգության որոշ դրվագներ. «Սպանությունն ու կողոպուտը

¹⁹⁰ Հղումը՝ ըստ Մինաս Տէր Սարգիսեան, *Իզմիրի անկումը եւ այլ էջեր* (Պէյրուֆ, Արագ, 1975), 108:

¹⁹¹ Նույն տեղում, 110-111:

սկսվեցին սեպտեմբերի 9-ի երեկոյան և շարունակվեցին՝ ապահովելով դաժանության համակարգված ծավալում մինչև տարաբախտ քաղաքի վերջնական կործանումը հրդեհից: Միայն Ջուլան, Դյուման կամ Վիկտոր Հյուգոն կարող էին նկարագրել, թե ինչ տեղի ունեցավ [...]: Ոչինչ չէր պակասում՝ ո՛չ կոտորածը, ո՛չ բռնաբարությունը, ո՛չ կրակը, ո՛չ կողոպուտը: [...] Հայկական թաղամասը, խանութները, շուկաները կողոպտվել էին: Քաղաքում երեք օր ու գիշեր շարունակվում էին սպանությունները: Դիակները թափված էին փողոցներում և նույնիսկ գյուղեր տանող ճանապարհներին: Դիակներով բեռնված վագոնները քշվում էին հեռու, վագոնները տեղափոխում էին նաև կողոպտված ապրանքը [...]: Դռները ջարդվում էին, կահույքը՝ փողոց նետվում, տղամարդիկ, կանայք ու երեխաները՝ սպանվում»¹⁹²:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Դուրյանի հետևյալ գրառումը սեպտեմբերի 9-ից սկսված և շարունակվող ողբերգության մասին. «Սեպտեմբերի 12-ին՝ երեքշաբթի, Հայոց թաղի բոլոր տուները թալանուած եւ դատարկուած էին. այդ տուներէն մեծ մասին իւրաքանչիւրին մեջ 1-4 սպաննուածներ կային. այս դժբախտներու կարգէն նախկին ատենապետ եւ մեծ օրէնսգէտ իրաւաբան, ազգային պ. Նազարէթ Ներսէսեան»¹⁹³, որ թուրք շրջանակներու մէջ ալ մեծա-

¹⁹² Grantham E., “The Betrayal of Our Faith in the Near East,” *Asia*, February, 1923, 120.

¹⁹³ Բարթիկյանը հուշագրության մեջ խիստ քննադատության է ենթարկում Նազարէթ Ներսէսյանի անձն ու գործունեությունը՝ նշելով. «Ազգային վարչության կազմի առհասարակ բուրժուա անդամների մեջ կային, սակայն, զանազան նախասիրություններ կամ հոսանքներ, առհասարակ անգլիական օրիենտացիայի մարդիկ. կար սակայն մեկը, որ մինչև վերջ հավատարիմ և հետևողական եղավ իր թրքական օրիենտացիայի մեջ: Հավատացող չէր հունական գրավման կյանք ունենալուն և թրքերի չափ համոզված էր, որ Իզմիրը վերստին անցնելու

պէս յարգուած պատկառելի անձնաւորութիւն մըն էր, իր կնոջ եւ զաւակին հետ խուժդուժ խուժանին զոհերը կըլլան [...]: Թալանը նախ սկսած էր հայ վաճառատուններէն, որոնց մէջ էին 200 000-300 000 անգլիական ոսկիի արժէքով մանիֆաթուրա պարունակող Պաքրձեան, Սիվրիսարեան, Իփլիքձեան, Ազնաւորեան, Նիքօթեան, Գօծամանեան, Թօփալեան եւ այլ վաճառատուններ եւ հետզհետէ ծաւալեցաւ Յոյն վաճառատուններու վրայ եւս ուր եւս պակաս չէին հսկայ դրամագլուխներ»¹⁹⁴:

Մեծ թվով հույներ հայտարարվում են «վտանգավոր տարր» և այդ պատրվակով բանտ նետվում: Նրանց թվում էր նաև աշխարհահռչակ ձեռնարկատեր Արիստոտել Օնասիսի հայրը: Ունևոր առևտրական Սոկրատես Օնասիսը «սև ցուցակում» էր հայտնվել հայրենակցական միության մեջ ներգրավված լինելու պատճառով: Թուրքերը Սոկրատեսի եղբորը՝ Ալեքսանդրին, Քասաբայի մոտակայքում հրապարակայնորեն կախաղան էին բարձրացրել, իսկ նրա քրոջը, ընտանիքի անդամներին և հինգ համագյուղացու կրակի մատնել քաղաքի եկեղեցում¹⁹⁵:

էր թրքական իշխանության տակ: Փաստաբան Նազարեթ Ներսեսյանն (Հիլմի) էր նա, Պոլսո թրքական խորհրդարանի Իզմիրի երեսփոխանը: Ուրիշներ, երբ գլխարկ էին հագնում, սա երբեք չհրաժարվեց իր ֆեսից, կարծես իր թուրք բարեկամների մոտ ապացուցելու իր թրքասիրությունը: Սրա փաստը բազմաթիվ անգամներ տվել էր Հիլմի էֆենդին [...]: Այդ բոլոր կանխագուշակությունները, սակայն, չտվին և չունեցան ակնկալված վարձատրությունը...: Չար բախտը հակառակ բերեց և քեմալականների՝ Իզմիրի մուսքի առաջին օրն իսկ սպանվեց Հիլմի էֆենդին՝ իր բնակարանումը, և ո՛չ իր ֆեսը, և ո՛չ էլ իր թուրք բարեկամները չկարողացան քեմալական պատվանշան ապահովել իրեն», Բարթիկյան, *Արնաշաղախ Իզմիրը*, Ղազերեան, *Կենսագրական նոթեր*, 73-74:

¹⁹⁴ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748, 4-7:

¹⁹⁵ Marjorie Housepain Dobkin, *Smyrna 1922, The Destruction of a City*, 151-152.

1922 թ. սեպտեմբերին կանադական «Տորոնտո դեյլի սթար» (Toronto Daily Star) թերթի խմբագրության հանձնարարությամբ որպես թղթակից Ջոյունիայում էր նաև ամերիկացի գրող, լրագրող Էռնեստ Հեմինգուեյը: Ջոյունիայի հայերի և հույների տառապանքները նրա վրա շատ ծանր տպավորություն են թողնում. այդ մասին է վկայում «Մեր ժամանակը» ժողովածուի «Ջոյունիայի նավահանգստում» (1925) խորագրով պատմվածքը. «Տարօրինակն այն էր, – գրում էր, – թե ինչպես էին նրանք ամեն օր՝ կեսգիշերին, ճշում: Չգիտեմ, թե ինչու էին հենց այդ ժամին ճշում [...]: Նրանց վրա էինք ուղղում լուսարձակները, որ խաղաղեցնեինք [...]: Ամենասարսափելի վիճակում, ասում էր, մահացած երեխաներ ունեցող կանայք էին: Կյանքումս առաջին անգամ գիշերները մղձավանջներ էի տեսնում: Ծննդաբերող կանայք այդքան սարսափելի չէին, որքան մեռած երեխաներ ունեցողները: Նրանց հետ ավելի հեշտ էր: Ջարմանալի էր, որ քչերն էին մեռնում: Նրանց ծածկում էին որևէ բանով և այդպես թողնում: Միշտ քաշվում էին նավամբարի ամենամութ անկյունն ու երեխա բերում»¹⁹⁶:

Շարունակական կողոպուտը, բռնությունը, մարդասպանությունը տևեցին մի քանի օր: Այդ ամենը, ըստ Մերձավոր Արևելքի փախստականների հարցերով գործադիր քարտուղար Էդվարդ Հեյլ Բիերսթադթի (Edward Hale Bierstadt, 1891-1970), կոտորած էր, որն ուղեկցվում էր դաժանության բոլոր դրսևորումներով: Թուրքերը, սակայն, տեղի ունեցածն ամեն գնով փորձում էին թաքցնել եվրոպացիներից¹⁹⁷:

¹⁹⁶ Ernest Hemingway, *In Our Time* (New York: Scribner, 1930), 11-12.

¹⁹⁷ Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 27-28.

Ականատեսները նաև վկայում են, թե ինչպես էին թուրքերը տուն առ տուն փնտրում հայերին: Բնիկ Քըրք-աղաչցի զինագործ Արթին Քեմջյանին (նա ավելի շատ հայտնի էր Գայլ Արթին անվամբ) հրոսակները հայտնաբերում են մի դպրոցի վերնատանը. «Բռնելով զայն իր տունը տարին, հոն խուզարկել է բոլոր զինուորական պիտոյքները գրաւել է յետոյ տարին ձիթաստանը, աչքերը թաշկինակով մը գոցեցին եւ ծառի մը բունին կապելով գնդակահարեցին [...]: Հրոսակները ապա սկսան հայ երեւելիները ձերբակալել: [...] առետրական եւ նախկին ուսուցիչ Հայկ Թադիկեանը, եղբայրը՝ Յովսէփ Թադիկեանը, Արմենակ Կեմճեանը եւ դարբին Ստեփանը: Ներսէս Գարանֆիլեանի տունը վերածեցին զինուորական ատեանի: Ծեծի ու տանջանքի մատնեցին Գաբրիէլ Աբերեանը, Գառնիկ Ազարութեանը, Խաչատուր Ճիգմեճեանը (կը թլփատուի), Ներսէս Գարանֆիլեանը և ուրիշներ [...]: Փաստաբան Կարապետ Դարբինեանի տունը մտնելով, զայն տանջեցին, ու պարտէզին մէջ, իր կնոջ ներկայութեան, դանակով սպաննեցին: Իսկ տիկ. Հոռոփիկ Դարբինեանն ալ գանակոծեցին, զգայազուրկ վիճակի հասցնելով»¹⁹⁸:

Մկրտիչ Ավետյանի ձեռագրից տեղեկանում ենք, որ 1922 թ. քեմալականների՝ Զմյուռնիայի գրավման ժամանակ հայ բժիշկ Գրիգոր Էֆենդի Մնացականյանը, դեղագործ Գևորգ Տեր-Գալստյանը, եղբայրը՝ Աբգար Տեր-Գալստյանը, հայրը՝ Տեր Գալուստ քահանան և 60 այլ մտավորականներ Կորդելիոյում շղթայակապ, մերկ վիճակում գնդակահարվել են. «Յետագային իրենց հոր՝ Տեր-Գալուստ քահանայի եւ ուրիշ 60 մտաւորականներու հետ Իզմիր Քորտելիո Սովուկ քոյու

¹⁹⁸ Յուշամարտեան Մեծ եղեռնի, 890:

ըսուած վայրին մէջ շղթայակապ մերկ վիճակով միթրիլիոզի բռնուեցան Մուստաֆա Քեմալի մարդոց կողմէ 1922-ի Իզմիրի գրաման»¹⁹⁹:

Բիերսթադթը գրում է. «Դիակների թաղումը պետք է կատարեին ուղղափառ քահանաները: Հայերը, հավաքվելով իրենց եկեղեցիներից մեկում, հրաժարվում էին անձնատուր լինելուց: Վերջապես նրանք հանձնվում են այն պայմանով, որ կենդանի կթողնեն կանանց և երեխաներին, ու տղամարդիկ քշվում են [...]: Մի օր էլ տեսա շուրջ երկու հարյուր հույնի և հայի, որոնք ծնկի էին իջել ճանապարհին, և որոնց հսկում էին թուրք զինվորները: Հետագայում տեղեկանում եմ բացարձակ կասկածի տակ չդրվող աղբյուրից, որ այդ մարդիկ դաժանաբար սպանվել են [...]]»²⁰⁰:

Ամերիկյան Կարմիր խաչի անդամներից մեկը, որ հասցրել էր թաքնվել հայկական թաղամասում, ականատես է լինում հետևյալին. «Այդ գիշեր թուրքական հրոսակախումբը նույն տուն մտավ չորս անգամ: Առաջին հրոսակախումբը զենք պահանջեց և առևանգեց աղջկա եղբորը, երկրորդը փող պահանջեց, երրորդը՝ աղջիկներ, և սպանեց երեք կնոջ, չորրորդը՝ պատվազրկեց աղջիկներին»²⁰¹:

Զմյուռնիա մեկնած մի բուժքույր վկայում է, թե ինչպես է ինքը հրազենի գնդակները հանել վիրավոր երեխաների մարմիններից: Նա դարձել է հույն կանանց բռնապղծման, Բուջայում հույն քահանայի կուրացման, ոմն պարոն Գորդոնին իր

¹⁹⁹ Աւետեան, *Յուզեր*, 6:

²⁰⁰ Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 25.

²⁰¹ Berta Morley, "The Smyrna Disaster," *The New Armenia*, v. XIV, November-December, 1922, 88.

տան դռան վրա խաչելու ականատեսը²⁰²: Բուժքույրը պատմում է, որ թուրք զինվորները ձիու պայտերը մեխել էին նրա (Գորդոնի – Թ. Մ.) ձեռքերին ու ոտքերին, և որ նա մահացել էր հենց այն ժամանակ, երբ Ռումինիայի հյուպատոսի եղբայրը տեսել էր նրան: Վերջինս համբուրել էր նրա ձեռքերը և հեռացել²⁰³:

1922 թ. սեպտեմբերի 26-ին Հորթոնը Վաշինգտոնի պետքարտուղարությանը գրում է. «Եվրոպական մեծ ուժերի աչքի առջև և, ըստ երևույթին, նաև նրանց լռակյաց համաձայնությամբ իրականացվող կոտորածը միակն է, որը, հույս ունենալով, այլևս երբեք չտեսնել: Հավատացած եմ, որ երբ հայտնի դառնա իսկական ճշմարտությունն այն մասին, թե ինչ տեղի ունեցավ Չմյուռնիայում, և թե ինչ էր տեղի ունենում Մերձավոր Արևելքում, Եվրոպայի և ԱՄՆ-ի բոլոր պարկեշտ մարդիկ կզգան այն, ինչ ես եմ զգում»²⁰⁴:

Իրավիճակի բարդությունը երևում է Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան (1913-1916) Հենրի Մորգենթաուի հաղորդագրության մեջ, որտեղ նա նշում է. «Չմյուռնիայի 1922 թ. կոտորածի, Փոքր Ասիայի հույների մեծ գաղթի մանրամասները դեռ թարմ են հասարակության հիշողության մեջ: Ահա դրանցից մի քանիսը. Քեմալի աչքի առջև թուրքական բանակն իրականացրեց Չմյուռնիայի հունական թաղամասի հույն տղամարդկանց, կանանց և երեխաների կանոնավոր սպանությունը, տների և եկեղեցիների կազմակերպված կողոպուտը, առանց խտրության՝ կանանց և երիտասարդ աղջիկների ան-

²⁰² Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 28-29.

²⁰³ Նույն տեղում:

²⁰⁴ Horton, *Report on Turkey, USA Consular Documents*, 24.

կաշկանդ բռնաբարումը, 16-50 տարեկան աշխատավոր տղամարդկանց օտարումը, ապա երկրի խորքերն արտաքսումը, ուր գրեթե բոլորը մեռնում էին հարկադիր աշխատանքի հետևանքով [...]: Բոլոր այս բռնությունները Փոքր Ասիայից հույներին ամբողջությամբ արտաքսելու՝ թուրքերի նպատակադրվածության ակնհայտ դրսևորումն են: Քեմալի հսկողության ներքո՝ թուրք ազգայնականների հետապնդած ծրագրով Փոքր Ասիան ամբողջությամբ «թուրքացվեց»²⁰⁵:

Ջորջ Հորթոնը թուրքի էությունը ճանաչած, հիասթափված մարդու և դիվանագետի դատողություններ է անում: Նա հասկանում է, թե ի՞նչ է առաջընթացը, և ինչո՞ւ թուրքը չի կարող առաջընթաց ունենալ. «Նա, ով չի ապրել Մերձավոր Արևելքում, չի կարող հասկանալ *առաջընթացը*, որ թուրքինն է: Նա, ով չի ճանապարհորդել թուրքական գյուղերով կամ թուրքական կայսրության շրջաններով, չի կարող հասկանալ անօգնական, անառաջընթաց մի ժողովրդի, որ, գրեթե հինգ հարյուր տարի ապրելով երկրի մակերևույթի ամենահարուստ մասում, երբեք կարի մեքենա կամ գութան, գծանավ կամ շոգեմեքենա, բամբակզտիչ մեքենա, գնդասեղ կամ լուցկի չի գործածել: Նա, ով առաջընթացի հույս ունի Թուրքիայի համար, ապրում է՝ հուսալով, թե «կարմիր կովը երբևէ կփոխի

* Քեմալականների՝ համաթյուրքականության քաղաքականությանը հետևողականորեն հետամուտ լինելու հանգամանքը հավաստել է անձամբ Քեմալը: Նկատի ունենալով հրկիզվող Չմյուռնիան՝ նա դիմել է իր հայրենակիցներին. «Երկար նայեցեք այս տեսարանին: Սա մեր երկրում օտար միջամտության վախճանն է: Այս կրակը դրա խորհրդանիշն է: Այն նշանակում է, որ մեր հայրենիքը վերջնականապես ազատագրվել է դավաճաններից և առևտրականներից: Այսուհետև ազատագրված ու մաքրագարդված Թուրքիան կպատկանի միայն և միայն թուրքերին», Ռենե Պյոտ, *Չմյուռնիայի վախճանը* (Երևան, ՀՅԹԻ, 2001), 3:

²⁰⁵ Morgenthau, *I was Sent to Athens*, 47-48.

իր կաշին»։ Ես նույնպես պատիվ ունեմ մատնացույց անելու Դեպարտամենտին, որ մեծ չափերի հասնող բոլոր կոտորածները կատարել են թուրքերը, և Օսմանյան պետության պատմությունն ընդհանուր առմամբ կոտորածների պատմություն է, որ միշտ հրահանգել են բարձր իշխանությունները։ Նա, ով հավատում է, որ Մուսթաֆա Քեմալի ուժերը հանվել էին Ջմյուռնիայից, և որ նա նախապես վերահսկել էր այն, ոչինչ չգիտի Թուրքիայի պատմության կամ Մերձավոր Արևելքի իրադարձությունների մասին։ Ջմյուռնիայի նավահանգստում ֆրանսիական, իտալական, բրիտանական և ամերիկյան ներկայացուցչություններին Մուսթաֆա Քեմալն արտահայտիչ կերպով ասել էր, որ ոչ մի կոտորած էլ չի լինի, ոչինչ էլ տեղի չի ունենա»²⁰⁶։

Հորթոնի հետևյալ հաղորդումը մեղադրանք է՝ ուղղված ժամանակի մեծ տերությունների և պետական Դեպարտամենտի հասցեին. «Բայց երբ տեսնում է, որ աշխարհի մեծ տերություններն ապահով նստած են իրենց գծանավերում՝ նայելով սարսափազդու գործընթացներին, ավելի շատ է խրախուսվում և դեռ ավելի մեծ ծայրահեղությունների գնում»²⁰⁷։

Ներկայացնելով իր խոհերն ու դատողությունները՝ Հորթոնը միաժամանակ ընդգծում է, որ թուրքն ունակ չէ կառավարելու քրիստոնյա բնակչությանը, և որ քրիստոնյաները կարող են ծաղկել ու բարգավաճել նույնիսկ անհամար կոտորածներից հետո. «Թուրքերի իրականացրած կոտորածները միշտ կատարվել են վերադաս իշխանությունների հրամանով։

²⁰⁶ Horton, *Report on Turkey, USA Consular Documents*, 23.

²⁰⁷ Նույն տեղում, 24.

Սա հայտնի սկզբունք է և ձև, որով իրագործվել են պատմական տարբեր կոտորածներ: Այդպես լուծվեց Ջնյունիայի հարցը, իսկ Մուսթաֆա Քեմալի հայտարարությունը, որ անկարող էր վերահսկելու իր զորքերին, անհիմն է: Երկար տարիներ զբաղվելով թուրքերի մարտավարության ուսումնասիրությամբ, այնուամենայնիվ, տարօրինակ եմ համարում այն փաստը, որ թուրքը դեռ ի վիճակի է մոլորության մեջ գցելու եվրոպացիներին: Ֆրանսիական ծովակալը կարող է թուրք հրամանատարին հղած խոսքերով դադարեցնել այն բոլոր սարսափներն ու կոտորածները, որոնք կատարվում են: Թուրք ազգայնականների քաղաքականությունն է բնիկ քրիստոնյաներին արտաքսել Թուրքիայից ու ոչնչացնել [...]: Թուրքը խաղաղության արվեստի նկատմամբ հետաքրքրություններ չունի, ոչինչ, բացի պատերազմից ու նվաճումից, չգիտի»²⁰⁸:

Ջնյունիայի հայերի ու հույների բնաջնջումը Հորթոնն անվանում է «դանթեական ողբերգություն» և, որպես ականատես, արձանագրում համաշխարհային պատմության մեջ նմանօրինակ դեպքերի սակավությունը. «Ջնյունիայի վիլայեթի քրիստոնյա բնակչության նկատմամբ կատաղի վերաբերմունք դրսևորվել է ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, այնպես էլ մինչև պատերազմի սանձազերծումը [...]: Թուրքերի արյունոտ պատմության ընթացքում կատարված ոչ մի գործողություն ավելի դաժան չի եղել, որքան Ջնյունիայի 1922 թ. կործանումը. դա մարդկային տառապանքների համար ընտրված վատթարագույն ձևերի կիրառումն էր անպաշտպան ու անզեն մարդկանց նկատ-

²⁰⁸ Նույն տեղում, 24-26:

մամբ [...]: Դա սոսկալի ողբերգության «սատանայական ավարտն» էր»²⁰⁹:

Զմյուռնիայում քրիստոնյաների հալածանքների մասին կարդում ենք Բարթիկյանի հուշագրության մեջ. «Թրքերի վերաբերմունքը ինչքան էլ վատ էր ազդում մեզ, հրեաների կեցվածքը սակայն մեզ դառն ու կծու էր թվում: Մանավանդ Քեմերի պողոտայի վրա, Այ Վուզլայի շրջանում, մեզ դիտելու համար, իբր զվարճության առարկա, փողոց ելած հրեաները հեգնական խոսքեր էին ուղղում մեզ, մանավանդ հույների ուղղյալ ասում էին. «Պարումե տին Պոլի կե տին Այա Սոֆիա, հե՛, Թորա թապաթե ստին Պոլի, ստի Կոկինի Միլյա»²¹⁰: Սա դայելական ծիծաղով դիտում էին մեզ և անարգում: Պատահեր, որ մեր միջից ճանաչեին որևէ մի հայ, մատնանիշ անելով թուրք պահակներին, ասում էին. «Չավո՛ւշ, էյի՛ ադամ, էրմենի՛, թավո՛ւկ, թավո՛ւկ»²¹¹: Քովընտնի մի պատշգամբից մի հրեա կին, իրենց գիշերային պետքամանի բովանդակությունը շուտ էր տալիս ներքևից անցնող գերիների գլխին, գոչելով՝ «Յաշարը՛ն Մուսթաֆա Քեմալ փաշա, յելտի էսկի բաբամիզ, Յաշարը՛ն էսկի բաբամիզ, հո՛շ յելտինիզ²¹²...»²¹³:

²⁰⁹ George Horton, *The Blight of Asia, An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna*, 112.

²¹⁰ Հուն.՝ «Πρέπει να πάροουμε την Πολύ και την Αγία Σοφία, ε; Τώρα θα πάτε στην Πόλη και στην Κόκκινη μηλιά»: Թարգմանաբար նշանակում է՝ «Պետք է գրավենք Պոլիսն ու Սուրբ Սոֆիան, հե՛, հիմա գնալու եք Պոլիս և Կոկինի Միլյա»:

²¹¹ Թուրք.՝ «Çavuş, ey adam, Ermeni, tavuk, tavuk»: Թարգմանաբար նշանակում է՝ «Սպա, հեե՛յ մարդ, հայ է, հավ է, հավ»:

²¹² Թուրք.՝ «Yaşasin Mustafa Kemal Paşa, geldi eski babamiz, yaşasin eski babamiz hoş geldiniz»: Թարգմանաբար նշանակում է՝ «Կեցցե՛ Մուսթաֆա Քեմալ փաշան, եկավ մեր նախկին հայրը, կեցցե՛ մեր նախկին հայրը, բարով եք եկել»:

²¹³ Բարթիկյան, *Արնաշաղախ Իզմիրը*, Ղազերեան, *Կենսագրական նօթեր*, 130-131:

Ավետյանը, իր հերթին, հավաստի աղբյուրների հիման վրա, Միտիլինիից շարունակում է մանրամասներ հաղորդել Զմյուռնիայի և տեղի հայերի վիճակի մասին. «Իմ մեկնելէս յետոյ Քեմալը կը յաջողի մտնել Իզմիր, նախ ղրկելով ձի եւ աւանակ նստած գիւղացիներ, յետոյ անզէն թուրքեր եւ կամաց կամաց Իզմիրը պաշարելով՝ զինուորները ազատօրէն այս անգամ այս հանդարտութեան վախճանը կ'ըլլայ զինուորներու յարձակումը դէպի քրիստոնէայ թաղեր, հետը միացան Իզմիրի խուժանը: Ամէն մարդ կեանքը ազատելու համար ծովեզերք կը դիմէ, շատերը ճամբան մեռած եւ ծովեզերք հասնողները ինքզինքնին ծովը նետելով կ'աղաղակեն ազատութիւն, երոպացիներու կողմէ, բայց հակառակը կը պատահի. այն կրթեալ եւ մարդասէր երոպացին հայուն դէմ հակառակ շարժելով՝ իրենց նաւերուն մօտեցած հայերը փոխանակ պաշտպանելու, տաք ջուրերու ներքեւ կը դնեն զիրենք: Ոմանք ճարպիկ կերպով վեր կը բարձրանան եւ յետոյ կը նետեն ծովը»²¹⁴:

Զմյուռնիայի քրիստոնյաների նկատմամբ քեմալականներն իրենց հանցավոր ծրագիրը մշակել և իրագործել են դիտավորությամբ: Անզեն բնակչության սպանությունները կատարվում էին համակարգված ձևով: Կողոպտվում էր բնակչության ունեցվածքը՝ գորգեր, հագուստ, ոսկեղեն և ընդհանրապես այն ամենը, ինչը հնարավոր էր հեշտությամբ տեղափոխել:

²¹⁴ Նոյն տեղում, 15:

Բնաջնջման մեթոդները

Մարդը, դառնալով կազմակերպված ամբոխի²¹⁵ մասնիկը, մի քանի աստիճանով ցած է իջնում քաղաքակրթության սանդուղքով. ամբոխի մեջ բարբարոս է, ասել է թե՛ կենդանական բնազդների գերի: Նա հակված է կամայական վարվելակերպին, բռնությանը, խստադաժանությանը²¹⁶: Ամբոխի մեջ մշտապես գերիշխում է անգիտակցականը՝ ուղեղի աշխատանքի դադարեցումը և ողնուղեղի կենսագործունեության գերիշխանությունը²¹⁷: Զմյուռնիայի հունաց մետրոպոլիտ Խրիսոստոմոս Կալաֆատիսի (1867-1922) անդառնալի կորուստը մեծ ցավով և սարսափով են հիշում ականատեսները²¹⁸: Ի սկզբանե նշենք, որ Խրիսոստոմոսի «ծիսականաց-

²¹⁵ Սովորական իմաստով *ամբոխ* բառը նշանակում է ինչ-ինչ անհատների հավաքականություն՝ անկախ ազգությունից, մասնագիտությունից կամ սեռից ու դիպվածային հանգամանքներից [...]: Գիտակից անձնավորությունն անհետանում է, միասնականություն կազմող առանձին անհատների զգացմունքներն ու գաղափարներն ուղղորդվում են միևնույն ուղղությամբ [...]: Կազմակերպված կամ ոգեշնչված ամբոխը ենթարկվում է ամբոխների հոգեմտավոր միասնության օրենքին: Մանրամասն տե՛ս Գյուստավ Լը Բոն, *Ամբոխների հոգեբանությունը* (Երևան, Անտարես, 2020), 35-36: Ֆրանսիացի բժիշկ, մարդաբան, հոգեբան, սոցիոլոգ, բնագետ և գյուտարար, սոցիալական հոգեբանության ճյուղ կազմող՝ «զանգվածների հոգեբանության» հիմնադիր *Շառլ-Մարի Գյուստավ Լը Բոնի* (1841-1931) գաղափարները կարևորագույն դեր են խաղացել 20-րդ դարի առաջին կեսին, մասնավորապես ամբողջատիրական համակարգերի հիմնադիրների՝ Մուսոլինիի, Հիտլերի, Ստալինի, Մաոյի, անգամ Մուսաֆա Քեմալի, հանրապետական վարչակարգերի խոշորագույն առաջնորդների, նացիոնալ-սոցիալիզմի և նրա գլխավոր դերակատարների վրա:

²¹⁶ Լը Բոն, *Ամբոխների հոգեբանությունը*, 48:

²¹⁷ Նույն տեղում, 35:

²¹⁸ Հայկական ազգային պատվիրակության դիվանատան տեղեկագրում կարդում ենք. «Աթենքի Էլեֆթերիոս Թիրոս լրագրին պատմութեան համաձայն, Յունաց Առաջնորդ Տ. Խրիսոսթոմոս սպաննուած է հետեւեալ պարագաներուն մէջ: Առաջնորդը բարի եկաքի այցելութեան կ'երթայ Նուրէտտին փաշայի, որ իսկոյն անոր կը հարցնէ:

ված» սպանությունը կրոնական աստվության դրսևորում էր և առանձնանում էր անմարդկային դաժանությամբ: Վահանյանի դիտարկմամբ՝ ծեսը քրիստոնյայի հոգևոր ժառանգության ոչնչացմանն է ուղղված: Ոճրագործը ներքուստ զոհ է, հետևաբար խնդիրը չի լուծվում էթնոսի և անձի մակարդակով²¹⁹: Ամենատարբեր հետազոտողներ իրենց ուսումնասիրություններում, որպես կանոն, անդրադառնում են մետրոպոլիտի ողբերգական մահվան մանրամասներին: Այս առնչությամբ տեղին է մեջբերել ֆրանսիացի լրագրող և պատմաբան Ռենե Պյոտյի հետևյալ վկայությունը. «Թուրք ղեկավարների գազանաբարո ոգին (անկախ կարծեցյալ անկանոն զորքերի հանգամանքից, որոնց վրա այլընտրանքի բացակայության պատճառով բարդվում է չարագործությունների պատասխանատվությունը) ամբողջությամբ բացահայտվում է Չմյուռնիայի նշանավոր և հարգարժան հույն արքեպիսկոպոս Ն[որին Սրբազնություն]ն Քրիստոստոմի սպանությամբ: Գեներալ Նուրբեդդին փաշան կարգադրեց նրան որոնել արքեպիսկոպոսանիստ վանքում: Սկսած իր ժամանման պահից, նա լուտանքներ տեղաց նրա հասցեին, հանդիմանեց նրան

— Իրա է, որ Դաշնակից զինուորներու առաջին անգամ Իզմիր ելած օրը անգլիացի հրամանատար Տիքսընի ըսած էք, թէ Իզմիրի մէջ պատժուելու արժանի գլխատր անձը ես եմ:

Նուրբետտին փաշա այն ատեն Իզմիրի զինուորական հրամանատարն էր:

— Այո, կը պատասխանէ առաջնորդը:

— Ես ատոր փոխարէն չեմ պատժեր քեզ, կ'ըսէ Նուրբետտին փաշա, կը թողում, որ ժողովուրդը իր ուզած կերպով ի գործ դնէ արդարութիւնը:

Ու ճամբու կը դնէ զայն: Վերադարձին առաջնորդին օթօմօպիլը դիտմամբ կ'անցնեն թրքական թաղէն, ուր խուժանը կը յարձակի օթօմօպիլին վրայ, վար կառնէ առաջնորդը եւ շատ մը չարչարանքներով սպաննելէ վերջ մարմինը կը պատօցնեն բոլոր թրքաբնակ թաղերը, յետոյ կտոր կտոր կ'ընեն»: Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 744:

²¹⁹ Արմինե Վահանյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 21.06.2023 թ.:

հունական օկուպացիայի [ռազմակալության] շրջանում ունեցած ֆիլիելլենիստական դիրքորոշման համար և վերջապես հայտնեց, որ Անգորայի հեղափոխական դատարանը վաղուց ի վեր նրան դատապարտել է մահվան: Նուրբերդիին ավելացրեց, որ նրան մնում է միայն հանձնվել խաժամուժի դատաստանին»²²⁰:

Ըստ Հորթոնի՝ մետրոպոլիտ Խրիսոստոմոսի միակ մեղքն այն էր, որ հայրենասեր ու պերճախոս հույնը հավատում էր իր ժողովրդի բարգավաճմանը: Ջորջ Հորթոնն իր անկողմնակալ գրչով նկարագրել է հույների մետրոպոլիտ Խրիսոստոմոսի հետ իր վերջին հանդիպումը նրա ողբերգական վախճանից առաջ. «Իր մահից կարճ ժամանակ առաջ Խրիսոստոմոսը հայոց արքեպիսկոպոսի հետ գալիս է հյուպատոսարան: Նա սև հանդերձ էր հագել, և դեմքը շատ գունատ էր: Վերջին անգամն էր, որ ողջ տեսա այդ պատկառելի և պերճախոս մարդուն [...]: Երբ նա նստած էր հյուպատոսական գրասենյակում, մոտալուտ մահվան ստվերն ընկած էր նրա դիմագծերին [...]: Իմ կյանքում առնվազն երկու անգամ տեսել եմ այդ ստվերը մարդկային դեմքի վրա և իմացել, որ այդ անձը շուտով մեռնելու է: Ո՛չ նա, ո՛չ էլ հայոց եպիսկոպոսն իրենց սեփական վտանգի մասին չեն խոսել ինձ հետ, փոխարենը հարցրել են, թե արդյոք ոչինչ հնարավոր չէ՞ անել Զմյուռնիայի բնակիչներին խնայելու համար»²²¹:

Իսկ այն հարցի պարզաբանման համար, թե ինչպես մետրոպոլիտը հայտնվեց Նյուրեդդին փաշայի տան բակում ամբոխված մահմեդականների շրջապատում, վերստին դի-

²²⁰ Պյուն, *Զմյուռնիայի վախճանը*, 18-19:

²²¹ Horton, *The Blight of Asia*, 135-136.

մենք ականատեսի վկայությանը. «[...] Հազիվ էր պահակախումբը դուրս եկել միտրոպոլիտի մոտից, երբ մի մեքենա, որում կային սվինավոր հրացաններով զինված մեկ սպա և երեք զինվոր, կանգ առավ արքեպիսկոպոսանիստ վանքի առջև: Սպան բարձրացավ միտրոպոլիտի մոտ և նրան հրամայեց հետևել իրեն՝ բանակի հրամանատար Նուրբեդդին փաշայի մոտ գնալու համար: Երբ ես տեսա, թե ինչպես են դուրս տանում միտրոպոլիտին, խորհուրդ տվեցի պահակախմբին հետևել մեքենային: Մենք կանգ առանք մեծ զորանոցի առջև, ուր գտնվում էր բանակի հրամանատար, գեներալ Նուրբեդդինը: Սպան միտրոպոլիտին դուրս բերեց և ուղեկցեց վերջինիս մոտ: Տասը թուրք անց նա ցած էր իջնում [...]»²²²:

Այնուհետև Նուրբեդդին փաշան հայտարարում է. «Եթե նա բարիք է գործել, դուք էլ այդպես պատասխանեք, իսկ եթե չարիք, ապա վարվեք նույն կերպ»²²³:

Գազազած ամբոխը, փաստորեն, ինքնուրույն գործելու իրավասություն չունեի. Խրիստոստոմոսին դաժանաբար սպանելու համար մահմեդական կամակատարները պետք է ստանային թուրքական բանակի հրամանատարի թույլտվությունը: Այս փաստը ևս մեկ անգամ ապացուցում է, որ Ջմյուռնիայի հայերի ու հույների բնաջնջումը նախապես ծրագրված, համակարգված, դիտավորության հիման վրա և վերահսկողության ներքո իրականացված հանցագործություն է:

Հասմիկ Գրիգորյանը, իր «Չանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման

²²² Պյոտ, *Ջմյուռնիայի վախճանը*, 20-21:

²²³ Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 25.

բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը» աշխատության մեջ անդրադառնալով ծիսականացված սպանություններին, եզրակացնում է. «Ոճրագործ կողմը, փորձելով գերակայություն ձեռք բերել զոհի նկատմամբ, ենթարկում է նրան ծաղրուծանակի: Զանգվածային սպանությունների ու բռնությունների ծիսականացված և «տոնական» մթնոլորտում խախտվում են սոցիալական նորմերը, բացակայում է պատժելիության սպառնալիքը, ինչի արդյունքում էլ ավելի է մեծանում հասարակության մասնակցության հնարավորությունը»²²⁴:

Խրիսոստոմոսին խոշտանգում են ծայրահեղ դաժան արարողակարգով. նախ հարվածում են բռունցքներով ու ձեռնափայտերով, ապա սկսում թքել դեմքին, ծակոտում դանակի հարվածներով, պոկում մորուքը, հանում աչքերը, կտրում քիթը և ականջները²²⁵: Նրա քառատված դին քարշ են տալիս մինչև թուրքական թաղամաս՝ ի կեր շներին²²⁶: Նա, սեփական անձի փրկության հնարավորությունը բաց թողնելով, գերադասել էր իր «հոտի հետ մնալ»²²⁷:

Ըստ Պյոտյի վկայության՝ ֆրանսիական մամուլը ձեռնպահ է մնացել սարսափելի մանրամասները հիշատակելուց, ավելին՝ որոշ թերթեր պնդել են, որ Նորին Սրբազնությունը Խրիսոստոմոսը ողջ և առողջ է, և կարիք չկա հավատ

²²⁴ Հասմիկ Գրիգորյան, *Զանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* (Երևան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017) (Հիշողության ազգագրություն 6), 136:

²²⁵ Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 25.

²²⁶ Պյոտ, *Զմյուռնիայի վախճանը*, 19:

²²⁷ Charis Tsirikinidis, *The Red River... The Tragedy of Hellenism of Anatolia 1908-1923, A Historical Tale* (Thessaloniki: Kyriakidi Afoi, 1999), 283.

ընծայել Չմյուռնիայում տեղի ունեցող վայրագությունների վերաբերյալ հունական սկզբնաղբյուրներից բխող իբր կողմնակալ լուրերին²²⁸:

Ինչո՞վ էր պայմանավորված ամբոխի՝ սպանդի մեջ ընդգրկվելու դյուրությունն ու ծայրահեղ դաժանությունը: Ինչպե՞ս է հնարավոր այդօրինակ «գործից» բավարարվածության զգացում ունենալ և անթաքույց հրճվանք ապրել: Այս առնչությանը Շուշան Խաչատրյանը տալիս է հետևյալ բացատրությունը. «Իսլամադավանների դեպքում՝ մարդ ասելով նրանք հասկանում են բացառապես իսլամադավանի, հետևաբար, քրիստոնյայի սպանությունը նրանց համար մեղք կամ հանցագործություն չէ: Այսօրինակ սպանությունները նրանք համարում են զոհաբերություններ: Այլադավանի հոգևոր առաջնորդին ծաղրածանակի ենթարկելով սպանելը «հարգանքի տուրք» է իրենց Աստծուն, հավատացյալի անմնացորդ նվիրվածության ապացույց: Ինչ վերաբերում է մետրոպոլիտներին, նրանք «տեսուչներ» էին, ովքեր պատասխանատու էին իրենց համայնքի առջև և օրինակ էին ծառայում նրանց համար: Ղեկավարին ոչնչացնելով՝ նախ համայնքին զրկում էին «գլխից», ապա խուճապ առաջացնում հավատացյալների շրջանում, հանգամանք, որը դյուրացնում էր կանխամտածված ոճրագործության իրականացման գործընթացը»²²⁹:

Քրեական իրավունքի մասնագետ Կարինե Աբրահամյանը, քննելով հոգևորականության նկատմամբ սպանությունները, նշում է. «Առաջին հայացքից այսօրինակ սպանությունները կարելի է որակել որպես մի խումբ անձանց կողմից

²²⁸ Պյուռ, *Չմյուռնիայի վախճանը*, 19:

²²⁹ Շուշան Խաչատրյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 11 հունիսի 2019 թ.:

առանձնակի դաժանությամբ ազգային, կրոնական ատելության շարժառիթով կատարված սպանություն: Սակայն անհրաժեշտ է շեշտադրում կատարել սուբյեկտի դիտավորության ուղղվածության վրա: Այս տեսանկյունից գործ ունենք ցեղասպանության հանցակազմի հետ, քանի որ հոգևորականի սպանությունը ոչ թե կոնկրետ անձին կյանքից զրկելու նպատակ է հետապնդում, այլ ազգային, կրոնական կոնկրետ խմբի (կրոնական խումբ ասելով նկատի ունենք տվյալ պետության բնակչության մեծամասնության դավանած կրոնից տարբերվող կրոն դավանող մարդկանց խմբի) ֆիզիկական ոչնչացմանն ուղղված գործողություն է, որը պետք է դիտարկել համալիր գործողությունների համատեքստում: Եթե անգամ փորձենք այն որպես առանձին հանցակազմ դիտարկել՝ ցեղասպանության համատեքստից դուրս, հնարավոր չէ, քանի որ այս երկու հանցանքները համակցության ձևով հանդես գալ չեն կարող: Այս պարագայում քրեական իրավունքի տեսանկյունից արարքը պետք է որակվի որպես ցեղասպանություն»²³⁰:

Մոլեռանդ մահմեդականների ծայրահեղ դաժանությունը չէր սահմանափակվում սոսկ արքեպիսկոպոսի սպանությամբ: Այդօրինակ սպանությունների տեսարաններ Ջմյուռնիայում կարելի էր տեսնել ամենուրեք: Դաժան սպանության զոհ են դառնում նաև հոյն լրագրող Մ. Ճորուքօղլին (նրան գնդակահարում են ավտոմեքենայի հետնամասից կապած՝ փողոցներով քարշ տալուց հետո), նշանավոր փաստաբան,

²³⁰ Կարինե Աբրահամյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 օգոստոսի 2019 թ.:

Փոքր Ասիայի Պաշտպանության հանձնաժողովի անդամ Հերկուլես Բոստանձողուն²³¹:

Սեռական բռնությունները ցեղասպանագիտության մեջ ուսումնասիրվում են սեռասպանության (գենդերցիդի) համատեքստում, որը ցեղասպանության իրագործման մեխանիզմներից է: Սեռական բռնություններն ընդունված է համարել կանխամտածված ծրագրի բաղկացուցիչ: Այն որակվում է որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն, ցեղասպանության թաքնված հանցագործություն, որը մեկուսացնում է մարդուն իր սոցիալ-մշակութային միջավայրից: Յեղասպանության ժամանակ զանգվածային բռնաբարությունների կիրառումը հետապնդում է սպանության գործընթացը դյուրին դարձնելու նպատակ: Բռնաբարությունները կիրառվել են ոչ միայն որպես ոչնչացման, այլև որպես անհատականության կործանման միջոց, քանի որ դրանք ոչ միայն մարմնական, այլև բարոյահոգեբանական ծանր վնաս են պատճառում²³²: «Սեռասպանություն» հասկացությունն առաջին անգամ գործածել է ամերիկացի ֆեմինիստ Մերի Անն Ուորենը 1985 թ. իր «Սեռասպանություն. սեռի ընտրության հետևանքները» գրքում: Նա նշում է, որ սեռասպանությունը որոշակի սեռի մարդկանց դիտավորյալ ոչնչացումն է²³³:

²³¹ E. Economos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 123.

²³² Jennifer Balint, "Rape as a tool of Genocide," *Encyclopedia of Genocide*, v. II (Oxford: ABC-CLIO, 1999), 491-492; Claudia Card, "Genocide and Social Death," *Feminist Philosophy and the Problem of Evil* (Bloomington: Wiley, 2003), 63-79; Susan Brownmiller, *Against Our Will: Men, Women, and Rape* (New York: The Random House Publishing Group, 1975); Helen Fein, *Genocide: A Sociological Perspective* (London: SAGE Publications Ltd, 1993).

²³³ Mary Anne Warren, *Gendercide: The Implications of Sex Selection*, Totowa (New Jersey: Rowman & Allanheld, 1985), 22.

Գրիգորյանն այսպես է մեկնաբանում. «Սեռական բռնությունները պայմանավորվում են նաև գենդերային ընկալումներով. պատահական չէ, որ սովորաբար սեռական բռնությունների զոհ են դառնում հիմնականում գեղեցիկ կանայք: Սրանով է բացատրվում նաև այն, որ սեռական բռնությունները գրականության մեջ հաճախ ձևակերպվում են նաև որպես «հաղթողի» վարք, քանի որ «պարտված» կողմի կանայք ընկալվում են որպես «պարգևատրում» կատարած «քաջագործությունների» համար»²³⁴:

Զմյուռնիայի քրիստոնյաների բնաջնջումն ուղեկցվում էր նաև կանանց և աղջիկների զանգվածային բռնապղծմամբ: Պյոտոն այս առնչությամբ նշում է. «Կանանց և երիտասարդ աղջիկների առևանգումը հին ավանդույթ է թուրք զինվորների շրջանում, և վկայություններն այս մասին նույնքան բազմազան են, որքան և վրդովեցուցիչ: Կանանց բռնաբարում էին իրենց ամուսինների կամ հայրերի աչքի առաջ, որոնց, միջամտության փորձի դեպքում, սպանում էին [...]»²³⁵:

Բազում են այն օրինակները, որոնք վկայում են այդ մասին. «Մի հույն, որ ծառայում էր անգլիական հաստատություններից մեկում, և որին հաջողվել էր թաքնվել, ներկա է գտնվում իր հոր սպանությանը և կնոջ ու աղջկա բռնաբարությանը: Մի լևանտցի, որն ընդունել էր ամերիկյան քաղաքացիություն, համանման տեսարանի ականատեսը դառնալուց հետո, ինքնասպանություն է գործում»²³⁶:

²³⁴ Գրիգորյան, *Ձանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը*, 139:

²³⁵ Պյոտոն, *Զմյուռնիայի վախճանը*, 10:

²³⁶ Նույն տեղում:

Ըստ մեկ այլ վկայության՝ թուրքական անկանոն բանակի մի խումբ մարդիկ ջարդում են աղջիկների որբանոցի դուռը, պահանջում են երեք կնոջ, կողոպտում են, բռնաբարում և սպանում (այս հանցագործության մասին բրիտանացի ծովակալը զեկուցել է Քյազիմ փաշային)²³⁷:

Բրիտանացի ականատես Ուոլասը վկայում է. «Երեքշաբթի օրը՝ ամսի 12-ին, երբ տուն էի գնում, Բայրաքը արվարձանում իմ ծառայողներին հայտնաբերեցի՝ սարսափից գրեթե խելագարված. նրանք ծովի վրա լողացող երեք կնոջ մարմին էին տեսել, կամ թե ինչպես էր թուրքական անկանոն բանակը ներխուժել աղջիկների որբանոց, երեք կին պահանջել, կողոպտել, բռնապղծել և սպանել նրանց»²³⁸:

«Թայմս» թերթի թղթակիցը սեպտեմբերի 16-ին Կ.Պոլսից հաղորդում է, որ նախքան հրդեհի մոլեգնումը գազի գործարանը հսկող անգլիական ծովային մի գումարտակ ականատես է դառնում այն իրողությանը, թե ինչպես են թուրք զինվորները փողոցի կենտրոնում բռնաբարում բազմաթիվ հույն կանանց: Անգլիացի ծովայինները կտրուկ հրաման էին ստացել, գազաչափիչների հսկողությունից բացի, ձեռնպահ մնալ որևէ այլ գործողության մասնակցելուց: Բուրնաբադի բնակիչ պարոն Սայքսը դարձել էր քսանվեց կին ծառայողների սպանության ականատեսը²³⁹:

Հորթոնը վկայում է, որ կանանց և աղջիկների զանգվածային բռնապղծումը Ջմյուռնիայի «սարսափի» ակնհայտ առանձնահատկություններից էր: Մինչդեռ ամերիկացի բժիշկ

²³⁷ Economos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 77.

²³⁸ Economos, *The Tragedy of the Christian Near East*, 5-6.

²³⁹ Պյոտ, *Ջմյուռնիայի վախճանը*, 80-82:

Մեյբըլը էլիոթը, որ մի քանի տարի որպես բժիշկ աշխատել է Մերձավոր Արևելքի հիվանդանոցներում, վկայում է այն մասին, թե երբեք չի տեսել մահմեդական կանանց, որ բռնապղծված լինեին²⁴⁰: Բավականին արժեքավոր է 1923 թ. հունիսի 2-ին Աթենքից Հորթոնին նրա ուղարկած նամակի բովանդակությունը. «Թանկագին պարո՛ն Հորթոն, որքան ճշմարիտ էր Գլադսթոնի հայտնի հայտարարությունը թուրքի բնութագրի վերաբերյալ, որը բավականաչափ ապացուցվեց Չմյունհայում վերջերս տեղի ունեցած դժբախտության ժամանակ: Կանանց բժիշկ լինելն ինձ հնարավորություն ընձեռեց իմանալու աղջիկների հետ թուրքերի վարվելակերպի մասին: Թուրքիայում իմ չորս տարվա փորձը հաշվի առնելով՝ կարծում եմ, որ բավականին ուշագրավ փաստ է, որ չտեսա որևէ թուրք աղջկա կամ կնոջ, որին բռնաբարած լինեին: Որպես նկատելի հակադրություն՝ տեսա հարյուրավոր քրիստոնյա աղջիկների, որ թուրք տղամարդկանց ձեռքում էին եղել: Չմյունհայի վերջին դժբախտությունը բացառություն չէ, և ես իմ սեփական աչքերով տեսածից արդարացիորեն կարող եմ եզրակացնել, որ Չմյունհայում քրիստոնյա աղջիկների բռնաբարությունը զանգվածային բնույթ էր կրում»²⁴¹:

Խաչերյանն իր հերթին նկարագրում է հետևյալ տեսարանը. «Կեսգիշերն անց, երբ մտածումներիս մեջ թաղված եմ,

²⁴⁰ Horton, *The Blight of Asia*, 162, Esther Pohl Lovejoy, *Certain Samaritans* (New York: The Macmillan Company, 1927).

²⁴¹ Horton, *The Blight of Asia*, 163.

«Ամերիկացի կանանց հոսպիտալներ» ծառայության ներկայացուցիչ, ամերիկացի բժշկուհի Էսթեր Փոլ Լավջոյը 1922 թ. սեպտեմբերին Չմյունհայում է եղել. նա կատարել է ոչ միայն բժշկի իր մասնագիտական պարտքը, այլև ականատեսի արժեքավոր վկայություններ թողել: Տե՛ս Գոհար Խանումյան, «Էսթեր Փոլ Լավջոյ. ամերիկացի բժշկուհու փորձառությունը Չմյունհայի աղետի ժամանակ», *Յեղասպանագիտական հանդես* 10 (2), 2022, 74-89:

ուշադրությունս է գրավում կնոջական աղերսող մի ձայն, որ ներքևի հարկից է գալիս: Դրան խառնվում է թուրք մի զինվորի սպառնալից ձայնը, ապա երեք-չորս տարեկան մի մանկան լալագին ճիչը: Կինը, որի ձայնից զգացվում է մանկամարդ լինելը, խնդրում է զինվորին, որ խնայի իր պատիվը, իսկ զինվորը սպառնագին հրամայում է, որ կինն առանց ձայնի հանձնվի: Փոքրիկը ճչում է, կինը՝ պաղատում. թուրքը անողորք է մնում: Լսվում է նաև տարիքոտ մի կնոջ ձայնը, որ թուրքի գուլթն է ուզում շարժել՝ «պատիվը փատիշահինն է» ասելով: Թուրքը պառավին հրամայում է լռել, եթե չի ցանկանում անմիջապես դիակի վերածվել: Պառավը լռում է, մանուկը շարունակում է լալ: Թուրքը սպառնում է, և իր գազանային նպատակին հասել է արդեն, ինչպես կարելի է կռահել մի քանի թուրք տևող լռությունից... Հազիվ տասնհինգ թուրք է անցնում, երբ թշվառ որսի մոտից լսում եմ մի ուրիշ թուրքի ձայնը... Քիչ հետո մի երրորդ զինվորի ձայնը, և այսպես շարունակ մինչև արշալույս, երբ կնոջ մարտիրոսությունն իր վերջն է գտնում»²⁴²:

Սերժանտ Ճորբաջիսը պատմում է. «Մի տան մեջ արյան հետքերն ինձ առաջնորդեցին դեպի պահարան: Իմ հետաքրքրասիրությունն ինձ ստիպեց, որ բացեմ պահարանի դուռը. մազերս բիզ-բիզ կանգնեցին: Ներսում մերկ աղջկա մարմին էր՝ կտրված կրծքերով: Մեկ ուրիշ տան բակում կիտրոնի ծառից կախված աղջկա մարմին տեսա: Զինված մեծաքանակ զինվորներ այս ու այն կողմ էին գնում»²⁴³:

Զմյուռնիայի անգլիական եկեղեցու հոգևոր հովիվ Չարլզ Դորսոնը հաղորդում է. «Քեմալական հեծելազորի մուտքն

²⁴² Սաբայան, *Զմյուռնիա 1922*, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, 89:

²⁴³ Հղումը՝ ըստ *Housepian Dobkin, Smyrna 1922*, 157:

ավելի շուտ տեղի ունեցավ, քան մեզնից շատերը սպասում էին: Ես անձնապես տեսա նրանց, երբ վերադառնում էի հյուպատոսարանից հետևի փողոցով: Հանկարծ ճիչ լսվեց, և մի կին ծնկի իջավ՝ սուր ճիչ արձակելով փրկության համար [...]: Դեմ առ դեմ դուրս եկա մի խմբի, որ բաղկացած էր կանանցից և երեխաներից, տեսա մի երիտասարդ աղջկա դիակ, որ բռնաբարված էր և գնդակահարված էր կրծքից, որը շատ պարզ վկայում էր, թե ինչ է տեղի ունեցել մինչ մահը»²⁴⁴:

Հորթոնը հուսահատորեն բացատրություն է փնտրում կատարվածի վերաբերյալ, սակայն չի կարողանում գտնել, ուստիև դադարեցնում է որևէ արդարացում գտնելու իր անօգուտ ջանքերը. «Անշուշտ, Ջմյունիայում դաժանությանը, տարփանքին, անգթությանը ոչինչ չէր պակասում, և մարդկային կրքի այդ ամբողջ կատաղությունը մարդկային ցեղին իջեցրեց ամենագարշելի և ամենաանգութ գազաններից ավելի ցածր մակարդակի: Այս դիվային ողբերգության ընթացքում թուրքերը կողոպտում և բռնաբարում էին: Նույնիսկ բռնաբարությունը կարող ենք հասկանալ որպես բնության ներքին մղում՝ ազդակ՝ գուցե անհաղթահարելի, երբ կրքերը վայրենաբար համակում են մտավոր ցածր կարողություն և ոչ այնքան քաղաքակիրթ մարդկանց, սակայն կանանց և աղջիկների շարունակական հափշտակումը չենք կարող վերագրել ո՛չ կրոնական մոլեռանդությանը և ո՛չ կենդանական կրքերին: Ամենասուր տպավորություններից մեկը, որ ինձ հետ բերեցի Ջմյունիայից, ամոթի զգացումն էր, որ պատկանում էի մարդկային ցեղին»²⁴⁵:

²⁴⁴ Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 24.

²⁴⁵ Horton, *The Blight of Asia*, 153.

Արդյո՞ք բռնաբարություններն ու սեռական բնույթի այլ գործողությունները ներառվում են ցեղասպանության հանցակազմի մեջ: Աբրահամյանն այսպես մեկնաբանեց. «Ցեղասպանության հանցակազմն իր կատարման եղանակներով բազմազան է: Այս պարագայում բռնաբարություններն ու սեռական բնույթի այլ գործողությունները պետք է դիտարկել բռնությամբ անձի առողջությանը ծանր վնաս հասցնելու համատեքստում, քանի որ գործ ունենք կոնկրետ ազգային և կրոնական պատկանելություն ունեցող անձանց նկատմամբ կատարվող հանցանքների հետ: Ականատեսների արձանագրած փաստը, թե ոչ մի մահմեդական կին բռնաբարված չի եղել, ինքնին խոսում է այն մասին, որ այդ պարագայում բռնաբարություններն ու սեռական բնույթի այլ գործողությունները ներառվում են ցեղասպանության հանցակազմի մեջ և ինքնուրույն չեն որակվում: Այս ճանապարհով հանցավորները նպատակ են հետապնդում հեշտացնելու իրենց կողմից կատարվող ոճրագործությունը՝ կտորել զոհի դիմադրությունը ոչ միայն ֆիզիկապես, այլև բարոյապես սպանելով վերջինիս»²⁴⁶:

Ինքնասպանությունը՝ որպես աուտոագրեսիայի (ներքին աշխարհի դեմ ուղղված ագրեսիա) դրսևորման տեսակ, մարդաբանական երևույթ է. այն բնորոշ է միայն մարդուն, քանի որ ոչ մի ուրիշ կենդանի էակ գիտակցաբար չի ընդհատում իր կյանքը²⁴⁷:

²⁴⁶ Կարինե Աբրահամյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 6 սեպտեմբերի 2019 թ.:

²⁴⁷ Հասմիկ Գրիգորյան, «Ինքնասպանությունը՝ որպես մարգինալ մշակույթ Հայոց ցեղասպանության համատեքստում», *Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, VIII, հոդվածների ժողովածու (Երևան, Լուսակն, 2012), 334:

Քրիստոնեաբնակ թաղամասերի (հայկական և հունական) հրկիզման առաջին գիշերն ինքնասպան եղած հարյուրավոր քրիստոնյաների մարմինները երևացին ջրի մակերեսին՝ լքված քաղաքին ավելի սարսափելի տեսք տալով²⁴⁸: Բրիտանացի որոշ սպաներ վկայություններ են թողել Զմյուռնիայի սարսափների մասին և նկարագրել ինքնասպանության զանգվածային դեպքեր: Ըստ նրանց վկայության՝ «խուճապահար եղած մարդիկ սարսափից խելագարվում էին, իսկ հարյուրավորները նետվում էին ջուրը, անկախ այն բանից, լողալ գիտեին, թե՛ ոչ»²⁴⁹:

Բազմաթիվ փաստերից կարելի է եզրակացնել, որ Զմյուռնիայում ինքնասպանությունները սովորական էին դարձել: Ականատես վերապրողներից մեկը պատմում է. «Կորդելիոյում (Զմյուռնիայի արվարձան) մի երիտասարդ պատկառելի և գրավիչ զույգ ծով մտավ: Տղամարդն իր գրկում փոքր երեխա ուներ: Երբ նրանք ավելի ու ավելի խորն ընկղմվեցին ծովի մեջ, և ջուրն արդեն ծածկել էր նրանց ուտերը, հանկարծ հասկացա, որ ուզում են խեղդել իրենց: Նավակով մոտեցա նրանց՝ խոստումով, որ ամեն ինչ կանեմ, որպեսզի կարողանամ փրկել. ափ հանեցի: Նրանք բացատրեցին, որ հայեր են և քաջ գիտակցելով իրենց մոտալուտ մահվան մասին՝ որոշել են ինքնասպան լինել: Ես նրանց տարբեր վայրեր տարա, սակայն հաջողություն չունեցա: Վերջապես հասանք մի դպրոցի մոտ: Զանգը տվեցի, և երբ մոտեցան դռանը, բացատրեցի իրավիճակը, սակայն տեղեկանալով, որ հայեր են,

²⁴⁸ E. Economos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 126.

²⁴⁹ Նույն տեղում, 127:

փակեցին դուռը: Ես հեռացա՝ թողնելով նրանց դպրոցի աստիճանների վրա»²⁵⁰:

Միքայել Բարթիկյանի ծոռնուկի Իոա Բարթիկյանը մեծ տատիկի՝ Արփիինե Բարթիկյանի՝ կյանքին վերջ տալու փորձի մասին է պատմում: «Պապիկիս մոր պատմությունը լսել եմ մորիցս, իսկ նա էլ՝ իր տատիկից՝ Արփիինեից: Արփիինեն ծնվել է Աֆիոն Գարահիսարում 1903 թ.: 12 տարեկանում Արփիինեն և ընտանիքի անդամները՝ հայրը, մայրը, եղբայրը և քույրը, ինչպես նաև քաղաքի ամբողջ հայ բնակչությունը տեղահանվում են Դեր Զոր: Մի որոշ ժամանակ անց տղամարդկանց առանձնացնում են՝ քշելով բլուրն ի վեր: Արփիինեի եղբայրը շրջվել և ձեռքով հրաժեշտ է տվել քույրերին ու մորը: Այդ տեսարանը նրա աչքի առաջ է եղել մինչև կյանքի վերջ: Հիշում էր նաև ծարավից բղավող փոքրիկ երեխային, որին մայրը փորձում էր մեզ խմեցնել, սակայն, չկարողանալով կուլ տալ, երեխան ձեռքով հարվածում է անոթին, հեղուկը թափվում է գետնին: Մայրն ու երեխան շատերի պես մնում են ինչ-որ տեղ, ինչպես և Արփիինեի մայրը: Արփիինեն աֆիոնգարահիսարցիների հետ հասնում է Դեր Զոր, հետո հայտնվում Զմյուռնիայում, թե ինչպես, ինքն էլ չէր հիշում: Ապրել է արաբների նկուղում, երբ 1922 թ. թուրքերը Զմյուռնիայում կոտորած են իրագործել: Այդ օրերին եկել է ծովեզերք և ցանկացել իրեն ծովը նետելով կյանքին վերջ տալ. ջուրն ամբողջովին ծածկված է եղել դիակներով, ու նա այդպես էլ չի համարձակվել իրականացնել իր որոշումը: Մի որոշ ժամանակ անց այլ տարագիրների հետ նավ է բարձրացել ու հասել Հուսաստան, որտեղ էլ Արփիինեին ամուսնացրել են պապիկիս

²⁵⁰ Economos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 141-142.

հոր՝ Միքայել Բարթիկյանի հետ: Արփինե տատիկն ապրել է 96 տարի»²⁵¹:

«Դեյլի Թելեգրաֆը» (Daily Telegraph) սեպտեմբերի 18-ին հաղորդում է. «Մեծ թվով կանայք և աղջիկներ, եղբայրներ և ամուսիններ ինքնասպան էին լինում, որ չանարգվեին [...]: Շատերն իրենց ծովն էին նետում, որ խուսափեին ցամաքի սարսափներից, և խեղդվում [...]: Անհնար է ճշգրիտ որոշել զոհերի թիվը, ամեն դեպքում այդ թիվը շուրջ հարյուր հազար կլինի»²⁵²:

Յեղասպանության տարիներին զանգվածային ինքնասպանություններն Աբրահամյանը պայմանավորում է անձի՝ ավելի հեշտ մահվան գաղափարով, առանց տանջանքների կյանքից հեռանալու, իր հարազատների տառապանքները չտեսնելու ցանկությամբ: Նրա համոզմամբ՝ ինքնասպանության հասցնելու հանցակազմը ևս չի կարող ինքնուրույն կիրառվել. կոնկրետ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելն արդեն իսկ ենթադրում է, որ այս դեպքում զոհերը կարող են դիմել ինքնասպանության²⁵³:

Պատմական իրողությունների դիտազննումը, ականատես-վերապրողների վկայությունները և առանձին մասնագետների հետ քննարկումները թույլ են տալիս եզրահանգել, որ քեմալականների կատարած ցեղասպանական գործողություններին առավելագույնս նպաստել են իրողությունների կանխամտածված և սրընթաց զարգացումները՝ զոհերի

²⁵¹ Իռա Բարթիկյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 1 հուլիսի 2021 թ.:

²⁵² Նույն տեղում, 131-132:

²⁵³ Կարինե Աբրահամյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 6 սեպտեմբերի 2019 թ.:

նկատմամբ անասելի դաժանության դրսևորումներով: Փաստորեն, Քեմալի ստեղծած նոր պետականության հենքն անմեղ ժողովուրդների արյունն ու կողոպտված ունեցվածքի սեփականացումն էր: Ինչպես Օսմանյան պետությունն էր ստեղծվել և դարերի ընթացքում ամրապնդվել արյամբ և հրով, նոր Թուրքիան ևս կերտվում էր նույն կերպ:

Հայկական և հունական թաղամասերի հրկիզումը. Իրարամերժ տեսակետներ²⁵⁴

«Ո՞վ հրկիզեց Ջմյունիան» հարցին պատասխանել են ականատեսները, ժամանակակիցները, ուսումնասիրողները, վերապրողներն ու նրանց սերունդները: Վերոհիշյալ հարցի շուրջ տեսակետները կարելի է բաժանել երկու հակադիր խմբի.

ա. քաղաքը կանխամտածված հրկիզել են թուրքերը՝ որպես հակառակորդի դեմ ուղղված «պատերազմական հերթական գործողություն»՝ նպատակ ունենալով ոչնչացնել հույների ստեղծած քաղաքակրթության վերջին օջախներից մեկը Փոքր Ասիայի եզերքին և հաստատել իրենց նորաստեղծ պետականությունը՝ որպես թուրքական կողմի հաղթանակի հուշարձան:

բ. Ջմյունիան հրկիզել են հայերն ու հույները:

Տեսակետ առաջին

Ինչպե՞ս թաքցնել հանցագործության հետքերը

Ջմյունիայի հրկիզման մասին հաղորդումները բազմազան են և տարարնույթ²⁵⁵: Խիստ արժեքավոր են ականա-

²⁵⁴ 1845 թ. հունիսի 21-ին Ջմյունիայում հրդեհ է բռնկվել. այն մոխրի է վերածել քաղաքը, մարդկային և նյութական մեծ վնաս պատճառել: Հրդեհի ճարակ է դարձել 3500 տուն, որից 870-ը պատկանել է հայերին: Այրվել են Սուրբ Ստեփանոս եկեղեցին՝ իր հազվագյուտ զարդերով ու եկեղեցական պարագաներով, կավածքներով, Սուրբ Մեսրոպյան, Սուրբ Հռիփսիմյան վարժարանները, Առաջնորդարանը, «Մեսրոպյան», «Արշալույս» և «Արագածունյաց» տպարանները՝ իրենց տառերով, սարքավորումներով ու գրքերով, «Արշալույս Արարատյանի», «Հայրենասերի» խմբագրատները ևն:

²⁵⁵ Rifat N. Bali, *The Saga of a Friendship, Asa Kent Jennings and the American Friends of Turkey* (Istanbul: Libra Kitap, 2009), 55; Constantine Hatzidimitriou,

տեսների և ժամանակակիցների վկայությունները: Այս տեսակետը Ջորջ Հորթոնը հիմնավորում է բազմաթիվ փաստերով.

1. Դեպի հայկական թաղամաս տանող փողոցները հսկում էին թուրք զինվորները, և ոչ ոք իրավունք չունեի ներս մտնելու, մինչ շարունակվում էր կոտորածը:

2. Չինված թուրքերը, ներառյալ բազմաթիվ զինվորներ, մտնում էին հայկական թաղամաս, կոտորում բնակիչներին, կողոպտում նրանց ունեցվածքն ու ավերում տները, ապա թիթեղյա տուփերով նավթ կամ դյուրավառ այլ նյութեր էին լցնում դրանց վրա, թաթախում էին լաթերը նավթի մեջ ու պատուհաններից ներս նետում:

3. Քաղաքի եվրոպական թաղամասի տարբեր վայրերում թուրքերը փոքրիկ ռումբեր էին տեղադրում սալարկ քարերի տակ՝ գործելով որպես լրացուցիչ գործակալներ քաղաքի կործանման աշխատանքում: Նավթը, որ թուրք զինվորները շաղ էին տալիս փողոցներում, տարածում էր կրակը դեպի եվրոպական թաղամաս, իսկ ռումբերը քանդում էին երերացող պատերը: Այդպիսի մի ռումբ տեղադրված էր աղջիկների ամերիկյան դպրոցի մոտ, իսկ մեկ ուրիշը՝ ամերիկյան հյուպատոսարանի:

4. Թուրքերը հայկական թաղամասը կրակի են մատնում 1922 թ. սեպտեմբերի 13-ին: Վերջին հույն զինվորները, որ անցել էին Ջնյունիայի միջով երեկոյան ժամը 8-ին, պատ-

American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces, September 1922 (New York: Caratzas, 2005); Giles Milton, *Paradise Lost, Smyrna 1922, The Destruction of Islam's City of Tolerance* (London: Sceptre, 2008); Heath W. Lowry, "Turkish History, On Whose Sources Will be Based? A Case Study on the Burning of Izmir," *Journal of Ottoman Studies*, v. IX (Istanbul, 1989).

մում են, որ թուրքերը շուրջ հինգ օր՝ նախքան հրդեհի բռնկումը, քաղաքում հաստատել էին իրենց միահեծան տիրապետությունը և այդ ամբողջ ժամանակահատվածում հայկական թաղամասում սահմանել զինվորական վերահսկողություն մինչև համակարգված և լիակատար արյունահեղության ավարտ:

5. Կրակը բոցավառվել է հայկական թաղամասի ծայրամասում: Թուրքական թաղամասն աղետի չի ենթարկվում և զերծ է մնում կրակից. նողկալի բոլոր տեսարանների, քրիստոնյաներին բաժին հասած աննկարագրելի տառապանքների ընթացքում ցնծացել է ուրախ պարերից, երգերից և բերկրալի տոնակատարություններից²⁵⁶:

Հայտնի է, որ Ջմյունիայի քաղաքապետարանի ջրցան մեքենաները, որոնք ջրի փոխարեն լցված են եղել բենզինով կամ նավթով, օգտագործվում էին հայկական թաղամասի արագ հրկիզման համար: Ջմյունիայի հրկիզման մասին ականատեսի ստուգապատում նկարագրություններից է նաև ամերիկյան դպրոցի տնօրեն Միննի Միլսի վկայությունը: Նա պատմում է, որ տեսել է, թե ինչպես են թուրքական կանոնավոր բանակի սպան կամ սերժանտը մտնում այն շենքերը, ուր տեսանելի էին առաջին բոցերը, և իրենց հետ տանում թիթեղյա տուփեր, որոնք ակնհայտորեն պարունակում էին պարաֆին²⁵⁷:

Հրկիզման տեսարանի մասին է նաև ականատես վերապրող Բուզանդ Ջամբազյանի վկայությունը. «Դպրոց ելայ ու դուրսը դիտեցի: Հրդեհ կար ամէն կողմ: Այն տուները,

²⁵⁶ Horton, *The Blight of Asia*, 114 -116.

²⁵⁷ Պյոտ, *Ջմյունիայի վախճանը*, 86:

որոնք կրակ առած չէին, իտալացի զինուորներ տաք ջուր կու տային մեքենաներով: Թուրքերն ալ թաղերը պաշարած էին ու գէնքի տակ առած ո՛վ կը համարձակէր փախչելու: Հակառակ բոլոր տեսակ խստութիւններուն՝ մեզի միացողներուն թիւը կ'աւելնար, որոնք կը վկայէին, թէ իտալացիներուն սրսկածը պէնզինախառն ջուր է, և այդ էր պատճառը, որ տուները իրարու ետեւէ կրակ կառնէին»²⁵⁸: Ապա շարունակում է. «[...] Եկեղեցւոյ մօտակայ թաղերը մեր պաշտպանութեան ներքեւ էր: Անոնք գիշերները կը մօտենային մեզի ու կը նետէին գերմանական սափլը պօմպա, որոնք հեռուէն կը նետուէին, օդին մէջ վառելով՝ վար կը իյնային ու մեծ վնասներ կը պատճառէին [...]: Եկեղեցւոյ բակին մէջ ինկած ռումբերը ո՛չ միայն մեծ վնասներու կը ենթարկէին, այլեւ ժողովուրդը անշարժութեան, յուսահատութեան ու սովի կը մատնէր»²⁵⁹:

Ավետյանը, անդրադառնալով Զմյուռնիայի հայերի և հույների թաղամասերի հրկիզմանը, գրում է. «Խուժանը չէ գոհացեր միայն վառելով եկեղեցին եւ հիւանդանոցը, այլ փշուրփշուր ըրած է բարերարներուն արձանները եւ իր ուղղութեամբ գտնուող բոլոր շէնքերուն վրայ վառելանիւթ թափելով՝ ահագին տարածութեան վրայ գտնուող մեծ ու փոքր շէնքերը այրած է եւ այժմ պատասխանատու կը գտնէ հայերը այս հրկիզումին համար, սակայն տեսնողները կը վկայեն, թէ որոնք էին վառողները»²⁶⁰:

Պյուն փաստում է, որ թուրքերը հայկական թաղամասը կողոպտելուց և բնակչության մեծամասնությանը կոտորելուց հետո հանցագործությունների հետքերը վերացնելու նպատա-

²⁵⁸ Ճամպագեան, *Պարանի կեանքի մը պատմութիւնը*, 45:

²⁵⁹ Նոյն տեղում:

²⁶⁰ Աւետեան, *Յուշեր*, 12:

կով դիմել են կրակի օգնությանը²⁶¹: Այդ է վկայում նաև «Դեյլի նյուզի» (Daily News) հատուկ թղթակից Ֆրեդերիկ Բարտոն Մորիսը: Նա գրում է, որ երբ կրակը բռնկվել է հայկական թաղամասում, թուրքական իշխանությունները ջանք չեն գործադրել այն կասեցնելու համար, ավելին՝ բենզին են լցրել տների վրա և հրկիզել դրանք²⁶²:

Բժիշկ Օրան Ռաբերը, որ ճանապարհորդում էր Եվրոպայում և այդ ժամանակահատվածում գտնվում էր Ջմյունիայում, վկայում է, որ քաղաքը հրկիզել են թուրքերը²⁶³: Ամերիկացի ծովակալ, լեյտենանտ Աարոն Ս. Մերիլը (1890-1961), որ Ստամբուլ էր մեկնել՝ Ջմյունիայում Միացյալ Նահանգների գերագույն հանձնակատար, ծովակալ Մարկ Բրիստոլի (1919-1927) հետ Ջմյունիայի հիմնախնդրի լուծման շուրջ խորհրդակցելու նպատակով, օրագրային գրառումներից մեկում նշում է. «Ջմյունիայի հրկիզման պատասխանատվությունն ընկած է հենց թուրքերի վրա. այն հաստատվում է ականատեսների վկայություններով: Երբ կրակն արդեն տարածվում էր, շատերն են տեսել, թե ինչպես էին թուրք զինվորները բենզին լցնում շինությունների շուրջը, այդ թվում՝ ԱՄՆ հյուպատոսարանի: Այդ մեղադրանքներին ի պատասխան՝ թուրքական իշխանությունները հայտարարել են, որ առանձին կառույցներ հրկիզելով՝ ցանկացել են կանխել կրակի հետագա տարածումը»²⁶⁴:

²⁶¹ Պյոտ, *Ջմյունիայի վախճանը*, 12:

²⁶² Նույն տեղում, 12-13:

²⁶³ Christos Papoutsy, *Ships of Mercy, The True Story of the Rescue of the Greeks, Smyrna, September 1922* (Portland, UNKNO, 2008), 28.

²⁶⁴ *Геноцид армян, Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий*, т. 2, ч. 2 (Ред. профессор Ю. Г. Барсегов) (Москва: Гардарики, 2005), 79.

«Միավորված մամուլը» (United Press) Կոստանդնուպոլսի իր թղթակցից ստացել է հետևյալ հեռագիրը. ««Սիմփսոն» կործանարարը ժամանեց այս երեկո՝ բերելով Ջմյունիայի հրդեհի ավելի շատ ականատեսների: Բոլորը համաձայն են, որ այն ծագել է հայկական թաղամասում»²⁶⁵:

Կրակն անվնաս էր թողել թուրքական և հրեական թաղամասերը: Մինչդեռ բռնկվել էին եվրոպական, հունական և հայկական թաղամասերը: Շուրջ 4500 տուն և խանութ մոխրի է վերածվում. պատասխանատվության մասին պաշտոնապես հայտարարում են Ջմյունիայում Անգլիայի և Ֆրանսիայի հյուպատոսները, որոնք բացահայտ մեղադրել են թուրքերին: Ջմյունիայում Ֆրանսիայի հյուպատոսի վկայությամբ՝ «թուրքերն էին, որ սկսեցին կրակը և կոտորեցին մեծ թվով քրիստոնյաների, թուրքերը, որոնց մենք անվանում ենք մեր ընկերները, և արդեն մերը չեն»²⁶⁶: Ջմյունիայում Անգլիայի հյուպատոսը ևս հայտարարել է, որ քաղաքի հրկիզումը դիտավորություն էր²⁶⁷:

Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում գործող «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպության անդամ Սելայ Էրթեմը մեր հարցազրույցում մասնավորապես շեշտեց. «Թուրքական պաշտոնական պատմագրության համաձայն՝ հույներն են հրկիզել: Հետագայում տեղեկացանք, որ հենց թուրքերն են հրկիզել: Փաստորեն մեր իմացած պատմությունն անհիմն էր, կիսատ-պռատ, աղավաղված: Նոր պատմություն պետք է գրվի: Այս գործելակերպն ավանդույթ

²⁶⁵ E. Economos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 123-124.

²⁶⁶ Նույն տեղում:

²⁶⁷ Նույն տեղում:

կարելի է համարել: Սեփական նախաձեռնությամբ սպանություններ իրականացնել, հրկիզել մի ամբողջ քաղաք, ապա մեղքը բարդել ուրիշների վրա»²⁶⁸:

Տեսակետ երկրորդ

Հրկիզել սեփական թաղամասե՞րը

Քեմալականները, շարունակելով երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությունը, այն «օրինականացնում» են Լոզանում կնքված պայմանագրով²⁶⁹:

1922 թ. դեկտեմբերի 12-ի՝ Լոզանի խորհրդաժողովի ռազմատարածքային հանձնաժողովի տասներեքերորդ նիստի²⁷⁰ արձանագրության մեջ գրված է հետևյալը. «Թուրքերը երբեք չեն արհամարհել ոչ մահմեդական տարրերի իրավունքները, քանի դեռ վերջինները չեն չարաշահել այն երկրի մեծահոգությունը, որտեղ նրանք ազատ ու անկաշկանդ ապրել են դարերով: Մինչև հիմա կառավարության և թուրք ժողովրդի որևէ գործողությունից գանգատվելու իրավունք չունեցող հրեական համայնքի օրինակը բավական կլիներ ապացուցելու, որ հույների և հայերի վերաբերմամբ տեղի ունեցած սիհաճ իրադարձությունների մեղքն ամբողջությամբ ընկնում է հենց նրանց վրա»²⁷¹:

²⁶⁸ Սելայ Էրթեմ, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 23 ապրիլի 2013 թ.:

²⁶⁹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) (խմբ.՝ պրոֆ. Ջոն Կիրակոսյան) (Երևան, Հայաստան, 1972), 779:

²⁷⁰ Լոզանի խորհրդաժողովի ռազմատարածքային հանձնաժողովի տասներեքերորդ նիստում նախագահում էր Մեծ Բրիտանիայի պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի նախարար մարկիզ Քերզոն օֆ Քեդլսթոնը:

²⁷¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, 745:

Մուսթաֆա Իսմեթ Ինյունյուն²⁷² բարձրաձայնում էր իր մտքերը՝ կապված նորաստեղծ թուրքական պետության տարածքում օտար տարրի կողմից անկախ պետությունների ստեղծման անհնարինության հետ՝ մոռանալով, որ Մարսելում հույները վերաբնակիչներ էին, իսկ հայերն ապրել ու ապրում էին հայկական բարձրավանդակում դարեր շարունակ. «Ինչպես Մարսելում բնակություն հաստատած հույները չեն կարող բանականորեն երազել այնտեղ անկախ հունական պետություն ստեղծելու կամ այդ նավահանգիստն իրենց հայրենիքին միացնելու մասին, նույնպես և հույներն ու հայերը չեն կարող Թուրքիային նման պահանջներ ներկայացնելու իրավունք ունենալ»²⁷³:

Հունական պատվիրակության նախագահ Վենիզելուսը, անդրադառնալով բնակչության փոխանակմանը, նշում է, որ այն լիովին չի լուծում փոքրամասնությունների հարցը, քանի որ դրանից հետո էլ Թուրքիայում հույներ և հայեր են մնալու²⁷⁴:

Զմյուռնիայում կատարված գործողությունների ամբողջ պատասխանատվությունը բարդելով հույների վրա՝ թուրքական պատվիրակությունը հայերի նկատմամբ «անթաքույց գթասրտություն է դրսևորում»: «[...] Նա (Վենիզելուսը – Թ. Մ.), անտարակույս, աչքաթող է անում, որ Փոքր Ասիայի հունական օկուպացիան տարաբախտ հայերի համար դարձավ տառապանքների ու աղետների մի նոր աղբյուր: Այդ

²⁷² Մուսթաֆա Իսմեթ Ինյունյուն (1884-1973), թուրք գորահրամանատար և քաղաքական գործիչ, Քեմալի զինակիցներից, Թուրքիայի երկրորդ նախագահ:

²⁷³ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, 746:

²⁷⁴ Նույն տեղում:

դժբախտ բնակչությանը բռնությամբ ներգրավեցին հունական բանակի շարքերը [...]: Հույները, երբ հեռանում էին Ասիայից, հայերին տարան իրենց հետ: Ուստի պետք է ասել, որ հայերի կրած տառապանքների անմիջական պատճառը հանդիսացող կառավարությունը լոկ վերջին հերթին կարող է իրեն թույլ տալ հրապարակորեն կարեկցել նրանց»²⁷⁵:

Թուրքական պատվիրակն առաջարկում է հարցն ավելի լայնորեն դիտարկել, որպեսզի «(բոլորը) իմանան, որ միլիոնից ավելի անօթևան և սովահար թուրքեր գտնվում են այն երկրներում, որոնցով չեն հետաքրքրվում և չեն ցանկանում հետաքրքրվել ո՛չ Եվրոպայում, ո՛չ Ամերիկայում»²⁷⁶:

Անգլիացի պետական գործիչ, դիվանագետ Ջորջ Նաթանիել Քերզոնը 1922 թ. դեկտեմբերի 13-ի նիստում անդրադառնում է Իսմեթ փաշայի հայտարարություններին. «Իսմեթ փաշան, խոսելով հայերի մասին, նրանց ներկայացրեց որպես թուրքական տիրապետության տակ ապրող միանգամայն երջանիկ ու գոհունակ մարդկանց, որոնք թուրքական կառավարության կողմից հանդիպում են ամենաեղբայրական զգացմունքների: Նրանց տառապանքների պատճառը, ըստ նրա խոսքերի, հանդիսանում են հենց իրենց սեփական խելագրությունն ու նոր դրացիների մեքենայությունները: Եթե երկու ժողովուրդների միջև միշտ գոյություն են ունեցել երջանիկ հարաբերություններ, ապա այդ ինչպե՞ս պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիվը նվազելով հասել է 130 հազարի: Արդյո՞ք նրանք ինքնասպանություն են

²⁷⁵ Նույն տեղում, 747-748:

²⁷⁶ Նույն տեղում, 748:

գործել, թե՞ անհետացել են կամավոր կերպով: Ի՞նչ ճնշման տակ է տեղի ունեցել այդ նվազումը»²⁷⁷:

Հունաստանում Հայ Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Միհրան Սվազլուին 1922 թ. հոկտեմբերի 25-ին Փարիզից հղված նամակում նշված է. «Իզմիրի աղետքը ամէնքս ալ տրտմութեամբ համակած է: Բաւական չէ մեր ֆիզիքական եւ նիւթական կորուստներուն մեզ առթած անասելի ցաւը, ու տակաւին պէտք է սրտաբեկ հանդիսատեսները ըլլանք, թէ ինչպէս ջանահնար կ'ըլլան աղէտքին պատասխանատուութիւնը հայոց վրայ ծանրացնել եւ վարկաբեկ ընել մեզ քաղաքակիրթ աշխարհին առջեւ: Այս անիրաւ մեղադրանքէն ազատելու համար պէտք է ձեռք բերել ճշմարտութիւնը»²⁷⁸:

Փաստերն անկողմնակալորեն դիտարկող մասնագետների մեծ մասը շեշտում է այն հանգամանքը, որ մեղադրանքը հայերի ու հույների նկատմամբ շինծու էր և կեղծ:

Բիերսթադթը խորապես քննադատում է այն տեսակետը, ըստ որի՝ իբր հույներն ու հայերն են հրկիզել քաղաքը. «Ինչո՞ւ պետք է հույներն ու հայերն այրելին իրենց սեփական տները, որտեղ դեռ հույս ունեին վերադառնալ: Իսկ թուրքերն ունեին այդ պատճառը: Նրանք ուզում էին ընդմիջտ թաքցնել թալանի, արյունահեղության ամբողջ հետքը, որը տևեց չորս օր շարունակ: Ավելին՝ նրանք որոշել էին, որ քրիստոնեությունը պետք է ոչնչացվի Փոքր Ասիայի քրիստոնյա մայրաքաղաքից, և դա պետք է լինի կրակով ու սրով»²⁷⁹:

Թեև շատերն էին սարսափազդու բաներ պատմում Զմյուռնիայում իրենց տեսածի մասին, այնուամենայնիվ,

²⁷⁷ Նույն տեղում, 750:

²⁷⁸ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 308, 19-22:

²⁷⁹ Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 35.

նրանք իրենց պարտքն էին համարում հիշեցնել. «Բայց ի սեր Աստծու, իմ անունը մի՛ հիշատակեք, քանի որ ես Թուրքիա վերադառնալու հույս ունեմ»²⁸⁰:

Այս առնչությամբ խիստ արժեքավոր է բժիշկ Խաչերյանի օրագրային հետևյալ գրառումը. «Հայերը, եթե նույնիսկ այդպիսի դիտավորություն ունենային, փոխանակ հրդեհը իրենց թաղից սկսելու, կարող էին հեղինական բանակի մեկնումից առաջ և նույնիսկ դրանից հետո, նախ թուրքական թաղերը կրակի տալ: Ի դեպ թուրքերի գրավումից քիչ հետո Հայնոցը մեծ մասամբ դատարկված էր, և այդ գիշերն իսկ թուրքերը Հայոց թաղում սկսել էին թալանը, սպանություններ ու ամեն տեսակի վայրագություններ: Իսկ մինչև չորեքշաբթի՝ հրդեհի օրը, ոչ ոք չէր համարձակվում անցնել Հայոց թաղով, ուր մնաց թե այն զանազան տեղերից հրդեհի տրվեր»²⁸¹:

Թուրքիայի Կոնիա քաղաքի բնակիչ, ազգությամբ թուրք, մասնագիտությամբ ուսուցիչ երեսուներկուամյա Սևալ Օզդեմիրը (բնակչի անվտանգությունից ելնելով՝ փոխված է անունազգանունը) հետաքրքիր մանրամասներ է հաղորդում իր տատիկի պատմածից: Սևալն անշուշտ լավ գիտի իր տատիկի պատմությունը: Քաջաձանոթ լինելով Թուրքիայի Հանրապետության պաշտոնական տեսակետին՝ Սևալը, այնուամենայնիվ, փորձում է հանգել ինքնուրույն եզրակացության. «Ասում են, թե հայերն ու հույներն են այրել քաղաքը: Չգիտեմ: Ասում են, թե նրանք ցանկացել են այրել (ողջակիզել – Թ. Մ.) մահմեդականներին, մինչդեռ Ալլահը պատժել է նրանց, և իրենք են այրվել: Անկեղծ ասած՝ միշտ մտածել եմ՝ եթե

²⁸⁰ Grantham, “The Betrayal of Our Faith in the Near East,” 121.

²⁸¹ Սաքայան, *Չմյուռնիա 1922, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 81:

նրանք են հրկիզել քաղաքը, ապա ինչո՞ւ թուրքերի թաղամասը չեն հրկիզել, իրենք իրենց թաղամասն են հրկիզել: Արդյո՞ք հնարավոր է: Չեմ էլ պատկերացնում, թե ինչո՞ւ եղավ ընդհանրապես: Բայց շատ հարցեր չեմ տվել այս թեմայի վերաբերյալ»²⁸²:

Իրոք, հետաքրքիր է՝ կրակը մարելու փորձեր եղե՞լ են: Հրդեհը մարելու հուսահատ փորձի մասին է Ջնյունիայի հրշեջների խմբից մի հույնի հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Երբ պատրաստվում էինք էլմնոսյան փողոցի և այլ տեղերի հրդեհները մարել, մեզ արգելում էին զենքով: Ջրի խողովակները հաճախ էին ջարդում թուրքերը, այնպես որ եթե արգելքի էլ չհանդիպեինք, անկարելի էր լինում հանգցնել կրակը [...]: Մի թուրք զինվոր մտնում էր որսի տուն, բաց էր անում մի փոքր տուփի կափարիչը, տուփի փոշին փչում էր տան մեջ, վառված մի մոմ էր թողնում և դուրս գալիս: Հազիվ մի րոպե հետո տան ամեն մի կողմերից, հանկարծական ահագին ժայթքունով դուրս էին երկարում բոցի թևեր, և զարմանում էինք, թե ինչպես էր լինում, որ շենքը բռնկվում էր ամեն կողմից միանգամից: Իսկ ուրիշ շատ տեղեր ձեռնաջրհաններով բենզին էին սրսկում և կրակ էին գցում»²⁸³:

Խաղաղ բնակչությունը կատարել է հրդեհի մարման նմանօրինակ փորձեր, բայց դրանք արգելվել են, քանի որ թուրքերը գործել են համակարգված ձևով և նախապես ստացած հրահանգներով:

Ըստ Խաչերյանի հաղորդած տեղեկությունների՝ թուրքերը վաղուց էին որոշել ոչնչացնել Ջնյունիայի քրիստոնյա թա-

²⁸² Հարցազրույց՝ ըստ թուրքագետ *Սոֆիա Հակոբյանի*, էլեկտրոնային նամակ հեղինակին, 25 մարտի 2013 թ.:

²⁸³ ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 263, թղթ. 165:

ղերը՝ համաձայն հատուկ ծրագրի: Իթթիհաթականները քրիստոնյա թաղերը քարուքանդ անելու մտադրություն ունեին ընդհանուր պատերազմի ընթացքում Պազու լեռան վրա զետեղված թնդանոթներով, եթե դաշնակից զրահավորներին հաջողվեր Իզմիրի ծովախորշ մուտք գործել: Այն ժամանակ այդ ավերիչ ծրագիրը չիրագործվեց²⁸⁴:

«Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.)» մենագրության մեջ Գևորգ Վարդանյանն առաջին հերթին ընդգծում է քրիստոնյա տարրի նախորոշված բնաջնջումը Փոքր Ասիայում. «Զմյուռնիայի հրդեհը 1922 թ. սեպտեմբերի 13-15-ին, դրան հետևած բնակչության բռնի տեղահանությունը և զանգվածային կոտորածներն իրենց պարզագույն իմաստով քրիստոնեական տարրի ներկայության վերջն էին Փոքր Ասիայում: Քաղաքը, որն ամենամեծ քրիստոնեական կենտրոնն էր Փոքր Ասիայում, և որը հաճախ թուրքերի կողմից անվանվում էր «գյավուր Իզմիր» իր քրիստոնեական լինելու համար, կործանվեց»²⁸⁵:

Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանը (1932-2023) անդրադառնում է քաղաքի կործանման հետևանքներին. «Երբ թուրքական բանակը ետ մղեց հունական ուժերին դեպի Էգեյան ծով և 1922 թ. այրեց Զմյուռնիա քաղաքը, հայկական ներկայությունը Թուրքիայում, բացառությամբ Ստամբուլի, փաստորեն վերացավ»²⁸⁶:

²⁸⁴ Սաքայան, *Զմյուռնիա 1922, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 81-82:

²⁸⁵ Գևորգ Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը*, 129:

²⁸⁶ Richard Hovannisian, *The Armenian Question, 1878-1923, A Crime of Silence- The Armenian Genocide Permanent Peoples' Tribunal* (London: Zed Books, 1985), 27.

Զմյուռնիայի հայոց առաջնորդարանի՝ 1922 թ. մայիսի 10-ին Ազգային պատվիրակության նախագահ Գաբրիել Նորատունկյանին ներկայացրած վիճակագրական տվյալների համաձայն՝ մոտ 100 000 հայ բնակչություն է եղել (ներառյալ կղզիները), իսկ Զմյուռնիա քաղաքն իր շրջակա արվարձաններով և թեմերով (Առաջնորդական վիճակի մաս կազմող բնակավայրերի հայերի թիվը, բացառությամբ՝ Էսփշեհիր, Քյոթահիա, Պանդերմա, Պրուսա, Նիկոմեդիա)՝ ունեցել է շուրջ 40 000 երկսեռ հայ բնակչություն²⁸⁷:

Ըստ Բիերսթադթի՝ Զմյուռնիայի արյունահեղությանը զոհ է գնացել շուրջ 100 000 մարդ²⁸⁸: Հորթոնը, համաձայն ժամանակի մամուլի տեղեկությունների, փաստում է, որ զոհերի ընդհանուր թիվը կազմել է 100-120 000²⁸⁹, իսկ նյութական կորուստը կազմել է 60 միլիոն ամերիկյան դոլար²⁹⁰:

Երբ Կոստանդնուպոլսում տարածվում է Զմյուռնիայի հրկիզման մասին լուրը, թուրքական մամուլն այն ընդունում է բացահայտ անտարբերությամբ: Քեմալականների համար Զմյուռնիայի եվրոպական բնակավայրերի հրկիզումը Թուր-

²⁸⁷ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 740:

²⁸⁸ Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 36.

Թուրք պատմաբան Սաիթ Չեթինոզլուն խելամիտ է համարում Զմյուռնիայի զոհերի՝ շուրջ 100 000-ից ավելի լինելու հաշվարկը: Նա նշում է, որ հրդեհից առաջ Զմյուռնիայում շուրջ 400 000 քրիստոնյա է ապրել, իսկ հոկտեմբերի 1-ի դրությամբ առնվազն 190 000 քրիստոնյայի մասին տեղեկություն չի եղել: St' u Sait Cetinoğlu, "İzmir 1922: Hristiyan hayati o gün İzmir iskelesinde çok ucuzdu. Sonrasında da!" <http://hyetert.blogspot.com/2012/01/izmir-1922-hristiyan-hayat-ogun-izmir.html>, դիտվել է՝ 19.08.2021:

²⁸⁹ Horton, *The Blight of Asia*, 173-174. St' u նաև Χρήστος Σωλομονίδης, *Σμύρνη Χρυσόστομος* (Αθήνα: Ειρμός, 1993), Ιωάννης Χασιώτης, *Οι διωγμοί των Ελλήνων και η γενοκτονία στο Σμύρνη. Μικρασία* (Αθήνα: Κυκλοφορεί, 2006), 61-64.

²⁹⁰ Χασιώτης, *Οι διωγμοί των Ελλήνων και η γενοκτονία στο Σμύρνη. Μικρασία*, 66.

քիայի համընդհանուր թուրքացման ծրագրի մասն էր կազմում: Կոստանդնուպոլսից «Մանչեսթր գարդիանին» (Manchester Guardian) հղած մի հեռագրում պարզապես նշվում է, որ Զմյուռնիայի ողբերգությանը հաջորդել է Քեմալի հայտարարությունն այն մասին, որ այդտեղ այլևս չեն գործելու ամերիկյան քոլեջները, Երիտասարդ մարդկանց քրիստոնեական միությունները (ԵՄՔՄ) և քրիստոնեական այլ հաստատություններ:

Զմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման, ապա քաղաքի հրկիզման ծրագիրը բավականին սառնասրտորեն էր մշակված: Կատարվեց այն, ինչ մտածված էր ի սկզբանե «արդարադատ» աշխարհի անհասկանալի ու անմեկնելի անտարբերության և հետևաբար թողտվության պայմաններում:

Հորթոնը վկայում է. «Մեծ հրդեհից հետո, որպես դրա հետևանք, քրիստոնյա ամբողջ բնակչությունը բռնությամբ քշվեց նավահանգիստ, որտեղ մնաց մի քանի օր: Քաղցից ու ծարավից մեռնող մարդիկ օգնություն էին հայցում նավահանգստում տեղակայված ռազմանավերից: Թուրքերի վարքը զզվելի էր: Միսս Էմիլի Մակկալանը՝ Զմյուռնիայում կանանց գիմնագիայի տնօրենը, այսօր՝ առավոտյան, քաղաքից վերադառնալով, պատմեց, որ նավահանգստում և ծովափին դեռ նկատելի է առանց հացի ու ջրի նվաղող այդ խեղճ արարածների բազմությունը»²⁹¹:

Քեմալը Զմյուռնիայում տեղի ունեցած ողբերգությունը որակում է իբրև «չհամաձայնեցված միջադեպ», իսկ այլ խնդիրների համեմատությամբ՝ «երկրորդական նշանակության

²⁹¹ Horton, *Report on Turkey, USA Consular Documents*, 22.

դրվագ»²⁹²: Երբ թուրք լրագրողները ժամանում են Ջմյունիա, տեսնում են հպարտորեն ծածանվող թուրքական դրոշը: Քեմալը ողջունում է նրանց և հայտարարում. «Մենք պատմություն ենք դարձել»²⁹³:

Կատարվածը՝ զմյունիաբնակ հայերի ու հույների բնաջնջումը և քրիստոնյա քաղաքի հրկիզումը, Քեմալը ներկայացնում էր որպես «արդար վրեժխնդրություն», այլ ոչ թե պատահար. «Ազգի բարձրացմանը նպաստող գործոնների թվում է վրեժխնդրության զգացումը: Այն պետք է ապրի յուրաքանչյուր ազգի հոգում: Դա հասարակ, սովորական վրեժխնդրություն չէ: Մեր վրեժխնդրության նպատակն է անվտանգ դարձնել ազգի թշնամիներին, նրա կյանքի, նրա ապագայի, նրա երջանկության թշնամիներին: Թո՛ղ ամբողջ աշխարհն իմանա, որ քանի դեռ մեր առջև կանգնած է նման թշնամի, մենք չենք ներելու նրան: Թշնամու հանդեպ գթասրտությունը թուլության և անզորության վկայություն է: Դա մարդասիրության արտահայտություն չէ, այլ մարդկային զգացմունքների բթացման նշան»²⁹⁴:

Այնուհետև շարունակում է. «Միայն Ջմյունիայի աղետից հետո մեր ժողովուրդն իրոք արթնացավ. նրան վերադարձավ իր զգացմունքայնությունը, նա հասկացավ, որ իրեն քարշ են տալիս անդունդ, և որոշեց իր ձեռքը վերցնել սեփական իրավունքների պաշտպանության գործը: Բնական է, որ դրա համար անհրաժեշտ էր ուժեր ձևավորել»²⁹⁵:

²⁹² Lord Kinross, *Ataturk, The Rebirth of a Nation* (London: Weidenfeld and Nicolson, 1964), 326.

²⁹³ Նույն տեղում, 327:

²⁹⁴ Кемаль, *Путь новой Турции 1919-1927, Подготовка Ангорский базы, 1919-1920*, т. II, 300-301.

²⁹⁵ Նույն տեղում, 302:

1922 թ. սեպտեմբերի 15-ին «Դեյլի թելեգրաֆի» (Daily Telegraph) թղթակցին տված իր հարցազրույցում Քեմալը հայտարարում է. «Ինչպես արդեն գիտեք, կոտորածներ կամ ինչոր նման բաներ Չմյուռնիայում տեղի չեն ունեցել: Իսկ կողոպուտն ու սպանությունները, որ պատահեցին, անխուսափելի էին: Երբ բանակը քաղաք մտավ իրենց սեփական երկրից 450 կմ ռազմերթից հետո, քաղաքն այրված ու թալանված էր, իրենց ծնողներն ու հարազատները՝ կոտորված. այդ ամենը դժվար էր վերահսկել: Սակայն մենք կամենում էինք սահմանել վերահսկողություն: Այսօրվանից կարգուկանոնը լիովին վերականգնվել է: Մենք վրեժխնդիր չենք ուզում լինել: Մենք այստեղ չենք կարգավորելու անցյալի հաշիվները: Մեզ համար անցյալի գործողություններն ավարտված են»²⁹⁶:

Մեջբերում ենք Չմյուռնիայում կատարվածի մասին Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի մեկնաբանությունը, որը տեղ է գտել 1922 թ. «Թայմս» (Times) թերթի հոկտեմբերի 16-ի համարում. «Ես չեմ պատրաստվում անդրադառնալ այն հարցին, թե ով է պատասխանատու Չմյուռնիայի համար: Ես չեմ պատրաստվում քննարկել այն հարցը, թե արդյոք հույներն են գրգռել թուրքերին, թե թուրքերը՝ հույներին: Ինձ համար բավարար է ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ սկսած 1914 թվականից թուրքերը, համաձայն պաշտոնական վկայությունների, մեկուկես միլիոն հայ տղամարդ, կին, երեխա և հինգ հարյուր հազար հույն են սառնասրտորեն սպանել»²⁹⁷:

²⁹⁶ Economos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 64.

²⁹⁷ Նույն տեղում, 134-135:

Բարթիկյանի դիտարկմամբ՝ ամեն թուրքի մեջ գոյացել էր այն հավատն ու համոզումը, թե Ջմյունիան պարպվելու էր հույներից, և թուրքերը վերստին տիրանալու էին «Գյուզել Իզմիրին»²⁹⁸: 1923 թ. հունվարի 31-ին Իզմիրի բնակչությանն ուղղված ելույթում Քեմալն ասել է. «Իզմիրի հարգելի՛ ժողովուրդ, իմ սիրելի՛ հայրենակիցներ, ինձ համար շատ մեծ երջանկություն է ձեր կողքին այսքան մոտ գտնվելն ու ձեզ ողջունելը: Ես երախտապարտ եմ այն անկեղծ զգացումների համար, որ ցուցաբերեցիք հինգ ամիս առաջ՝ իմ նախկին այցելության ժամանակ, մեր հաղթական բանակի ուղեկցությամբ [...]: Եթե հնարավոր լիներ, ապա ես իմ երախտապարտությունը կարտահայտեի Իզմիրի յուրաքանչյուր բնակչին առանձին [...]: Իզմիրը մեր նախնիների հողն է [...]: Ունենալով պատմական այդքան խոր արմատներ և գրավելով աշխարհագրական այդքան կարևոր դիրք՝ Իզմիրը տնտեսական և քաղաքական մեծ նշանակություն ունի մեզ համար: Հենց դրա համար էլ մեր թշնամիները, ցանկանալով ոչնչացնել Թուրքիան, առաջին հերթին իրենց հայացքն ուղղեցին դեպի պատմականորեն այդ կարևոր քաղաքը [...]: Իզմիրի բռնազավթումը խոր վերք հասցրեց ազգի հենց սրտին [...]: Թանկարժեք Իզմիրը, իհարկե, չպետք է մնար թշնամու ձեռքերում և չմնաց»²⁹⁹:

²⁹⁸ Պատգամավոր Մեհմեթ Շերեֆ բեյը 1922 թ. սեպտեմբերի 13-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովին (ԹԱՄԺ) առաջարկ է ներկայացնում, որով նախատեսվում էր Իզմիրը վերանվանել «Գյուզել Իզմիր» (Գեղեցիկ Իզմիր)՝ ի հակադրություն շատ շրջանակներում տարածված «Գյավուր Իզմիր»-ի: Հարցը մտնում է օրակարգ, ապա՝ դուրս մղվում, http://www.kentvebellek.com/guzel-izmir_31.html, դիտվել է՝ 01.07.2023:

²⁹⁹ Кемаль, *Путь новой Турции 1919-1927, Подготовка Ангорский базы, 1919-1920*, т. II, 261.

Այսպիսով, քաղաքի քրիստոնյաների թաղամասերը հրկիզելու թուրքերի կանխամտածված ծրագիրը, որն աչքի էր ընկնում պարզունակ, սակայն ծայրահեղ անմարդկային մեթոդների կիրառմամբ, հետապնդում էր հետևյալ նպատակները.

1. հրդեհի միջոցով թաքցնել կատարված հանցագործության հետքերը,

2. ավերել մշակութային արժեք ներկայացնող հաստատությունները, կոթողները, քրիստոնյա բնակչության բարձրարժեք մշակույթը:

Ձմյուռնիայի հրկիզումն անհնարին է դարձնում սպանվածների թվի ճշգրտումը, սակայն հանցագործության հետքերը թաքցնելու կամ հնարավոր ու անհնար մեթոդներով զոհերի թիվը պակաս ներկայացնելու փորձերը ամենևին էլ չեն վերացնում կատարված հանցագործության փաստը և կազմակերպիչներին չեն ազատում կատարված հանցանքի պատասխանատվությունից³⁰⁰:

Թուրքիայի Հանրապետության՝ քրիստոնյաների նկատմամբ որդեգրած ցեղասպան քաղաքականության շարունակականության մասին է վկայում հետևյալ իրողությունը: 19-րդ դարում հիմնականում հույներով, ապա հայերով բնակեցված Թաթավլա (Ստամբուլ) անունը կրող թաղամասում 1929 թ. խոշոր հրդեհ է բռնկվում, որի հետևանքով կործանվում է շուրջ 230 շինություն: Տեղեկությունների համաձայն՝ թաղամասը հրկիզվել է, իսկ հրդեհը երկար ժամանակ միտումնավոր չեն մարել: Հրդեհի մասին համապատասխան մարմիններին ժամանակին չտեղեկացնելու պատրվակով ձերբակալվել է *մի քանի հայ և հույն*: Հրդեհի հետևանքով քրիստոնյաները մարդկային և նյութական կորուստ են ունենում, իսկ թաղամասը ստանում է Քուրթուլուշ (թուրքերեն՝ փրկություն, ազատագրում) անվանումը, Ալին Օզինյան, «Թաթավլա-Քուրթուլուշ. Սամաթայի դեպքերը դեռ չեն ավարտվել», 2013/09/02, <http://akunq.net/am/?p=33647>, դիտվել է՝ 19.08.2021:

³⁰⁰ Ռոբերտ Ա. Թաթյան, «Ձմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 10 (2), 2022, 49-73:

Զմյուռնիայում ոճրագործության պատճառած նյութական կորուստը հայերի ու հույների ցեղասպանությունների հատուցման անքակտելի մասն է կազմում³⁰¹:

³⁰¹ Հակոբ Տերենցը (Տեր-Հակոբյան, 1871-1947) Զմյուռնիայում թուրքական իշխանությունների ոճրագործության վերաբերյալ Աթենքում 26 էջանոց տեղեկագիր է պատրաստել, որի օրինակները ներկայացվել են Հունաստանի կառավարությանը, Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությանը, Ալեքսանդր Խատիսյանին: 1924 թ. նոյեմբերին Տերենցը և այլ վերապրողներ վերոհիշյալ տեղեկագրով ներկայացել են Լոնդոնում կայացած դատավարությանը («Ամերիկյան ծխախոտի ընկերության» Զմյուռնիայի մասնաճյուղն ընդդեմ «Գարդիան» ապահովագրական ընկերության): Նրանք դատարանի առաջ հաստատել են, որ Զմյուռնիան հրկիզել են թուրքերը, մանրամասն տե՛ս Սեդա Բուջիկանեան, Յակոբ Տերենց, «Իզմիրի աղէտը եւ մեծ հրդեհին մանրամասնութիւնները», *Ազգ օրաթերթ* (Երևան), 8 դեկտեմբերի 2007:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ձմյուռնիայի հայերի և հույների փրկուղին. «Հերոստրատոսի փա՛ռք», թե՛ այլասիրություն

Ի՞նչ է «փրկությունը», ինչո՞ւ է անհրաժեշտ փրկել, հա- նուն ինչի՞, ինչի՞ց և ինչպե՞ս փրկել, փրկել հերոսանալու և պատմության մեջ մնալո՞ւ համար, թե՛ փրկել անշահախնդրո- րեն, մարդասիրաբար: Հար և նման հարցերը և առհասարակ «փրկության» հիմնախնդիրն առանձնանում ու կարևորվում են ցեղասպանությունների, զանգվածային կոտորածների և ընդհանրապես մարդկության դեմ ուղղված հանցագործու- թյունների ուսումնասիրության համատեքստում:

Գիտական հարթությունում «փրկության» խնդիրը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության տեսանկյունից դի- տարկելու պարագայում, ըստ ազգագրագետ Հարություն Մա- րությանի, առաջնահերթ պետք է համարվի երևույթի հստա- կեցումը և, համաձայն դրա, առաջարկվում է կիրառել համե- մատության մեթոդաբանությունը³⁰²: Հեղինակը նկատում է, որ «փրկություն» կարող է որակվել «սպասվող կոտորածի մա- սին տեղեկացնելը», «չսպանելը», «մյուսներին սպանելը, բայց կոնկրետ որևէ մարդու ձեռք չտալը», «ստիպամբ, հաճախ

³⁰² Հարություն Մարության, «Թուրքերի կողմից հայերի փրկության խնդիրը Ցե- ղասպանության տարիներին Հոլոքոստի ուսումնասիրության լույսի ներքո», *Հա- յոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հայրուցում, Միջազգային գիտաժողո- վի զեկուցումների դրույթներ* (Երևան, Գիտություն, 2015), 218-221:

մահվան սպառնալիքի տակ կրոնափոխ լինելը ու, այդպիսով, մահվանից խուսափելը», «սեռական բռնությունների ու շահագործման ենթարկվելը ու կենդանի մնալը», «հարազատներին սպանողի կամ նրա ժառանգի հետ ամուսնանալը և երեխաներ ունենալը», «ծառայությունը ոճրագործի տանը ու մի կերպ գոյությունը պահպանելը», «ոճրագործի տնտեսությունում ամիսներ-տարիներ աշխատելը և նրա համար տնտեսական շահ ապահովելը», «մոտալուտ մահվան պատճառով երեխային օտարներին «նվիրելը»» ևն³⁰³:

Հրեից հոլոքոստի տարիներին եվրոպական իրականության մեջ մեծ թվով շարքային քաղաքացիներ, շատ հաճախ վտանգելով իրենց կամ հարազատների կյանքը, փրկում էին հրեաների: Հետագայում հրեա ժողովուրդն իրեն փրկած օտարազգի երախտավորների ընդարձակ անվանացանկն է կազմել՝ «Երախտավորները ժողովուրդների/մարդկանց մեջ» (The Righteous Among the Nations)³⁰⁴:

Ռիչարդ Հովհաննիսյանը, կիրառելով «միջամտություն» բառեզրը, անդրադառնում է փրկության շարժառիթներին՝ դրանք առավել խնդրահարույց ոլորտ համարելով: Հովհաննիսյանն առանձնացնում է միջամտության հետևյալ հիմնական շարժառիթները՝ սեռական, տնտեսական, կրոնական, մարդասիրական³⁰⁵: Պրոֆեսորը համոզմունք է հայտնում, որ

³⁰³ Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության տարիներին հայերի իրական և կեղծ փրկության խնդրի շուրջ», *Լրաբեր հասարակական գիտությունների*, no. 2 (2018), 34-35:

³⁰⁴ Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», *Պատմաբանասիրական հանդես* 187, no. 2 (2011), 29:

³⁰⁵ Richard Hovannisian, “Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide,” *The Armenian Genocide, History, Politics, Ethics* (New York: St. Martin’s Press, 1992), 179.

երբեմն հենց պարզ ու հասարակ մարդիկ են ապրումակցում, կարեկցանք և բարեպաշտություն դրսևորում³⁰⁶:

Ըստ Հասմիկ Գրիգորյանի՝ երևույթը բավական բարդ բացատրելի է, և այն հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել, թե ինչ հանգամանքներով է պայմանավորված «փրկողի» նման վարքը: Խնդրի ուսումնասիրության համար հեղինակը կարևոր է համարում երկու հիմնական հարցադրում՝ ովքե՞ր են «փրկողները» և ի՞նչ նպատակներով են «փրկում»³⁰⁷:

Հետազոտության մեջ «փրկություն» բառեզրը կիրառվում է՝ իր մեջ ունենալով բացառապես մարդասիրության և այլասիրության գաղափարները: Այս համատեքստում «փրկություն»-ը կարելի է սահմանել հետևյալ կերպ՝ «մարդը հանուն մարդու»՝ առանց ազգային, կրոնական, սեռական կամ որևէ այլ խտրության: Ցեղասպանությունը վերապրած ժողովրդի յուրաքանչյուր մասնիկ մարդասիրության քայլերի հանդեպ խիստ զգայուն է, իսկ անթաքույց համակրանքն ու երախտիքի զգացումը՝ բնական:

Փրկության խորհուրդը

Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության (YMCA)՝ Ջմյուռնիայի մասնաճյուղ ուղարկված հոգևորական Ասա Զեննինգսը 1922 թ. սեպտեմբերի 24-ին, բանակցելով հունական, ամերիկյան և թուրքական իշխանությունների հետ, ամերիկյան ռազմանավի պաշտպանության ներքո քսան հունական փոխադրանավով 15 000 կանանց, երեխա-

³⁰⁶ Նույն տեղում:

³⁰⁷ Գրիգորյան, *Ջանգլաձները և զանգվածային բռնությունները*, 175:

ների և տարեցների Ձմյունհայից փոխադրել է Միտիլինի³⁰⁸: Չթերագնահատելով Ձմյունհայի ափին խարիսխ գցած օտարերկրյա նավերի անձնակազմերի մարդասիրությունը, որոնք վերապրածների փրկության գործն են իրականացրել, նշենք, որ հետազոտել ենք նաև ճապոնական նավի օրինակը՝ փորձելով առկա սկզբնաղբյուրային գրականության՝ հիմնականում ականատեսների, վերապրողների հուշերի և վկայությունների հիման վրա պատմական փաստերի համադրմամբ ստանալ փրկության գործընթացի իրական պատկերը, պարզել շարժառիթներն ու հետևանքները:

Ոճրագործը ցեղասպանական ծրագիրը մշակելիս և իրականացնելիս, որպես կանոն, նկատի է առնում հնարավոր փրկողների հանգամանքը և, հետևաբար, «գործն անարգել ավարտին հասցնելու նպատակով» կանխարգելիչ միջոցներ է ձեռնարկում. «թիրախային խմբից» որևէ մեկին թաքցնելու և օգնություն ցուցաբերելու դեպքերը բացառելու կամ սահմանափակելու համար Օսմանյան պետության մեջ սոցիալական տարբեր շերտերի նկատմամբ նույնիսկ պատիժներ են սահմանվել³⁰⁹:

Անդրադառնալով օտարերկրյա ականատեսների կրավորական «արձագանքին»՝ պարզենք, թե ինչո՞վ էր պայմանավորված նրանց վարքագիծը, ինչպե՞ս կարող ենք որակել այն՝ անտարբերությո՞ւն, թե՞ «քաղաքական նախասիրություն»: Մեզ հուզող հարցերի պատասխանները փնտրենք ականատեսների վկայություններում:

³⁰⁸ Bali, *The Saga of a Friendship*, 58-59.

³⁰⁹ Գրիգորյան, *Չանգվածները և զանգվածային բռնությունները*, 176:

Այսպես, Կարապետ Խաչերյանի օրագրային գրառման մեջ կարդում ենք. «[...] Լուսանկարիչներն ու նրանց գերերջանիկ ընկերները մեր տանջանքների պարզ հանդիսատեսներն են: Նրանք մերժում են ապաստան տալ նույնիսկ լողալով կամ մակույկներով իրենց մոտեցողներին, որպեսզի պահպանած լինեն իրենց քաղաքական չեզոքությունը: Քաղաքակրթությունը, մարդասիրությունն ու քրիստոնեությունը սին բառեր են դարձել նրանց համար»³¹⁰:

Մարդասիրական առաքելությամբ Արևելք ժամանած միսիոներներին հրահանգված էր չմիջամտել. «[...] Մեր պատշգամբից տեսնում էինք հազարավոր մարդկանց (շուրջ 80 000), որոնք օրուգիշեր անցկացնում էին բաց երկնքի տակ՝ սպասելով նավերի: Նրանք մեր օգնության կարիքն ունեին, մինչդեռ մենք ոչինչ անել չկարողացանք [...]: Հնարավոր բոլոր նավակներն օգտագործվեցին՝ տեղափոխելու այն հույներին ու հայերին, որ երջանիկ պատահականությամբ էին փրկվել»³¹¹:

Քչերն էին, որ սեփական կյանքը վտանգելու գիտակցմամբ խիզախություն ունեցան միջամտելու այդ ոճրագործությանը: Մարդատյացությանը նրանք հակադրվում էին մարդասիրությամբ. նրանց նպատակը մեկն էր՝ փրկել մարդուն անխուսափելի մահից: Քաջասիրտներն էին, որ չէին մտածում՝ ի՞նչ կարող է պատահել իրենց հետ, կամ ինչո՞ւ մյուսները չեն օգնում:

³¹⁰ Սաքայան, *Չմյուռնիա 1922*, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, 78:

³¹¹ Jensine Oerts Peters, *Tests and Triumphs of Armenians in Turkey and Macedonia* (USA: Zondervan, 1940), 48-51.

Ճապոնական նավի ժամանումը Ջմյունիա³¹²

Ճապոնական նավի՝ Ջմյունիա ժամանելու ամիսը սեպտեմբերն է. օրվա հետ կապված տեղեկությունները տարբեր են և հաճախ իրարամերժ: Մասնագիտական գրականության մեջ ամենաշատ շրջանառվող տարբերակը սեպտեմբերի 14-ն է:

Ջմյունիայի միջազգային քոլեջի ամերիկացի պրոֆեսոր Բիրգի (Birge) կինը՝ Աննա Հարլոու-Բիրգը (Anna Harlowe Birge), վկայում է. «Այդ ժամանակ նավամատույցում կանգնած էր նաև ճապոնական մի բեռնատար նավ, որ հենց նոր էր ժամանել՝ բեռնված շատ արժեքավոր մետաքսով, ժանյակով և ճենապակով, որ հազարավոր դոլարներ արժեին: Երբ ճապոնացի կապիտանը տեսնում է իրավիճակը, առանց վարանելու ամբողջ բեռը լցնում է նավամատույցի կեղտոտ ջրերի մեջ, փոխարենը նավ նստեցնում մի քանի հարյուր գաղթականի, որոնց տանում է Պիրեա և ապահով իջեցնում հունական ափ»³¹³:

³¹² 2021 թ. փետրվարի 18-ին «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտաժողովների սրահում տեղի ունեցավ «Տոկեի Մարու. Ջմյունիայի հայերի և հույների փրկուղին» խորագրով միջոցառումը: Այն Ջմյունիայի հայերի և հույների բնաջնջման ու քաղաքի հրկիզման 100-րդ տարելիցին ընդառաջ կազմակերպվող միջոցառումների շարքից էր և իրականացվեց հայ-ճապոնական «Արումենիա-Նիպոն» գիտամշակութային միություն հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ, <http://www.genocide-museum.am/arm/18.02.2021.php>, դիտվել է՝ 29.04.2024: Commemoration of Japanese Captain, Savior of Smyrna Fire Survivors, The Armenian Mirror-Spectator, <http://surl.li/thdex>, դիտվել է՝ 29.04.2024: Հայաստանի ճամփեքով. Տոկեի Մարուի հետքերով, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, <http://surl.li/thdct>, դիտվել է՝ 29.04.2024: Ինչպես ճապոնական նավը փրկեց Ջմյունիայի հայերին ու հույներին. «Ժամանակի վկան», Հայաստանի հանրային ռադիո, <http://surl.li/thdeh>, դիտվել է՝ 29.04.2024:

³¹³ “Japanese at Smyrna,” *Boston Globe* (Boston), 3 December 1922: Հղումը՝ ըստ Stavros Stavridis, “Special to the National Herald,” http://www.greece.org/main/index.php?option=com_content&id=59&Itemid=82, դիտվել է՝ 04.06.2023:

Հունական «Էմբրոս» թերթը 1922 թ. սեպտեմբերի 4-ի (17) համարում անդրադարձ է կատարում ճապոնական նավի հրամանատարի խիզախ արարքին. «Նրան հաջողվեց փրկել [մեր] 825 հույն գաղթականի՝ անտեսելով թուրքերի սպառնալիքները: Սարսափազդու կոտորածներից տպավորությունները և [հույն] գաղթականների խնդրանքները ճապոնացի հրամանատարին ստիպեցին, որ բեռնաթափի նավն ու հնարավորինս շատ գաղթականների տեղավորի: Քեմալի ռազմական ուժերի սպաները, շրջապատելով նավը, սպառնում են խորտակել այն: *Ճապոնացի հրամանատարը քեմալական սպաներին անմիջապես հայտնում է, որ գաղթականների մազին դիպչելու պարագայում անգամ արարքը կդիտարկի որպես անարգանք Ճապոնիայի դրոշի հանդեպ և սպառնալիք Ճապոնիայի կառավարությանը, և որ ինքն անհապաղ կպահանջի [քեմալական կառավարությունից] ներողություն խնդրել: Առերեսվելով այդ սպառնալիքներին՝ քեմալականները տեղեկացնում են իրենց վերադասին և պարտավորվում չանհանգստացնել ճապոնական նավի գաղթականներին»³¹⁴:*

Հետաքրքիր է նկատել, որ «Էմբրոս» թերթում նշված 825 հույն գաղթականի վերաբերյալ տեղեկության մեջ չի նշվում հայերի մասին: Ենթադրում ենք, որ հոդվածագիրը կամ հստակ տեղեկություն չի ունեցել հայերի թվական տվյալների վերաբերյալ, կամ միակողմանի է ներկայացրել:

«Նյու Յորք թայմս»-ի 1922 թ. սեպտեմբերի 18-ի համարում տեղ է գտել հետևյալ հաղորդումը. «Հինգշաբթի օրը

³¹⁴ “Το Σφαγείον της Σμύρνης,” *Εμπρός*, 4 Σεπτεμβρίου, 1922, հղումն ըստ՝ Nanako Murata-Sawayanagi, “The Memory in a Crisis: A Japanese Ship Helping Out Greek Refugees on the Quay of Smyrna in 1922,” at <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/28545/?lang=1>, դիտվել է՝ 06.06.2023:

(սեպտեմբերի 14-ին) Չմյուռնիայում կար 6 շոգենավ՝ մեկ ամերիկյան, մեկ ճապոնական, երկու ֆրանսիական ու երկու իտալական: Ամերիկյան ու ճապոնական շոգենավերն ընդունում էին բոլոր եկողներին՝ առանց նրանց թղթերը ստուգելու, մինչդեռ մյուսները՝ միայն օտարերկրացիներին՝ ստուգելով անձնագրերը»³¹⁵:

Ամերիկահայ պատմաբան Մարջորի Հուսեփյան-Դոբկինն այս առնչությամբ գրում է. «Հինգշաբթի առավոտյան «Սիմփսոն» (Simpson) ամերիկյան նավի հայտնվելը հուզմունքի մեծ ալիք բարձրացրեց, սակայն սկզբնական ուրախությունը փոխարինվեց վշտի, երբ լուր տարածվեց, որ միայն Ամերիկայի քաղաքացիներին է տանելու: Ավելի ուշ՝ նույն օրը (սեպտեմբեր 14), մի ճապոնական նավ է ժամանում: Ուղևորները հիացած էին նավապետի և անձնակազմի բացառիկ բարությանը. նրանք բեռը նետել էին՝ տարագիրների համար հարմար պայմաններ ստեղծելու նպատակով»³¹⁶:

Այիս Թորյանը պատմում է օտարերկրացի անտարբեր դիտորդներին հղած օգնության կոչերի հուսահատ փորձերի մասին. «Յանուն մարդասիրութեան, յանուն ձեր ազգային արժանապատուութեան, յանուն ձեր պաշտելի Քրիստոսի վարդապետութեան, ազատեցէ՛ք քրիստոնեայ անպարտ ազգի մը սա մնացեալները խաչելութենէ: Փրկեցէ՛ք սա կիսամեռ

³¹⁵ “Smyrna’s Ravagers Fired on Americans,” *New York Times* (New York), 18 September 1922, at <https://www.nytimes.com/1922/09/18/archives/smyrnas-ravagers-fired-on-americans-ymca-workers-were-held-up-and.html>, դիտվել է՝ 06.06.2023:

³¹⁶ Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922, the Destruction of a City* (New York: Newmark, 1998), 174. Տե՛ս նաև *American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces, September 1922*, ed. by Constantine G. Hatzidimitriou (New York: Melissa International, 2005), 67:

ժողովուրդը հրկիզում է [...]։ Բայց այդ նաևերուն ղեկավարները՝ անգութթորէն վտարեր են զիրենք. «Չենք կրնար օգնել ձեզի... հրաման չունինք» պատրուակելով։ Միայն ճաբոնական մարտանաւին ծովակալը ուզեր է միջամտել. անիկա հեռախօսը բանալով քանի մը երոպական մարտանաւերու պատասխանատուներուն՝ «Ասիկա մարդկային պատմութեան մէջ չլսուած ու չտեսնուած բարբարոսութիւն մըն է, 50-60 հազար քրիստոնէայ մանուկներ, կիներ եւ ծերեր ողջ-ողջ վառել տալ եւ ականատես ըլլալ ու լռել այսպիսի արտակարգ ոճիրի մը»» ըսեր է³¹⁷։ Յետոյ երբ միեւնոյն պատասխանը ստացեր է իրենցմէ, ձեռքերը դէպի վեր բացեր եւ գոչեր է. «Փա՛ռք, հազար փառք իմ Աստծոյն, որ զիս քրիստոնէայ չէ ծնած ձեզի պէս»³¹⁸։

Դան Յորդակասի մայրը վերապրող է և հունական ափ է հասել ճապոնական նավով. «Իմ մայրը՝ Սոֆյա Պուսուկասը, և նրա միակ եղբայր Յորդոսը փրկվել են ճապոնական նավի շնորհիվ։ Նա մոտավորապես տասնմեկ տարեկան է եղել, իսկ եղբայրը՝ երկու [...]։ Մանրամասներ չի պատմում՝ բացի նրանից, թե ինչպես են եվրոպացիները լքել իրենց։ Նա մտածում է, որ ճապոնացին նման է Ջիների, սակայն ավելի բարի է։ Իրենք բրինձ են կերել և հասել Աթենք»³¹⁹։

Բուզանդ Զամբազյանը 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ եղել է ընդամենը վեց տարեկան, իսկ պատանեկու-

³¹⁷ Ալիս Թորեան, *Մանկութիւնս առանց գարունի (ականապետի վկայութիւններ Իզմիրի աղէտէն)* (Պէլրուֆ, Ատլաս, 1975), 75։

³¹⁸ Նոյն տեղում։

³¹⁹ Constantine G. Hatzidimitriou, “The Genocide of Anatolian Christians and the Destruction of Smyrna: Scholarship and the Evidence, Ninety Years Later,” <https://hellenicresearchcenter.org/education/lectures-2/destruction-of-smyrna/>, դիտվել է՝ 08.06.2023։

թյան տարիներին դարձել քրիստոնյաների նկատմամբ երիտթուրքական վարչակարգի ցեղասպան քաղաքականության ակննատեսը. «Ես ծովեզերք հասայ [...]: Փողոց մը մտայ, ի՞նչ տեսնեմ: Սպանդանոց էր: Մարդկային դիակներ ամէն կողմ՝ մորթուած, զարնուած, խոշտանգուած [...]: Այս բոլոր ահ ու դողին մէջ. կառքերուն ձիերն անգամ խելագարած էին, որոնք իրենց փոկերէն ազատված կը վազէին դէպի ծով: Ծովը մարդկային դիակներով էր լեցուած, մանաւանդ կանացի դիակներով [...]: Երբ հրդեհը նաւահանգիստ մօտեցեր էր, նաւերը հեռացեր էին ծովուն բացերը: Լողալով իրենց մօտեցողներուն վրայ տաք ջուր կը նետէին: Առաջին նաւը, որ ժողովուրդ առաւ, ճափոնական նաւ մըն էր: Իսկ դաշնակից ծովային զինուորներ պահակ կը պտտէին: Անոնց աչքերուն առջեւ տեղի կ'ունենար այս ահաւոր ողբերգութիւնը: Թուրք զինուորը արագահարուածով հազարաւոր զոհեր կը խլէր»³²⁰:

Ճապոնական նավով փրկվածների թվում եղել են նաև աշխարհահռչակ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի հայրը՝ Նազարեթ Ժամկոչյանը, Ժամանակի հայտնի քամանչահար Ռուբեն Կարախանյանը (Քեմանչիստ Ռուբէն) և այլք³²¹:

³²⁰ Բիզանդ Ճամպագեան, *Պարսնի կեանքի մը պատմութիւնը* (Լիբանան, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960), 48:

³²¹ Մանրամասն տե՛ս Աննա Վարդանյան, Թեհմինե Մարտոյան, «Ճապոնական նավի հետագծով. Զմյուռնիայի հայերի և հոյների փրկուղին», *Յեղասպանագիտական հանդես* 8 (2), 2020, 84-87:

Տոկեի Մարու³²²

Զմյուռնիայի հայերի ու հույների փրկության խարսխի՝ ճապոնական նավի մասին մասնագիտական գրականության մեջ առավել հաճախ նշվում է՝ առանց անվան հիշատակության:

Նախնական տպավորությունն այնպիսին է, որ նավն անուն չի ունեցել, հետևաբար «ճապոնական նավ» բառակապակցությունը, կատարված արարքին համարժեք հնչեղություն ստանալով, հավասարազոր է դարձել և նույնացվել «փրկություն» բառեզրի հետ: Շեշտը դրվել է ոչ թե անվան, այլ այն փաստի վրա, որ նավը ներկայացնում է ճապոնիան: Հետազոտվող խնդրով զբաղվող հույն պատմաբան Ստավրոս Թերրի Ստավրիդիսը³²³, Հունաստանի նորագույն պատմության մասնագետ, ճապոնացի Նանակո Մուրատա-Սավայանագին³²⁴ և միջազգայնագետ, տնտեսագետ, ճապոնագետ

³²² Ճապոնական առևտրանավերի անվանումների հետ հաճախ է կիրառվել հին ճապոներեն «մարու» (丸) բաղադրիչը, որ թարգմանաբար նշանակում է «շրջան»: Հարկ է նկատել այն հանգամանքը, որ Ճապոնիայում նավերը կոչվել են «լողացող դղակներ», և, հետևաբար, այն նավերը, որոնց անվան մեջ առկա է եղել «մարու» (շրջան) բաղադրիչը, պաշտպանական գործառույթ են իրականացրել: Այս առնչությամբ տեղին է հիշատակել ավանդազրույցը, համաձայն որի՝ Հակուդո Մարուն է մարդկանց նավ պատրաստել սովորեցրել, իսկ «շրջանի» խորհրդանիշն ու գործածությունը բացատրվում է այսպես. «մարու»-ն հույս է ներշնչում, որ նավը, հեռանալով նավահանգստից և շրջելով աշխարհով մեկ, հայրենի ափ է վերադառնալու: «Տոկեի մարու» բառակապակցության «東» բաղադրիչը թարգմանաբար նշանակում է «արևելք»: Հետաքրքրական է այն փաստը, որ ճապոնական նավերը պատահական անվանումներ չեն ստացել, և Տոկեի Մարուն, ինչպես երևաց վերը շարադրվածից, իր անվանը հավատարիմ՝ 825 մարդու կյանք փրկելով, ապահով տեղ հասցնելով և ապա վերադառնալով հայրենի նավահանգիստ, կատարել է իր առաքելությունը, մանրամասն տե՛ս <https://www.newyorker.com/magazine/1936/08/29/never-shall-be-slaves>, դիտվել է՝ 29.04.2024:

³²³ Terry Stavridis, The Armenian Question 1918-1920, https://www.researchgate.net/publication/279556219_The_Armenian_Question_1918-20, դիտվել է՝ 05.06.2023:

³²⁴ 1990-ականների երկրորդ կեսին Հունաստանում մի պատմություն էի լսել ճապոնական նավի մասին, որն օգնել էր Զմյուռնիայի հույներին 1922-ի

Աննա Վարդանյանն իրենց արժանի ներդրումն ունեն ճապոնական նավի պատմության ուսումնասիրության ասպարեզում³²⁵:

Ճապոնացի նավապետի վարքագիծը հավերժական երախտագիտության և երկու ժողովուրդների միջև անխախտ բարեկամության առիթ դարձավ:

սեպտեմբերյան աղետալի օրերին [...]: Գիտեի, որ Ճապոնիան հույն-թուրքական պատերազմի տարիներին հայտարարել էր իր չեզոքության մասին: Եթե ճապոնական նավն օգներ հույներին, ապա այն կդիտարկվեր որպես իրավախախտում: Մտածում էի՝ արդյո՞ք հնարավոր է: Ես միակը չէի, որ լսել էի այդ պատմության մասին: Ամեն դեպքում՝ առաջին անգամ Եվգենիդեսի շարադրանքում հանդիպեցի ճապոնացիների՝ հույներին փրկելու մասին մի պատմության: Ինչ-ինչ պատճառներով այն ինձ «հետապնդում էր», և ի վերջո մտածեցի, որ պատմության իսկությունը բացահայտելու համար գուցե արժե ուսումնասիրել այն: Մտքումս մի քանի հարց կար: Առաջին՝ եթե պատմությունը ճիշտ է, ինչո՞ւ էր ճապոնական նավը Չմյուռնիայում: Երկրորդ՝ արդյոք հույներին փրկելը ճապոնացիների մարդասիրական զգացումներից էր բխում, թե՞ այլ պատճառներ կային: Երրորդ՝ ինչպե՞ս կարող էին ճապոնացիները հաղորդակցվել հույների հետ: Ի՞նչ լեզվով էին նրանք խոսում հույների և թուրքերի հետ՝ իրենց մտադրությունը հասկանալի դարձնելու համար: Նրանց հետ անգլերեն էին խոսում: Միգուցե անձնակազմում կային մարդիկ (հնարավոր է և ոչ ճապոնացիներ), որ հունարեն կամ թուրքերեն գիտեին: Ի թիվս այլ հարցերի՝ մտածում էի՝ արդյո՞ք հույները նախապես ինչ-որ բան գիտեին Ճապոնիայի և ճապոնացիների մասին: Թեպետ նրանք ապրում էին բազմազգ միջավայրում (հատկապես Չմյուռնիայի հույները լավ ճանաչում էին եվրոպացիներին և ամերիկացիներին, նրանց ապրելակերպը), այնուամենայնիվ, նրանց մեծ մասի համար ճապոնացիները պետք է որ նման լինեին այլմուղրակայինների: Ինչպե՞ս հույներն ընդունեցին նրանց: Կարո՞ղ ենք ասել, որ նրանք այդ օգնությունն ընդունեցին, որովհետև վտանգի մեջ էին: Չորրորդ՝ որպես ժամանակակից Հունաստանի պատմությունն ուսումնասիրողի, ինձ ամենից շատ հետաքրքրում էր, թե ինչպե՞ս էին հույներն այս իրապատումը պահում իրենց հիշողության մեջ, ապա՝ փոխանցում ապագա սերունդներին: Եվ ընդհանրապես, ինչպե՞ս են ձևավորվում մարդկանց հիշողությունները ծայրաստիճան ճգնաժամային իրավիճակների մասին: Եվ հետո, ինչպե՞ս են նրանք տարիներ անց աղավաղված կերպով վերապատմում այդ հիշողությունը: Nanako Murata, *The Memory in a Crisis: A Japanese Ship Helping Out Greek Refugees on the Quay of Smyrna in 1922*, <http://sur1.li/thdpa>, դիտվել է՝ 29.04.2024:

³²⁵ Աննա Վարդանյան, *Տոկեի Մարու. Ճապոնական նավի հետազոծով 101 տարի անց* (Երևան, ՎԻ-Էնն, 2023):

Ականատես-վերապրողների տարագրությունը Հունաստան³²⁶

Բարեբախտաբար, Ջմյուննիայի տասնյակ հազարավոր հայեր և հույներ փրկվեցին, թեև շատերն իրենց ապրելը մեղք ու դավաճանություն էին համարում: Անգլիացի պատմաբան Էրիկ Հոբսբաումը ժամանակի իրադարձություններն այսպես է մեկնաբանում. «Առաջին աշխարհամարտից ի վեր «աշխարհն իրեն սովորեցրեց» աստղաբաշխական չափերով արտաքսումների և սպանությունների, այն աստիճան անձանոթ երևույթների, որ նոր բռներ հորինելու անհրաժեշտություն առաջացավ, օրինակ՝ ցեղասպանություն, հայրենագուրկ»³²⁷:

³²⁶ 2023 թ. մայիսի 12-ին, 13-ին և 14-ին Աթենքի «Դանասո» կինոթատրոնում տեղի ունեցավ հույն ռեժիսոր Կոնստանտինոս Գեորգոպոլոսի «Նոր Հայրենիք» լիամետրաժ փաստավավերագրական ֆիլմի ցուցադրությունը: Ֆիլմը լուսաբանում է անցյալ դարի 20-ականն թթ. հայերի տարագրությունը Հունաստան, նրանց վերաբնակեցումը և հետագա կյանքը երկրի տարբեր շրջաններում: Ֆիլմը Հունաստանում ձևավորված հայ համայնքի մասին պատմական առաջին ակնարկն է: Այն վեր է հանում ժամանակակից Հունաստանի նորագույն պատմության անհայտ կողմերը, որոնք վառ են մնացել տեղի հայերի հավաքական հիշողության մեջ: Ֆիլմում վկայություններ կան Կոկինիայից, Նեոս Կոսմոսից, Լավրիոյից, Սալոնիկից, Քսանթիից, Կոմոտինիից, Ալեքսանդրոպոլիից, Դիդիմոտիխոյից, Հերակլիոնից, Սիրոսից, Երևանից ևն: Ֆիլմում ցուցադրվում է նաև Նեոս Կոսմոսի տարրական դպրոցի վեցերորդ դասարանի աշակերտների դասը, որի նպատակը հայկական ինքնության պահպանումն է ժամանակակից Աթենքում: Սերտելով հայոց պատմության դասերը՝ աշակերտները ձգտում են հունահայ համայնքում պահպանել հայկական մշակույթն ու սովորույթները: Ֆիլմում տեղ են գտել նաև դրվագներ «Անժել Քուրդյանի նորթատերերը» պիեսից, որի բեմադրիչն ու գլխավոր դերակատարը ճանաչված դերասանուհի Քրիստինա Ալեքսանյանն է: Տե՛ս ֆիլմի փոքրիկ տեսահոլովակը հետևյալ հղումով՝ <https://www.kathimerini.gr/culture/cinema/562416259/i-nea-patri-da-i-syglonistik-i-istoria-ton-proton-armenion-stin-ellada/>, դիտվել է՝ 04.07.2023:

³²⁷ Eric Hobsbawm, *Age of Extremes, The Short Twentieth Century 1914-1991* (London: Time Warner Books UK, 1995), 50.

Հրաշքով փրկվածները շաբաթներ անց նկարագրում էին տեղի ունեցածը և փորձում գնահատել կատարված ոճրագործությունը: Դանիացի միսիոներուհի Ենսինե Օրցը նշում է. «Քրիստոնյաների հալածանքները հազիվ թե իրենց հավասարն ունենային պատմության մեջ: Դրանք ավարտվեցին Զմյուռնիայի տխրահոչակ աղետով: Աղոտ գաղափար կազմելու համար, թե ինչ տեղի ունեցավ, բավական է ընդամենը հիշատակել, որ քաղաքը կրակի մատնեցին [...]: Ժողովրդի միակ ապավենը նավահանգիստն էր՝ ծածկված դիակներով և ծովի արյունաներկ ջրով»³²⁸:

Սեպտեմբերի 15-ին Աթենքից «Թելեգրաֆի» (Telegraph) հատուկ թղթակիցը հաղորդում է. «Սարսափելի ողբերգության չափի մասին հատկապես գիտակցեցինք, երբ այս առավոտ ամերիկյան «Յունոնա» նավը ժամանեց Պիրեա հազար ութ հարյուր փախստականով, որ գլխավորապես հույներ և հայեր էին: Նավը Զմյուռնիայից հեռացել էր երեկ կեսօրին՝ ժամը 5-ին, և ամերիկյան նավապետը հայտարարել է, որ այն, ինչ վերջին անգամ տեսել է քաղաքում, բոցն է եղել, լսել է սարսափահար եղած քրիստոնյաների լացի ձայներն ու ճիչերը, որ ամբոխված էին նավահանգստի մոտ՝ այրվող կառույցներից ընդամենը մի քանի յարդ հեռավորության վրա [...]: Նավահանգստի ջրերը լի էին մեռած մարդկանց մարմիններով, ովքեր կա՛մ ջրասույզ էին եղել, կա՛մ նրանց վրա կրակել էին թուրքերը, երբ փորձել են հասնել նավերին»³²⁹:

Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության նախագահ Ջեյմս Լ. Բարթընը տարագիրների խնդրի

³²⁸ Peters, *Tests and Triumphs of Armenians in Turkey and Macedonia*, 48.

³²⁹ Morgenthau, *I was Sent to Athens*, 118.

ամբողջական լուծումը տեսնում էր տարիանման մեջ: Նա գրում է. «Քաղաքի ոչ թուրք բնակչության մի մասը հունական կղզիներ տարագրվեց, սակայն նրանց մեծ մասն անօգնական էր, սարսափահար, շրջապատված անխիղճ թշնամիներով»³³⁰:

1922 թ. նոյեմբերի 15-ին Բոստոնի Ազգային Միությանն ուղարկած Փարիզի Հայ Ազգային պատվիրակության դիվանագիտական ներկայացուցիչ Վարդան Մալքունի նամակներից մեկից տեղեկանում ենք. «Ձեզ յայտնի է անշուշտ թէ Իգմիրի աղէտին հետեւանքով տարագրութեան ենթարկուեցան 60 000 ժողովուրդ, որոնց ւաւելցան նաեւ Արեւելեան Թրակիայէն մեկնելու հարկադրուած հայերը: Մեր կողմէ անընդհատաբար տեղի ունեցած ջանքերու շնորհիւ կարելի եղաւ այդ տարագիր Հայերը գէթ առժամապէս ընդունիլ տալ Յունաստան, Մակեդոնիա, Արշիպեղագոսի Կղզիները և Արեւմտեան Թրակիա, ինչպէս նաեւ Պուլկարիա: Այսքանն ալ եղաւ մեծ դժուարութեամբ, զի Յունաստան ւաւելի քան 800 000 յոյն գաղթականներ տեղաւորելու հարկադրուած է»³³¹:

Ինչպիսի՞ն էր Հունաստանի՝ որպէս հյուրընկալող պետության արձագանքը, կա՞ր արդո՞ք հասարակության մեջ տարագիրների ներգրավման հստակ և համակարգված ծրագիր. «Հունաստանը, որտեղ վաղուց ի վեր հայկական գաղութ կար, դարձավ լայն բացված դարպասներով հյուրընկալ ապաստան ահավոր սպանդից ճողոպրած բյուրավոր հայերի համար [...]: Տասնյակ հազարավոր խուճապահար տարա-

³³⁰ Bali, *The Saga of a Friendship, Asa Kent Jennings Bali and the American friends of Turkey*, 58.

³³¹ ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 607:

գիրներ, հասնելով Պիրեա, այնտեղից տարածվում էին դեպի Աթենք, Սալոնիկ ու դրանց շրջակայքի գաղթականական կայանները»³³², – գրում է պատմաբան Հովիկ Մելիքսեթյանը:

Մորգենթաուն հետևյալ կերպ է անդրադառնում վերոհիշյալ իրողություններին. «Երկու շաբաթվա ընթացքում 750 000 մարդ նախիրի նման թափվեց Սալոնիկի և Աթենքի նավահանգիստներ ու Էգեյան ծովի հունական կղզիներ՝ Կրետե, Միտիլինի, Քիոս և Էվբեա: Հունաստան ժամանելիս այս մարդկանց դրությունն աննկարագրելիորեն խղճալի էր [...]: Նրանց ուղևորությունը տեղի էր ունենում միմյանց հաջորդող այրող արևի և աշնանային սառը անձրևի տակ: Ես ինքս տեսել եմ մի նավ, որ, նախատեսված լինելով երկու հազար մարդու համար, բեռնված էր յոթ հազարով: Այս և այլ դեպքերում ջուր կամ սնունդ չկար [...]: Տարածվում էր տիֆն ու ծաղիկը, վխտում ոջիլը: Երեխաներ էին ծնվում տախտակամածի վրա: Տղամարդիկ և կանայք խելագարվում էին: Շատերը ծովն էին նետվում՝ վերջ դնելու իրենց դժբախտությանը»³³³:

Այս առնչությամբ բավականին հետաքրքիր են Ազգերի լիգայում փախստականների հարցերով և ռազմագերիների հայրենադարձության գծով գերագույն կոմիսար Ֆրիտյոֆ Նանսենի տպավորությունները. «Ես առաջ երբեք չէի իմացել, թե ինչ է նշանակում տեսնել մի ամբողջ ժողովրդի՝ ոտքի վրա. դա իսկական «Volkswanderung» (ժողովուրդների գաղթ) էր, ինչպես հին ժամանակներում: Մենք բարձրացանք մի բլրի գագաթը: Կարծեցի, թե իմ դիմաց տեսնում եմ մի ամ-

³³² Հովիկ Մելիքսեթյան, *Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.)* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1985), 52:

³³³ Morgenthau, *I was Sent to Athens*, 48-49.

բողջ քաղաք՝ իր հազարավոր լույսերով. նրանց ճամբարներն էին՝ սփռված դաշտով մեկ [...]: Այդտեղ նրանք քնում էին գետնին՝ առանց որևէ ծածկի [...]: Չգիտեին, թե ո՞ր են գնում և ի՞նչ կգտնեն՝ օթևա՞ն, թե՞ թշվառություն»³³⁴:

1923 թ. սեպտեմբերի 29-ին ստեղծվում է Փախստականների հարցերի կարգավորման հանձնաժողովը, որի նախագահը Մորգենթաուն էր: Նա մեծ պատասխանատվություն էր զգում իրեն վստահված տարագիրների ճակատագրի նկատմամբ և բացառում էր որևէ ձախողում իր գործունեության մեջ, հետևաբար փորձում էր ֆինանսական միջոցներ հայթայթել՝ փախստականներին տրամադրելու նպատակով. «[...] Իմ ձախողումը կնշանակի ավելի խոր տառապանք պատճառել այս մարդկանց [...]: Նրանց օգնություն տրամադրելու ճանապարհին ոչինչ չի կարող արգելք դառնալ [...]: Նրանց, ովքեր կորցրել են իրենց հույսը, կայրեմ իմ հավատով, որպեսզի կարողանան փրկվել: Եթե Հունաստանում գումար չհայթայթենք, ապա կանենք դա Եվրոպայում, եթե ոչ Եվրոպայում, ապա հաստատ Ամերիկայում»³³⁵:

Տարագիր հայերի և հույների բնակեցումը Հունաստանում թեև դժվարությամբ, սակայն իրականացավ: Տեղի հույները գրկաբաց ընդունեցին նրանց՝ որպես ազգային ընտանիքի լիիրավ անդամների: Նրանք ստացան քաղաքացու բոլոր իրավունքներն առանց որևէ խտրության³³⁶: Հասարակության մեջ տարագիրների ներգրավման ծրագիրը միանգամայն հստակ էր:

³³⁴ Հակոբյան, *Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը*, 261:

³³⁵ Morgenthau, *I was Sent to Athens*, 102.

³³⁶ Նույն տեղում, 104:

Հոյների՝ հատկապես հայ տարագիրների նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի մասին է վկայում Ստոկհոլմի միջազգային հինգերորդ օլիմպիական խաղերի մասնակից Վահրամ Փափազյանը, որն իր կնոջ և որդու հետ 1922 թ. օգոստոսի վերջին Ջավեն պատրիարքի հրահանգով Կ.Պոլսից մեկնում է Պիրեա, ապա՝ Կրետե. «Յոյն կառավարության եւ ժողովուրդին Հայերուս հանդէպ ցոյց տուած ասպնջականութիւնը եւ սէրը գրիչով գրեթէ կարելի չէ նկարագրել: Հայերուն հետ միաժամանակ, Փոքր Ասիայէն, հարիւր հազարաւոր Յոյներ եկան եւ Յունաստանի զանազան շրջաններուն մէջ տեղաւորուեցան: Բնիկ ժողովուրդը, սակայն աւելի տաք վերաբերմունք մը ցոյց տուաւ Հայերուս հանդէպ, քան թէ իր հարազատ ներգաղթող հայրենակիցներուն [...]: Պետութիւնը իւրաքանչիւր գաղթականի, անխտիր, դրամական կանոնաւոր յատկացումներ ըրաւ: Բաշխումի ընթացքին, վճարումը կ'ըլլար նախ՝ Հայերուս եւ յետոյ՝ յոյն գաղթականներուն [...]: Յոյն բժիշկներ գրեթէ ծրի կը դարմանէին մեր հիւանդները եւ խանութպանները ապառիկ ուտեստեղէն, ապրանք կու տային իրենց բոլորովին անծանօթ հայ գաղթականին: Երբ գործաւորի պէտք կար, նախ Հայուն գործ կու տային շատ մը շրջաններու մէջ»³³⁷:

Սալոնիկի բաց երկնքի տակ ապրող մարդկանց համար որպէս ժամանակավոր ապաստան տրամադրվեցին դպրոցներ, եկեղեցիներ, թատրոններ, բանակային ճամբարներ և պահեստներ: Տարագիրների համար բնակատեղի էին դարձել նաև Աթենքի մշակութային կենտրոնները, տաճարները, գորամասերը³³⁸:

³³⁷ Վահրամ Փափազյան, *Սէր, սէր, սէր* (Պեյրութ, Սևան, 1962), 135-136:

³³⁸ James L. Barton, *Story of Near East Relief (1915-1930)*, An Interpretation (New York: The Macmillan Company, 1930), 162.

Մորգենթաուն գրում է. «Ենթադրենք՝ քսանվեց միլիոն տղամարդ, կին և երեխա շոգենավով հանկարծակի և անսպասելիորեն ժամանել են Բոստոնի, Նյու Յորքի, Ֆիլադելֆիայի և Բալթիմորի նավահանգիստներ: Ենթադրենք՝ ավելին, որ այս հսկայական բազմությունը՝ կեղտոտ, քայքայված տիֆից ու ծաղիկից, գրեթե սովամահ է եղել, մնացել առանց դրամի կամ որևէ ունեցվածքի [...]: Այսպիսով, վերականգնում է քսանվեց միլիոն կործանված մարդկային կյանք, և այս ամենն իրագործվում է վեց տարվա ընթացքում՝ նրանց՝ երկրում հաստատվելու պահից ի վեր: Աշխարհն արդյոք չէ՞ր թնդա ամերիկյան մարդասիրության, ամերիկյան առատաձեռնության, ամերիկյան ջանքերի և հնարամտության գովասանքներով: Վերջին վեց տարիների ընթացքում Հունաստանը, իհարկե, ոչ բացարձակ, բայց հենց այսպիսի ձեռքբերում արձանագրեց, իսկ աշխարհը բացարձակապես ոչինչ չգիտի այս ամենի մասին»³³⁹:

Քաղաքակիրթ աշխարհը տեղյակ էր իրագործված ցեղասպանություններին և աշխարհասփյուռ տարագիրների ճակատագրին: Տեղյակ էր նաև, որ տարագիրներին ապաստան տված պետությունները, այդ թվում և Հունաստանը, անում էին հնարավորը³⁴⁰:

Տարագիր հայերի թիվն ամբողջ Հունաստանում, ըստ ամենատարբեր աղբյուրների, կազմում էր 90 000-ից³⁴¹ մինչև

³³⁹ Morgenthau, *I was Sent to Athens*, 2-3.

³⁴⁰ Stephen P. Ladas, *The Exchange of Minorities, Bulgaria, Greece and Turkey* (New York: The Macmillan Company, 1932), 621.

³⁴¹ Լիպարիտ Ազատեան, *Հայ որբերը Մեծ եղեռնի*, հատոր 1 (Լոս Անճելես, Ապրիլ, 1995-2002), 103:

200 000³⁴². նրանք հաստատվել էին Աթենքում, Լիբազմայում, Կոկինիայում, Ալեքսանդրուպոլսում, Սալոնիկում ևն³⁴³:

Այսպես, Սալոնիկում հաստատվել էր 100 000 տարագիր, Թրակիայում և կղզիներում՝ մոտ 120 000, Միտիլինիում՝ 130 000, Քիոս կղզում՝ 60 000, Սամոսում՝ 15 000, Պիրեայում՝ 50 000, Կրետե կղզում՝ 27 500³⁴⁴:

Հունաստանի Արտաքին գործերի նախարարության ներկայացրած տվյալների համաձայն՝ հայ տարագիրների թիվը հասնում էր 120 000-ի, հայ ազգային մարմինները հիշատակում են 100 000-ը: Այլ սկզբնաղբյուրների համաձայն՝ այդ թիվը հասնում է մինչև 200 000-ի: Մինչև 1923 թ. Հունաստանն ընդունել է 1 060 000 տարագիր՝ ներառյալ արդեն եկած 90 000-ը³⁴⁵:

1923 թ. հունվարի 30-ին ստորագրվում է «Թուրքիայի և Հունաստանի բնակչության փոխանակման» պայմանագիրը: Վենիզելոսն իր նախընտրական ելույթում հետևյալ պարզաբանումն էր տալիս. «Խոսքը բոլորովին բնակչության փոխանակման մասին չէ: Թուրքիան այն պահին, երբ ստորագրվեց Պայմանագիրը, արդեն իր տարածքից վոնդել էր մոտավորապես մեկ միլիոն փախստականի [...]: Հետևանքը կլիներ այն, որ Փոքր Ասիայի սարերում մոտավորապես 200 000 հայրենակիցներ կբնաջնջվեին, և բնակչությունը, որը Հունաստան կգար, շատ ավելին կլիներ»³⁴⁶:

³⁴² Աշոտ Աբրահամյան, *Համառոր ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հատոր Բ (Երևան, Հայպետհրատ, 1967), 105:

³⁴³ Նույն տեղում:

³⁴⁴ Μαλκίδης, *Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος*, 172.

³⁴⁵ Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem*, 52-54.

³⁴⁶ Ալցոռլու, *Անիծված առյուծի բնաջնջումը: Մեր Անաբոյիայի հելլենականության մեթոդավորված բնաջնջման գործընթացի իրար հաջորդող փուլերը*, 110-111:

Հետևաբար, ելքը ստեղծված ծանր իրավիճակից նա տեսնում էր բնակչության փոխանակման մեջ. երկրից հեռացնել մահմեդական տարրին և փոխարենն ընդունել հայրենակիցներին:

«Ո՛ր պիտի գնային մարդիկ այդ պահին,– շարունակում է նա,– եթե չկարողանայի հեռացնել Հունաստանից մուսուլմաններին: Քանի որ Պայմանագիրը, ըստ էության, պիտի հետևյալ անվանումը կրեր՝ «Թուրքիայից հունական տարրի վտարման հետևանքով Պայմանագիր», որով Թուրքիան ստանձնում է պարտականությունը հունական տարածքից վերցնել [թուրք] հայրենակիցներին, Հունաստանի հպատակներին: Սա է, ըստ էության, Փոխանակման պայմանագրի իմաստը: Չէին կարող առաջ տանել Պայմանագրի իսկական անվանումը, որովհետև Թուրքիան չէր ընդունի, և որոշեցինք անվանել այն Փոխանակման պայմանագիր [....]»³⁴⁷:

Այս առնչությամբ հետաքրքիր է Վարդանյանի հետևյալ եզրակացությունը. «Լոզանում ակնհայտ դարձավ, որ Հունաստանը ոչ միայն զրկվում է Փոքր Ասիայի նկատմամբ տարածքային իրավունքներից, այլ նաև օրինականացվում են թուրքահպատակ հույների արտաքսումները, ու նոր ճանապարհ է բացվում դրա շարունակության համար [....]: Եթե 1453 թ. Կոստանդնուպոլսի անկմամբ վերջ տրվեց Փոքր Ասիայում հույն ժողովրդի քաղաքական ներկայությանը, ապա Լոզանից հետո վերջ տրվեց նաև նրա ֆիզիկական ներկայությանը»³⁴⁸:

³⁴⁷ Նույն տեղում:

³⁴⁸ Գևորգ Վարդանյան, «Լոզանի կոնֆերանսն ու «Թուրքիայի և Հունաստանի բնակչության փոխանակման վերաբերյալ պայմանագիրը», *Մխիթար Գոշ* գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ 4 (28) (Երևան, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, 2010), 47:

Ողբերգական իրականությունից հավաքական ստեղծագործ կյանք

«Նոր օր» օրաթերթը գաղթականական կյանքի հայելի
1923 թ. մարտի 25-ին Աթենքում սկսվում է «Նոր օր» թերթի հրատարակությունը, որի էջերից տեղեկանում ենք Հունաստանում ապաստանած հայ տարագիրների առօրյայի, նրանց կրած տանջանքների, վերապրումի գոյապայքարի մասին: Սկզբնական շրջանում շաբաթական երեք անգամ էր լույս տեսնում, երկու ամիս անց՝ օրական հերթականությամբ: Թերթում հրապարակված վկայությունները պատմական մեծարժեք նշանակություն ունեն. «Նոր օր»-ի էջերում 100 տարի առաջ արձանագրված պատմությունն է պահվում իր ողբերգական, սակայն վերապրման հույսի թեմաներով³⁴⁹:

«Նոր օր»-ի գերագույն նպատակը տարագիր հայերի համախմբումն ու նրա ազգային նկարագրի պահպանումն էր. ««Նոր օր» լոյսի ճամբայ մը ցոյց տալու յաւակնութիւնը չունի երբէք, բայց ան խորապէս կը հաւատայ, թէ իրեն սահմանուած գործունէութեան ասպարէզ մը կայ հոս, ուր կարելի պիտի ըլլայ ուժերու համագործակցութիւնով այս ժողովուրդին կենսունակութիւնն ու աշխուժութիւնը շարժման մէջ դնել: Աղէտի օրերու այս ցեղին կենսունակութենէն խօսելու մեր խիզախութիւնը երբէք տարօրինակ չի թուի: Օտար հորիզոններու տակ աննպաստ պայմաններու ներքեւ, Հայ գաղթականութիւնը ցոյց կուտայ վերաշինութեան ոգի, քաղաքակրթական ընդունակութիւն եւ հրաշալի յատկութիւններ: Ապրուստի յարատեւ տազնապին մատնուած համաճարակներու սարսա-

³⁴⁹ 100 տարի Փոքր Ասիոյ աղէտէն, *Ազատ օր* օրաթերթ, բացառիկ, 2022, 59:

փը՝ իր աչքերուն առջեւ, ան՝ տարագիր Հայ ժողովուրդը, սկսած է խորհիլ դպրոցի, մամուլի եւ կազմակերպական կեանքի մասին»³⁵⁰:

«Գաղթականական կեանք» խորագրով նյութը (1 ապրիլի 1923) հետաքրքիր մանրամասներ է ներկայացնում տարագիրների թվաքանակի, նրանց տեղակայման և ընդհանուր վիճակի մասին. «Բիրէայի հիւսիսակողմը, Այիօ Տիոնիսիօ եկեղեցիէն սկսելով դէպի վեր տեղաւորուած է մօտաւորապէս 40 000-ի չափ գաղթականութիւն մը, որուն գրեթէ մեծ մասը Իզմիրցիներէն կը բաղկանայ: Այս կեդրոնները բաղդատելով միւս կեդրոններու, այսինք Գոքինիա, Ֆիքս կամ Աթէնքի հետ, աւելի թշուառ եւ ցաւալի վիճակ մը կը ներկայացնեն: Այիօ Տիոնիսիոյի եկեղեցիին մօտիկ գտնուող մեծ կայանի մը մէջ թխմուած են ուրիշ 499 ընտանիքներ, մեծ մասամբ այրիներ եւ փոքրիկներ, որոնք զուրկ են նախնական կարիքներէ: Կայանին ուտելիքի մատակարարութիւնը ստանձնած է Պրիթիշ Ռիլիֆ Ֆոր Ասիան Մինոր ընկերութիւնը, որը ունի մասնաւոր պաշտօնեաներ եւ հսկողներ [...]»³⁵¹:

Տասնյակիազարավոր վերապրողների համար Միտիլինին նոր կյանքի սկիզբ էր, հյուրընկալ ափ. առևտրական դասն առաջնակարգ դերակատարություն ուներ, հայտնի էին Փափագյան եղբայրները, որոնք կերպասեղենի մեծ վաճառատներ ունեին: Միտիլինին հայտնի էր նաև իր հայ բժիշկներով, գործում էր եկեղեցի, դպրոց, ընթերցարան³⁵²: Միտիլինիում վերաբնակեցված տարագիրների կրթական կյանքի

³⁵⁰ Նույն տեղում:

³⁵¹ Նույն տեղում, 61:

³⁵² *Յունահայ տարեգիրք*, 1928, Բ տարի, Նոր օր, Աթէնք, 423:

մասին «Նոր օր» թերթի (15 ապրիլի 1923) հաղորդած տեղեկություններում ուրախալի է նկատել, որ 400-ից ավել երկսեռ աշակերտների համար «հացին չափ եւ դերեւս ւաելի կենսական էր վարժարանի հարցը»։ «Վերջապէս ահա Միտիլինիի գաղթականութիւնն ալ կ'ունենայ ազգային վարժարանի յատուկ, համեստ բայց սեփական շէնք մը, ուր կարելի պիտի ըլլայ վերսկսի եւ թափ տալ կրթական գործին։ Ազգային վարժարանը որ հիմնուած էր ազգային տարեշրջանի գրեթէ վերջերը եւ հազիւ երկու ամսուայ կեանք ունեցած էր, կարելի չէր եղած այս տարի արձակուրդէն վերջ վերաբանալ, անոր համար որ նախորդ շէնքը, որ արդէն անյարմար էր, յատկացուած էր գաղթականներուն եւ ուրիշ շէնք ալ կարելի չէր եղած գտնել»³⁵³։

1922 թ. Կ.Պոլսից Աթենք են փոխադրվում Աստվածաբանական ճեմարանի ուսանողները՝ Հունաստանի արվարձաններում կիրակնօրյա վարժարաններ բացելու նպատակով։ Օրինակ՝ Դուրդութի Բերել կիրակնօրյա վարժարանն ուներ շուրջ երեք հարյուր աշակերտ. «Քանի մը մանկասէր ուսուցչուհիներու օգնութեամբ այս կրօնաբարոյական կրթավայրը աշխատած է եւ կ'աշխատի օգտակար ըլլալ նոր սերունդին, նպատակ ունենալով կերտել անոնց նկարագիրը քրիստոնէական սկզբունքներով եւ առաջնորդել կեանքի դժուարութիւններուն մէջէն»³⁵⁴։

Թե ինչպես են Լուրարքիի որբուհիները հանդիսավոր կերպով տոնել Սուրբ Զատիկը, տեղեկանում ենք «Նոր օր» թերթի (15 ապրիլի 1923) սեփական թղթակցի հետևյալ նյու-

³⁵³ Նույն տեղում, 63:

³⁵⁴ *Յունահայ տարեգիրք*, 401:

թից. «[...] Չատիկ է, Լուսթրաքին կը խայտայ: Փողոցներուն մէջ երդիքներու տակ, խինդ ու ծիծաղ, երգ ու պար, խունկ ու աղօթք [...] Հաւաքուած են բոլոր որբուհիները, հոն է որ անոնք կը զգան թէ՛ մինակ են աշխարհի մէջ ինչպէս այդ վայրկեանին Աստուծոյ առջեւ հոգիները կը փոթորկին աչքերը կը տամկանան ու կը խոնարհին: Վերջնական «Հայր Մեր»էն առաջ միաբերան կ'երգեն «Տէր Ողորմեա»ն»³⁵⁵:

Մարդասիրական միջազգային կազմակերպությունների և հատկապես միսիոներների գործունեությունը տարագիրների շրջանում բազմազան էր և բազմաբնույթ: Ստեղծված իրադրությունում բնական և օրինաչափ էին «ապրելու մարտահրավերն» ընդունել տալու և կյանքի իմաստը վերստին գտնելու շարունակական հորդորները: «Կյանքը մեջքին ու մտքին ծանրացած» վերապրողի մեջ հավատի սերմանումը դյուրին չէր: Շվեդ միսիոներուհի Ալմա Յուհանսոնը գրում է, որ ամեն մի հիվանդի կյանքը փրկելու համար իրենք ծայրահեղ միջոցների էին դիմում. «Երբեմն դա ինձ հաջողվում էր, երբեմն՝ ոչ: Ես պետք է համառություն ցուցաբերեի: Երբեմն պատահում էր, որ ծանր հիվանդ մարդիկ, որոնց առողջանալու միակ հույսը վիրահատությունն էր, դիմում էին ինձ, բայց ինձ չէր հաջողվում նրանց հիվանդանոցում տեղավորել: Որոշ հիվանդների ես կարող էի խնամել նաև տանը, այդ դեպքում պետք է ջանքեր ներդնեի, որ հիվանդների համար ավելի շատ ուտելիք հայթայթեի»³⁵⁶:

Զմյուռնիայից և Թրակիայից Սալոնիկ տարագրված հայ ընտանիքներին օգնելու նպատակով Ազգային խնամատա-

³⁵⁵ Նույն տեղում:

³⁵⁶ Ալմա Յուհանսոն, *Աքսորյալ ժողովուրդ: Մեկ փարի հայոց պատմությունից* (Երևան, ՀՅԹԻ, 2008), 38:

րություն է ստեղծվում: Առանձին բարերարներ՝ Գյուլբենկյան գերդաստանը, էֆ. Ղազարյանը, սատարում են հայ որբերին և այրիներին³⁵⁷: Սալոնիկի ազգային երկսեռ վարժարանը, Խարիլաոսի ազգային մանկապարտեզ-նախակրթարանը, Գյուլբենկյանի անվան նախակրթարանը և մանկապարտեզը, ֆրանսիական, ամերիկյան, դանիական վարժարանները մեծ ներդրում ունեցան հայ մանուկների կրթության ու դաստիարակության գործում³⁵⁸:

Հայ տարագիրների շրջանում սկանդինավյացի միսիոներները խթանեցին արհեստագործության և կրթության զարգացումը: Սալոնիկում միսիոներուհիների մարդասիրական ծրագրերը հավասարապես վերաբերում էին ինչպես նրանց առողջության վերականգնմանը, նորմալ պայմաններում ապրելուն, այնպես էլ հոգևոր պահանջների բավարարմանը: Այդ մասին են վկայում Սալոնիկից ոչ հեռու գտնվող Խարիլաոս և Խերմանքյո գյուղերում նրանց հիմնած դպրոցները: Խերմանքյոյի դպրոցում, օրինակ, սովորում էին 103 երեխա, իսկ 1923 թ. մայիսի 1-ին Խարիլաոսում 95 սանուհուց բաղկացած իգական վարժարան է հիմնվում³⁵⁹: 1928 թ. հոկտեմբերի 15-ին նույն հաստատությունը Խարիլաոսում հայկական երկսեռ մանկապարտեզ և նախակրթարան է բացում հայ ազգային իշխանության անունով, որտեղ 40-45 փոքրիկ անվճար կրթություն էր ստանում: Դպրոցը հոգում էր նրանց հագուստը, գրենական պիտույքներն ու ճաշը³⁶⁰:

³⁵⁷ *Յունահայ տարեգիրք*, 1927, Աթէնք, 294-296:

³⁵⁸ Նույն տեղում, 296-302:

³⁵⁹ Ազատեան, *Հայ որբերը Մեծ եղեռնի*, 105:

³⁶⁰ Նույն տեղում, 202:

1928 թ. մարդահամարի տվյալներով Հունաստանում հաստատվել էր մոտ 1 500 000 գաղթական, որից 1 200 000-ը՝ հույն, մյուսները՝ այլազգի, ճնշող մեծամասնությունը՝ հայ: Հայաշատ գաղթավայրեր էին Ֆիքսը (Դուրղուֆի), Քիֆիսիան, Կոկինիան, Լիպազման, Դրապեցոնան ևն: Վենիզելուսը Հունաստանում ապաստանած բոլոր հայերին առաջարկել է առանց խտրականության քաղաքացիություն ստանալ³⁶¹:

Հարկ է նշել, որ հայ աշխատավոր գաղթականությունը ոչ միայն բեռ չէր Հունաստանի համար, այլև կանգնել էր հույն աշխատավորների կողքին՝ դառնալով Հունաստանի արդյունաբերության զարգացման գործոններից մեկը գորգագործության, ջուլիակագործության, մետաքսագործության և այլ ճյուղերում³⁶²:

Զմյուռնիայի հայերի ու հույների վերաբնակեցումը Հունաստանում տեղի է ունենում *հարկադրված փարագրության* հետևանքով: Տարագիր լինելը բոլոր ժամանակներում բավականին բարդ է եղել: Տարագրի ներաշխարհում իսկական քառս է տիրում: Դա լավ են պատկերացրել հին հույները, երբ հանցագործի համար առավել սոսկալի պատիժ սահմանել են տարագրությունը՝ գերադասելով սովորական մահապատժից: Հունաստանին՝ որպես հյուրընկալ պետության, միջազգային ամենատարբեր կազմակերպություններին, անհատներին և հասարակ ժողովրդին միավորում էր մարդասիրությունը: Նրանց գործադրած ջանքերը մեծապես նպաստում են, որ տարագիրները վերափմաստավորեն իրենց կյանքն ու

³⁶¹ Ραμαζιάν, *Ιστορία των Άρμενο-Ελληνικών στρατιωτικών σχέσεων και συνεργασίας*, 235.

³⁶² Պետրոս Կոկինոս, *Հունահայ գաղութի պատմությունից 1918-1927* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1965), 34:

վերստին գտնեն ապագայի հանդեպ կորցրած հավատը: Դրանք կարելի է հաջողված համարել. այդ է վկայում տարագիրների սերունդների խաղաղ ու ստեղծագործ համագոյակցությունը³⁶³:

³⁶³ Զմյուռնիայի հայերը քաղաքի հրկիզումից 95 տարի անց սուրբ նահատակների համար պատարագ են մատուցել ներկայիս Իզմիրում, տե՛ս՝ https://www.tert.am/am/news/2017/08/15/izmir/2457941?fbclid=IwAR3BXISIW0Nc32DHgqAWjot1HFXazOI_vkh-uUB6BvaPIQ1ElutAN_X_kxk, դիտվել է՝ 29.06.2023:

Միջազգային իրավական գնահատականը և պետության պատասխանատվությունը

Ցեղասպանությունը պետական հանցագործություն է ոչ միայն նպատակադրման, այլև կատարման փաստով. այն իրագործում են կառավարությունը, տեղական մարմինները, բանակը, ոստիկանությունը՝ տարբեր գործիքների կիրառմամբ³⁶⁴: Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Ցեղասպանության կոնվենցիա) ազդակը տվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, որը դեռևս 1946 թ. իր 96 (1) բանաձևով հայտարարել է, որ ցեղասպանությունը միջազգային իրավունքի չափանիշները խախտող, ՄԱԿ-ի նպատակներին հակասող հանցագործություն է³⁶⁵:

Ցեղասպանության կոնվենցիայի երկրորդ հոդվածը որպես ցեղասպանություն է բնորոշում «հետևյալ գործողություններից յուրաքանչյուրը, որը կատարվում է ազգային, էթնիկա-

³⁶⁴ Ցեղասպանության իրագործման համար կարևոր պայման է հասարակության լայն շերտերի «մասնակցությունը» զանգվածային սպանություններին: Պետական իշխանությամբ օժտված և «օրինականացված» բռնություն կիրառելու իրավունք ունեցող ժանդարմները, զինվորները, քրեական հանցագործները և ընդհանրապես նրանք, ովքեր ունակ են սառնասրտորեն սպանելու, ստանձնում են ոճրագործի դերը: Տե՛ս Սուրեն Մանուկյան, «Քրեական հանցագործների օգտագործման խնդիրը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ», *Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, VIII, հոդվածների ժողովածու (Երևան, Լուսակն, 2012), 342-343:

³⁶⁵ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Approved and proposed for signature and ratification or accession by General Assembly resolution 260 A (III) of 9 December 1948, Entry into force 12 January 1951, in accordance with article XIII, at https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocities-crimes/Doc.1_Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf, դիտվել է՝ 14.09.2023:

կան, ռասայական կամ կրոնական որևէ խմբի՝ որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

ա. խմբի անդամների սպանությունը,

բ. խմբի անդամներին ֆիզիկական կամ հոգեկան վնասների պատճառումը,

գ. խմբի համար դիտավորյալ կերպով այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք կարող են հանգեցնել նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

դ. խմբի ներսում ծնելիության կանխարգելմանն ուղղված միջոցների կիրառումը,

ե. խմբի երեխաների բռնի փոխադրումը մեկ ուրիշ խումբ»³⁶⁶:

Համաշխարհային ճանաչում ունեցող ցեղասպանագետ Դադրյանը, ցեղասպանությունը «արտակարգորեն քանդիչ զանգվածային ոճիր» համարելով, գրում է, որ այն «[...] կը նախադրէ գերակշիռ ուժերու եղեռնափորձ կիրարկումը՝ ընդդէմ անհամեմատորէն անզօր եւ հետեւաբար յոյժ խոցելի թիրախ-զոհի մը, որ կրնայ փոքրամասնութիւն մը, ազգութիւն մը, կամ ուրիշ որեւէ հաւաքականութիւն մը ըլլալ: Այս իմաստով, ցեղասպանութիւնը ամէն բանէ առաջ կուտակուած եւ համադրուած հզօրանքի (power) մէկ արտայայտութիւնն է, պայմանաւորուած՝ պարտադրիչ որոշ կառուցուածքներու առկայութեամբ եւ ատոնց լծակային օգտագործումովը: Արդի պատմութեան մէջ առհասարակ պետութիւնն է, որ կը մարմնացնէ այս տեսակի պարտադրիչ հզօրանք. հոն է, որ կուտա-

³⁶⁶ Նոյն տեղում:

կուած են ուժի աղբիւրները, եւ հոնկէ է, որ կը բխին պարտադրանքի հնարամիջոցները (resources)»³⁶⁷:

Պետության դերակատարության վերաբերյալ ապացույցներն իմաստազրկվում են, երբ նկատում ենք, որ Յեղասպանության կոնվենցիայում բացակայում է պետության պատասխանատվության հարցը: Կոնվենցիայի այս թերության մասին մատնանշել են ցեղասպանության ուսումնասիրության նյութորոշյան ինստիտուտի տնօրեն Հելեն Ֆայնը, Իրվինգ Լուիս Հորոուիցը, Ռոբերտ Մելսոնը և մի շարք մասնագետներ³⁶⁸: Յեղասպանության կոնվենցիայի 19 հոդվածներից ոչ մեկում անդրադարձ չի կատարվում նաև փոխհատուցման իրավունքին³⁶⁹:

Պետությունների պատասխանատվության անկյունաքարային դրույթներից մեկն այն է, որ պետության յուրաքանչյուր օղակի գործողություն պետք է դիտարկել որպես այդ պետության գործողություն, և եթե միջազգային պարտավորության խախտում է արձանագրվում, ապա առաջանում է պետության պատասխանատվության հարցը³⁷⁰:

Թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը ցեղասպանության իրագործումը պայմանավորում է պետական ծրագրի առկայությամբ՝ առանձնացնելով ցեղասպանության ծրագրի զատո-

³⁶⁷ Վահագն Տատրեան, *Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային եւ պարլամենտական քննարկումներով* (Մասաչուսեթս, Պայքար, 1995), 107:

³⁶⁸ Հակոբյան, *Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը*, 63:

³⁶⁹ Նոյն տեղում, 50:

³⁷⁰ Վլադիմիր Վարդանյան, *Հայոց ցեղասպանության ճանաչման, դատարարման և հետևանքների վերացման հիմնախնդիրները* (Երևան, ԵՊՀ, 2017), 78:

րոշիչ գործոնը՝ դիտավորությունը³⁷¹: Նրա համոզմամբ՝ ծրագրերը ոչ միշտ են ամբողջությամբ իրագործվում, սակայն ծրագրի գոյության փաստն արդեն հիմք է ընդունելու, որ տվյալ պետությունը նախացեղասպանական փուլում է³⁷²:

ՀՅԹԻ տնօրեն, պ.գ.թ. Էդիտա Գզդյանը նկատում է, որ հայ բնակչության դեմ 1915-1923 թթ. թուրքական իշխանությունների իրագործած հանցագործությունների ժխտումը հստակորեն պայմանավորված է նախևառաջ պատասխանատվությունից խուսափելու, ինչպես նաև ռասիզմի և հայատյացության շարժառիթներով³⁷³:

Հայոց ցեղասպանության ժամանակակից հետազոտող, պրոֆեսոր Արմեն Մարությանը նշում է, որ Թուրքիայի Հանրապետության՝ իբրև Օսմանյան պետության իրավահաջորդի ընդունման հարցը չափազանց կարևոր է, քանի որ ժամանակակից Թուրքիայի իրավահաջորդության փաստի ապացուցումը միայն կարող է պատասխանատվության հանգեցնել իր նախորդի կատարած հանցագործության համար: Փաստորեն, իրավահաջորդ պետությունը ստանձնում է իրավանախորդի ինչպես իրավունքները, այնպես էլ պարտավորությունները³⁷⁴:

³⁷¹ Ռուբեն Սաֆրաստյան, *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)* (Երևան, Լուսակն, 2009), 33; Նույնի՝ *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության երկու ծրագիր (1876-1915 թթ.)*, Ուսումնամեթոդական ձեռնարկ (Երևան, Լուսակն, 2007), 8:

³⁷² Սաֆրաստյան, *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը*, 38:

³⁷³ Էդիտա Գզդյան, «Հայոց ցեղասպանության ժխտումը՝ որպես հայերի հանդեպ ռասիզմի դրսևորում. Թուրքիայի պատասխանատվության հարցը միջազգային իրավունքում», *Ցեղասպանագիտական հանդես* 2 (2), 2014, 144:

³⁷⁴ Արմեն Մարության, *Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պարմաիրավական հիմնավորումները* (Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2014), 38:

Հետազոտելով ու քննելով 1922 թ. Ջմյունիայում հայերի և հույների բնաջնջման վերաբերյալ առկա սկզբնաղբյուրները, վկայությունները, ժամանակի մամուլը, թուրքական իշխանությունների հրահանգները և ընդհանրապես թեմային առնչվող գրականությունը՝ փորձենք եզրահանգել՝ արդյո՞ք հիմնավորված է Տեղասպանության կոնվենցիայի վկայակոչումը, կատարվածը հարկ է դիտարկել որպես առանձին հանցագործություն, թե՞ Հայոց ցեղասպանության քաղաքականության շարունակություն:

Այն, որ Ջմյունիայի հայերին և հույներին կանխամտածված են բնաջնջել, ապացուցում են գործող իշխանությունների հրահանգները, որոնցից մի քանիսը կներկայացնենք ստորև: Այդըն նահանգի ոստիկանապետ Մեհմեթ Արիֆը³⁷⁵ հետևյալ հրամանն է ուղարկել Ջմյունիայի Ռեշիդիե ոստիկանությանը. «Ոստիկանության վարչության գրավոր ցուցմունքների համաձայն՝ հնարավոր է, որ հույն տարրը ըմբոստանա: Հետևաբար հայրենիքն ամեն սպայի և տղամարդու հրամայում է ընդհանուր կոտորածի իր պարտքը կատարել: Զինված ուժերի յուրաքանչյուր անդամ պարտավորվում է չորսից հինգ հույն սպանել: Ոստիկանության վարչությունից վերը նշվածը գրավոր փոխանցելու առաջադրանք եմ ստացել: Ունեմ այս հրամանը կատարելու ձևերի մասին լրացուցիչ ցուցումներ, մի բան, որ ես ձեզ անձամբ եմ հաղորդելու: Զինված ուժերի յու-

³⁷⁵ Մեհմեթ Արիֆ (Այըջը, 1882-1926), Քեմալի գինակից ընկեր, ընդգծված քրիստոնեատյաց, կրոնական խտրականության ջատագով: Որպես ապացույց՝ մեջբերենք նրա հետևյալ միտքը. «[...] հույնին ընդատաջ գնալը կնշանակի կրոնի կորուստ, կրոնի կորուստը կվնասի երկիրը»: Տե՛ս Ali Sarikoyuncu - Erkan Açıkgöz, “Hatiratlarda Milli Mücadelede Simav,” *History Studies*, International Journal of History, Volume 9 (4), November 2017, 161.

րաքանչյուր անդամ պարտավոր է այս հրամանը կատարել (ստորագրություն և կնիք)»³⁷⁶:

Հաջորդ փաստը սեպտեմբերի 3/16-ին Նյուրեդիին փաշայի հրապարակած հրամանն է՝ հետևյալ բովանդակությամբ. «18-45 տարեկան տեղաբնիկ բոլոր հույն և հայ տղամարդիկ ռազմագերի են համարվում, քանի որ նրանք թշնամու բանակում են գրանցված, վերջերս հրկիզել են քաղաքներ ու գյուղեր և ահավոր ոտնձգություններ են թույլ տվել խաղաղ բնակչության դեմ: Չպետք է թույլ տալ, որ նրանք ազատ արձակվելու դեպքում թշնամու բանակն ուժեղացնեն: Մյուս բոլոր բնակիչները՝ «զմյունիացի ընտանիքներ կամ հույն ու հայ գաղթականներ», պարտավոր են մինչև 1922 թ. սեպտեմբերի 17/30-ը հեռանալ երկրից: Այլապես բանակի և հասարակական կարգուկանոնի ապահովությանը սպառնալիք դառնալու կասկածի տակ են ընկնում, և հարկ կլինի նրանց ռազմական գոտուց տեղահանել»³⁷⁷:

Հրամանների բովանդակությունից պարզ է դառնում, որ ոճրագործը, կատարվածը զրհին վերագրելով, ապահովագրում է իրեն պատասխանատվությունից և հող նախապատրաստում ժխտողականության համար: Ստորև ներկայացվող փաստերը ևս վկայում են կանխամտածվածության մասին: 1922 թ. սեպտեմբերի 11-ին Ազգերի լիգային Անկարայի հղած

³⁷⁶ Γιάννης Καψής, 1922, *Η Μαύρη Βίβλος: οι μαρτυρικές καταθέσεις των θυμάτων, που δεν δημοσιεύθηκαν ποτέ: ιστορικό ντοκουμέντο* (Αθήνα: Νέα Σύνορα, 1992).

³⁷⁷ Μαλκίδης Θ., *Ο Ελληνισμός της Μικράς Ασίας και το κεμαλικό κίνημα. Πρακτικά Συνεδρίου Στ' Πανελληνίου Συνεδρίου για τον Ελληνισμό της Μικράς Ασίας. Ο Ελληνισμός της Μικράς Ασίας από την Κλασική Αρχαιότητα έως τον εικοστό αιώνα. Πολιτική ιστορία και ιστορία του πολιτισμού* (Θεσσαλονίκη: Αριστοτέλειο Πανεπιστήμιο Θεσσαλονίκης, 2002).

հաղորդագրությունից տեղեկանում ենք Անկարայի կառավարության «նախագգուշացման» մասին, համաձայն որի՝ Չմյուռնիայի թուրք ազգաբնակչությունը պատասխանատվություն չի կրելու կոտորածների համար³⁷⁸:

Ազգերի լիգայի բարձրաստիճան պաշտոնյաներին անհանգստացնում է Անկարայի հայտարարությունը, քանի որ նրանք այդ «նախագգուշացումն» ընդունում են որպես արդեն ընթացիկ գործողություններ և փորձում են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրիստոնյաներին պաշտպանելու ուղղությամբ³⁷⁹: 1922 թ. սեպտեմբերի 14-ին, 15-ին և 18-ին ԱՄՆ պետքարտուղարին և պետդեսպարտամենտին Բրիստոլի հղած հեռագրերը պարունակում են կարևոր տեղեկություններ Չմյուռնիայի քրիստոնյաների բնաջնջման և քաղաքի հրկիզման դիտավորության մասին: Այսպես, սեպտեմբերի 14-ին պետդեսպարտամենտին հղած հեռագրում նշված է. «[...] Նպաստամատուց կազմակերպությունների աշխատակիցները, ինչպես նաև փոխհյուպատոս Բարնեսը զեկուցեցին, որ նկատելի փոփոխություն է տեղի ունեցել ծովափին՝ հայերի նկատմամբ թուրքական բանակի և քաղաքացիների տրամադրության հետ կապված. [...] յուրաքանչյուր ամրակազմ հայ տղամարդու հալածում և սպանում էին, նույնիսկ մահակներով զինված 12-15 տարեկան փոքր տղաներն էին մասնակցում բռնություններին: Ես ինքս հեռադիտակով նավի միջից տեսել եմ, թե ինչպես քաղաքացիական հագուստով թուրք զինվորների մի խումբ բավականաչափ դաժան վերաբեր-

³⁷⁸ Economos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 90.

³⁷⁹ Նույն տեղում:

մունք ցուցաբերեց մի տղամարդու նկատմամբ. նրան կապեցին և նետեցին ամբարտակի վրա ու կրակեցին»³⁸⁰:

Բրիստոլը սեպտեմբերի 15-ի իր հեռագրում տեղեկացնում է. «[...] Համոզված եմ, որ թուրքերը հրկիզեցին Ջմյուռնիան՝ բացառությամբ թուրքական թաղամասի՝ քրիստոնյա փոքրամասնության խնդրի լուծման հստակ ծրագրով [...]: Հավատացած եմ, որ այժմ գրոհ կնախապատրաստեն Կ.Պոլսի Մերիլի վրա»³⁸¹:

Սեպտեմբերի 15-ին պետդեպարտամենտին հղած Բրիստոլի հաջորդ հեռագրում նշված է. «Դրությունը Մերձավոր Արևելքում ծայրաստիճան սրված է՝ էլ ավելի բարդացման հավանականությամբ, ինչը Մեծ Բրիտանիային և դաշնակիցներին կներքաշի Թուրքիայի հետ պատերազմի մեջ: Գաղտնի գեկույցներից, որ ստացել ենք Ջմյուռնիայի մեր պաշտոնյաներից, տեղեկանում ենք քրիստոնյա փոքրամասնության խնդրի լուծման հստակ ծրագրի մասին»³⁸²:

Հունաստանի պատմության ժամանակակից ուսումնասիրող պրոֆեսոր Կոնստանդին Հաձիդիմիտրիուն նշում է, որ ԱՄՆ պետդեպարտամենտը մանրամասն և հավաստի տեղեկություն է ունեցել Ջմյուռնիայում իրագործված ոճրագործության վերաբերյալ, իսկ քաղաքի հրկիզումը կանխամտածված

³⁸⁰ Papoutsy, *Ships of Mercy, The True Story of the Rescue of the Greeks, Smyrna, September 1922*, 38.

³⁸¹ Constantine Hatzidimitriou, “The Destruction of Smyrna in 1922: American Sources and Turkish Responsibility, The Asia Minor Catastrophe and the Ottoman Greek Genocide,” *Essays on Asia Minor, Pontos, and Eastern Thrace, 1912-1923*, ed. by George N. Shirinian, The Asia Minor and Pontos Hellenic Center, Inc. (Bloomington, Illionis, 2012), 161.

³⁸² Hatzidimitriou, *The Destruction of Smyrna in 1922: American Sources and Turkish Responsibility*, 168-169.

ծրագրի մասն էր կազմում՝ որպես երաշխիք այն բանի, որ ազգային փոքրամասնությունները զրկվեն այնտեղ վերադառնալու հնարավորությունից³⁸³:

Փաստորեն, ողջ մնացածները տարագրվելով դառնում են *հայրենագուրկ*, իսկ հայրենիք վերադառնալու գաղափարը դառնում է համազգային մտածելակերպի առանցքը³⁸⁴:

Դատապարտելով Օսմանյան պետության վարած քաղաքականությունը՝ Քեմալն իր ելույթներում և արտասանած ճառերում բազմիցս շեշտել է, որ Թուրքիայի Հանրապետությունը չի կարող և չի ցանկանում որդեգրել այն, մինչդեռ Ջմյուռնիայի հայերի և հույների համակարգված բնաջնջումն ապացույցն է այն բանի, որ Թուրքիայի Հանրապետության ապագա հիմնադիրն իր գործունեության հենց սկզբից քրիստոնյաների նկատմամբ շարունակել է վարել միևնույն ցեղասպան քաղաքականությունը. «Մեր ազգն ապացուցել է իր վճռականությունը՝ վրեժխնդիր լինելով նրանցից, ովքեր նախկինում կեղեքել և բռնացել են իրենց: Երբ ես խոսում եմ վրեժի մասին, թող ինձ չհասկանան այնպես, թե իբր մենք պատրաստվում ենք հարձակվել այլ ժողովուրդների վրա, ինչպես դա եղել է նախկին Օսմանյան պետության տարիներին: Մեր վրեժն ուղղված է մեր հարստահարիչների ճնշման դեմ: Քանի դեռ նրանք չեն հրաժարվի հարստահարման ձգտումից, մեր ներսում ապրելու է վրեժխնդրության զգացումը»³⁸⁵:

Ջմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման ծրագիրը մշակելիս հանցագործ պետությունը, նկատի ունենալով հնա-

³⁸³ Նույն տեղում, 194:

³⁸⁴ Հակոբյան, Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, 46:

³⁸⁵ Мустафа Кемаль Ататюрк, *Избранные речи и выступления* (Москва: Прогресс, 1966), 265.

րավոր պատասխանատվության հարցը, հետևողականորեն քողարկել է կատարված հանցագործությունը՝ մեղքը բարդելով զոհի վրա: Հանցագործ պետության համարձակ քայլերին վստահություն էր հաղորդել մեծ տերությունների քաղաքական աջակցությունը՝ գիտակցված անտարբերության ու թողտվության եղանակով: Ավելին՝ իրավախախտ պետության վրա ներգործելու, քաղաքական կամ նյութական պատասխանատվության ենթարկելու հարցն անգամ չի քննարկվում: Ընդունվում են հանցագործությունը դատապարտող բանաձևեր, որոնք բնականաբար չեն կարող պատժամիջոց համարվել և ունեն սուկ բարոյական ներգործության³⁸⁶:

Այսպիսով, 1922 թ. սեպտեմբերին Ջմյունիայի հայերի և հույների նպատակադրված բնաջնջումը պետք է դիտարկել որպես Հայոց ցեղասպանության քաղաքականության պարբերական շարունակություն, ինչը լիովին համապատասխանում է Ցեղասպանության կոնվենցիայի դրույթներին:

Էրդողանը, միևնույն տրամաբանությամբ, թեև քննադատում, սակայն շարունակում է Քեմալի «վճռական վրեժխնդրության» քաղաքականությունը. զոհին բնաջնջելու հրամայականը նույնն է. փոխվել է միայն զոհին առաջադրված մեղադրանքը՝ «հարստահարիչը» փոխակերպվել է «ահաբեկիչով»:

³⁸⁶ 1998 թ. Հունաստանի խորհրդարանը «Փոքրասիական աղետը» որակել է ցեղասպանություն, իսկ սեպտեմբերի 14-ը հռչակել Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, որին 2002 թ. միացել են Նյու Ջերսին և Նյու Յորքը: Ծագումով իուլանդացի Ջեյմս Է. Մակգրիվին սեպտեմբերի 8-ը հայտարարել է Ջմյունիայի կործանման և Պոնտոսի ու Փոքր Ասիայի հույն ժողովրդի ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Ամերիկացի հայտնի քաղաքական գործիչ Ջորջ Պատակին հոկտեմբերի 6-ը հայտարարել է Ջմյունիայի իրկիզման և Փոքր Ասիայի հույների հալածանքի հիշատակման օր: Տե՛ս <http://www.trapezounta.com>, դիտվել է՝ 14.09.2023:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայոց ցեղասպանության պարբերական շարունակման նորագույն դրսևորումներն Արցախում

2022 թ. դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը շրջափակել էր Արցախի Հանրապետությունն աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Բերձորի միջանցքը՝ ստեղծելով մարդասիրական ճգնաժամ և ոտնահարելով Արցախի 120 000 հայ բնակչության հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Յեղասպանության կոնվենցիայի համաձայն՝ ցեղասպանությունն իրագործվում է թիրախավորված խմբի ուղղակի սպանության, ինչպես նաև *խմբի համար դիտարկորյալ կերպով այնպիսի կենսապայմանների ստեղծմամբ, որոնք կարող են հանգեցնել նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը*³⁸⁷:

Յեղասպանություն իրագործելու ուղիներից մեկը *թիրախավորված խմբին հյուծելու միջոցով ցեղասպանելն է*: Հելեն Ֆայնի դիտարկմամբ՝ հյուծման միջոցով ցեղասպանությունը տեղի է ունենում, երբ խումբը զրկվում է քաղաքական, քաղաքացիական, տնտեսական և մարդու իրավունքներից: Դա հանգեցնում է առողջությունը պահպանելու համար անհրաժեշտ պայմաններից զրկվելուն՝ տվյալ խմբում զանգվածային մահերի պատճառ դառնալով: Հյուծելու միջոցով ցեղասպանությունը խմբի ոչնչացման դանդաղ գործընթաց է: Պետական կանխամտածված քաղաքականության և գործելակերպի պատճառով թիրախավորված խմբի անդամները զրկվում են

³⁸⁷ Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

մարդու տարրական իրավունքներից, ինչը հանգեցնում է խմբի անդամների դանդաղ մահվանը, ապա՝ ամբողջ խմբի ոչնչացմանը: Խմբին սննդից, դեղորայքից ու ջեռուցումից դիտավորյալ կերպով զրկելը՝ որպես նրա դեմ խտրականության դրսևորում, ցեղասպանական գործողություն է, որն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբին ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու նպատակ ունի³⁸⁸:

Պատապարտելով Արցախի շրջափակումը

Ցեղասպանագետների միջազգային ընկերակցությունը **2023 թ. հունվարի 30-ին** ընդունել էր հայտարարություն՝ դատապարտելով Արցախի շրջափակումը: Ընկերակցության գործադիր և խորհրդատվական խորհուրդները խստորեն դատապարտում են Արցախի շրջափակումը և տարածաշրջանի բնիկ հայ բնակչության դեմ Ադրբեջանի շարունակվող ագրեսիան ու նախազգուշացնում հայ բնակչության ցեղասպանության վտանգի մասին: Վերահաստատելով Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության գործադիր խորհրդի՝ **2022 թ. հոկտեմբերի 24-ի** «Հայաստանի Հանրապետության և Հարավային Կովկասի բնիկ հայերի դեմ ադրբեջանական ագրեսիայի մասին»³⁸⁹ հայտարարությունը, այնուհետև կոչ էր արվում անհապաղ վերացնել շրջափակումը³⁹⁰:

³⁸⁸ Էդիտա Գոյյան, *Արցախ. ցեղասպանություն հյուծելու միջոցով*, <http://www.genocide-museum.am/arm/1.19.01.23.php>, դիտվել է՝ 26.09.2023:

³⁸⁹ Տե՛ս https://genocidescholars.org/wp-content/uploads/2022/10/IAGS-EB-Statement-Armenia-Azerbaijan-Oct-2022_update.pdf, դիտվել է՝ 26.09.2023:

³⁹⁰ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության գործադիր և խորհրդատվական խորհուրդների՝ Արցախի ադրբեջանական շրջափակումը դատապարտող հայտարարության ամբողջական տեքստը տե՛ս <https://genocidescholars.org/wp-content/uploads/2023/02/IAGS-EB-AB-Statement-on-Azeri-Blockade-of-Artsakh.pdf>, դիտվել է՝ 26.09.2023:

2023 թ. օգոստոսի 1-ին «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը՝ ԵՊՀ Ցեղասպանության և այլ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման և կրթության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի և Արցախի Հանրապետության մի շարք հասարական կազմակերպությունների հետ համատեղ, դիմում է ներկայացնում Ցեղասպանությունների կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդական Ալիս Վաիրիմու Նդերիտուին: Հատուկ խորհրդականին ներկայացվում է համապարփակ զեկույց՝ Արցախի Հանրապետության Բերձորի (Լաչինի) միջանցքի ապօրինի շրջափակման հետևանքով Արցախում կատարվող միջազգային հանցագործությունների մասին: Զեկույցում մատնանշված էին մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի զանգվածային, լուրջ իրավախախտումները՝ պայմանավորված թիրախավորված խմբի էթնիկ պատկանելությամբ: Հիմնավորված էր, որ Բերձորի միջանցքի շրջափակումն առաջին իսկ օրից մարդկության դեմ ուղղված միջազգային հանցագործություն էր, որը *2023 թ. հունիսի 15-ից վերաճել էր ցեղասպանության*: Զեկույցում ներկայացված էին փաստեր, որ Ադրբեջանի ցեղասպանական մտադրությունը, որը բազմիցս ուղղակիորեն արտահայտել էր ադրբեջանական քաղաքական վերնախավը, Արցախի էթնիկ հայերի՝ որպես այդպիսին, բնաջնջումն է: Ցեղասպանության հանցագործությունը Արցախում դրսևորվում էր էթնիկ հայերի նկատմամբ խտրական գործելակերպով՝ հայատյացության պետական ցեղասպան քաղաքականության համատեքստում³⁹¹:

³⁹¹ Տե՛ս <http://www.genocide-museum.am/arm/01.8.23.php>, դիտվել է՝ 26.09.2023:

Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոն 2023 թ. օգոստոսի 7-ի զեկույցում Արցախի Հանրապետության էթնիկ հայերի դեմ Ադրբեջանի գործողությունները որակել է ցեղասպանություն՝ շրջափակման քողի ներքո՝ վկայակոչելով Յեղասպանության կոնվենցիայի երկրորդ հոդվածի գ կետը³⁹²: Օկամպոյի զեկույցում կարդում ենք. «[...] Չկան դիակիզարաններ կամ մաչետներով հարձակումներ: Սովը ցեղասպանության անտեսանելի զենքն է: Առանց անմիջական կտրուկ փոփոխությունների՝ հայերի այս խումբը մի քանի շաբաթից կկործանվի: Շատ առումներով Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերի սովամահությունը ցեղասպանության արխետիպն է՝ կյանքի այնպիսի պայմանների պարտադրումը, որոնք կանխամտածված հանգեցնում են խմբի ոչնչացմանը»³⁹³:

2023 թ. օգոստոսի 23-ին ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի նախկին հատուկ խորհրդական, մարդու իրավունքների պրոֆեսոր, իրավաբանների միջազգային հանձնաժողովի հանձնակատար, ՄԱԿ-ի խոշտանգումների գծով նախկին հատուկ զեկուցող Խուան Մենդեզն Արցախում տիրող իրավիճակի և ծանրագույն ոճրագործությունների կանխարգելմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության վերաբերյալ նախնական կարծիք էր ներկայացրել. «Ստեղծված հանգամանքներում,– նշել է նա,– կարծում եմ՝ վերոշարադրյալ փաստերը բավարար հիմք են միջազգային հանրությանը նախազգուշա-

³⁹² Չեկույցի ամբողջական տեքստը տե՛ս https://luismorenoocampo.com/lmo_en-report-armenia/, դիտվել է՝ 26.09.2023:

³⁹³ Նույն տեղում:

ցում տալու առ այն, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը սպառնում է [ցեղասպանական վտանգ]՝ «լուրջ մարմնական կամ հոգեկան վնասի պատճառում խմբի անդամներին» (Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի բ պարբերություն): Ցեղասպանության կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվել են կանխելու հանցագործությունը, և միջազգային հանրությունը պետք է իրականացնի այս [Արցախի] բնակչությանը պաշտպանելու իր պարտականությունները»³⁹⁴:

2023 թ. սեպտեմբերի 5-ին Լեմկինի ինստիտուտը հրապարակում է 126 էջանոց զեկույց՝ “Risk Factors and Indicators of the Crime of Genocide in the Republic of Artsakh: Applying the UN Framework of Analysis for Atrocity Crimes to the Nagorno-Karabakh Conflict” [Արցախի Հանրապետությունում ցեղասպանության հանցագործության ռիսկի գործոնները և ցուցիչները. ոճրագործությունների վերլուծության ՄԱԿ-ի մեխանիզմի կիրառումը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում] վերնագրով:

Ձեկույցը փաստում է Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևի հրապարակային սպառնալիքները՝ «մաքրելու Լեռնային Ղարաբաղի (Արցախի) տարածքը արցախահայերից»: Այդ ելույթները, շրջափակումը, 2020 թ. նոյեմբերի հրադադարի խախտումները, ինչպես նաև հայկական մշակութային ժառանգության ոչնչացումն Արցախի՝ Ադրբեջանի բռնազավթած տարածքներում ցեղասպանություն իրականացնելու հատուկ

³⁹⁴ Ձեկույցի ամբողջական տեքստը տե՛ս https://un.mfa.am/file_manager/un_mission/Preliminary%20Opinion%20-%2023.08.2023.pdf?fbclid=IwAR0ydh2YB6zd-2brS1mQRwUSuCleSZDqODmB3Js3P5aDfyw, դիտվել է՝ 27.09.2023:

մտադրության ազդանշաններ էին: Հաշվի առնելով Ալիևի վարչակարգում և ադրբեջանական պետական ինստիտուտներում հայատյացության արմատավորված խոր հիմքերը և դրսևորումները՝ զեկույցում Ադրբեջանը որակվում է ցեղասպան պետություն, և ապացույցներ են ներկայացվում այն մասին, որ մոտ ապագայում Ալիևը կարող է ռազմական հարձակում նախաձեռնել Արցախի վրա, ինչը կհանգեցնի ցեղասպանության: Ձեկույցում ներկայացված էր 12 առաջարկ. կարևորվում էր հատկապես Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք՝ փաստելով, որ հայերը չեն կարող ապրել Ադրբեջանի իշխանության ներքո³⁹⁵:

Վերոբերյալ զեկույցներն ու հայտարարությունները ո՛չ դադարեցրին 2022 թ. դեկտեմբերի 12-ից սկսված Արցախի 9-ամսյա ամբողջական շրջափակումը, ո՛չ էլ կանխեցին 2023 թ. սեպտեմբերի 19-ին Արցախի դեմ ծավալված ռազմական գործողությունն ու Արցախի հայ բնակչության բռնի տեղահանությունը:

³⁹⁵ Ձեկույցի ամբողջական տեքստը տե՛ս https://www.lemkininstitute.com/_files/ugd/9bc553_ceb61de5918f4670bec931b3a79d1baa.pdf , դիտվել է՝ 27.09.2023:

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՋՈՐՋ ՀՈՐԹՈՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ

*Ամերիկայի գլխավոր հյուպատոսություն
27 սեպտեմբերի 1922, Աթենք (Հունաստան)*

Պատիվ ունեմ պաշտոնական հաղորդագրություն ներկայացնելու դեպարտամենտին Մերձավոր Արևելքում ընթացող իրադարձությունների մասին, ինչպես նաև համառոտ քննախոսություն այն դեպքերի և դրանց պատճառների վերաբերյալ, որոնք հանգեցրին Ջմյունիայում տեղի ունեցած սարսափելի ողբերգությանը:

Պատիվ ունեմ դեպարտամենտի ուշադրությունը հրավիրելու այն փաստի վրա, որ Ջմյունիայում հույների հաստատվելուց անմիջապես հետո ես հեռագրեցի, որ սա կարող է լինել երկրորդ «սիրակուզյան էքսպեդիցիան»՝ նկատի ունենալով Բ. ա. 413 թ. հույների դեմ Սիրակուզայի պատերազմը, որի հետևանքով Աթենքի գանձարանը լիովին դատարկվեց, իսկ Աթենքը կորցրեց հին աշխարհում իր առաջատարությունը:

Մեկ այլ զեկուցման մեջ, որի տարեթիվը չեմ կարող նշել, քանի որ արխիվները Ջմյունիայում են, կանխատեսել էի, որ Փոքր Ասիայից հունական բանակի նահանջին կհաջորդի քրիստոնյա ամբողջ բնակչության նահանջը, և նշել էի, որ նրանք, ովքեր չէին կարող այս ամենը կանխատեսել, ծանոթ չէին Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակին և բնակչության մտածելակերպին: Այս փաստաթղթի պատճենն ուղարկ-

վեց Կոստանդնուպոլիս, և հիշում եմ, որ ինձ բացատրություն ուղարկեցին, որ թուրքական նոր կառավարություն կստեղծվի, որը բարյացակամ կլինի:

Որոշ շրջանակներում, իհարկե, Ջմյունիայում թուրքերի դաժան և կատաղի վարքը կբացատրվի հունական բանակի նահանջից հետո քաղաքի ավերածությունների հետևանքով թուրքերի շրջանում առաջացած կատաղությամբ: Ես Մերձավոր Արևելքում հյուպատոսական ծառայության եմ եղել շուրջ 30 տարի, և որոշ բաներ կան, որոնք բոլոր այն մարդիկ, որ երկարաժամկետ բնակություն են հաստատել այս երկրում, բացահայտ գիտեն: 1915 թ. հայերի դաժան և սոսկալի ջարդի մասին դեպարտամենտին ուղղված զեկույցը ներկայացրել էի Ջմյունիայի ամերիկացի ականատեսների, ամերիկյան ընկերությունների ներկայացուցիչների տրամադրած լիարժեք հաղորդագրությունների հիման վրա: Չեմ հասկանում՝ ինչպես կարող է որևէ մեկը դեռևս հավատալ քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքերի բարի մտադրություններին: Մոտ մեկ և քառորդ միլիոն հայ կործանվեց սարսափելի դաժան հանգամանքներում՝ ենթարկվելով դանդաղ մահվան տառապանքներին: Այդ ժամանակից ի վեր քրիստոնյա բնակչության մեթոդական բնաջնջումը հաստատուն կերպով շարունակվել է: Քրիստոնյա բնակչության մեջ վախն այնպես է արմատացած, որ Ջմյունիայի ոչ մահմեդական բնակչությունը կփախչեր թուրքերի վերադարձի մասին առաջին իսկ հայտարարությունից: Սա այնքան ականհայտ է, որ յուրաքանչյուրը պարտավոր է այն տեսնել:

Օսմանյան պետության վերջին սուլթանն Աբդուլ Համիդն էր՝ վերջին ականավոր կառավարիչը, որ գիտեր՝ ինչ է Օսման-

յան պետությունը. Բյուզանդական կայսրության մնացորդներ՝ բաղկացած առաջադեմ տարբեր ազգերից, որոնց թուրքը վերաբերվում էր որպես պորտաբույծի և հարկեր գանձում նրանցից: Աբդուլ Համիդը գիտեր, որ այսպես կոչված Օսմանյան պետության անվտանգությունը քրիստոնյաներին տարածայնության մեջ պահելն է, որը շատ բարդ խնդիր չէր. ինչ վերաբերում է Մակեդոնիային, նա հատուկ փորձագետ էր պահում Սալոնիկում, որի պարտականությունը բուլղարներին, հույներին և սերբերին գժտեցնելն էր: Երբ նրան հեռացրին պաշտոնից, նոր թուրք եկավ իշխանության, և ինչպես իմ զեկույցներն ու այդ ժամանակաշրջանի իմ բոլոր գործընկերները կվկայեն, նրանք սկսեցին առանց որևէ խտրության հետապնդել և հալածել բուլղարներին, հույներին և սերբերին. համընդհանուր ահ ու սարսափ տիրեց: Բանտերը հեղեղվեցին բանտարկյալներով, և Սալոնիկը լցվեց կանանցով, որոնք բողոքում էին, թե իրենց ամուսինները սպանվել կամ հափշտակվել են: Համընդհանուր կոտորած տեղի չունեցավ, սակայն պատահական սպանությունները գրեթե հավասարազոր էին ջարդի, բացի այդ՝ գազանաբարո կտտանքները գերիշխում էին ամբողջ Մակեդոնիայում: Իրավիճակն այնքան անտանելի դարձավ, որ հույները, բուլղարները և սերբերը ստիպված էին բավականին երկարատև ժամանակով միավորվել, որպեսզի դուրս մղեն թուրքերին, ինչը կարող էին անել շատ տարիներ առաջ, եթե չլինեին վերոնշյալ տարածայնությունները: Ճիշտ է, նրանք սկսեցին միմյանց կոկորդ կրծել հենց որ իրենց խնդիրը լուծվեց, սակայն նրանք այնքան միասնական մնացին, որքան որ պահանջվեց:

Աբդուլհամիդյան վարչակարգի անկումից հետո թուրքերն առաջնորդվում էին «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսով: Բացառությամբ ռազմական արվեստի՝ նրանք առաջադեմ չէին ոչ մի ոլորտում. անկարող էին առևտրում, արտադրության, հայտնագործություններ կատարելու մեջ, ժամանակակից արդյունաբերության բնագավառում. նրանք նախանձում էին քրիստոնյաներին, որոնց վերաբերվում էին որպես իրենց հաշվին բարգավաճողների: Ես լսել էի Սալոնիկում թուրք քաղաքական գործիչների ելույթները, որոնցում նրանք հաստատում էին, որ եթե քրիստոնյաները բնաջնջվեին կամ վտարվեին, թուրքերն անհրաժեշտաբար կզարգացնեին և կկատարելագործեին դպրոցները, առևտուրը և արդյունաբերությունը: Դրանց հաջորդեցին մեծ ջարդը, կոտորածները:

Փոքր Ասիայում հույների հաստատվելը, փաստորեն, Վենիզելոսի մեծագույն սխալն էր: Չնայած դաշնակից երկրների ներկայացուցիչների՝ Չմյունխիա գնալու խնդրանքին՝ նա չպետք է այդպես վարվեր՝ առանց աջակցության մասին գրավոր փաստաթղթի: Դրան հաջորդած սարսափելի աղետից խուսափելու համար, որը գրգռում էր մահմեդական աշխարհի մոլեռանդությունն ու հանդգնությունը՝ Ֆրանսիային և Իտալիային ներքաշելով աննկարագրելի վտանգի մեջ, միայն երկու ծրագիր էր հնարավոր իրագործել.

1. երբեք չուղարկել հույներին Փոքր Ասիա,
2. ուղարկելով նրանց այնտեղ՝ աջակցել անձնվիրաբար:

Դաշնակիցների միջև անմիջապես տարաձայնություն սկսվեց, ինչպես որ միշտ եղել է քրիստոնյա ժողովուրդների ամբողջ պատմության մեջ: Իտալիան նավահանգիստ հիմնեց

Նոր Եփեսոսում (թեև դա խոստացել էին Չմյուռնիային), որպեսզի հնարավորության դեպքում առևտուրը դուրս հանի, սկսեց զենք վաճառել Թուրքիային և քծնել նրան: Ֆրանսիացիները Փոքր Ասիայում Մեծ Բրիտանիայի իշխանությունը թուլացնելու նպատակով թուրքերի հանդեպ այնպիսի դիրք գրավեցին, որի հետևանքով ի վերջո կնքվեց Անգորայի դաշինքը, իսկ ֆրանսիացիները ճանաչեցին կառավարությունը: Նախկինում երբեք նմանօրինակ հայրենասիրություն չի նկատվել անիրազեկ և քոչվոր մի ժողովրդի՝ թուրքերի մոտ, սակայն հույների մուտքը Մուսթաֆա Քեմալի համար թուրքերին միավորելու և բանակ ստեղծելու ցանկալի առիթ էր: Նա չէր կարող հայրենասիրական իր կոչերով մահմեդական գյուղացուն ստիպել թողնել իր վարելահողը, ուղտերին կամ այծերի հոտը: Մինչդեռ ատելի հույներին դուրս քշելու, նրանց հարուստ քաղաքները թալանելու և կանանց առևանգելու մոլեռանդ կոչին պատրաստակամորեն արձագանքեցին: Կոստանդնուպոլսի անկումից հետո մահմեդական ամբողջ աշխարհում այնպիսի լեզենդ էր տարածվել, թե իբր թուրքն այն մահմեդական ազգն է, որ կարող է ստիպել եվրոպացուն սարսռալ: Քրիստոնյա ժողովուրդների՝ թուրքերին սիրաշահելու ու քծնելու փաստը կրկին վերածնեց այս հին լեզենդը Հնդկաստանում, Եգիպտոսում և ընդհանուր առմամբ մահմեդականների մեջ առհասարակ:

Հույները Փոքր Ասիայում միակ քաղաքակիրթ և բարերար ազգն էին պատմական զարգացման այդ շրջանում: Այդ ամբողջ ժամանակահատվածում սերտ կապի մեջ եմ եղել պարոն Սթերդիադիսի հետ, շատ եմ ճանապարհորդել, խոսել եմ բնիկ ամերիկացիների հետ և հետևաբար բացարձակ

իրազեկ եմ, թե ինչի մասին եմ խոսում: Հույներն ավելի դաժանորեն են պատժվել թուրքերի դեմ իրագործած ագրեսիայի համար, քան թուրքերը՝ հույների: Ավազակությունը, փաստորեն, ճնշվեց, անվտանգությունն ընդհանուր առմամբ վերականգնվեց, և որքան հունական կառավարության միջոցներն էին թույլ տալիս, պարոն Սթերդիադիսը աջակցեց և ստեղծեց քաղաքակիրթ հաստատություններ, նպաստեց գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացմանը: Հույն գյուղացիները, որոնց մի քանի տարի առաջ վտարել էին իրենց տներից և ոչնչացրել գյուղերը, մեծ մասամբ վերադարձել էին ու վերստին սկսել սուլթանական հայտնի խաղողի, ծխախոտի և գյուղատնտեսական այլ ապրանքների մշակումը: Պետական դեպարտամենտին ուղարկելու եմ ամերիկյան կրթական հաստատությունների համար իրականացված տարբեր բարեգործությունների ցանկը՝ թուրքերի ցուցաբերած հակառակ վերաբերմունքի մեկ այլ ցանկի հետ մեկտեղ: Այդ հաստատությունները ընդմիջտ կորան Չմյուռնիայում և նրա մերձակայքում: Շուրջ 30 տարի գործող դոկտոր Մաքլեքլանի գյուղատնտեսական դպրոցի ու քոլեջի թանկարժեք շենքերը, որոնք կառուցվել էին ամերիկյան միջոցներով, այլևս գոյատևելու պատճառ չունեին: Այդ հոյակապ հաստատությունների գործունեությունն ավարտվեց այն ժամանակ, երբ թուրք զինվորները դոկտոր Մաքլեքլանի նկատմամբ բռնություն գործադրեցին, սակայն վերջինս հրաշքով փրկվեց: Այն հույները և հայերը, որոնք մեծապես աջակցում էին նրան, հեռացան չվերադառնալու ակնկալիքով:

Պրոֆեսորներից մեկի կինը՝ տիկին Քալդվելը, երեկ ինձ ասաց, որ նրանց թուրք ուսանողները, որ համարվում էին

հիանալի երիտասարդներ՝ լավ բնավորությամբ, Չմյունիա ժամանելուն պես դեն նետեցին իրենց ամբողջ քաղաքակրթությունը և դարձան վայրենիներ: Մերձավոր Արևելքի ամենասքանչելի հաստատություններից մեկը՝ Աղջիկների դպրոցը, և ևս երկուսը, որոնք գործում էին թուրքերի շրջանում, և որոնց մեծապես աջակցում էր դոկտոր Սթերդիադիսը, անհուսալիորեն կորած են: Անկասկած, մոտ ապագայում Չմյունիայում թգենիներ կաճեցնեն, հնարավոր է՝ վերականգնվեն ծխախոտագործությունը և չամիչի արտադրությունը, սակայն ողջ քաղաքն ավերված է, գործունյա աշխատավորներն այլևս չկան, իսկ առաջադիմական ոլորտների մեծածավալ զարգացում հավանաբար երբեք չի լինի:

Չմյունիայի հույները բազում խնդիրներ ունեին.

1. տեղի բնակչության անտարբերությունը, որ չէր աջակցում իրենց, ինչպես հարկն է,
2. թուրքերի հետ իսկապես հաշտվելու անհնարինությունը,
3. լանտաբրիտանացի, ֆրանսիացի և այլ խոշոր առևտրականներ, որոնք հարստություն էին դիզել թուրքական կապիտուլյացիաների պայմաններում, գիտեին, որ անհնար է շահագործել հույներին,
4. հույների նկատմամբ կաթոլիկ տարրի թշնամությունն այնքան սաստիկ էր, որքան Բյուզանդական կայսրության ժամանակաշրջանում:

Հույներն անբարենպաստ դրության մեջ էին հայտնվել իրենց կործանարար և կաշառվող քաղաքականության հետևանքով: Այն գումարը, որը շրջանառվում էր քաղաքականության մեջ Հունաստանում, և այնքան հեռու, որ հույն քա-

ղաքական գործիչը կգնար՝ զոհաբերելով նույնիսկ իր երկիրը և մարդկային շատ կյանքեր, որպեսզի պահպաներ իր կուսակցության իշխանությունը մի քանի շաբաթ, անհնար է պատկերացնել: Եվրոպայում և Ամերիկայում Հունաստանի ականավոր փաստաբան Վենիզելուսի պաշտոնազրկումը և հեղինակազուրկ թագավորի վերադարձը նոր սկիզբ էր: Քաղաքականությունն այնպես է գործում, որ նույնիսկ այժմ Հունաստանի այս հսկայական ողբերգության առկայությամբ այն մատնված չէ մոռացության, և միապետականների կուսակցությունը նույնիսկ թույլ չի տա վենիզելուսականներին բաշխել այն գումարը, որը նրանք ստանում են Եվրոպայից կամ հիմնել անվճար ճաշարաններ:

Ելնելով Ջմյունիայում կատարած իմ զննումից և այն տեղեկություններից, որ ստացել եմ զանազան սկզբնաղբյուրներից, համոզված եմ, որ այն սարսափելի դժբախտությունը, որ պատահեց Փոքր Ասիայի բնակիչների հետ, արհամարհանքի արժանի քաղաքական շարժման հետևանք էր: Իշխող կուսակցությունը կարծում էր, որ նրանք չէին կարողանա ստանալ Եվրոպայի օգնությունը՝ առանց Կոնստանդինին պաշտոնանկ անելու և Վենիզելուսին հետ բերելու: Առանց այդ օգնության՝ նրանք չէին կարող մնալ Ջմյունիայում և չէին կարող հայտարարել, որ պատրաստակամ են ետ կանչելու բանակը Ջմյունիայից, հետևաբար խուճապային փախուստ հրահրեցին, որին աշխարհն ականատես եղավ: Շարունակվում էր վենիզելուսական սպաներին պաշտոնանկ անելու և նրանց վստահելի միապետականներով փոխարինելու կայուն գործընթացը. շատերը դասալքում էին՝ ամբողջ զորագնդեր առանց սպաների թողնելով: Հավաստի սկզբնաղբյուրներից

տեղեկացել են, որ հունական բանակը նույնիսկ վերջին պահին կարող էր դիմադրություն ցույց տալ և փրկել դրությունը, քանի որ Ջմյունիա մտած թուրքական զինված ուժերը փորձաթիվ էին: Բայց նույնիսկ այն հույն սպաները, որ ցանկանում էին դիմադրել և արտահայտում էին իրենց պատրաստակամությունը, հեռացվում էին ծառայությունից: Այս ցավալի ողբերգությունը, մարդկային ամենադառը տառապանքները պետք է համընդհանուր զգվանք և հուսահատություն առաջացնեն հույների, թուրքերի և Եվրոպայի նկատմամբ: Մուսթաֆա Քեմալը հնարավորություն ուներ խաղաղ մտնելով Ջմյունիա պաշտպանություն տալ բոլոր բնակիչներին: Փոխարենը նողկալի կոտորած իրականացվեց, որը թեև արդեն նկարագրել են, բայց կրկին դրան կանդրադառնամ: Մեծածավալ կողոպուտ և ավարառություն, բռնաբարություն և կոտորած իրականացվեց թուրքերի՝ քաղաք մտնելուց անմիջապես հետո. նրանց վրեժխնդրությունն առաջինը թափվեց հայ բնակչության վրա, որ մեղադրվում էին նոնակներ նետելու մեջ: Ճշմարտությունն այն է, որ շատ քիչ նոնակներ են նետվել. ամենաշատը մեկ դյուժին և այն էլ քաղաքի այն հատվածներում, որտեղ հազվադեպ կարելի էր հայի տեսնել: Սա չէր կարող պատճառ դառնալ, որ օրուգիշեր՝ երեք օր շարունակ, զինվորական կանոնավոր ջոկատները որսային հայերին և սպանեին փողոցներում՝ ամենանողկալի միջոցներով՝ դաշունահարությամբ, մահացու հարվածներով կամ հրապարակավ կոկորդները կտրելով: Հայերին կանոնավոր կերպով հետապնդում էին ամբողջ քաղաքում, թալանում էին տները և սպանում նրանց:

Ոչ մի թուրքամետ քարոզչություն չի կարող քողարկել այն, ինչ կատարվեց Ջմյունիայում: Չափազանց շատ են

վստահելի ականատեսները. ճշմարտությունն անկասկած կբացահայտվի: Մեծ հրդեհից հետո քրիստոնյա բնակչությունը ստիպված էր քաշվել դեպի նավամատույց, որտեղ օրեր շարունակ մնալով՝ օգնություն էր խնդրում նավահանգստի գծանավերի անձնակազմից, մահանում քաղցից և ծարավից. թուրքերի վարքը նողկալի էր: Չմյուռնիայում Աղջիկների դպրոցի տնօրեն օրիորդ Էմիլի Մակկալամը, որ առավոտյան քաղաք վերադարձավ, պատմում է, որ այս խեղճ արարածների մի հոծ բազմություն դեռ սփռված է ամբողջ նավամատույցում և ծովափին, մահանում է ջրի, սննդի բացակայությունից, իսկ մահացածների մարմինների գարշահոտությունը սարսափելի է: Երկու հազար մարդ իր մեկնումին է սպասում նավամատույցում: Հայտարարվեց, որ 18-ից 45 տարեկան բոլոր տղամարդիկ պետք է գերեվարվեն և որպես ռազմագերիներ՝ շարժվեն դեպի քաղաք, և նա ականատես է եղել, թե ինչպես է տղամարդկանց մի ստվար բազմություն շարժվում թուրքական գվարդիայի ղեկավարությամբ: Այդ փաստը հաստատել են նաև ուրիշները: Աշխարհի սիրտը կարծրացել է եվրոպական պատերազմից, բայց դեռ կան մարդիկ, որ կարող են ցավ զգալ իրենց սիրելիներից՝ հայրերից, եղբայրներից և բարեկամներից բռնի բաժանման համար: Նա, ով երբևէ ապրել է Արևելքում, գիտի, որ այս մարդկանց ճակատագիրը, անկասկած, մահն է: Հունական պատերազմի ընթացքում, երբ ես Չմյուռնիայում էի, Օսմանյան պետության հույն հպատակներին հարկադրեցին զինվորական ծառայության անցնել, կարգադրեցին խրամատներ փորել և այլ աշխատանքներ կատարել անձրևի տակ: Նրանք ո՛չ վերմակ ունեին, ո՛չ վրան, ո՛չ սնունդ, հետևաբար չորսից երեքը մահանում էր: Ընտա-

նիքներ կքայքայվեն, կանայք, քույրեր ու երեխաներ անպաշտպան կմնան և կտառապեն:

Ըստ շատերի տեսության՝ ոչ մի օժանդակություն չպետք է տրվի Հունաստանին, և երկրում հանգրվանած բոլոր փախստականների կերակրման գլխավոր խնդիրը պետք է լուծի պետությունը, քանզի նա է պատասխանատու զանգվածային խուճապային փախուստի համար, բայց Հունաստանի պաշարը սպառված է, և նա անկարող է լուծել նման խնդիր, և ես չգիտեմ, թե ինչու պետք է անմեղ երրորդ կողմը տառապի այլոց մեղքի պատճառով:

Ցանկանում եմ կրկնել, որ Աբդուլ Համիդի իշխանության անկումից հետո թուրքերի հետևողական քաղաքականությունը եղել է քրիստոնյա ժողովուրդների արտաքսումը, կոտորածը և ոչնչացումը: Ես մի քանի հաջող կանխատեսում եմ արել և հիմա ևս կանեմ: Եթե քեմալական զորքերին թույլ տրվի մտնել Կոստանդնուպոլիս, այն սարսափելի տեսարանը, որին ականատես եղանք Ջմյուռնիայում, կկրկնվի այս քաղաքում: Նկատի առնելով այն ամենը, ինչ ասել եմ, և ինչ որ պատահել է, պատճառ չեմ տեսնում, թե թուրքն ինչու պետք է կոտորի հայերին և հույներին Պոնտոսում, Հայաստանում և Փոքր Ասիայում, իսկ Կոստանդնուպոլսում նրանց համար ապահովի բարյացակամ և բարերար վարչակարգ:

Ցանկանում եմ մատնանշել հույների և թուրքերի միջև եղած տարբերությունը: Հույները, անկասկած, կոտորել են թուրքերին, բայց ոչ մի ազգ աշխարհում զանգվածային ջարդերի այդքան հաստատուն պատմություն չի ունեցել, որքան թուրքը: Հունական քաղաքականությունը կաշառվող է և արատավոր, բայց հույնն ի վիճակի է քաղաքակրթություն

կերտել. հիվանդանոցներ է կառուցում, համալսարաններ հիմնում, շոգենավային ուղեգծեր ստեղծում, զարկ տալիս ժամանակակից գյուղատնտեսությանը, և եթե նրան ազատություն է տրվում, զարգանում է: Ես տեսնում եմ մի քանի տարի շարունակ երկրին տիրած և այժմ նահանջած, առանց սպաների, մոլեգին և մատնված բանակի անկարգությունների և հաղթանակած թուրքական բանակի վարքի միջև տարբերությունը. իր տիրապետության տակ գտնվող անօգնական մարդկանց պաշտպանելու փոխարեն բռնացավ և կոտորեց նրանց: Նա, ով չի ապրել Մերձավոր Արևելքում, չի կարող հասկանալ *առաջընթացը*, որ թուրքինն է: Նա, ով չի ճանապարհորդել թուրքական գյուղերով կամ կայսրության շրջաններով, չի կարող հասկանալ անօգնական, անառաջընթաց մի ժողովրդի, որ, գրեթե հինգ հարյուր տարի ապրելով երկրի մակերևույթի ամենահարուստ մասում, երբեք կարի մեքենա կամ գութան, գծանավ կամ շոգեմեքենա, բամբակզուիչ մեքենա, գնդասեղ կամ լուցկի չի գործածել: Նա, ով առաջընթացի հույս ունի Թուրքիայի համար, ապրում է՝ հուսալով, թե «կարմիր կովը երբևէ կփոխի իր կաշին»: Մահմեդական կրոնն այժմ մեծ վերածնունդ է ապրում ամբողջ աշխարհում բազմամուսուլմանը, իր վերաբերմունքով կանանց և ոչ մահմեդական բոլոր ժողովուրդների նկատմամբ, իսկ Մուհամմեդի օրինակն ու ուսմունքը, ի հակադրություն Քրիստոսի կյանքի և ուսմունքի, ամենամութ գործող ուժերից են աշխարհում և այժմ միավորվում են՝ կործանելու ժամանակակից քաղաքակրթությունը: Քրիստոնյա առաջադեմ ժողովուրդների բնաջնջումն ու կոտորածը և նրանց փոխարինումը մահմեդականներով աշխարհի զարգացման մեջ այդ շրջաններում անկում է դեպի Աբրահամի ժամանակաշրջան:

Պատիվ ունեմ նաև դեպարտամենտի ուշադրությունը հրավիրելու այն փաստի վրա, որ Օսմանյան պետության պատմությունն իշխանությունների իրականացրած կոտորածների պատմությունն է: Ով կարծում է, թե Մուսթաֆա Քեմալի զորքերն անկառավարելի էին դարձել Ջմյունիայում, և որ նա կարգի հրավիրեց, երբ կարողացավ, ոչինչ չգիտի Թուրքիայի պատմության և Մերձավոր Արևելքում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Ես նաև վստահ եմ, որ եթե Ջմյունիայի նավահանգստում դաշնակիցները՝ ֆրանսիացիները, իտալացիները, բրիտանացիները և ամերիկացիները, հստակորեն կարգադրեին Մուսթաֆա Քեմալին, որ ոչ մի կոտորած չպետք է տեղի ունենա, նման բան չէր պատահի: Եթե նույնիսկ նրանք կարգադրեին [Մուսթաֆա] Քեմալին դադարեցնել, երկրի խորքերը տանել 18-ից 45 տարեկան տղամարդկանց, նա կդադարեցներ, բայց երբ տեսնում է իրենց գծանավերում ապահով նստած աշխարհի հզոր իշխանություններին՝ սարսափելի գործողություններին հետևելիս, քաջալերվում է և ծրագրում ավելի ու ավելի մեծ ծայրահեղությունների դիմել: Հուսով եմ այլևս երբեք չտեսնել այն կոտորածները, որոնք տեղի են ունենում աշխարհի հզոր իշխանությունների աչքի առջև՝ վերջիններիս լուռ համաձայնությամբ:

Կարծում եմ, որ երբ իրական ճշմարտությունը բացահայտվի՝ թե ինչ տեղի ունեցավ Ջմյունիայում, և ինչ է կատարվում Մերձավոր Արևելքում, բոլոր ազնիվ մարդիկ Եվրոպայում և Միացյալ Նահանգներում կզգան այն, ինչ ես եմ զգում:

26 սեպտեմբերի 1922 թ.

Վերոգրյալից հետո տեղեկացել եմ, որ Անտանտի երեք տերությունները հաղորդագրություն են ուղարկել Մուսթաֆա Քեմալին՝ հայտարարելով, որ իրենց համաձայնությամբ նրա զինված ուժերին թույլ կտրվի զավթել Կոստանդնուպոլիսը և Թրակիան: Համոզված եմ, որ այս հայտարարությունն անխուսափելիորեն խուճապ է առաջացրել Կոստանդնուպոլսի քրիստոնյաների և եվրոպացի բնակիչների շրջանում: Կոստանդնուպոլսում տեղի ունեցող իրադարձություններին դեպարտամենտն ավելի լավ է տեղեկացված, քան ես, բայց համարձակվում եմ այս հայտարարությունն ընդունել որպես անտարակուսելի փաստ: Եթե նույնիսկ միջոցներ ձեռնարկվեն դաժան կոտորածը կանխելու համար, ճիշտ կլինի, որ քրիստոնյաները հեռանան: Քեմալական զորքերի ժամանումից հետո քրիստոնյաների կյանքն անտանտելի և անապահով կլինի, իսկ ապագայում ժամանակ առ ժամանակ ջարդեր կիրականացվեն: Երկար տարիների ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ թուրքն անկարող է քրիստոնյա ժողովուրդներին ղեկավարել: Ընդհանուր առմամբ թուրքական տիրապետության ներքո բարգավաճման հնարավորություն կար, սակայն թուրքերի պատմության մեջ անհամար են կոտորածները, իսկ նոր թուրքերի քաղաքականությունը ևս միտված է քրիստոնյաների կյանքն անտանտելի դարձնելուն:

Հիմնական սկզբունքները

1. Թուրքերը ջարդերն իրագործել են գերագույն իշխանությունների կարգադրությամբ: Սա հայտնի սկզբունք է, և դրա ապացույցը պատմական տարբեր ջարդերն են: Անմասն չմնաց Զմյուռնիան, իսկ Մուսթաֆա Քեմալի այն հայտարարությունը, թե չէր կարող կարգի հրավիրել իր զորքին, կեղծ է: Զարմանալի փաստ է, որ թուրքը դեռ ի վիճակի է խաբելու եվրոպացիներին: Հավանական է, որ Ֆրանսիայի ծովակալի մեկ հստակ խոսքը՝ ուղղված թուրք հրամանատարին, վերջ կդնէր կոտորածներին և բոլոր այն սարսափներին, որ տեղի ունեցան:

2. Պետք է հիշել, որ Թուրքիայի ազգայնամոլական քաղաքականության հիմքում խարսխված է եղել քրիստոնյաների արտաքսումն ու բնաջնջումը: Նա, ով ապագայում Թուրքիայի հետ գործնական և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ցանկություն հայտնի, պետք է տեղեկանա երկրի փոփոխություններին:

3. Քեմալականությունը կառուցվել է դաշնակիցների տարածայնությունների և թուլության հետևանքով: Ֆրանսիացիներն անհավատարիմ վարքագիծ ցուցաբերեցին դաշնակիցների հանդեպ՝ նպատակ ունենալով զիջումներ ձեռք բերելու և թուլացնելու բրիտանական ազդեցությունը Մերձավոր Արևելքում: Մեծ Բրիտանիան, հաշվի առնելով լեյբորիստական ընդդիմությունը և մահմեդական անկարգությունները Հնդկաստանում, ստիպված է կուլ տալ այս դառը հաբը՝ հուսալով, որ [Մուսթաֆա] Քեմալին արված զիջումները կհանդարտեցնեն Հնդկաստանի մահմեդականներին: Սա ի սկզբանե եղել է սխալ քաղաքականություն և շարունակում է

մնալ իբրև այդպիսին: Երբ քեմալականները ներխուժեն Կոստանդնուպոլիս, Հնդկաստանի մահմեդականներն անկառավարելի կդառնան:

4. Ինչպես իր անկման ժամանակ, այնպես էլ այսօր Կոստանդնուպոլիսը Եվրոպայի արտաքին պատնեշն է ընդդեմ Ասիայի հորդանների, և հենց որ այն հանձնվի թուրքին, վերջինս հաղթական պատերազմ կսկսի Բալկանյան պետությունների դեմ: Եթե ոչ այսօր, ապա վաղը, եթե ոչ այս, ապա հաջորդ տարի Եվրոպայի խաղաղությունը մշտական վտանգի առջև կհայտնվի: Թուրքը մի ցեղ է, որին չի հետաքրքրում խաղաղության արվեստը, և որը, բացի պատերազմից և զավթումից, ոչինչ չգիտի: Նրա համար անհնար է հետ մնալ պատերազմական գործողություններից: Այն ծրագրերը, որոնք ձևավորված են իր խոստումների կամ տարբեր այլ ենթադրությունների վրա, դատապարտված են հուսախաբության, իսկ պետական գործիչներն ապագա ուրվագծերը կեղծ հիմքերի վրա են կառուցում:

Ես, դժբախտաբար, հասարակ պաշտոնյա եմ, բարձր դիրք չեմ զբաղեցնում, և իմ խոսքերը միգուցե մեծ կշիռ չունենան, բայց ես գիտեմ՝ ինչի մասին եմ խոսում, և նրանք, ովքեր կարդան այս տողերը, կապրեն և կտեսնեն, որ դրանք հավաստի են:

Ջննում

18-ից 45 տարեկան տղամարդիկ բաժանվում են կանանցից, քույրերից, մայրերից և երեխաներից. խղճուկ տեսարաններ, որ միայն Դեկուդնոսը կարող է նկարագրել: Եվ նրանք, ովքեր դանդաղ մահվան են դատապարտվել քաղցի և ան-

պաշտպանության հետևանքով, Փոքր Ասիայի խաղաղ գյուղացիներն ու Ջմյունիայի քաղաքացիներն են, որ երբեք հավանություն չէին տալիս Կոստանդնուպոլսի կառավարությանը, կառավարություն, որ պատասխանատվություն է կրում իրենց սարսափելի ճակատագրի համար: Այս անարդար գործընթացը որևէ քաղաքակիրթ կառավարություն անգամ չբողոքարկեց:

*Ձեր խոնարհ ծառա՝ Ջ. Հորթոն
Ամերիկայի գլխավոր հյուպատոսություն, Ջմյունիա*

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀՈՒՅՆԵՐԻ ԲՆԱԶՆՋՈՒՄՆ ՈՒ ՔԱՂԱՔԻ ՀՐԿԻՉՈՒՄԸ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մարի Ոսկերչյան

Այդ օրը մենք տանն էինք: Մեյ մըն ալ սաստիկ լաց ու կոծի ձայներ լսեցինք դուրսեն: Դուրս վազեցինք, տեսանք՝ մեր թաղը՝ Հայնոցը, կրակի տված են: Ամեն մարդ, տուները ձգած, կվազեր դեպի քորնիշ՝ ծովեզերք: Ամբողջ հայերն ու հույները հավաքված էին այնտեղ: Ալ լացուկոծ, իրարանցում, ետևը կրակ էր, առաջը՝ ջուր: Ինչ պիտի ընեինք՝ չգիտեինք: Նավահանգիստը շատ մը նավակներ կային, որոնք կրնային ծովին խորքը խարիսխ նետած շոգենավերուն հասցնել մեզի, բայց թուրք նավավարները, զգալով մեր նեղ վիճակը, միայն ոսկի էին ուզում: Ալ ով ինչ ուներ՝ զարդեղեն, ոսկեղեն, հանում տալիս էին, որ իրենց կյանքը փրկեն... Ծովի վրա լիքը դիակներ էին: Քանի մը երիտասարդներ ջուրը նետվեցան, բայց լողալ չգիտեցողը՝ ջուրը կկլեր և կխեղդվեր³⁹⁶:

Բյուզանդ Մորուքյան

Տասներկու օր անընդհատ քայլելով՝ մի մեծ խմբի հետ ճանապարհ ընկանք անհայտ ուղղությամբ: Ճամփին մեծահասակ տղամարդիկ ընկնում էին ուժասպառ: Ովքեր չէին կարողանում շարունակել ճամփան, սպանվում էին տեղում:

³⁹⁶ Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն, Ականաբես վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2000), 344:

Տասնհինգ ամիս տևեց իմ գերությունը, որից հետո ազատ արձակեցին [...] Ինձ հաջողվեց կապ հաստատել մորս ու քույրերիս հետ, և ես գնացի Հունաստան՝ նրանց մոտ: Այդ օրհասական ժամանակաշրջանում մեր գերդաստանից զրկվեց տասներկու տղամարդ, փրկվեց միայն երկուսը՝ ես ու իմ հորաքրոջ ամուսինը³⁹⁷:

Օննիկ (Օհանես) Ղազարյան

Մեր առաջին մտորումը կըլլայ նաև մը առնել ու մեկնիլ Իզմիր: Ես ու եղբայրս կերթանք նաւային ընկերութեան գրասենեակը տոմսակ առնելու համար, մեզ կպատասխանին, որ անկարելի է մեկնիլ. թէ թուրքերը հասած են Մանիսա, թէ Իզմիրի անկումը օրերու խնդիր է, որով մեզ կը յանձնարարեն խոհեմ ըլլալ ու տեղերնիս չշարժուիլ... Իսկապէս, հազիւ քանի մը օր վերջը յունական ընդժովեայ մը կը հասնի Սէլանիկ. բերելով բազմաթիւ գաղթականներ, որոնք առաջին փախչողներն էին Իզմիրի աղէտէն: Քանի մը օրեր վերջ արդէն խոշոր փոխադրանաւերով Սէլանիկ կը հասնին հարիւրաւոր ու հազարաւոր նոր նոր գաղթականներ, որոնք լալով կը նկարագրեն պատահած աղէտը, թէ Իզմիր բոցերու մէջ է, թէ հարիւր հազարաւորներ ծովեզերքին վրայ կը դեզերին բոպիկ ոտքերով, անօթի ու ծարաւ, միջոց մը գտնելու յոյսով խոյս տալու համար Իզմիրին³⁹⁸:

³⁹⁷ Վերժինե Սվազլան, *Հայոց ցեղասպանություն, Ականաբես վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2011), 380:

³⁹⁸ *ՀՅԹԻ գիտական ֆոնդեր*, բաժին 8, ֆ. հ. 128, թղթ. 92:

Սաթենիկ Գույումջյան

Երբ Քեմալը եկավ, մեր որբանոցն ալ ցրվեցավ: Մենք քանի օր անտեր անտիրական մայթերուն վրա մնացինք: Թուլումբայով (ջրհան) ջուր կհանեինք, ջուրին ամանը կբերեինք, կլցնեինք, կտանեինք, որ մեծերը խմեն: Քեմալը եկավ նե հայերուն, հույներուն, բոլոր քրիստոնյաներուն ծովը թափեց, Իզմիրը կրակի տվին: Կրակը կուտեր մարդկանց, չոջուխները (երեխա) խունդախի (բարուր) չոջուխները ծովը կնետեին, ծովին վրա անոնք սալլամիշ կըլլային (օրորվել)³⁹⁹:

Սարգիս Եթերյան

Քեմալականները Անատոլիայից Իզմիր եկան, խուժանը լցվեց քաղաքը: Առաջ՝ Հայնոցը՝ Հայ թաղը: Մենք որբանոցի առաջ բարիկաղներ սարքեցինք: Իզմիրը կրակներուն մեջ կվառվեր, երբ մենք հինգ որբեր փախանք, ծովը նետվեցանք, լողալով հասանք իտալական նավի մը, որը մեզի տարավ Փիրեյա⁴⁰⁰:

Գառնիկ Սվազյան

Թուրք նավավարները, օգտվելով առիթից, իբր տառապալներին օգնելու նպատակով ասում էին. «Գյավուրնե՛ր, տվե՛ք ձեր ոսկիները և զարդեղենները. մենք ձեզ կհասցնենք հեռվում խարիսխ գցած եվրոպական շոգենավերին, և դուք կփրկվեք: Հուսահատ հայերը, ուրիշ ելք չունենալով, նրանց էին հանձնում իրենց վերջին ունեցվածքը այն հույսով, որ

³⁹⁹ Վերժինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն, Ականաբես վերապրողների վկայություններ*, 386-387:

⁴⁰⁰ Նույն տեղում, 393:

իրենց և իրենց հարազատների կյանքը կփրկեն: Սակայն թուրք նենգ նավավարները նախօրոք իրենց մակույկների հատակին անցքեր էին բացել, և երբ ունեզրկված հայերը տեղավորվում էին նավակի մեջ, նրանք բացում էին անցքերը, ծովի ջուրը խուժում էր ներս, և մակույկը, կորցնելով հավասարակշռությունը, շուտ էր գալիս, իսկ հայերը հայտնվում էին ծովի ալիքների մեջ ու խեղդվում⁴⁰¹:

Արշակունիի Պետրոսյան

Եկեղեցին բերնեբերան լիքն էր... Առաջնորդարանի հինգ դռներուն առջևը թուրք զաբիթներ (ոստիկան) կեցած էին, եկեղեցիներուն քամբանաները (զանգ) կզարկեն կոր. օգնություն կկանչեն ամեն կողմեն: Հինգ աղջիկներ՝ անգլիացի, ֆրանսիացի, իտալացի, ամերիկացի, դանիացի, ճակատնին կարմիր խաչի նշան կապած, մայրերուն, չոջուխներուն, վիրավորներուն կօգնեին: Ժողովուրդը ի՞նչ ընելը չէր գիտեր: Իզմիրը վառվում էր... Ծովեզերքը վառվում էր ալեֆներուն (բոց) մեջը... Աղջիկներին տոպրակներու մեջ էին դնում, որ չփախցնեն... Ժողովրդին քշել էին նավահանգստի կողմը... Ովքեր ջուրը ինկած էին, կլողնային, ցամաքեն անոնց վրա եռացած ջուր էին բաց թողնում: Վերջը կրակը եկավ, մեր կեցած ֆրանսիական դպրոցն ալ լափեց, անտեղեն դուրս վազեցինք... ո՞ր վազենք... ամեն կողմ կրակներու մեջն էր⁴⁰²:

⁴⁰¹ Նույն տեղում, 566:

⁴⁰² Նույն տեղում, 362-363:

Արփինե Բարթիկյան

Իզմիրը կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփաննոս եկեղեցին այրեցին, քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք: Ծովին վրա լիքը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուր լցվեր, ու հայերը չկրնան ազատվիլ: Նավակ էին նստում խեղճ հայերը, քիչ մը կլողար նավակը, վերջը՝ լը՛կ-լը՛կ, ջուրը կլեցվեր մեջը: Բոլորը ծովի մեջ շուռ կուգային, ծովի վրա լիքը ուռած մարմիններ էին⁴⁰³:

Սմբյուլ Բերբերյան

Ջահել, ահել, երեխա, մայր չէին նայում: Թուրք զինվորները խշտիկներով ծակծկում էին բոլորին, երեխաներին բռնում գցում, մեծերին շարտում էին ծովը: Ջուրին վրա լիքը մարդ էր, ջուրը չէիր տեսնար: Թուրքը Իզմիրում հազար հինգ հարյուր հայ երեխեք հավաքեց, բենզինը լցրեց, վառեց: Ամերիկացին տեսավ, չօգնեց... Ծովեզերքում լի՛քը մարդ մրջյունի պես ծեփված են... Նավը շարժվեց: Չգիտենք՝ ուր ենք գնում: Նավը կանգնեց Սալոնիկ: Հույնը մեզ շատ լավ դիմավորեց...⁴⁰⁴:

⁴⁰³ Սվազյան, *Հայոց ցեղասպանություն, Ականալեսս վերապրողների վկայություններ*, 392:

Արփինե Բարթիկյանը նավով հասնում է Հունաստան: 1924-ին ամուսնանում է Աթենքում հայտնի հասարակական գործիչ, լրագրող Միքայել Բարթիկյանի հետ: Արփենիկ և Միքայել Բարթիկյանների երեք որդիներից մեկը պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ, Աթենքի և Հռոմի «Թիբերինա» արվեստի, գրականության և գիտության ակադեմիաների ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանն էր (1927-2011):

⁴⁰⁴ Նույն տեղում, 394-395:

Գեղամ Խաչատրյան

Իզմիրի 1922-ին աղետը կհիշեմ: Եռացած ջուր էին բացել հայերուն վրա, որ ջուրին մեջ մեռնին: Շատ փող ունեցողները ասում էին ղայրղջիներուն (նավավար). «Ա՛հ աս ոսկիները, տա՛ր ինձի ֆրանսիական, անգլիական նավերուն քովը հասցուր»: Չամադանով փողը կառնեին թուրքերը, ղայրղ (նավակ) կնստեցնեին, քիչ մը տեղ կտանեին, ղայրղը շուռ կտային, որ հայերը խեղդվին ջուրին մեջը, նավերուն չհասնին, չազատվին⁴⁰⁵:

Հայկանուշ Չեչմեջյան

Իզմիրի աղետի ժամանակ հույն զինվորներուն թուրքերը քշեցին: Մենք մնացինք թուրքի բերանը: Ծովեզերքը միլի-միլիոն մարդ ջուրը կնետվեին, որ ազատվին: Մամաս չորս աղջիկ ուներ: Բոլորիս ալ նետել է ամերիկյան նավի մը մեջ: Նավը մեզ բերավ, հասցուց Պոլիս... Մայրս ձեռագործ ընելով մեզի պահել է, հետո բերել է Հալեպ: Հալեպում պապայիս գտանք: Ան քանի տարի բանտարկված ու արքորված էր⁴⁰⁶:

Աշոտ Օհանյան

1922 թվին, երբ հույն կառավարությունը Իզմիրի պատերազմը կորսնցուց, քեմալական զորքերը մտան Իզմիր... Մենք սկզբում ամերիկյան որբանոցում էինք, հետո դաշնակցությունը իր ձեռքը առավ որբանոցը: Բայց թուրքերը նավթով վառում էին մեր որբանոցը, մենք քարերով խփում էինք... Ռուսինական «Դացիա» շոգենավը բերին, մեզի բերնեբերան մեջը լեցուցին, Միջերկրական ծովի վրայով մեզ տարին հու-

⁴⁰⁵ Նույն տեղում, 396:

⁴⁰⁶ Նույն տեղում, 408:

նական կղզի մը, քանի որ գիշերով ծովի վրա փոթորիկ էր բարձրացել: Առավոտյան մեր նավը շարունակեց իր ճամփան, Կորֆու կղզին հասանք: Հոն ամերիկյան որբանոցում ապրանք...⁴⁰⁷:

Մելինե Թերզյան

Քեմալը բռնեց բոլոր հայերուն, թունելի մը մեջ լեցուց, երկու կողմեն նավթ լցրեց, վառեց բոլոր հայերուն: Ես աչքովս տեսած եմ: Ան երիտասարդները, որոնք լողալ գիտեին, սկսին լողալ ջուրին մեջը: Մեր նավը քաշվեց, երիտասարդները լողալով ուրիշ նավի մը մոտեցան, որ ան իրենց վերցնե, բայց նավին մեջեն եռացած ջուր բացին վրանին, շոգին կելլա՛ր, բոլոր հայ երիտասարդները ջուրին մեջ մեռա՛ն: Ես աղպատկերը չե՛մ կրնա մոռնալ...⁴⁰⁸:

Վազգեն Սաղաթյան

Ամենագլխավոր եկեղեցիին մեջ հայերը հավաքվել էին, մոտ մի քանի հազար հայ: Բոլորը սպասում էին, որ թուրքերը կարող են գալ և մեզ ջարդել: Դրա համար փող հավաքեցին, նամակ գրեցին ֆրանսերենով, թե մեզ սպասվում է ջարդ: Մի տղա, թուրքերեն խոսելով, հասնում է ֆրանսիական դեսպանատուն: Դեսպանը ֆրանսիական դրոշակով և իր խմբով եկավ, եկեղեցու մեջ գտնված հայերին տարավ նավահանգիստ, ուր լիքը հայեր ու հույներ էին: Հեռվում կանգնած էին ֆրանսիական, իտալական, անգլիական զրահանավեր, մեկ-մեկ զինվորներ էին դուրս գալիս նավերից, որ մեզ թուրքերը

⁴⁰⁷ Նույն տեղում, 410-411:

⁴⁰⁸ Նույն տեղում, 415:

չկոտորեն: Բայց գիշերները թուրքերը գալիս էին աղջիկ փախցնելու. սկսվում էր աղմուկ, իրարանցում: Նավերից պրոժեկտորները (լուսարձակ) գցում էին, որ նրանք վախնան ու փախնին: Մոտ մեկ ամիս բացօթյա մնացինք: Վերջապես հունական նավերով մեզ Հունաստան հասցուցին: Չէին հարցնում՝ հայ ես, թե՛ հույն: Ժողովուրդը խուռներամ գնում էր, շատերը ոտքի տակ էին ընկնում: Ամեն մարդ ուզում էր իր կյանքը փրկել: Մեզ Հունաստանում շատ լավ ընդունեցին ու պահեցին⁴⁰⁹:

Մուշեղ Հակոբյան

Հույներուն հետ հայ կամավորներ ալ կային Թորգոմ փաշայի ղեկավարութեամբ: Քեմալը մտավ Իզմիր, ահագին հույն, հայ կոտորվեցին: Քեմալի ժամանակ ինձ թուրքի բանակ տարին... Տասը հազար հայերու նավով Հունաստան տարին⁴¹⁰:

Եսթեր Ստեփանյան

1922-ին՝ Իզմիրի աղետին, ես արդեն մեծ էի: Կհիշեմ՝ մեր ետևը Իզմիրը կվառվեր, առջևը ծովն էր: Քրիստոնյաներուն թուրքերը քշած էին ծովեզերք: Պապաս ջուրը նետվեցավ, լողալով հասավ հեռուի ֆրանսիական և անգլիական նավերուն, բայց նավուն մեջեն եռացած ջուր թափեցին վրան և պարանը կտրեցին, որ չբարձրանա: Պապաս հուսահատ վերադարձավ լողալով: Ետքը մենք անցանք Հունաստան, ետքն ալ՝ Լոս Անջելես եկանք⁴¹¹:

⁴⁰⁹ Նույն տեղում, 417:

⁴¹⁰ Նույն տեղում, 425:

⁴¹¹ Նույն տեղում, 438:

Պարզև Մակարյան

1922 թ. ալ Իզմիրի աղետը սարքեցին. հայերն ու հույները կրակներուն մեջէն փախան, ծովը նետվեցան. ով կրցավ ինքզինքն ազատել, ուրիշ երկիր անցավ: Այսպիսով, Թուրքիան «մաքրեցին» քրիստոնյաներէն: Թուրքիան մնաց թուրքերուն, Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան ալ հետը⁴¹²:

Ալիս Թորեան

Սարսափի մատնուած վեր ցատկեցի տեղէս եւ սկսայ դիտել շուրջս: Անուշ քուն մը ծանրացած էր կոպերուս վրայ, աչքերս ակամայ կը գոցուէին, եւ կայնած տեղս հոն-հոս կը քշուէի: Արդէն արտակարգ իրարանցում մը սկսած էր ժողովուրդին մէջ, մեծ ու պզտիկ իրար չէին ճանչնար, մէկը միւսը կը հրէր. ես ալ անոնց հետ քշուեր էի դէպի հեռուներ: Մայրիկս իսկոյն եղբայրներս ու զիս իրեն քով քաշեց. «Հո՛ւ եկէք, գոնէ եթէ պիտի վառինք, մեր աճիւնները թող իրարու քով մոխրանան. հո՛ւ եկէք, հիմա կը կորսուիք ամբոխին մէջ»⁴¹³:

Նուբար Բերբերյան

Մայրիկս՝ Մաքրուիի Ղումաշյանը, պատմում էր, որ մի օր՝ վաղ առավոտյան, ոստիկանները մտել են իրենց տուն (Յոզղաթ – Թ. Մ.) և պապիկիս տարել: Մարդկանց կացնահարում էին և օրեր անց վերադառնում «ներման թղթերով», որ թաքնվածներին էլ սպանեն: Մայրս, քույրն ու երկու եղբայրները որբանում են: Զմյուռնիայի հայկական եկեղեցիներից մեկում են ապաստանում: Կրակներ էին թափվում. Դժվարու-

⁴¹² Նոյն տեղում, 470:

⁴¹³ Թորեան, *Մանկութիւնս առանց գարունի*, 73:

թյամբ դուրս են գալիս, գնում ծովափ, հրաշքով հասնում Սալոնիկ:

1932 թ. ծնողներս հայրենադարձվել են:

Հարություն Բերբերյան

Զմյուռնիայի մասին լսել եմ տատիկիցս: 14 տարեկան էի, երբ մահացավ: Պատմում էր, որ հրաշքով են փրկվել Յոզղաթի հայերի կոտորածներից: Ապաստանել են Զմյուռնիայում: Տատիկս անընդհատ խոսում էր հրդեհի մասին. «Այրում էին հայկական թաղամասերը, բոլորին անխտիր կոտորում էին՝ կին թե երեխա, մեծ թե փոքր, հայ թե հույն»: Շատ բան չէր պատմում. կա՛մ ինձ էր խնայում, կա՛մ չէր ուզում հիշել:

Մելիք Մավիսակալյան

Պապս՝ Մելքոնը, տատս՝ Վարդանուշը, չորս զավակների հետ Զմյուռնիայի արվարձաններից մեկում են ապրել: Տատս պատմում էր, որ խաղողի ընդարձակ այգիներ են ունեցել: 1922-ին, երբ Զմյուռնիայում սկսվում են կոտորածն ու հրդեհը, թուրքերը պապիկին ձերբակալում են: Դրանից հետո նրանից ոչ մի լուր չեն ստանում: Տատս զավակների հետ հրաշքով հասնում է Հունաստան, հետո տեղափոխվում Ֆրանսիա: Հայրս՝ Բաբկենը, այդ ժամանակ 10-11 տարեկան է եղել:

Սարգիս Ավետյան

Հորս՝ Մկրտիչ Ավետյանին, զինվորագրել և որպես արհեստավորի ուղարկել են Կ.Պոլիս: Զմյուռնիայի հունական ազատագրման ժամանակ Կորդելիոյում (Զմյուռնիայի արվարձան – Թ. Մ.) ծովեզերքից հեռադիտակով տեսել է, թե ինչպես

են թուրքերը ծովից ու ցամաքից զենքով դիմավորում հունական բանակին: Հայրս որոշում է ընտանիքին Դենիզլիից տեղափոխել Ջմյունիա, ապա՝ Միտիլինի, քանի որ հայերի նկատմամբ թուրքերի տրամադրությունները կտրուկ վատացել էին:

Պերճուհի Ավետյան

Մեծհայրս՝ Մկրտիչ Ավետյանը, շատ խիստ և զուսպ մարդ էր: Ես նրա գրագրուհին էի: Երբ նամակ էր թելադրում, հիշում եմ, շատ էր հուզվում: Հայրս պատմում էր, որ մեծիորս նրա հրեա գործընկերն ասել է, որ հեռանան: Քեմալական բանակի՝ Ջմյունիա ներխուժելուց մեկ շաբաթ առաջ մեծհայրս իր և 20 ուրիշ ընտանիքների հետ Ջմյունիայից հասնում է Միտիլինի՝ 190 օսմանյան ոսկի տալով: Նա պատմում էր, որ 1922-ին քեմալականների՝ Ջմյունիայի գրավման ժամանակ հայ բժիշկ Գրիգոր էֆենդի Մնացականյանը, դեղագործ Գևորգ Տեր-Գալստյանը, նրա եղբայրը՝ Աբգարը, հայրը՝ տեր Գալուստ քահանան, և 60 այլ մտավորականներ Կորդելիոյում շղթայակապ, մերկ վիճակում գնդակահարվել են:

Հոկտեմբերիկ Ավետիքյան

1922 թ. հույն-թուրքական պատերազմի ժամանակ պապս աշխատել է որպես շոգեկառքի մեքենավար: Երբ հունական բանակը նահանջում է, թուրքերը քաղաքը հրի են մատնում: Տատս և պապս հորս՝ Հայկին, ուղարկում են տատիս մոր տուն: Այդ ժամանակ հայրս 13 տարեկան է եղել: Նա պատմում էր, որ թուրքերը կտրում են ճանապարհը, փորձում հանել բաճկոնակը: Դիմադրում է: Թուրքերը զենքի խզակոթով

հարվածում են ծոծրակին և ճակատին: Ուշաթափվում է: Երբ արթնանում է, ձեռքը դեմքին է մոտեցնում, զգում, որ արյուն է: Թակում է դուռը: Չեն բացում. հավանաբար տատն ու մորաքույրը դուրս եկած են եղել:

Հարևանը բացում է դուռը, ներս հրավիրում, վիրակապում: Հայրս վերադառնում է, ընտանիքի հետ դուրս գալիս դաշտեր: Վեց երեխա՝ սոված: Պապս տուն է գնում, որ ուտելիք տանի երեխաների համար: Դեպոյի չերքեզ պահակը մատնում է պապիս: Թուրքերը գալիս և բռնում են նրան: Դրանից հետո ոչ ոք պապիս չի տեսնում: Բանտում է հայտնվում դավաճանության մեղադրանքով: Այս պատմությունը տատիս պատմել է այն քահանան, որ բանտում տեսակցել է պապիս: Տատս ընտանիքի մյուս անդամների հետ տեղափոխվում է Միտիլինի, հետո՝ Աթենք: Փախստականների ճամբարում տիֆի համաճարակի հետևանքով մահանում է հորաքույրս՝ Հայկանուշը: Տատս ընտանիքի ապրուստը հոգում է ձեռագործությամբ:

Հայկանուշ Նիքսայան

1922 թ. Հայկանուշն իր մանկահասակ երեխայի հետ Ջմյունիայում է եղել: Կոտորածի և հրդեհի պայմաններում շատերը չէին խիզախում դուրս գալ թաքստոցներից. Հայկանուշը, որ աչքի էր ընկնում ուժեղ բնավորությամբ, երեխայի համար սնունդ գտնելու նպատակով դուրս է գալիս տնից: Ճանապարհին երկու թուրք բռնում են Հայկանուշին: Սկսում են քաշքշել և հագուստը հանել: Հայկանուշը երկար դիմա-

դրում է: Ի վերջո նրան հաջողվում է գետնից քար վերցնել և սպանել թուրքերին⁴¹⁴:

Կոնստանդին Սկացիրիս

Ծնողներս սպանվեցին: Մի ավազակ ճանկեց քրոջս՝ Կատերինային, և ուսերի վրա դրած՝ տարավ: Ես հետապնդեցի նրան, մինչ եղբայրս հուսահատ կռվում էր խանութի անկյունում: Ես ամենուրեք նրան էի փնտրում [...] Հետո մի նավավարից տեղեկացա, որ նրան փրկել էին ամերիկացի նավաստիները, սակայն չիմացա, թե որ շոգենավով էր հեռացել⁴¹⁵:

Ֆիլիո Հայդեմենու

Երկու օր ու գիշեր մնացինք ափին կանգնած՝ սպասելով որևէ նավակի: Հազարավոր մարդիկ՝ առանց հույսի և ծայրահեղ աղքատության մեջ, անտարբեր դարձած աչքերով, սիրելիների մահվան ցավից արյունաքամվող սրտերով [...] Սայլերի վրայից դատարկում էին մեռած մարմինները [...] Երեկոյան թուրքերն սկսեցին բռնաբարել և նողկալի արարքներ գործել այն կանանց նկատմամբ, որոնց գտնում էին⁴¹⁶:

Անեստոս Սերրաս

Զմյուռնիայից դուրս գտնվող «Կուլաս» անունը կրող մենաստանի կաթոլիկ միանձնուհիներն աղետի ընթացքում փրկեցին շատ մարդկանց [...]: Անեստոս Սերրասը վտանգի

⁴¹⁴ Արամ Սիմոնյանի տատիկի պատմությունը գրի է առել Թեհմինե Մարտոյանը:

⁴¹⁵ Papoutsy, *Ships of Mercy, The True Story of the Rescue of the Greeks, Smyrna, September 1922*, 22-23.

⁴¹⁶ Նոյն տեղում, 136-137:

միջով նավահանգիստ է հասնում, փրկվում և տեղափոխվում «Լիչֆիլդ» անունը կրող անգլիական նավով⁴¹⁷:

*Ազգությանը թուրք ականադեսների վկայությունները
(հաղորդում են ժառանգները)*

Սևալ Օզդեմիր (բնակչի անվտանգությունից ելնելով՝ փոխված է անուն-ազգանունը)

Տատիկա ծնվել և մեծացել է Իզմիրում, որի գերակշռող մեծամասնությունը հայեր և հույներ են եղել: Հայտնի է, որ քաղաքն անվանել են «Գյավուր Իզմիր»: Տատիկիս մանկության սարսափներից էր 1922 թ. սեպտեմբերի ողբերգությունը: Նա պատմում էր, որ օրեր շարունակ փողոցները լցված էին դիակներով, իսկ այլանդակված մարմինները սարսափ էին տարածում: Թուրքերը հայերի և հույների ավերված, այրված տներից թալանում էին անվնաս մնացած ապրանքները: Տատիկիս հայրը մի հայի տնից կարի մեքենա էր բերել, որը տատիկիս մայրը, ապա տատիկա երկար ժամանակ օգտագործել են: Տատիկա նաև շեշտում էր, որ այդ կարի մեքենան անընդհատ թարմ էր պահում այդ օրերի հիշողությունը, որից նա սարսափում էր: Նա միշտ մտածում էր, որ Ալլահը կպատժի բոլորին, քանի որ տեսել էր, թե ինչպես էին մահմեդականները քրիստոնյաների դիակների վրայից գողանում նրանց զարդերը, նույնիսկ թանկարժեք հագուստը: Տատիկիս հայրն ու եղբայրը հրդեհից հետո կառքով գնացել են այդ թաղամասերը: Նրանք պատմում էին, թե ինչպես էր կառքն անցնում դիակների վրայով, մինչդեռ նրանց մեջ կային մարդիկ, որ տնքում և լաց էին լինում: Սակայն ոչ ոք նրանց օգնության

⁴¹⁷ Նույն տեղում, 137:

ձեռք չէր մեկնում: Երբ տատիկիս եղբայրն իր հորն ասել է, թե մեղք են այդ մարդիկ, հայրը պատասխանել է. «Տղա՛ս, սա Ալլահի պատիժն է. նա, ով անհնազանդ է Ալլահին, այսպիսի անշուք վախճան է ունենում: Ահա թե ինչու ենք մենք բախտավոր, որ մահմեդական ենք ծնվել»⁴¹⁸:

Նուրի Չավդար (բնակչի անվտանգությունից ելնելով՝ փոխված է անուն-ազգանունը)

Իզմիրաբնակ քսանվեցամյա Նուրին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում իր մեծ պապի պատմությունից, որն ապրել է այն թաղամասում, ուր հայերն ու հույներն էին ապրում. «Նախկինում այդ հին թաղամասը շատ ավելի շքեղ տեսք է ունեցել: Այն ժամանակ, երբ այդ թաղամասերում հայերն ու հույներն էին ապրում, դրանք քաղաքի ամենահիրաշալի վայրերից էին: Քրիստոնյաները շատ ավելի հարուստ էին և կրթված, լավագույն արհեստավորները հույներն ու հայերն էին: Թուրքերն արհեստների չէին տիրապետում, և երբ քրիստոնյաները հեռացել էին, թուրքերը փաստի առաջ էին կանգնել: Ո՛չ կարգին դերձակ կար, ո՛չ ոսկերիչ, ո՛չ ժամագործ... Ես ութ տարեկան էի, երբ մահացավ մեծ պապս: Սակայն նրա բոլոր պատմությունները պահել եմ մտքումս, որոնք շատ են ազդել վրաս: Մայրս միշտ բարկանում էր պապիս վրա՝ ասելով, թե ինչու է երեխային նման բաներ պատմում, բացասական լիցքեր հաղորդում, թշնամանք սերմանում: Բայց պապս անդրդվելի էր: Նա շարունակում էր պատմել: Հիշում էր, որ զինվորները հորեղբորը տնից տարել են, եղբայրը տասնմեկ տարեկան է եղել, նրան տարել են, իսկ

⁴¹⁸ Հարցազրույցը՝ ըստ Սոֆիա Հակոբյանի:

մեծ պապիս մայրը դիմադրել է, որ իրենց էլ չտանեն, զինվորը հրացանով հարվածել է նրանց գլխին, ուշաթափվել են: Որոշ ժամանակ անց ուշքի է եկել, աչքերը կիսով չափ բացած՝ տեսել է, թե ինչպես է զինվորը քույրերին քաշքշում, որպեսզի խլի ոսկյա ապարանջաններն ու զարդերը: Ուշաթափված մոր մատները կտրել են, որ մատանին վերցնեն: Պապիկս միանգամից փակել է աչքերը, որ հանկարծ չնկատեն, որ ինքն ուշքի է եկել: Նա անշարժ մնացել է, մինչև հեռացել են զինվորները՝ կողպելով դռներն ու պատուհանները: Դուրս տանող բոլոր ելքերը փակ են եղել: Ժամեր անց հրդեհ է սկսվում: Երբ մայրն ուշքի է գալիս, քույրը վերքերը կապում է: Ավագ քույրը կոտրում է պատուհանը և, եղբորը գրկած, դուրս թռչում պատուհանից: Մորն էլ են դուրս հանում, բայց փոքր քույրը մնում է և այրվում տան մեջ: Նրանք թաքնվում են այգում: Երբ զինվորները հեռանում են, մեծ պապիս հորեղբոր թուրք ընկերը նրանց իր տուն է տանում և թաքցնում նկուղում մինչև Հունաստանի հետ բնակչության փոխանակումը: Հունաստան հասնում են միայն մեծ պապս ու իր մայրը, քույրը ճանապարհին մահանում է: Մայրը միշտ իր հայրենի քաղաք վերադառնալու ցանկություն է ունեցել: Վեց տարի ապրել են Հունաստանում, այնուհետև վերադարձել Իզմիր՝ իհարկե փոխելով իրենց անուն-ազգանունները: Մենք մահմեդական ենք: Շատ քիչ մարդիկ են իմացել, որ մեծ պապս հույն է: Երբ փոքր էի, գաղտնի խաչակնքում էր, իսկ ես դռան հետևից նայում, բայց չէի հասկանում, թե ինչ է անում⁴¹⁹:

⁴¹⁹ Հարցազրույցը՝ ըստ Սոֆիա Հակոբյանի, էլեկտրոնային նամակ հեղինակին, 24 մայիսի 2013 թ.:

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐՐՈՐԴ

«ՋՈՒՄՀՈՒՐԻԵԹ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԶՆՅՈՒՆԵՒԱՅԻ ՀՐԴԵՀԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՏՏԱԹՈՒՂԹԸ (22 ՀՈՒԼԻՍԻ 1924 Թ.)⁴²⁰

Զմյուռնիայի կառավարությունը 18 միլիոն ֆունտ ստերլինգ է պահանջել ապահովագրական ընկերություններից. անգլիական դատարանները որոշում են կայացրել հանձնաժողով ուղարկել Զմյուռնիա հրդեհի և դրա պատճառների մասին տեղեկությունների և անկողմնակալ վկայությունների հավաքագրման նպատակով: Կառավարության (Թուրքիայի – Թ. Մ.) հասույթը կազմում է 12 միլիոն ֆունտ ստերլինգ:

Զմյուռնիայի վերագրավումից և քաղաքի մեծ մասի ավերումից հետո հրդեհի հետևանքով տուժածները ապահովագրական ընկերություններից պահանջում են 12 միլիոն ֆունտ ստերլինգի փոխհատուցում:

Ապահովագրական ընկերությունները հրաժարվել են վճարել պահանջված փոխհատուցումը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ հրդեհը բռնկվել է պատերազմի ժամանակ, իսկ Զմյուռնիան հանդիսացել է պատերազմի դաշտ: Այս առնչությամբ կառավարությունը պահանջել է ապահովագրական ընկերություններից կա՛մ վճարել փոխհատուցումը, կա՛մ դադարեցնել իրենց գործունեությունը Թուրքիայում:

Մեծ գումարներ վճարելու փոխարեն ապահովագրական ընկերությունները նախընտրում են փակել իրենց գրասենյակ-

⁴²⁰ Դատավարության փաստաթղթի հայերեն թարգմանությունը շրջանառել է Թեհմինե Մարտոյանը: Հավելվածում առանց որևէ միջամտության պահպանված է բնագրային տարբերակը:

ները և դադարեցնել գործունեությունը, սակայն հարցը դրանով չի լուծվում: Ավելին, հրդեհի հետևանքով տուժած ապահովագրական ընկերությունները միավորվում են, իրավաբաններ վարձում և դատական գործ հարուցում այն երկրների դատարաններում, որոնց պատկանում են այդ ընկերությունները:

Դատական գործընթացներ են սկսվում ֆրանսիական, բրիտանական և շվեյցարական դատարաններում: Այն հավասարապես հուզում էր և՛ ապահովադերին, և՛ կառավարությանը: Կառավարությունը փոխհատուցում է պահանջում հայ և հույն տարագիրներին պատկանող ավերված շենքերի երեք քառորդի համար, ինչը՝ որպես լքյալ գույք, վերադարձվել է կառավարությանը: Քանի որ հրդեհի հետևանքով առաջացած վնասի մեծ մասը կրել է կառավարությունը, հետևաբար լքյալ գույքի հանձնաժողովի որոշմամբ կառավարությանը տրամադրվող փոխհատուցման գումարը կազմում է 12 միլիոն ֆունտ ստերլինգ:

Երկու տարի առաջ դատական գործընթացներ են սկսվել միաժամանակ ֆրանսիական, բրիտանական, իտալական և շվեյցարական դատարաններում: Ապահովագրական ընկերությունների ղեկավարները հայտարարել են, որ հրդեհը բռնկվել է անսպասելիորեն քաղաքի գրավումից հետո, և որ այն տարածվել է ապշեցուցիչ արագությամբ: Նրանք համոզմունք են հայտնել նաև, որ քաղաքն այրել են հույները, հայերը և թուրքերը Ձմյուռնիայի գրավումից հետո: Ըստ մյուս կողմի տեսակետի, որը տարածվել էր Եվրոպայում և Ամերիկայում, պատասխանատվություն կրում են թուրքերը. այնուամենայնիվ, ճշմարտությունը կբացահայտվի:

Երկու կողմերն էլ իրենց անմեղությունն ապացուցելու նպատակով ներկայացնում էին տարբեր երկրներում հրապարակված փաստաթղթային վկայությունների պաշտոնական զեկուցագրեր: Բրիտանական կառավարության հրատարակած պաշտոնական զեկուցագրում ամրագրված էր, որ թուրքերն են պատասխանատու հրդեհի համար, մինչդեռ Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի պաշտոնական զեկուցագրերում մատնանշված էր այն փաստը, որ թուրքերն այս գործում որևէ դերակատարություն չեն ունեցել: Ֆրանսիական և իտալական կառավարությունների հրապարակած փաստաթղթերը վկայում են, որ ինչպես թուրքերը, այնպես էլ հույներն ու հայերը պատասխանատվություն են կրում կատարվածի համար:

Առանց գործն ուսումնասիրելու՝ ֆրանսիական դատարանը որոշեց պաշտպանել ապահովագրական ընկերություններին՝ հայտարարելով, որ հրդեհը բռնկվել է պատերազմի դաշտում, և որ ապահովագրական ընկերությունները չեն կարող պատասխանատվություն կրել:

Բրիտանական դատարանը որոշում է կայացնում հանձնաժողով ուղարկել Ջմյուռնիա՝ օտարազգի անկողմնակալ վկաներից տեղեկություններ հավաքելու նպատակով: Հայտնի է, որ Ջմյուռնիայում օտարազգիներն արդեն տեղեկացրել էին իրենց կառավարություններին, որ հրդեհը պատահաբար էր բռնկվել: Այն ընկերությունները, որոնք պատասխանատու էին հրդեհի համար, հույսեր էին փայփայում, որ այս հետաքննությունը հնարավորություն կտա շահելու դատը, և որ այն վերջնականապես կփակի Ջմյուռնիայի հրդեհի հարցը:

Բրիտանական հանձնաժողովի որոշումը մեծ կարևորություն ունի կառավարության համար: Դա մի հարց էր, որ մինչ

այդ անտեսել էր կառավարությունը, բայց հույս կա, որ կառավարությունն անմիջապես գործ կհարուցի ապահովագրական ընկերությունների դեմ՝ փորձելով վերստանալ վնասների հատուցման համար հարուցած հայցի դիմաց պահանջվող 12 միլիոն ֆունտ ստերլինգ հսկայական գումարը:

Կառավարությունն ավելի շատ ապացույցներ ունի այս հարցի վերաբերյալ, քան անհատները, հետևաբար դատը շահելու հարցում առավել նպաստավոր դիրքում է գտնվում: Այն մեղքը, որ թշնամիները փորձում են վերագրել մեզ (կառավարությանը – Թ. Մ.)՝ կապված Զմյուռնիայի հրդեհի պատասխանատվության հարցի հետ, հաստատապես կվերանա:

Վճիռ

Կայացված Զմյուռնիայի դատարանի կողմից հետևյալ հարցի առնչությամբ.

Հայցվոր՝ *Մեհմեդ Զամիլ բեյ* Ներկայացնում է «Մոսարե, Հաիմ Գալանթի և Աշեր» ընկերությունը
Զմյուռնիա

Պատասխանող՝ *Մունիր բեյ* Ներկայացնում է՝ «Ասիգուրասիոնի Գաներալի դի Տրիեստե» ընկերությունը
Ընկերության Զմյուռնիայի ճյուղի ղեկավար՝ Հ. Լուան Ամադո, Թխիկուր Հան, Փենթեմալջիլար, Զմյուռնիա

«Մոսարե, Գալանթի և Աշեր» ընկերության լիազորված գլխավոր փաստաբանը հայտարարեց, որ իր հաճախորդներն ապահովագրել են երկաթեղեն պարունակող իրենց խանութները, որոնք գտնվում էին «Փենթեմալքիլար 158, Զմյուռնիա» հասցեում, 6 հազար ֆունտ ստերլինգ գումարի չափով «Ասիգուրասիոնի Գաներալի դի Տրիեստե» ընկերությունում, և որ գույքը ոչնչացվել է պատահաբար բռնկված հրդեհի հետևանքով, բայց նշված ընկերության՝ Զմյուռնիայի ճյուղի կառավարիչ պարոն Լուան Ամադոն հրաժարվում է վճարել փոխհատուցման գումարը, և Զամիլ բեյը 3982 ֆունտ ստերլինգ հատուցում է պահանջել, 38 ֆունտ ստերլինգի տարբերությունը, որը կազմում է հրդեհից չվնասված գույքը:

Մունիր բեյը, որ ներկայացնում էր պատասխանող ընկերությունը՝ հայտարարեց, որ՝

1. դատական գործն անորոշ է, քանի որ ոչնչացված գույքի իրական արժեքը հաստատապես ապացուցված չէ:

2. Հրդեհի ժամանակ գույքի առկայության հետ կապված ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտություն կա:

3. Դատարանին ներկայացրեց նաև հրապարակված հողվածաշարերից շուրջ 16 հատվածներ, որոնց համաձայն՝ հրդեհը բռնկվել է Զմյուռնիայի վերագրավման հետևանքով ծագած ըմբոստության և անախորժությունների պատճառով: Բացի այդ՝ նա մատնանշեց Ստամբուլի Առևտրային Երկրորդ դատարանի վճիռը, համաձայն որի՝ ապահովագրական ընկերությունը պատասխանատվություն չի կրում ապահովագրության վճարման համար Պանդերմայի դեպքում, որտեղ գույքը ոչնչացվել էր նման հանգամանքներում հրդեհի հետևանքով:

4. Այն անձինք, որ ծրագրել և իրականացրել էին հրդեհը, դատարանի որոշմամբ դատապարտվել են:

5. Իզմեթ փաշայի հայտարարությունները Լոզանի կոնֆերանսում ապացուցում են այն փաստը, որ հույներն են պատասխանատու Չմյունխայի հրդեհի համար:

Ներկայացնելով վերոբերյալ ապացույցները՝ Մունիր բեյը համոզված նշեց, որ իր ներկայացրած ընկերությունը ոչ մի կերպ պատասխանատվություն չի կրում կատարվածի համար և որևէ պարտավորվածություն չունի:

Մեհմեդ Ջամիլ բեյը, ներկայացնելով հայցվոր կողմը, փաստեր բերեց՝ հայտարարելով, որ հրդեհը պատահաբար է բռնկվել Չմյունխայի պաշտպանության հետևանքով:

Դատարանը հայցվորի պահանջը քննելուց հետո վճռեց.

Պաշտպանական կողմի առաջին կետի՝ պահպանված ամբողջ գույքից միայն հրդեհից չտուժած 38 ֆունտ ստերլինգ արժողությամբ գույքի հարցի վերաբերյալ դատարանը, հաշվի առնելով այն փաստը, որ կառույցն ամբողջովին ավերվել էր հրդեհի հետևանքով, հնարավոր չէ որևէ կերպ որոշել գույքի ճշգրիտ չափը: Հայցվորը պնդում է, որ հրդեհը պատահաբար է բռնկվել, և կառավարության իրականացրած պաշտոնական հետաքննության արդյունքում այդ փաստը լիովին հաստատվել է: Այսպիսով, այլևս որևէ անորոշություն չկա այս դատավեճում, քանի որ հրդեհի պատճառը պարզորոշ և հաստատապես սահմանված է:

Երկրորդ կետով, որը վերաբերում է հրդեհի ժամանակ պահեստում պահվող գույքի փաստացի գոյությանը, դատարանն ընդունում է, որ գույքը իրականում գոյություն է ունեցել՝

նկատի ունենալով, որ պատասխանողը հակառակ վարկածը չի հաստատել:

Երրորդ կետով՝ հաշվի առնելով ներկայացված լրագրային ամենատարբեր հոդվածները, որոնք վերաբերում են որոշակի դաժանություններին՝ իրականացված էսքիզեհիրում, Թուրգուբուում, Սալիհլիում, Ալաշեհիրում, Աֆիոնում, Գուրդոնում և Դումլում, որոշակի նախազգուշական միջոցներ ձեռնարկելու նպատակով Մուսթաֆա Քեմալ փաշայի տված հանձնարարականները, ինչպես նաև բողոքարկումը Չմյուռնիայի հետ կապ չունեցող որոշ գործողությունների դեմ, դատարանը գտավ, որ առնչություն չունեն այս դեպքի հետ և դատական այս գործընթացում ոչ մի կերպ չեն կարող մեկնաբանվել պատասխանող ընկերության օգտին:

Ինչ վերաբերում է պաշտպանության չորրորդ կետին, այն փաստի առնչությամբ, որ կոնկրետ անձինք, որ դատապարտվել են հրդեհը ծրագրելու և իրագործելու համար, և որ այդ հրդեհի պատճառը ապստամբությունն էր, որևէ ապացույց չի ներկայացվել՝ այս հայտարարությունները հիմնավորելու համար: Չնայած այն փաստին, որ որոշ անձինք պատժվել են, դեռ չի նշանակում, որ ապստամբություն է տեղի ունեցել, որը, այլ կերպ ասած, ամբոխի կողմից հեղաշրջում է կառավարության դեմ կոնկրետ նպատակով և ապացուցված չէ, որ նման ապստամբություն կամ հեղաշրջում եղել է:

Հինգերորդ կետով ներկայացված փաստարկը, որը վերաբերում է Լոզանի կոնֆերանսում Իզմեթ փաշայի հայտարարությանը, հիմնված է լրագրերի հոդվածների վրա և պաշտոնապես չի հաստատվել: Եթե նույնիսկ ճանաչվեր, ապա այն ընդամենը փաստարկ է բանակցություններ վարած հա-

կառակորդ պատվիրակ Վենիզելուսի դեմ և չի կարող օրինական հիմք հանդիսանալ դատարանների համար:

Այսպիսով, դատարանի որոշմամբ պատասխանողի կողմից հինգ կետով ներկայացված փաստարկները ընդունելի չեն և հետևաբար մերժվում են:

Ներկայացված պայմանագրի համաձայն՝ Լին Ամադոն 5962 ֆունտ ստերլինգ պետք է վճարի (ընդհանուր ապահովագրության 6000 ֆունտ ստերլինգից հանելով 38 ֆունտ ստերլինգ)՝ որպես դատական ծախսերով ապահովագրական ընկերության տեղական բաժնի կառավարիչ՝ համաձայն օրենսգրքի 1567-րդ հոդվածի: Բողոքարկումը բավարարված է՝ համաձայն 150-րդ հոդվածի:

12 սեպտեմբերի 1923 թ.

Ջմյունիա, Թուրքիա

«Ջումհուրիեթ», Կոստանդնուպոլիս, 21 հուլիսի 1924 թ.

Թարգման՝ Ջեքի Բեյ

ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսություն

Ջմյունիա, Թուրքիա

Ապահովագրական ընկերությունների ներկայացրած պահանջները. Ջմյունիայի աղետը

Ֆրեդերիկ Օ. Բըդ

Փոխհյուպատոս Ֆրեդերիկ Օ. Բըդ _____

Ջմյունիա, Թուրքիա:

Պատրաստման ամսաթիվ՝ *հուլիս 24, 1924 թ.*

Նամակի ուղարկման ամսաթիվ՝ *հուլիս 25, 1924 թ.*

Որոշման համառոտ շարադրանք՝ ներկայացված Զմյուռնիայի Առևտրային Դատարանի կողմից «Ջումհուրիեթ»-ում տեղ գտած լրագրային հոդվածի թարգմանության հետ, որը հրապարակվել է 1924 թ. հուլիսի 21-ին Կոստանդնուպոլսում և վերաբերում է Զմյուռնիայի աղետի հետևանքով կրած կորուստների փոխհատուցմանը. ընդամին կցված են և հնարավոր է հետաքրքրական լինեն ամերիկյան ընկերությունների համար, որոնք նախկինում ապահովագրական գործունեությամբ են զբաղվել այս շրջանում:

Դատարանը մոտ 160 նման հայց ունի օրակարգում, բայց շատ հավանական է, որ նախորդը, հավանաբար, կկանխի գործընթացը շարունակելու անհրաժեշտությունը և արդյունքում կարող է հանգեցնել բարեկամական հարաբերությունների եզրափակման: Այնպիսի արդյունավետ քայլեր, ինչպիսիք են իշխանությունների կողմից մերժումն այն ընկերություններին, որոնք հրաժարվում են ընդունել այս պահանջները Թուրքիայում գործելու համար և իրենց ունեցվածքի բռնագրավումը դատական գործընթացի միջոցով, արդեն ձեռնարկված են և կարող են լրջորեն երաշխավորել վճարումների հարկադրում՝ համաձայն այս դատավճիռների:

Մինչ այս՝ ներկայացուցիչ Լլոյդսը (Անգլիա) գրասենյակին տեղեկացրեց, որ ավերածությունը գնահատվում էր 50 միլիոն ֆունտ ստերլինգ, որից միայն 2-2,5 միլիոն ֆունտ ստերլինգն այնուամենայնիվ, ըստ երևույթին, վճարվել է՝ համաձայն պատերազմի ռիսկային պայմանագրերի կետերի, մինչդեռ 12-12,5 միլիոն ֆունտ ստերլինգ վճարվել է հրդեհի ապահովագրությունից: Հաստատվել է, որ այս իրավապահանջներից ոչ մեկը չի բավարարվել:

Չնայած ոչնչացված կառույցների թիվը ոչ պաշտոնապես սահմանվել է 35 հազար (ավելի հավանական հաշվարկի համաձայն)՝ մասնավորապես ներկայացուցիչ Լլոյդսը միջինը գնահատում է աղետի հետևանքով ոչնչացված 18 հազար կառույց: Ըստ վերջին նախահաշվարկի՝ խանութները, բնակավայրերը և այլ հաստատություններ համարվում են որպես առանձին կառույցներ՝ բացառությամբ պաշտպանիչ պատերի, որոնք նորմալ հանգամանքներում դասակարգվում են որպես խմբային շինություններ: Վնասը բաժանվում է 4166 ֆունտ ստերլինգի առանձին շինությունների համար՝ ներառյալ պարունակությունը:

Վերջին պահանջի բավարարման հետ կապված՝ շատ հավանական է, որ հետագա բարդացում տեղի ունենա «Լքյալ գույքի ունեցվածքի» առնչությամբ, ինչպես նշված է լրագրային զեկույցում, սակայն չկա մի դեպք, որին առնչվել է այս գրասենյակը: Բրիտանական ընկերության ապահովարի վերջին հայցում ծագումով հայ Թուրքիայի մի քաղաքացի, որի ունեցվածքը «Լքյալ սեփականության» օրենքի նյութ էր, և այն ապահովագրված էր որպես բնակավայր, հետագայում օգտագործվեց որպես գրասենյակ և բնակատեղի: Վնասի փոխհատուցում տեղի չէր ունեցել՝ չնայած այն փաստին, որ ունեցվածքը ոչնչացվել էր Ջմյունիայի հրդեհից մի քանի ամիս անց: Ընկերությունը հրաժարվել է վճարել փոխհատուցումը՝ պատճառաբանելով, որ ոչնչացման ժամանակ անշարժ գույքը սեփականության իրավունքը հաստատող որևէ փաստաթուղթ չի ունեցել: Կառավարությունն ի վիճակի չի եղել կորզել այս գումարն ընկերությունից:

Քննարկման թեմայից զգուշությամբ դուրս են մնացել շահույթի, եկամտի և այլ հանգմանքների մասին հարցեր: Իշխանությունների հավանական գործունեությունը և դիրքորոշումն այս առնչությամբ կարող են լինել լոկ ենթադրության նյութ:

Այն կարծիքն է տարածված, որ ապահովագրական ընկերությունները վերջիվերջո ստիպված կլինեն որևէ կերպ համաձայնության գալ բոլոր պահանջատերերի հետ՝ չկորցնելու համար ժամանակի եկամտաբեր գործը: Թուրքական իշխանություններն իրենց հերթին պատրաստակամորեն հաշվի կառնեն ցանկացած առաջարկ, որ կարող են ներկայացնել հետաքրքրված ընկերությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հայկական ազգային պատվիրակության դիվանատան⁴²¹

23 Սեպտեմբեր 1922

ԴԻԻԱՆԱՏՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Ա.ՆԱԽԸՆԹԱՅ ԴԵՊՔԵՐ

1. Յոնիական շարժումը եւ հայերը
2. Թորգոմի արարքները
3. Դաշնակիցներու վերաբերումը
4. Անգլիական առաջարկութիւն մը եւ Միլիսներու կազմութիւնը

Բ. ՔԱՂՔԻՆ ԱՆԿՈՒՄԷՆ ԵՏՔ

5. Թուրքերուն մուտքը
6. Թալան եւ կոտորած
7. Հրդեհը
8. Հրդեհին պատասխանատուները
9. Յունաց Առաջնորդին սպանութիւնը
10. Առաջնորդ Ղեւոնդ Եպիսկ.-ի փախուստը

⁴²¹ Հայկական ազգային պատվիրակության դիվանատան տեղեկագիրը (կազմվել է Զմյուռնիայի վերապրողների վկայությունների հիման վրա)՝ Զմյուռնիայում իրագործված ոճրագործությանը նախորդող իրադարձությունների, քաղաքի անկման և անկումից հետո տեղի ունեցած դեպքերի մասին (20 սեպտեմբերի 1922 թ. մինչև 23 սեպտեմբերի 1922 թ., 78 թերթ), Հայկական ազգային պատվիրակություն, ֆ. 430, ց. 1, գ. 744:

11. Սպաննուած հայերը
12. Իզմիրի հայ որբերը
13. Ինքնապաշտպանութեան խնդիրը
14. Կաթոլիկութեան առաջարկ
15. Իզմիրի շրջականերն ու արուարձանները
16. Ազատողները

Այս տեղեկագիրը պատրաստուած է Ազգ. Պատուիրակութեան Դիւանատան կողմէ, Իզմիրի վերապրողներէն Տոքթ. Ճէլէպի, Տոքթ. Գարագոջի, Տոքթ. Իզմիրլեանի, Պ. Վահան Զմիւռնակէսեանի, Պ. Թագուր Պաքրճեանի, Պ. Անտօն Կազէլի, Պ. Շառլ Ոսկանեանի, Տիկին Ռօզա Նալպանտեանի, իր գաւակներուն եւ այլոց վկայութեան:

ՅՈՆԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Առաջնորդը անձնապէս եւ քաղաքական ժողովը ոչ մէկ կերպով քաջալերած էին Յոնիական շարժումը: Թէ Զօր. Ֆրանցէսի եւ թէ ուրիշներու կողմէ եղած դիմումներուն երբեք քաջալերիչ պատասխան մը չէին տուած, եւ երբ դիմումները աւելի ստիպիչ դարձեր էին, աշխատեր էին ժամանակ շահիլ՝ ըսելով, որ իրենք չեն կրնար ինքնագլուխ շարժիլ այդ խնդրին մէջ, թէ իրենցմէ վեր ազգային իշխանութիւններ գոյութիւն ունին որոնցմէ հրահանգի կը սպասեն, ելն.:

Հայ ժողովուրդն ալ արդէն, ընդհանուր առմամբ, կարծեկից էր իրենց: Այս խոհեմութեան շնորհիւ Իզմիրի Հայ ժողովուրդէն ոչ անձ, ոչ ալ դրամ տրամադրուեցաւ Յոնիական շարժման համար:

Առաջնորդ Ղեւոնդ եպիսկոպոս այցելութեան մը միջոցին այս պարագան եւ իրենց կողմէ բռնուած ընթացքը ծանուցած էր Միւֆթիին, որ շատ գոհ մնացեր էր եւ վերջէն ալ յայտնէր էր թէ լաւ տպաւորութիւն թողած է թուրք շրջանակներու վրայ:

ԹՈՐԳՈՄԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ

Թորգոմ Իզմիր եկած էր Աթէնքի կառավարութենէն տրուած հրահանգով մը, որ կը յանձնարարէր Իզմիրի Հէլլէն իշխանութեանց զինքը ազատ թողուլ Հայ կամաւորներ հաւաքելու եւ զանոնք կազմակերպելու: Իր ձեռքը գտնուած ոյժով, աւելի Աթէնքէն կախում ունէր քան Իզմիրի Հէլլէն Բարձր Քօմիսէրութենէն: Թորգոմ, Իզմիր վերադարձին, աշխատեցաւ Ազգ. Իշխանութեանց եւ Առաջնորդարանի գործակցութիւնը ապահովել իր ձեռնարկին, բայց ոչ միայն քաջալերութիւն չգտաւ, ալ ընդհակառակը, թէ առաջնորդին եւ թէ Ազգ. Մարմիններու հակառակութեան բաղխեցաւ: Իզմիր գտնուող բնիկ ու գաղթական հայ ժողովուրդն ալ երբեք չքաջալերեց զինքը, եւ ասոր մեծագոյն ապացոյցը սա է, որ Իզմիրի պէս քաղքի մը մէջ, որ այնքան մեծ թուով հայ ժողովուրդ կը գտնուէր, Թորգոմի խումբը հարիւր հոգին չանցաւ երբեք, եւ անոնք ալ մեծ մասամբ անգործ ու ապրուստի միջոցներէ զուրկ, հետեւաբար ամէն արկածախնդրութեան տրամադիր մարդիկ էին:

Վերջին օրերուն, երբ թրքական յարձակողականը սկսած էր, Թորգոմի գործունէութիւնը բոլորովին սանձարձակ բան մը կը դառնայ: Իր խումբին գլուխ անցած, փողոցները կը շրջի եւ հանդիպած գաղթականները կը ձերբակալէ, եղեր բռնի զինուորագրութեան պարտադրելով զանոնք: Այս պայմաններուն մէջ ձերբակալուող գաղթականները, հսկողու-

թեամբ կը դրկուին քաղքէն դուրս, Պալչը Օվայի մարզարանը, բայց մեծ մասամբ կը փախչէին եւ կը վերադառնային քաղաք: Անոնցմէ վերստին ձերբակալուողները կը խոշտանգուէին ու կը նախատուէին: Առաջնորդը բազմիցս կը փորձէ արգիլել այս արարքը, եւ իր ընդդիմութիւնը այն աստիճան սուր հանգամանք մը կը ստանայ, որ օր մը, Թորգոմ, առաջնորդարան երեւալով, ռէվօլվէրը ձեռքը կը սպառնայ Ղեւոնդ եպիսկոպոսին:

Ասոնց վրայ, Ղեւոնդ եպիսկոպոս Հէլլէն Բարձր Քօմիսէր Պ.Սթերիատիսին երթալով, կը պարզէ իրողութիւնը, կը յայտնէ թէ իր հօտը դժգոհ է Թորգոմի ընթացքէն եւ իրաւամբ կը վախնայ, որ օր մը այդ պատճառաւ կրնայ փորձանք մը գալ ընդհանուր Հայոց գլխուն ու կը խնդրէ, որ Թորգոմ կարելի եղածին չափ շուտ հեռացուի Իզմիրէն եւ խումբն ալ ցրուի:

Պ. Սթերիատիս կը պատասխանէ.

— Դժբախտաբար չեմ կրնար բան մը ընել, որովհետեւ Աթէնքի կառավարութեան կողմէ դրկուած է եւ ձեռքը ունի Կոնստանտին թագաւորին մէկ հրամանագիրը, որուն դէմ զինաթափ եմ: Կրնաք վստահ ըլլալ, որ իմ իրաւասութենէս դուրս է իր պարագան:

Այն ատեն Ղեւոնդ եպիսկոպոս կ'ըսէ.

— Ուրեմն ինձի ընելիք ուրիշ բան չի մնար, այլ գոցել առաջնորդարանը եւ բանալիները բերել Ձերդ Վսեմութեան յանձնել, պատասխանատու չմնալու համար այն հետեւեանքներուն, որոնք կրնան ծագիլ Թորգոմի պատճառաւ:

Պ. Սթերիատիս, զարմացած.

— Չէի գիտեր, որ խնդիրը մինչեւ այդ տեղուանքը հասած է, կ'ըսէ, քանի որ այդպէս է, ուրեմն կ'աշխատիմ զինքը հեռացնել:

Այս տեսակցութեան վրայ թէեւ լուր կ'ելլէ թէ Պ. Սթերիատիս Թորգոմը դուրս հաներ է Իզմիրէն, լուր, որ մամուլին մէջ ալ արձագանք գտած է, բայց իրիկունն իսկ Թորգոմ կը տեսնուի քաղքին մէջ, կնոջ մը հետ թեւ թեւի:

Քաղաքական ժողովն ալ իր կողմէն նկատի առնելով Թորգոմի պարագան, կ'որոշէ կանչել զինքը, իր սպաները եւ մարդիկը եւ դրամ տալ, պայմանաւ, որ ոչ միայն դադրեցնեն իրենց գործունէութիւնը, այլ նաեւ անմիջապէս մեկնին Իզմիրէն:

Այս որոշումը, ինչպէս քաղաքական ժողովին մէջ, այնպէս ալ ժողովուրդին մէջ ընդհանուր հաւանութեան կ'արժանանայ, բայց կարելի չըլլար զայն գործադրել, որովհետեւ դէպքերը կը գահավիժին անսպասելի արագութեամբ մը:

Սեպտեմբերի 9-ի Շաբաթ օրը, Թորգոմ քաղաքն էր իր խումբով: Առաջին թուրք ծիաւորները քաղաք պիտի մտնէին ժամը 11-ին: Ատկէ մէկուկէս ժամ առաջ, Թորգոմի խումբը քարափին երկայնքը զօրանցք կը կատարէր հայկական եւ հէլլէնական դրօշակներ պարզած, եւ Թորգոմ ճառեր կ'արտասանէր զանազան կէտերու վրայ: Բայց Հայերը, մանաւանդ գաղթականները շտապով կը հեռանային իր խումբին գտնուած վայրերէն:

Թէեւ ըսուեցաւ թէ Թորգոմ եւ իր խումբը նոյն Շաբաթ առտուն Մանիսա կը գտնուէին, բայց ասիկա հաւանական չէ, որովհետեւ Մանիսայի եւ Իզմիրի հեռաւորութիւնը չի ներեր, որ առտուն հոն գտնուող խումբ մը ժամը 10-ին Իզմիր դարձած ըլլար:

Թորգոմը տեսնողներ եղած են Պիրէոն: Եթե ճիշտ է ասիկա, շատ հաւանականաբար Չէշմէի ճամբով փախած էր:

Իր խումբը պետք է ցրուած ըլլայ փախուստի միջոցին, որով-
հետեւ իրեն հետ գտնուող սպաներէն ոմանք տեսնուած են
առանձին, զանազան կէտերու վրայ, հէլլէն զինուորներու մէջ:

Աղէտէն ազատող բոլոր անձերը զորս առիթ ունեցայ
տեսնելու, համաձայն են սա կէտին նկատմամբ թէ թուրքերու
կողմէ Հայոց մասին ցոյց տրուած ատելութեան մեծագոյն
պատճառը եղաւ Թորգոմ:

Արամ Կայծակ, որ թալանի եւ սպանութեան դէպքերու
համար բանտարկուած էր, Աֆիոն Գարահիսարի վրայ եղած
յարձակումէն ետք ազատ կ'արձակուի եւ կը վերակազմէ իր
խումբը: Կ'ըսուի թէ Ազ Հիսարի մէջ այս խումբն ալ մասնակ-
ցեցաւ թուրքերու սպանութեան ու թալանին: Վերջին օրերը,
Արամ Կայծակ եւ իր խումբը միացած էին Թորգոմին: Յայտ-
նի չէ, թէ ինչ եղած է:

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ

1919-էն, այսինքն Իզմիր գրաւումէն ի վեր, տաճկահպա-
տակ Հայոց անցագրի գործողութիւնները տեղի կ'ունենային
հետեւեալ կերպով:

Անցագիր ուզողը կը դիմէր առաջնորդարանին ինքնու-
թիւնը հասատող գիր մը կ'առնէր: Այդ գիրը պետք էր վաւե-
րացուէր անգլիական հիւպատոսարանի կողմէ, եւ յետոյ ներկա-
յացուէր ֆրանսական հիւպատոսարան, որ իսկոյն բրօթէժէ-ի
անցագիր մը կու տար: Առանց անգլիական հիւպատոսարա-
նի վաւերացման ալ կարելի էր ֆրանսական բրօթէժէ-ի ան-
ցագիր ստանալ: Հայերը, ինչպէս առհասարակ միւս տաճկա-
հպատակները յունական անցագիր չէին առնէր, հէլլէն հպա-
տակ չնկատուելու եւ զինուորագրութեան, եւն. խնդիրներ չու-

նենալու համար: Արդէն այս պատճառաւ վերոյիշեալ բրօթքոյը հաստատուած էր անցագիրներու մասին:

Ոմանք ալ, նոյն պայմաններով, իտալական բասբօր կ'առնէին, երբ Իտալիա պիտի երթային:

Բայց վերջին թրքական յարձակողականը դեռ չսկսած, ֆրանսական հիւպատոսարանը այլեւս տաճկահպատակներուն բրօթէժէ-ի անցագիր չէր տար, խնդրարկուներուն յայտնելով թէ այդ մասին հրահանգ ստացած է:

Եղած դիմումներու վրայ, միջոց մը թէւս սկսան նորէն տալ, բայց թրքական յարձակողականին ծաւալումէն եւ հէլլեն նահանջէն ետք վերստին դադրեցուցին: Նոյնիսկ հիւպատոսարանին հետ շատ մերձաւոր յարաբերութիւն ունեցող անձեր չկրցան անցագիր ստանալ:

Վերջին օրերուն, զարհուրանքին մէջ, լէսէ-բասէ տուին, սակայն, ֆրէրներու, մայրապետներու կամ ուրիշ ֆրանսացոց դիմումներուն կամ միջամտութեան վրայ:

Ընդհանուր առմամբ, ֆրանսական, ինչպէս ամէն դաշնակից իշխանութիւն, ոչինչ ըրին կամ կրցան ընել քաղքին մէջ տեղի ունեցող անկարգութիւնները եւ սպաննութիւնները դադրեցնել տալու համար: Իրենց մտահոգութիւնը առաւելապէս իրենց սեփական հպատակներուն պաշտպանութիւնն էր, բայց այդ գործն ալ չէին կրնար լրիւ կատարել, այնքան յանդուգն ու անզուսպ դարձեր էին թուրքերը:

Կիրակիի դէպքերուն վրայ կազմուած միլիսները թէւս ձեռքերուն եկած օգնութիւնը կ'ընծայէին, բայց մեծ ազդեցութիւն մը չունէին թուրքերուն վրայ, որոնք չէին յարգեր զանոնք, եւ յաճախ անոնց ձեռքէն մարդիկ առնելով կը քշէին կը տանէին դէպի Բունթա եւ կը սպաննէին այնտեղ կամ ճամբաներուն վրայ:

Սակայն դաշնակից հաստատությունները, հիւպատոսարան, դպրոց, եւլն. առհասարակ չմերժեցին իրենց մէջ ապաստանելու եկողները, եւ շատ մարդիկ ու ընտանիքներ կոտորածէ ազատեցան այդ ասպնականութեան շնորհիւ: Մասնաւորաբար յիշատակելի են ֆրանսական հաստատությունները, ինչպէս Սարրէ Քէօր-ի եւ ֆրէրներու վարժարանները, Ալիանս Ֆրանսէզը, ֆրանսական հիւանդանոցը, Մայրապետանոցները, որոնք խոշոր բազմութիւններ հիւրընկալեցին ջարդի օրերուն եւ վերջէն դիւրացուցին անոնց շոգենաւ մուտքը:

Իտալացիք նոյնպէս ամէն դիւրութիւն ընծայեցին Հայոց, եւ ժողովուրդը մեծապէս կրնար օգտուիլ անոնց բարեացակամութենէն, եթէ տրամադրելի նաւեր ունեցած ըլլային:

Ամերիկեան հաստատություններն ալ մեծ դեր խաղացին, եւ Ամերիկացոց շնորհիւ կարելի եղաւ փրկել մասնաւորաբար աղջկանց որբանոցին պատսպարեալներէն կէսէն աւելին:

Երկուշաբթի, 11 Սեպտեմբեր, երբ քաղքին մէջ զարհուրանքը աւելցաւ եւ կոտորածները սաստկագոյն համեմատութեան հասան, իտալական հիւպատոսարանի զինուորական կցորդ.

Պ. Ժօրտանօ, որ Հայնեցէն անցնելով տեսեր էր սպանուած Հայոց դիակները, թէլէֆօնով յարաբերութեան կը մտնէ Մուսթաֆա Քէմալի բանագէտին հետ, եւ կատարուած դէպքերը նկարագրելով եւ անոնց պատասխանատու հանգամանքը շեշտելով կը խնդրէ, որ գոնէ ժողովուրդը ազատ ձգեն, որ հեռանայ: Ֆրանսական հիւպատոսն ալ համիմաստ ձեռնարկ մը կ'ընէ: Ատոր վրայ, Մուսթաֆա Քէմալ հրահանգ կը դրկէ որ դժգոհները կամ մնալ չուզողները թող հեռանան քաղքէն:

Երեքշաբթի կէսօրէն վերջ, կը հասնի այս հրամանը եւ ասկէ ետքն է, որ դաշնակիցները կը սկսին նաւերը առնել իրենց սեփական հաստատութեանց մէջ ապաստանողները:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒ ՄԻԼԻՍՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Նահանջող Հէլլէն զինուորներէն լոկ Նաջիլիի զօրաբաժինը չէր խառնակուած եւ քաղաք կը մտնէ ամենայն կանոնաւորութեամբ, իր բոլոր ռազմամթերքով, թնդանօթներով, անասուններով ու կազմաձններով:

Օգտուելու համար կարգապահ զօրաբաժնի մը ներկայութենէն, անգլիական իշխանութիւնները կ'առաջարկեն միւս դաշնակից իշխանութեանց որ քաղքին պահպանութիւնները առժամաբար յանձնուի այդ զօրաբաժին, որպէսզի մինչեւ Իզմիրի պարպումը կամ ժողովուրդին հեռացումը որեւէ անկարգութիւն չպատահի, եւ թուրքերուն մուտքը արինահեղութեան տեղի չտայ: Վերջէն, երբ Հէլլէն զինուորներն ու ժողովուրդէն մեկնիլ ուզողները հեռացած ըլլային, այդ Յունական զօրաբաժինը կրնար առանց թուրքերուն հետ ընդհարելու Չէշմէ քաշուիլ եւ անկէ Հունաստան անցնիլ:

Ֆրանսացիք սակայն կը հակառակին այս առաջարկին, առարկելով որ թուրքերը գաղթական են եւ ամենայն իրաւամբ պէտք է վայելեն իրենց յաղթութեան պտուղը, Իզմիր մտնելով ազատօրէն:

Անգլիացիք երկիւղ կը յայտնեն թէ թուրք բանակին այդ եղանակով մուտքը կրնայ շատ ծանր դէպքերու տեղի տալ, բայց ֆրանսացիք անդրդուելի կը մնան:

Վերջէն, թուրքերու մտնելէն ետք, երբ կոտորածն ու թալանը կը սկսին եւ անպաշտպան ժողովուրդը կը սկսի խուճապահար փախչիլ, առանց ուր երթալիքը գիտնալու, դաշնակից իշխանութիւնները իսկոյն գումարում մը կ'ունենան, քիչ շատ կարգապահութեան եւ իրենց հպատակներուն ու պաշտպանեալներուն ապահովութեան ծառայելիք միջոցներ ձեռք առնելու համար:

Ֆրանսացիք կ'առաջարկեն, որ խառն միլիս կազմով դաշնակից հպատակներէ եւ զինուորներէ:

Այն ատեն անգլիացի հրամանատար կ'ըսէ.

Մենք նախապես վտանգը ցոյց տուինք եւ միջոց մըն ալ առաջարկեցինք անոր առաջքը առնելու համար, բայց դուք չուզեցիք մեր առաջարկը ընդունիլ: Հիմայ այլեւս ոչինչ կարելի է ընել: Միլիս կը կազմէք կամ ուրիշ միջոցներ ձեռք կ'առնէք, ձեր գիտնալիք բանն է:

Մենք չենք մասնակցիր, եւ հիմայ իսկ զինուորներս պիտի քաշեմ նաւերը:

Անգլիացիք ատոր վրայ մարտանաւերը կը փոխադրեն իրենց զինուորները:

Ֆրանսացիք, Իտալացիք եւ ուրիշ եւրոպական ազգեր, կը կազմեն միլիս մը, որուն պատկանող իւրաքանչիւր զինուոր թելին վրայ կը կրէր իր պատկանած պետութեան դրօշին գոյներով բազպան մը:

Տեղ տեղ այս միլիսները օգտակար եղան, դիւրացնելով փախստականներու քարափ անցքը: Բայց թուրքերը անոնց կարեւորութիւն չէին ընծայեր, անոնց աչքին տակ մարդ կը կողոպտէին, նոյնիսկ եւրոպացիները կողոպտեցին:

**ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՄՈՒՏՔԸ, 9 ՍԵՊՏ. ՇԱԲԱԹ,
ԺԱՄԸ 11-ԻՆ**

Ժողովուրդին խուճապը սկսած էր պարտութեան անաշին լուրերուն վրայ, բայց նախ վախը այնքան Իզմիրի համար չէր, որքան շրջակայ քաղաքներու մասին, որոնց քրիստոնեայ ժողովուրդը գունդ-գունդ փախչելով քաղաք կը հասնէր հետզհետէ: Տեղական մամուլը կ'աշխատէր մտքերը հանդարտեցնելու: Թերթերը կը գրէին թէ ոչ մէկ վտանգ կը սպառնայ Իզմիրի եւ թէ փախչողները վատերն են:

Բայց տակաւ, Հէլլէն բանակին նահանջող զինուորները քաղաք կը ժամանէին չափազանց խառնափնթոր եւ անկարգ վիճակի մը մէջ, հէլլէնական իշխանութիւնը կը թուլնար քաղքին մէջ, ուր Սեպտեմբերի առաջին եօթնեակին վերջերը կատարեալ անիշխանութիւն պիտի տիրէր: Խուճապը կը սկսէր:

Սեպտեմբեր 6-ին Հէլլէնական Ասբազիա շոգենաւով կը հեռանան Արեւելեան Մամուլի խմբագիր Պ. Հրանտ Մամուրեան, ընտանեօք եւ քաղաքական ժողովոյ անդամներէն ոմանք, ինչպէս Պալապանեան Կարապետ, Ազնավորեան Միհրան, եւն.: Ուրիշ շոգենաւերով ալ հեռացողներ կ'ըլլան:

Ոմանք ալ Միտիլի կամ մերձակայ միւս կղզիները կ'անցնին մակոյկներով:

Բուն խուճապը կը սկսի թուրքերուն մտնելէն օր մը առաջ, Ուրբաթ, 8 Սեպտեմբեր: Նոյն օրը, Հայոց եւ Յունաց առաջնորդները ու Միւֆթին գումարում մը կ'ունենան, որուն ընթացքին փոխադարձ համաձայնութեամբ կ'որոշեն Պասմահանէի եւ թրքաց թաղին միջեւ կազմել չէզօք գիծ մը, որպէսզի ոչ թուրքերը կարենան քրիստոնեայ թաղերը մտնել, ոչ ալ այս վերջինները թուրք թաղերը, եւ շփոթութեան պատճառա-

տուող ընդհարումներ տեղի չունենան: Թէ թուրքերուն եւ թէ Հայոց ու Յունաց կողմէ պահակներ կը նշանակուին չէզոք գիծին պահպանութեան համար:

Նոյն Ուրբաթ գիշերը սակայն, հրացանաձգութիւն կը սկսի թրքաց թաղին ծայրագոյն կէտէն որ կիցն է Յունական Այ Վուրլա թաղին, ուր կը բնակէին նաեւ Հայ ընտանիքներ: Թէեւ ոմանք կը կարծեն թէ խրախճանութեան համար տեղի կ'ունենայ այդ հրացանաձգութիւնը, բայց Այ Վուրլայէն փախստականներ կը հասնին դէպի Պասմահանէ եւ Հայնոց, եւ անոնցմէ լուր կ'առնուի թէ թուրքերը յարձակած են թաղին վրայ, կը կոտորեն ու կը թալլեն:

Գրեթէ ոչ մէկ իշխանութիւն գոյութիւն ուներ նոյն միջոցին քաղքին մէջ, այդ յարձակումները արգիլելու համար:

Գիշերը կ'անցնի վրդովուած եւ վախու մէջ: Քիչեր կրնան քնանալ, որովհետեւ հրացանաձգութիւնները կը շարունակուէին անընդհատ եւ պիտի տեսէին մինչեւ առտու:

Շաբաթ կանուխէն, ժողովուրդին խուճապը կը հասնի իր ծայրագոյն աստիճանին: Արդէն իսկ փախչողներու ռումբեր կը սկսին իջնել դէպի քարափ, կ'ապաստանին ֆրանսական եւ օտար հաստատութիւններ, մասնաւորաբար Ալիանս Ֆրանսէզի շէնքը, որ կը գտնուի ֆրանսական հիւպատոսարանի շրջափակին մէջ, եւ կ'աշխատին անցագիր ստանալ հեռանալու համար:

Հայնոցին մէջ մարդիկ մշտատես խռովքի տակ կը մնան ամբողջ ժամեր, մինչեւ թուրքերուն մուտքը: Փախստականներ կը պատմեն թէ յանկարծ լուր կ'ելլէր, որ թուրքերը կու գան կոր, եւ ամէն մարդ տուները կ'ապաստանէր ու փողոցները վայրկենաբար կը պարպուէին: Յետոյ, ապահովութիւնը

կը վերսկսէր, մարդիկ դուրս կ'ելլէին նորէն, բայց կրկին ահազանգի աղաղակ մը թէ թուրքերը կու գան կոր ու դարձեալ փողոցները կը դատարկուէին վայրկենաբար: Շուկան, եւ առհասարակ քաղքին բոլոր խանութները մեծ մասամբ գոց էին:

Գաղթականները, որոնցմէ ոմանք արդէն ուրիշ ապաստարան չունէին, հետզհետէ կը լեցուէին Ս. Ստեփաննոս եկեղեցիին շրջափակը: Իսկ քարափ իջնողներուն բազմութիւնը կը ստուարանար վայրկեանէ վայրկեան:

Ոչ ոք սակայն գիտէր թէ թուրքերը իրապէս շատ մօտն են, երբ յանկարծ, ժամը 11-ին, քաղաք մտնող առաջին թուրք ձիաւորները կը տեսնուին քարափին վրայ: Բոլոր ականատեսներն ալ կ'ըսեն թէ քիւլահներով, ընդհանրապէս չէրքէսի տարազով եւ սոսկալի երեւոյթով մարդիկ էին մտնողները, որոնք կանոնաւոր զինուորի երեւոյթը չունէին բնաւ: Հազիւ անոնք տեսնուած, ճամբաներուն վրայ գտնուող ժողովուրդը կը սկսի փախչիլ ամէն ուղղութեամբ եւ ապաստանիլ շէնքերու մէջ: Բաց մնացած խանութները եւ սրճարանները կը փակուին անմիջապէս: Ժողովուրդին խուճապը տեսնելով, ձիաւորներուն ընկերացող սպաները կը պողան:

— Մի' վախնաք, բան չկայ:

Բայց ոչ ոք կը յաջողին ապահովցնել, եւ այլեւս ճամբաներուն վրայ գրեթէ բնաւ քրիստոնեայ չի մնար, մինչդեռ քաղքին բնիկ թուրք տարրերէն կազմուած զինեալ խումբեր երեւան կ'ելլեն յանկարծ:

Կ'ըսուի թէ երեք ձեռնառումը նետուած է այդ առաջին անկանոն զինուորներուն վրայ որոնք Իզմիրի շրջակաները մնացած ժողովուրդէն մաս մը եւ ճամբաներուն վրայ գտնուող Հէլլէն զինուորներ սպաննելէ ետք քաղաք մտեր էին: Այդ ձեռ-

նառումբերէն մէկուն պայթումէն կը վիրաւորուի թուրք սպայ մը: Այս դէպքէն առաջ ձիաւորները սպանած էին փողոցէն անձ մը, որ Յոյն ըլլալ կ'ենթադրուի:

Ձինուորները շիտակ զօրանոց կ'ուղղուին, ուրկէ քիչ ետքը, քաղքին մէջ կազմուած ոստիկաններու եւ խուժանին հետ, պիտի տարածուէին քրիստոնեայ թաղերը:

Հայնոց գտնուողները, այլեւս փախչելու անկարող, կը փակուին իրենց տունները:

Նոյն շաբաթ իրիկունը Իզմիր կը հասնէր քաղքին նախկին զինուորական կառավարիչ Նուրէտտին փաշա, որ վերահաստատուած էր իր պաշտօնի մէջ: Իրեն հետ Իզմիր կը մտնեն նաեւ կանոնաւոր զինուորներու մէկ քանի գումարտակներ:

Նուրէտտին փաշա իսկոյն հայտարարութիւն մը կը հանէ, ծանուցանելով թէ Անատօլը Հէլլէններու գերեզմանը պիտի ըլլայ, թէ թուրք բանակը իր յաղթական արշաւը շարունակելոց պիտի վերագրաւէ Պոլիսը, Էտիրնէն, Թրակիան եւ այլն: Յայտարարութեան մէջ Նուրէտտին փաշա քօղարկեալ կերպով մը կ'ակնարկէր նաեւ Անգլիացոց, ըսելով թէ «յաղթեցինք Հէլլէններուն եւ անոնց պաշտպաններուն»:

Յաջորդ օրերու ընթացքին քաղքին մէջ պիտի հրատարակուէին ուրիշ Յայտարարութիւններ ալ, ոմանք Նուրէտտին փաշայի կողմէ, որ բնակիչներուն կ'ազդարարէր թէ Յոյն սպայ եւ զինուոր պահողները ամենախիստ կերպով պիտի պատժուին, ոմանք ալ ուրիշ պաշտօնատարներու կողմէ, եւ Յայտարարութիւն մըն ալ Մուսթաֆա Քէմալ փաշայի ստորագրութեամբ, որ կը միտէր ժողովուրդը հանդարտեցնելու,

ծանուցանելով թէ Քրիստոնեաներու կեանքին եւ ինչքին դպչողները ծանր կերպով պիտի պատժուին:

Այս վերջին Յայտարարութիւնը հրատարակուած միջոցին ջարդերն ու թալանը սկսած էին արդէն, եւ Յայտարարութեան հրատարակութենէն ետք ալ շարունակուեցան, մինչեւ որ հրդեհը լրացուց աղէտը:

ԹԱԼԱՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾ

Թուրք ձիաւորներու Իզմիր մտնելէն ժամ մը վերջ, առաջին հրացանաձգութիւններն ու կոտորածները կը սկսին, բայց մասնակի կերպով, զանազան կէտերու վրայ, որոնց մէջ հոժ չէր քրիստոնեայ բնակչութիւնը:

Այդ առաջին Շաբաթ օրը, երբ դեռ նոր մտած էին, ատելութիւնը մասնաւորապէս Յոյներուն դէմ էր: Հայեր բռնուած ու խոշտանգուած էին, բայց Հայ ըլլալին հասկնալէ վերջ արձակած էին: Շատ հայեր կը ծեծէին, ստիպելով որ ցոյց տան պահուած Յոյները, զորս կը սպաննէին: Հայեր ալ սպանուեցան սակայն:

Նոյն օրուան իրիկունը, ինչպէս յաջորդ 3-4 օրերու ընթացքին, այսինքն կոտորածի օրերուն, այդ կարգի մասնաւոր ատելութիւն մը ցոյց պիտի տրուէր Հայերու նկատմամբ, որոնցմէ ոմանք, ճարահատ, Յոյներու տունը ապաստանած էին: Կարգ մը Յոյն ընտանիքներ իրենց մօտ ապաստան փնտռող Հայեր մերժեցին ընդունիլ: Ուրիշներ որոնք Հայեր առած էին ներս ստիպեցին զանոնք, որ մեկնին: Թուրքերը, կը պոռային Յոյներուն թէ իրենց բան չկայ, թէ լոկ Հայեր կը փնտռեն:

Հայոց մասին իրենց տրամադրութեանց այս յանկարծական փոփոխման պատճառը ապահովաբար Հրեաներու եւ

նոյնիսկ Յոյներու ցուցմունքները եղած են: Տարակոյս չկայ որ թէ Հրեաները եւ թէ Յոյները չարախօսած են Հայոց մասին: Արդէն շատ Յոյներ կը պոռան եղեր Հայերու թէ իրենց համար կը զոհուին իրենք...:

Վերջէն, երբ կոտորածը ընդհանրացաւ, խուժան եւ զինուոր այլեւս զանազանութիւն չպիտի դնէին Հայու եւ Յոյնի միջեւ, զորս կը կոտորէին անխնայ: Ամէն պարագայի մէջ, չի կարծուիր որ Յոյներուն անձի կորուստը Հայոցմէ շատ եղած ըլլայ, ընդհակառակը:

Սեպտ. 9-ի Շաբաթ օրն իսկ, թուրքերուն մտած օրը, ցերեկէն անմիջապէս վերջ կը սկսին շուկային թալանը: Հայոց եւ Յունաց վաճառատուններու ցուցափեղկերը կը խորտակուին եւ ապրանքները կը թալլուին աննկարագրելի խաժամուժի մը մէջ: Միհրան Ազնաւորեանի, Սիվրիհիսարեաններու, Պաքրճեան Յակոբի, եւն. հսկայ վաճառատունները, որոնց մէջ 8-10 միլիոն Օսմ. ոսկիի մթերք կը գտնուէր, երկու օրուան մէջ հազիւ պիտի կրնային պարպել: Հրեաներ կը շրջէին թալանողներու շուրջը եւ ամենաոչինչ գիներով կը գնէին թալլուած ապրանքները: Քրեթ տը շին-ամերիքան-ի, խասայի եւն. ծրարները մէկ ոսկիով կ'առնէին կը տանէին: Նաեւ ուրիշ ամէն կարգի ապրանքներ, կարասիներ, եւն.: Խոշոր խանութներ որոնց մէջ անսպառ մթերք կար, կը պարպուէին քանի մը ժամուան մէջ:

Կառքեր, ջորիներ, էշեր, ձեռնակառքեր վայրկենաբար կը լեցուէին ու կը տարուէին: Շատ հրեաներ հարստացան այս թալանին շնորհիվ:

Կողոպուտէն ետք շուկայէն անցած ականատեսներ կը պատմեն թէ այն ահագին մթերանոցներուն մէջ հազիւ մէկ քանի կոտորած աթոռ կամ սեղաններ միայն կը մնային:

Մինչդեռ շուկան սկսած էին կողոպտել, աստին զինուոր-ներ եւ պաշրպօզուքներ, գրեթէ նոյն ժամուն, կը պաշարեն Հայնոցը եւ կը տարածուին անոր զանազան փողոցներուն մէջ: Մէկ քանի մարդիկ կը սպանուին ճամբաներուն վրայ, կամ իրենց տուներուն առջեւ: Տեղ տեղ, մասնակի առեւան-գութեան դէպքեր տեղի կ'ունենան: Իրիկուն կողմ, սպանու-թիւնները եւ թալանը աւելի պիտի ընդհանրանային: Դուռնե-րը կը խորտակէին, ընտանիքներ կը հանէին տուներէն, երի-տասարդ այրերը կը բաժնէին ու կը դրկէին դէպի որոշ ուղղու-թիւն մը, գեղանի եւ երիտասարդ աղջիկներն ու կիները դէպի ուրիշ ուղղութիւն մը, իսկ մնացեալ կիներն ու տղաքը, ինչպէս նաեւ ծերերն ալ դէպի երրորդ ուղղութիւն մը: Անկէ ետք, տու-նը վերէն վար կը կողոպտէին, վերցնելով նոյնիսկ ամէնէն անարժէք առարկաները:

Տերեկին արդէն, այլեւս յարաբերութիւնները կարելի չէին Հայնոցին եւ քարափին միջեւ որովհետեւ ճամբաները բռնուծ էին խուժանին կամ զինուորներուն կողմէ: Մէկ քանի հոգի, գրեթէ հրաշքով կրցած են վտանգաւոր գօտիէն խոյս տալ եւ ֆրէրներու մօտ ապաստանիլ:

Մէկ քանի տուներու վրայ ամերիկեան դրօշ պարզուած էր:

Ուրիշ տուներ պարզած էին Ֆրանսական, Իտալական, եվն. դրօշներ, բայց թալանողները, եթէ օտար զինուոր չըլլար սոյն ստեն, չէին յարգեր զանոնք:

Ակնաբոյժ Տոքթ. Երամեանի տունը, որուն վրայ ամերի-կեան դրօշ պարզուած էր, թուրք խուժանին եւ զինուորներու յարձակման կ'ենթարկուի, որովհետեւ իրենց կողմէ հետա-պնդուած Հայ մը հոն ապաստանած էր: Տնեցիները կ'ըսեն թէ

իրենք ամերիկեան հպատակ են, բայց յարձակողները կը պնդեն թէ անպատճառ պէտք է իրենց յանձնուի հոն մտած Հայը, այլապէս բռնի ներս պիտի մտնեն: Այդ միջոցին, բարեբախտաբար ատկէ կ'անցնէին ամերիկացի պահակներ որոնք տեսնելով տան վրայ պարզուած ամերիկեան դրօշը, կը մօտենան յարձակողներուն եւ կը հարցնեն թէ ինչ կ'ուզեն:

Թուրքերը կը յայտնեն թէ Հայ մը ապաստանած է հոն եւ թէ կ'ուզեն որ իրենց յանձնուի: Ամերիկացիք, տան վրայ պարզուած ամերիկեան դրօշը ցոյց տալով կը հրաւիրեն թուրքերը որ անմիջապէս հեռանան, ու տեսնելով որ անոնք չեն ուզեր մեկնիլ, իրենց հրացանները կ'ուղղեն անոնց վրայ, ազդարարելով որ եթէ անմիջապէս չմեկնին, պիտի կրակեն: Ատոր վրայ, յարձակողները կը փախչին: Ամերիկեան պահակախումբը յետոյ նոյն տան մէջ գտնուողները, ինչպէս նաեւ անոնց մօտ ապաստանած Հայը առնելով կ'իջեցնեն քարափ:

Նալպանտեան ընտանիքը որ Հայնոցի Սիւրուր թաղը կը բնակի, կ'ապաստանի դրկից ամերիկեան հպատակ յոյնի մը տունը, որուն վրայ ամերիկեան դրօշ պարզուած էր, եւ որուն մէջ կը գտնուէր նաեւ ամերիկացի զինուոր մը: Հետզհետէ, ուրիշ փողոցներէ փախչողներ ալ կու գան այդ տունը կ'ապաստանին, այնպէս որ երկու սենեակի մէջ 170 հոգի կը խռնուին գրեթէ իրարու վրայ: Խուժանը կը մտնէ նաեւ Սիւրուր փողոց: Նալպանտեանները որոնք ականատես եղած են, կը հաւաստեն թէ միշտ նոյն դրութիւնը ի գործ կը դրուէր, այսինքն կը ջոկէին երիտասարդ այրերն ու աղջիկները, կը դրկէին հսկողութեամբ, յետոյ կը սպաննէին կամ կը հեռացնէին մնացածները եւ ի վերջոյ թալանը կը սկսէր:

Նալպանտեանները որոնք չորս օր, այսինքն մինչեւ հրդեհին մօտենալը, այդ տունը մնացած էին, մէկ անգամ միայն կը տեսնեն կանոնաւոր զինուորներ որոնք կը կեցնեն թալանողները եւ «Ազգին անունը անպատուեցիք» ըսելով կը ստիպեն զանոնք որ թալուած առարկաները թողուն ու հեռանան: Բայց հազիւ թալանողները հեռացած, իրենք կը հաւաքեն փողոց թափուած իրերը, ինչպէս նաեւ տուներու մէջ մնացած ամէն առարկայ եւ կը տանին:

Մինչեւ Չորեքշաբթի, ամերիկեան հպատակ այդ յոյնի տան վրայ քանիցս յարձակում տեղի կ'ունենայ խուժանին կողմէ, որ կը պոռար թէ տան մէջ կեավորներ կան զորս պէտք է իրենց յանձնեն, բայց երբ ամերիկացի զինուորը պատուհանէն կ'երեւար, իսկոյն կը հեռանային:

Չորս օր, գրեթէ լոկ ջուրով կ'անցնեն տնեցիներն ու անոնց մօտ ապաստանած 170 հոգին: Տան մէջ հազիւ քիչ մը ալիւր կը գտնուի, եղեր, զոր փիտէ շինելով կը բաժնեն: Իւրաքանչյուրին հազիվ մատի չափ կտոր բաժին կ'իյնայ:

Չորեքշաբթի, երբ կրակը կը մօտենայ մինչեւ իրենց քովի տունը, բնականաբար կը ստիպուին դուրս ելլել, իրենց հետ ունենալով նաեւ ամերիկացի զինուորը որ կ'ընկերանար ամերիկեան հպատակ յոյն ընտանիքին: Հազիվ փողոցին ծայրը հասած, 60-70 պաշըպօզուքներ կը շրջապատեն զանոնք եւ կը կողոպտեն: Ամերիկացի զինուորը յոյնին ընտանիքը կ'ազատէ ու կ'առնէ կը տանի: Թուրքերուն անուշադրութենէն օգտուելով, կարելի կ'ըլլայ անոնց ընկերացնել նաեւ Սահակեաններու աղջիկը, օրիորդ Ռօզա Սահակեանը:

Իսկ մնացած 170 հոգին, որոնց մէջ կը գտնուէին Տիկին Ռօզա Նալպանտեան, իր երկու տղաքն ու աղջիկը, Ալթու-

նեանները, Զարեհ Շնորհաւոր, Թագուհի Գալփարճեան, Աւետիսեան, Էօտէմիշցի Ճապալեան, Պալեան ընտանիքը, ելն. Թուրքերուն կողմէ կը քշուին մինչեւ Այա Ֆօթինի եկեղեցին եւ կ'արգելափակուին անել փողոցի մը մէջ, որուն մուտքը զինուորներու խումբ մը կը բռնէ անմիջապէս: Այս զինուորներուն ընկերացող սպան, կատարեալ բարբարոս մը, գաւազանի հարուածով մը կը վիրաւորէ Պ. Մկրտիչ Նալպանտեանը, որ իրեն խօսք ուղղելու մեղքը գործած էր:

— Հայ ես ու դեռ կը յանդգնիս թուրքի մը խօսք ուղղելու, ըսեր է սպան զարկած միջոցին:

Ժամերով կը մնան այդտեղ, մահուան սպառնալիքի տակ: Միջոց մը, մինչդեռ իրենցմէ ոսկերիչ Գէորգ Սահակեան եւ Ալթունեաններու տղան կը խօսէին իրարու հետ, զինուոր մը կը մօտենայ անոնց եւ կը հարցնէ թէ արդեօք Մանիսացի չեն:

— Այո՛, Մանիսայէն ենք, կը պատասխանեն:

— Իմ ալ փնտռածս աստ էր, կ'ըսէ զինուորը, եւ զանոնք բռնի քաշելով կ'առնէ կը քշէ մինչեւ մերձակայ փողոց մը, ուր սպաննուած պէտք է ըլլան:

Այս 170 հոգիի խումբէն Նալպանտեանները պարսկահպատակ էին եւ իրենց բասթօնները ցոյց տուած էին զինուորներուն, որոնք սակայն պատռեր էին թուղթերը: Իրենց բախտէն պարսից դեսպանատան գաւակը ատկէ կ'անցնի, կը կանչեն գալ, եւ որովհետեւ իրենց քով կողոպուտէն զերծ մնացած դրամ կը գտնուէր, գաւակին միջնորդութեամբ կը յաջողին զինուորները կաշառել, եւ հեռանալ, իրենց հետ առնելով նաեւ Սահակեանները:

Նալյանտեսաններու վկայութեան համաձայն, երբ Հայնոցէն կ'անցնէին զիրենք ձերբակալող պաշտօնատէրներուն հսկողութեամբ, գրեթէ բոլոր տուններու դռները կոտորուած էին, իսկ ճամբաներուն վրայ ամէն կողմ դիակներ կը գտնուէին:

Ժողովուրդը, այդ ջարդի ու թալանի օրերուն մեծ մասամբ խոնուած էր քարափը, մինչեւ Բունթա: Յոյները մանավանդ բազմաթիւ էին Բունթայի մէջ: Աւելի բախտաւորներ կը գտնուէին օտար հաստատութեանց մէջ: Սեպտեմբեր 9-ի Շաբաթ գիշերը, հրացանաձգութիւնը կը շարունակուի քաղքին մէջ: Նոյն գիշերը, Էօմէր Էֆէնտի անունով թուրք հարիւրապետ մը որ Ալիանս Ֆրանսէզ եկած էր, այնտեղ ապաստանողներուն կ'ըսէ թէ հոգ մի ընէք, ամէն բան հանդարտելու վրայ է, վաղը կիրակի թերեւս պզտիկ բաներ մը պատահին տակաւին, բայց մինչեւ երկուշաբթի ամէն ինչ խաղաղած եւ անդորրութիւն ու ապահովութիւնը բացարձակապէս կը վերահաստատուին:

Կիրակի, մինչեւ ցերեկ, խաղաղ կ'անցնի իրօք: Բայց իրիկուան կողմ դէպքերը կ'երեւայ շատ վրդովիչ ընթացք մը կ'առնեն որ ֆրանսական եւ միւս հիւպատոսարանները կը սկսին միլիսներ կազմել իրենց հպատակներէն:

Հրացանաձգութիւնը այլեւս անընդհատ կը տեսէ եւ Հայնոցին կողմերէն եկող մարդիկ լուր կու տան թէ զարհուրանքի մէջ են հայկական թաղերը եւ շատ դիակներ կը գտնուին փողոցները: Պարսկական հիւպատոսը մանաւանդ որ Հայնոցէն կու գար, կը պատմէ թէ տեղ տեղ իրարու վրայ այնքան դիակներ կուտակուած էին, որ մեծ դժուարութեամբ կրցած էր անցնիլ: Նոյն հիւպատոսը որ շուկայէն ալ անցեր է, կը յայտնէ թէ չթալլուած խանութ չէր մնացած:

Մինչեւ քարափին կողմերը կը տեսնուէին դիակներով լեցուն կառքեր որոնք յայտնի չէ թէ ուր կը տարուէին:

Կիրակի կէս օրէ վերջ մինչեւ իրիկուն, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, ջարդ եւ կողոպուտ կը շարունակուին անխնայ կերպով:

Վերջին երեք օրերու ընթացքին զինուոր եւ խուժան մինչեւ քարափները տարածուած, կը կողոպտէին փողոցը գտնուող մարդիկը, նոյն իսկ եթէ երոպացի ըլլային: Ֆրանսացիներ, իտալացիներ, անգլիացիներ, եւ այլն, կողոպտուեցան այդ երեք օրերու ընթացքին: Երբ Հայ գտնէին, սովորաբար կ'անուէին կը քշէին ներս: Յոյներուն չէին դաչեր, լոկ կը կողոպտէին զանոնք: Օտար միլիսները որոնք ականատես էին այս անցքերուն, չէին կրնար միջամտել, նոյն իսկ երբ կողոպտուող մարդիկը իրենց պատկանած պետութեան հպատակները ըլլային:

Կիլիկեցի գաղթականներէն ստուար մաս մը ապաստանած էր Առաջնորդարանի դէմը: Ռեշատիէ Ճատտէսիի վրայ գտնուող Շահին խանը, զոր խուժանը պաշարեց, անխնայ սպաննելով անոր մէջ գտնուողները:

Հաւաքուած երիտասարդ Հայերը վերջէն լեցուցած էին սավունաներ: Յայտնի չէ թէ ուր տարուեցան: Պարսկահպատակ երիտասարդ մը, ուզած էր ազատել իր ծանօթներէն մէկը որ սավունաներուն մէջ կը գտնուէր: Զինվոր մը կ'արգիլէ զինքը, ըսելով.

— Ելի՛ր գնա՛, եթէ չես ուզեր որ քեզ ալ անոնց հետ քշենք: Ոմանք կը հաւաստեն թէ հրացանի բռնուած կամ ծովը թափուած են բոլորն ալ, թէեւ որեւէ հաստատ վկայութիւն չկայ այդ մասին:

Հինգշաբթի, 14 Սեպտեմբեր, Մուսթաֆա Քէմալ փաշա, որ Քորտէլիօէն Իզմիր իջած էր, ձիով եւ իր սպայակոյտին հետ, կը յառաջանայ մինչեւ Բունթա, Տիսօի բաղնիքին առջեւ ուր խոնուած էր փախստական Հայերու, Յոյներու եւ զինուորներու ահագին բազմութիւն մը: Փաշան կարճ ատենախօսութիւն մը կ'ընէ, ըսելով թէ կը մեղքնայ քրիստոնեաները, որոնց տուները կը վառին եւ կ'ապահովցնէ զանոնք, աւելցնելով.

— Ալ ազատ էք, հոգ մի' ընէք:

Նոյն գիշերը, մինչդեռ Մուսթաֆա Քէմալ փաշա կը վերադառնար Քորտէլիօ ուր իջած է Սարեաններու տունը, Կոստանտին թագաւորին երբեմնի բնակավայրը, խուժանը նոր ջարդ մը կը սարքէր, այս անգամ քարափին վրայ, որմէ սոսկումի ու ցաւի աղաղակներ կը բարձրանան երկար ժամեր:

Թալանի եւ սպանութեան դէպքերու ընթացքին ամենաստոր դեր մը խաղացած են Իզմիրի հրեաներէն մաս մը, որոնք ջարդարարներուն ընկերանալով ցոյց կու տային Հայոց տուներն ու խանութները, եւ որոնք մատնանիշ կ'ընէին նաեւ կարգ մը իբր թէ Յոյներուն գործակցած Հայեր, եւ անոնք սպանութեան պատճառ կը դառնային:

ՀՐԴԵՀԸ

Երեքշաբթի 12 Սեպտեմբեր, առաջին կրակ մը ծագած էր քաղքին Ս. Կոստանդինոս յունական թաղին մէջ, բայց շուտով առաջըր առնուած էր:

Նոյն օրը կ'այրէր Իզմիրի մերձակայ Գոգլուձա յոյն գիւղը, բաւական ընդարձակ կայք մը, մօտաւորապէս 500 տունով,

որուն բնակիչները փախած էին արդէն, եւ զոր թուրքերը կրակի տուած էին: Գիւղին այրիլը կը տեսնուէր քաղքէն ու շոգենաւերուն վրայէն:

Չորեքշաբթի, 14 Սեպտեմբեր, Ժամը 2-ին մինչդեռ Լամարթին շոգենաւը ճամբայ ելլալու կը պատրաստուէր, յանկարծ նշմարուեցան ծուխի երեք սիւներ, որոնք կը բարձրանային Հայնոցին մէջէն: Թնդանօթի երեք հարուածներ կ'արձակուին նոյն ատեն, իբր հրդեհի յայտարար, ինչպէս հնուց սովորութիւն է Իզմիրի մէջ: Քիչ ետքը, ծուխերուն հետ կը բարձրանան նաեւ բոցի սիւներ, միշտ երեք ուղղութեամբ: Հրդեհին վառարանը ապահով կերպով Հայնոցն էր, որովհետեւ բոցերուն մէջ յստակօրէն կը նշմարուէր Ս. Ստեփաննոս եկեղեցիին զանգակատունը:

Ամբողջ Չորեքշաբթի գիշերը հրդեհը պիտի շարունակուէր նոյն սաստկութեամբ: Գիշերուան 5-ին հրդեհին զանգան թելերը միացած, Հայնոցը ամբողջովին գրկած, իջած էր Յունաց թաղը, ուրկէ արտակարգ արագութեամբ պիտի տարածուէր ֆրանկաց թաղ: Այս թաղին բնակիչները գրեթէ կիսամերկ պիտի փախչէին, յանկարծակիի եկած ըլլալով հրդեհին ծաւալման արագութենէն:

Յաջորդ Հինգշաբթի, հրդեհը միշտ կը շարունակուէր եւ երբ Ֆրիժի շոգենաւը ճամբայ ելլելուն վրայ էր, քաղաքին ստուարագոյն մասը բոցերու մէջ էր արդէն եւ հրդեհը կ'իջնէր քարափ: Ճիշտ այն միջոցին, ուր շոգենաւը կը մեկնէր, քարափին երկայնքը խոնուած ահագին բազմութիւնը, որ հրկիզուծ թաղերէն փախչելով հոն ապաստանած էր, ինքզինքը վտանգուած զգալով, վայնասունների սկսաւ արձակել եւ Քօրսոսին երկայնքէն փախչիլ դէպի Բունթա: Պահ մը այդ ճամբան լու-

սաւորեցին մարտանաւերու լուսարձակները: Ֆրիժի դեռ Իզմիրի առջեւն էր: Իր մէջ ապաստանողները որոշակի լսեցին Բունթա փախչող ժողովուրդին կողմէ արձակուած սոսկումի աղաղակները, եւ նոյն ատեն միթրայէօզի համազարկներու ձայնը առին: Տարակոյս չէր մնար թէ շրջակաները ծածկուած թուրքեր միթրայէօզներով կը կոտորէին փախստականները:

Հրդեհը Հինգշաբթիէն ետք, տակաւին մինչեւ կիրակի պիտի տեւէր աւելի քան 200 000 քրիստոնեայ բնակիչներ առանց ապաստանի թողլով:

Իզմիր երեք քառորդ մասով այրուած էր:

Քարաշէն տուները պոմպաներով փլցուեցան շատ տեղեր, որպէսզի հրդեհին ծաւալումը չկասի:

Այնպէս կ'ենթադրուի թէ բաւական թուով մարդիկ մեռան հրդեհին մէջ: Բազմաթիւ ածխացած դիակներ կը տեսնուէին վերջէն ամէն կողմ:

Ոմանք ողջ ողջ այրած էին, յանկարծակիի եկած ըլլալով ու փախչելու հնար մը չգտնելով: Բայց այդ ածխացած դիակներուն մեծագոյն մասը կը պատկանէր կոտորածին զոհերուն:

ՀՐԴԵՀԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Քարաշէն թաղի մը մէջ ծագում առած այս հրդեհը սահմանափակել եւ մարել բնականաբար շատ դիւրին պիտի ըլլար: Իզմիրի մէջ հրդեհները միշտ յաճախադէպ եղած են, բայց սովորաբար մէկ քանի տուն կ'այրէր:

Անըմբռնելի կը մնայ ուրեմն այս հրդեհին ստացած ահռելի ծաւալը: Որքան ալ հովին սաստկութեան վերագրուի հրդեհին տարածումը, տարակոյս չկայ որ մասնաւոր կէտեր աստիճանաբար կրակի տրուած են հետզհետէ, ստեղծելով

միանգամայն բազմաթիւ վառարաններ, որոնք զանազան ուղղութեամբ տարածուելով պիտի փճացնէին քաղքին երեք քառորդ մասը:

Թէ ով կրնար այս կերպով հրդեհին ծաւալման աշխատիլ, դժուար չէ անշուշտ գուշակել: Որոշ աղբիւրներէ բղխած տեղեկութիւններ աշխատեցան Հայոց եւ Յունաց վրայ ձգել հրդեհին պատասխանատուութիւնը: Բայց Շաբաթէն մինչեւ Երեքշաբթի, թէ Հայերը եւ թէ Յոյները անխնայ ջարդուելու վրայ էին, եւ իրենց թաղերուն մէջ չէին գտնուեր: Կամ ինկած էին Քէմալականներու ձեռքը եւ մեկուսացուած, կամ քարափին երկայնքն էին, եւ կամ օտար հաստատութեանց ու շոգենաւերու մէջ: Եթէ թալանէ եւ ջարդէ զերծ մնացած թաղերու մէջ Հայ եւ Յոյն խումբեր կը մնային, բնական է իրենք իրենց ձեռքով չպիտի վառէին իրենց ապաստանը: Մասնաւորաբար Հայնցին մէջ Չորեքշաբթի Հայ չկար գրեթէ: Ջարդուողը ջարդուեր, փախողը փախեր եւ տուները ամբողջովին թալլուեր էին: Հրդեհը ծագած է Տիկին Նունեայի տունէն, ուր ոչ ոք կը գտնուէր այդ միջոցին եւ որ բոլորովին թալլուած էր:

Կատարուած կոտորածներուն ու թալանին հետքերը սրբելու մէջ շահն ունեցող մարդիկ, այսինքն թուրքերը միայն կրնային ոչ միայն կրակ ձգել, այլ մանաւանդ զանազան կէտերու վրայ նոր վառարաններ ստեղծելով հրդեհին ծաւալումը դիրացնել: Որ Հայը կամ Յոյնը, այդ սարսափի օրերուն մէջ կրնար ձեռքը քարիւղի թիթեղ մը տուները բռնկցնել: Մէկ կամ երկու, կամ երեք մարդով ըլլալիք գործ մը չէ ասիկա: Եւ անանկ ատեն մը ուր թուրքերը քաղքին գրեթէ բոլոր կողմերը տարածուած, հանդիպած Հայը եւ հանդիպած Յոյնը կը սպաննէին, երբ թուրք պահակներ գրեթէ ամէն կէտի: Նոյ-

նիսկ եւրոպական թաղերու մէջ կը շրջէին, ինչպէս Հայեր կամ Յոյներ պիտի կրնային համարձակիլ հրդեհիչ ռումբեր կազմել միանգամայն շատ մը կէտերու վրայ եւ տուները բռնկցնել: Նիւթապէս հնարաւոր չէր, որովհետեւ իսկոյն պիտի տեսնուէին կամ խուժանին եւ կամ զինուորներու կողմէ ու պիտի սպաննուէին:

Մնաց որ ամբողջ այս հրդեհին պատմութեան մէջ, ո՛չ թրքական, ո՛չ ալ եւրոպական որեւէ աղբիւրէ ցարդ չըսուեցաւ թէ քաղաքը գրաւող թուրք իշխանութիւնները սա կամ նա միջոցը ձեռք առին հրդեհին ծաւալումը կասեցնելու համար: Մինչդեռ դժուար չէր ատիկա, եթէ որոշ կէտերու վրայ տուներ փլցուէին, եթէ մանաւանդ իրական ճիգ մը ըլլար հրդեհը կարելի եղածին չափ սահմանափակելու եւ մարելու: Չափազանց հատկանշական բան մըն է ինքնին թրքական թաղին հրդեհէն զերծ մնացած ըլլալը:

Ուրիշ թաղեր, որոնք նուազ վտանգուած էին քան թրքականը, պիտի այրէին:

Հրէական թաղը նոյնպէս զերծ մնացած է հրդեհէն:

Շատ արժանահաւատ վկայութիւններ արդէն կը հաստատեն թէ կրակը ձգողը եւ տարածողները թուրքեր եղան:

Ամերիկեան զօլէջին տնօրէնը Մր. Մաքլաքլըն տեսած էր թուրք սպաներ եւ զինուորներ, որոնք պէնզին կը թափէին Հայնոցին տուներուն վրայ:

Քարաշէն տունէր, աւելի դիրաւ վառելու համար, պօմպաներով փլցուած են տեղ տեղ, եւ նոյնիսկ Ս. Ստեփաննոս եկեղեցին վառելու համար պօմպա գործածուած է:

Պօմպա գործածած են նաեւ Յունական Այ Ֆօթինի քարաշէն եկեղեցին քանդելու համար, բայց չեն յաջողած:

Նալպանտեանները, որոնք Հայնոցէն ամէնէն վերջը, եւ հրդեհին տարածուելէն ետք ելած են, կը վկայեն թէ շարունակ կը լսէին զինուորները, որոնք շրջակայ վառող փողոցներուն մէջ, «պօմպա», «պօմպա» կը ծայնէին իրարու, ինչպէս նաեւ հրամաններ թէ հոս դրէք, հոն դրէք:

Եւ շուտով պայթումները կը յաջորդէին այդ հրամաններուն:

Պ. Արամ Թօքաթեան, որ Պիրէոն կը մնայ, դէպի Սաքրէ Քէօրի ֆրէրներուն հաստատութիւնը գացած միջոցին կը տեսնէ թուրք զինուորներ, որոնք պօմպայով կը փլցնեն Վահէ Լազեանի տունը:

Իսկ Նալպանտեանները, Հայնոցէն ելած ատեննին տեսեր էին մէկ քանի ջրհաններ, բայց բոլորն ալ անգործածելի, որովհետեւ թուրքեր կտրած էին բոլոր ջուրի կտաւէ խողովակները, եւ ջրհանկիրները թելերնին ծալլած պարզապէս հրդեհը կը դիտէին:

Ֆրիժի շոգենալին վրայ գտնուող Սաքրէ Քէօրի Ֆրէրներ, որոնք ականատես եղած էին Իզմիրի անցքերուն, պատմեր են թէ իրենք տեսան որ քաղքին զանազան կէտերուն վրայ թուրքեր կրակի կու տային տուները:

Իրենց հարցուեր է թե՛ այդ մասին մամուլին յայտարարութիւն պիտի ընեն: Պատասխաներ են թէ առանց նախապէս իրենց մեծաւորը տեսնելու եւ անկէ արտօնուելու, որեւէ յայտարարութիւն չեն կրնար ընել:

Սաքրէ Քէօրինկարգին պատկանող ուրիշ ֆրէր մը, որ նոյնպէս Ֆրիժի վրայ կը գտնուէր, կը պատմէ թէ հրդեհին գիշերը թուրք սպայ մը կու գայ իրենց հաստատութեան դուռը կը զարկէ: Կը հարցնեն թէ ինչ կ'ուզէ: Չէք ճանչնար զիս, կը

պատասխանէ սպան, ես ձեր նախկին աշակերներէն մէկն եմ, եւ ձեզի պարտական ըլլալուս կու գամ լուր տալու թէ գիշերը այս կողմերը ամբողջովին կրակի պիտի տրուին, խնդրեմ, մի կենաք ու մեկնեցէք: Ասիկա ըսելէ վերջ սպան կը հեռանայ: Նոյն գիշերը իրօք պիտի վառէին այդ կողմերն ալ:

Թէ հրդեհը ձգուած է սպանութեանց ու թալանին հետքերը անհետացնելու համար, կը հաստատուի Նալպանտեաններու հետեւեալ վկայութեամբ:

Երկուշաբթի հրատարակուած Մուսթաֆա Քէմալ փաշայի այն յայտարարութիւնը թէ քրիստոնէից կեանքին եւ ինչքին դպչողները ծանրապէս, նոյնիսկ մահուամբ պիտի պատժուէին: Բայց եթէ այս որոշումը գործադրուելու ըլլար, քաղքին թուրք բնակչութեան եւ քաղաք մտած զինուորներուն ստուար մեծամասնութիւնը մահուամբ պատժելու պէտք պիտի ծագէր:

Մուսթաֆա Քէմալ փաշայի Յայտարարութեան արժէք մը տալու, եւ սոյն ատեն որեւէ հետապնդման տեղի չծագելու համար, անհրաժեշտ էր վերցնել սպանութեան ու թալանի հետքերը:

Նալպանտեանները Հայնոցին Սիւրուր փողոցին մէջ ուր ամերիկեան հպատակ Յոյնի մը տունը ապաստանած էին, կը վկայեն թէ Երկուշաբթի օր, այսինքն հրդեհէն երկու օր առաջ, Պէլէտիյէի պաշտօնեաներ, զինուորներ, գործաւորներ մտան Հայ թաղերը, սկսան վերցնել դիակները, գետիններուն վրայ արինի հետքերը մաքրեցին եւ սկսան նորոգել բոլոր կոտրած դուռները, յարձակման հետքերը ջնջելու մտքով: Բայց կարելի բան չէր: Փորձ մըն ալ կ'ընեն նաեւ միւս օրը Երեքշաբթի, եւ տեսնելով թէ անօգուտ պիտի մնան իրենց ջանքերը, կը թո-

ղուն կը մեկնին: Յաջողօր օրը հրդեհը պիտի սրբէր ամէն հետք:

Դիտելի պարագայ մըն է որ Տիկին Նունեայի տունը, ուրկէ հրդեհը սկսաւ, կը գտնուի Հայնոցին ծայրագոյն անկիւնը, Պասմահանէի կայարանին դէմ, ուր թուրքերուն մտնելէն վերջ ոչ մէկ Հայ կրնար երթալ, որովհետեւ ամէնէն թրքաշատ եւ վտանգաւոր կէտերէն մէկն էր: Այնտեղ կը կեդրոնանային թուրքերը դէպի քրիստոնեայ թաղերը արշաւել:

Ուրիշ ուշագրաւ պարագայ մը սա է, որ Հրեաները լուր ունէին հրդեհին ծագումէն, նոյնիսկ երկուշաբթի օրուրնէ: Հայնոցին տուներէն գրեթէ կէսը կը պատկանէր իրենց, բայց անոնց վրայ կարմիր նշանատախտակներ կախուած էին, «միւսէվի» հրեայ- վերտառութեամբ, եւ թուրքերը բնաւ չդպան անոնց, մնաց որ կողոպուտի միջոցին հրեաներ կ'ընկերանային իրենց, աժան աժան գնելու համար կողոպտուած առարկայները: Հրեաներուն ապահովութեան համար մասնաւոր հրահանգ կար. եւ Հայեր ճամբաներուն վրայ կրցեր էին ազատել ինքզինքնին հրեայ ձեւացնելով: Հետեւաբար Հայնոցին մէջ գտնուող հրեաներ կողոպուտէ վախ չունէին բնաւ: Երկուշաբթի սակայն, հապճեպով կառքեր մտցուցին թաղը եւ իրենց տուները ամբողջովին պարպելով, կարասի ելն. փոխադրեցին դէպի թրքական եւ հրէական թաղերը: Կարելի է հետեւցնել ուրեմն որ տեղեկութիւն ունէին թէ Հայնոցը կրակի պիտի տրուի: Իրենց կարասիներուն փոխադրութիւնը կը տեսէ երկու օր, մինչեւ Երեքշաբթի: Չորեքշաբթի հրդեհը պիտի ծագեր:

ՅՈՒՆԱՑ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Աթէնքի Էլէֆթերիոս Թիրոս լրագրին պատմութեան համաձայն, Յունաց Առաջնորդ Տ. Խրիստոսթոմոս սպաննուած է հետեւեալ պարագաներուն մէջ:

Առաջնորդը բարի եկաքի այցելութեան կ'երթայ Նուրէտտին փաշային, որ իսկոյն անոր կը հարցնէ.

— Իրաւ է որ Դաշնակից զինուորներու առաջին անգամ Իզմիր ելած օրը անգլիացի հրամանատար Տիքսընի ըսած էք թէ Իզմիրի մէջ պատժուելու արժանի գլխաւոր անձը ես եմ:

Նուրէտտին փաշա այն ատեն Իզմիրի զինուորական հրամանատարն էր:

— Այո, կը պատասխանէ առաջնորդը:

— Ես ատոր փոխարէն չեմ պատժեր քեզ, կ'ըսէ Նուրէտտին փաշա, կը թողում որ ժողովուրդը իր ուզած կերպով ի գործ դնէ արդարութիւնը:

Ու ճամբու կը դնէ զայն:

Վերադարձին առաջնորդին օթոմօպիլը դիտմամբ կ'անցնեն թրքական թաղէն, ուր խուժանը կը յարձակի օթոմօպիլին վրայ, վար կ'առնէ առաջնորդը եւ շատ մը չարչարանքներով սպաննելէ վերջ մարմինը կը պտտցնեն բոլոր թրքաբնակ թաղերը, յետոյ կտոր-կտոր կ'ընեն:

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՓԱԽՈՒՍԸ

Առաջին օրէն ուր քաղաք մտան թուրքերը կը փնտռէին նաեւ Հայոց առաջնորդ Ղեւոնդ եպիսկոպոս Դուրեանը: Այն միջոցին, ուր եկեղեցին կը պաշարուէր, առաջնորդը հոն չէր, այլ ապաստանած էր Ատանացի յայտնի կաթոլիկ Պ. Սիսլեանի մօտ, որ ինչպէս անցեալին մէջ, այնպէս նաեւ Իզմիր, ծանօթ էր իբր թրքասէր, եւ շատ հաշտ չէր Յունաց հետ:

Սիսլեան, ինք պատմած է այս իրողութիւնը, կ'երթայ կը ներկայանայ Նուրէտտին փաշային եւ անոր մօտ կը բարեխօսէ Ղեւոնդ եպիսկոպոսի մասին, պարզելով այն կորովի ընթացքը զոր ցոյց տուած էր Թորգոմի արարքներուն նկատմամբ, աւելցնելով նոյն ատեն թէ Ղեւոնդ եպիսկոպոս երբեք գոհ չէ մնացած Յոյներու ներկայութենէն, թէ հաւատարիմ օսմանցի մըն է, ելն.: Սիսլեան չի ծածկեր Նուրէտտին փաշայէն թէ Ղեւոնդ եպիսկոպոս իր տունն է եւ թէ անհամբեր է վայրկեան մը առաջ գօնաք գալով իր եւ իր հօտին հաւատարմական զգացումները արտայայտելու:

Այս տեսակցութիւնը տեղի կ'ունենար իրիկունը, ուշ ատեն:

— Եարըն պագարըք, կ'ըսէ Նուրէտտին փաշա:

Յայտնի չէ թէ Սիսլեան ինչ տպաւորութիւն կը կրէ Նուրէտտին փաշայի այս պատասխանէն: Բայց նոյն գիշերն իսկ Ղեւոնդ եպիսկոպոսը կը տանի ֆրէրներուն եւ կը խնդրէ անոնցմէ որպէս զի իրենց մօտ պահեն զայն:

Միշտ իր պատմութեան համաձայն, ֆրէրները նախապէս չեն ուզեր Ղեւոնդ եպիսկոպոսը ընդունիլ, առարկելով թէ իբր առաջնորդ պէտք է իր հօտին գլուխը մնալ եւ վայել ալ չէ, որ ծածկուի, անանկ ատեն մը ուր իր հօտը վտանգի մէջ է: Այն ատեն Սիսլեան կը յայտնէ թէ մնալէն օգուտ մը չպիտի ծագի, քանի որ զինքն ալ պիտի սպաննեն ինչպէս սպաննած էին Յունաց առաջնորդը: Ատոր վրայ ֆրէրները կը հաւանին ընդունիլ Ղեւոնդ եպիսկոպոսը, եւ ի վերջոյ կը յաջողին զայն փոխադրել ֆրանսական Ժան Պար զրահաւորը, որուն միջոցաւ կ'ազատի:

ՄՊԱՆՆՈՒԱԾ ԾԱՆՕԹ ՀԱՅԵՐԸ

Առաջին Հայը որ ջարդին կը զոհուի, Հորիզոն լրագրին խմբագիրներէն Պ. Զարեհ Գալէգեանն է, զոր կը սպաննեն Ս. Ստեփաննոս եկեղեցիին մօտերը:

Առաջին օրը կը սպաննուի նաեւ փաստաբան եւ Քաղաքական ժողովոյ նախորդ անդամ Նազարէթ Հիլմի (Ներսէսեան) որ Քաղաքական ժողովէն քաշուած էր Յոնիական շարժման համամիտ չլլալուն համար, Յոյներուն շատ համակիր չէր: Իզմիր հրատարակուող թուրք լրագիր մը, Քէմալի զինուորներուն քաղաք մտնելէն ետք կը հրատարակէ Նազարէթ Հիլմիի եւ Բարսեղ Կիւլպէնկեանի պատկերները անոնց տակ գրելով թէ երկուքն ալ Օսմ. Պետութեան հաւատարիմ բարեկամներ են եւ թէ պէտք է ամէն պաշտպանութիւն ընծայել անոնց: Վերջէն սակայն, խուժանը կը յարձակի Նազարէթ Հիլմիի տան վրայ եւ կ'ուզէ բռնի առնել տանիլ անոր աղջիկը: Նազարէթ Հիլմի կը դիմադրէ, եւ այդ դիմադրութեան միջոցին կը սպաննուի: Հաւանական կը նկատուի որ աղջիկը առեւանգած ըլլան:

Բարսեղ Կիւլպէնկեանի համար ալ կ'ըսուի թէ սպաննուած է:

Սպաննուած ծանօթ Հայոց մէջ կը յիշուին նաեւ տպարանատէր Քէշիշեանները, որոնցմէ Սարգիսի կոյս աղջիկը Զապէլ Քէշիշեան կ'առեւանգուի: Թուրքերը կը սպաննեն նաեւ Քէշիշեաններու փեսան Լեւոն Բամպուքճեանը որ եազմայի վաճառական էր:

Առաջին օրերուն կը սպաննուի նաեւ կեսարացի ծանօթ հարուստ վաճառական եւ Պէլէտիէի անդամ Միհրան Զամ-

պաքճեան: Ձինքը կը սպաննեն ոտքերնուն տակ կոխկրտելով եւ կ'առեւանգեն աղջիկը:

Պասմահանէի կայարանին մէջ կը սպաննուին երեք Հայեր, որոնցմէ մէկը նոյն կայարանին պաշտօնեաներէն Ապրօ Ֆնագլեանն էր:

Սպաննուած են նաեւ Յովհաննէս Պետիկեան, առաջն. փոխանորդ Տ. Յարութին քահանայ, կարասիի վաճառական Փափագեան եւ Պերճ Սիվրիհիսարեան:

Խարբերոցի վիրաբոյժ մը որ ծանօթ էր «Ճէրահ Արթին» անունով ինքզինքը կը թունաւորէ հիւանդանոցին մէջ: Կինը եւ զաւակը քարափ էին, Չամպաքեանի ընտանիքի հետ:

Սիվրիհիսարեան ընտանիքը որ քաղաք մնացած էր, ամբողջութեամբ բանտարկուած էր:

Տ. Արսլան քահանայ կը սպաննուի, հաւանականաբար Գօրտէլիօի մէջ, շատ չարչարանքներու ենթարկուելէ ետք:

ԻՉՄԻՐԻ ՀԱՅ ՈՐԲԵՐԸ

Թուրքերուն մտնելէն հինգ օր առաջ, Երկուշաբթի, 4 Սեպտ. երբ լուրերը սկսած էին գէշնալ, առաջնորդ Դուրեան եպիսկոպոս, քաղաքական ժողովին հետ համախորհուրդ, կը դիմէ ամերիկեան հիւպատոսարան, խնդրելու համար, որ քաղքին գրաման պարագային ամերիկեան հաստատութիւնները ստանձնեն Հայ երկսեռ որբերու պաշտպանութիւնը:

Ամերիկեան հիւպատոսը, Մր. Հորթըն, խորհուրդ կու տայ այդ մասին համաձայնիլ Ամերիկեան վարժարանի տեսուչ Մր. Մաքլաքլընի հետ:

Այս վերջինը կը յանձնարարէ որ թուրքերու մտած միջոցին աղջկանց որբանոցին վրայ ամերիկեան դրօշ պարզեն:

Իսկ մանչերու որբանոցին որբերն ալ փոխադրեն ամերիկեան մանկապարտէզը որ անոր պատկից է:

Յայտնի չէ թէ ընդհանուր շփոթութեան մէջ ինչ կ'ըլլան որբերը:

Սեպտեմբեր 11-ին քարափին մօտերը կը տեսնուի մանչերու որբանոցին տնօրէն Պ. Օննիկ Թադէոսեան, գլուխը բաց, տակնուվրայ վիճակի մէջ, վազելու վրայ: Ծանօթ Հայեր գինքը կը կեցնեն եւ կը հարցնեն թէ ուր կը վազէ: Կը յայտնէ թէ որբանոցը կոխեցին, փրկանք կ'ուզեն, եւ թէ Դաշնակից իշխանութեանց կը դիմէ որ կամ որբերուն պաշտպանութեան համար միջոց մը ձեռք առնեն եւ կամ պահանջուած փրկանքը ճարեն:

Յայտնի չէ, թէ ինչ կ'ըլլայ վերջէն, բայց չի կարծուիր որ Պ. Թադէոսեանի դիմումը գործնական արդիւնք մը տուած ըլլայ, որովհետեւ քաղքին մէջ այլեւս ամէն բան իրար անցած էր, ոչ մէկ միջամտութիւն հնարաւոր էր:

Մանչերու որբանոցին մէջ կը գտնուէին 400-ի մօտ որբեր:

Սեպտեմբեր 14-ի Հինգշաբթի օրը Լամարթին շոգենաւով Պիրէոն հասնողներ տեսած էին Իզմիրի ամերիկեան հիւպատոս Մր. Հորթընը եւ իր կինը, յուզեալ ու խռովագին դրութեան մը մէջ: Ոմանք տեղեկութիւն ուզեր են իրմէ Իզմիրի մասին, բայց պատասխան չէ տուեր: Կինը նոյնպէս չէ ուզեր խօսիլ, բայց ի վերջոյ, սա միայն յայտներ է թէ որբանոցին փողոցը եւ նոյն իսկ հիւպատոսարանը այրած էին եւ թէ իրենք ալ շատ մեծ դժուարութեամբ յաջողեր էին ազատիլ:

Պոլսէն լուր կը տրուի թէ 4-500 որբեր այնտեղ հասած են Իզմիրէն: Յայտնի չէ որ անոնք ամերիկեան որբանոցին թէ Ազգ. որբանոցին որբերն են:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Աֆիօն Գարահիսարէն, Ուշագէն, եւ բոլոր պարպուած վայրերէն փախած ժողովուրդը որ Իզմիր հասած էր աննկարագրելի թոհ ու բոհի մը մէջ, խռնուած էր Ս. Ստեփաննոսի եկեղեցիին շրջափակը: Շատ հաւանականաբար Թուրքերու մուտքէն ետք, եկեղեցի փութացած էին, նաեւ Կիլիկեցի գաղթականներէն կարեւոր մաս մը, որով եկեղեցիին շրջափակին մէջ կը գտնուէին մօտաւորապէս 12 000 ժողովուրդ, մեծամասնութեամբ կին եւ տղաք:

Ս. Ստեփաննոս եկեղեցին իրեն յարակից շէնքերով կը գրաւէ Հայնոցին ամբողջ մէկ անկիւնը: Եկեղեցին չորս կողմէն շրջապատուած է գերեզմաննոցներու շատ ընդարձակ քառակուսի շրջափակով մը, որուն երեք երեսները պաշտպանուած են 6-7 մէթր բարձրութեամբ հաստատուն պատերով եւ չորրորդ երեսն ալ եկեղեցապատկան խանութներու շարքով մը: Շրջապատը ունի երեք դուռ, մեծ դուռ մը Հայնոցի պողոտային վրայ, անոր կից առաջնորդարանին դուռը եւ դուռ մըն ալ սովորաբար իբր մուտքի դուռ կը ծառայէ, եկեղեցիի փողոցին վրայ, Մամուրեան տպարանին դէմ:

Թուրքերուն մտնելուն յաջորդ կիրակի օրը, դիակներ տեսնուած էին արդէն եկեղեցիին մուտքի դրան դէմ, Մամուրեան տպարանին առջեւ:

Թաղին մէջ, ինչպէս քաղքին ամէն կողմը, անընդհատ հրացանածգութիւն կ'ըլլար: Կոտորածը սկսած էր արդէն, որով եկեղեցիին շրջափակը հաւաքուած այդ 12 000 հոգիէն ոչ ոք դուրս ելլելու կը համարձակէր, մանաւանդ որ իմացուած էր թէ միմիայն Հայ կը փնտռէին եւ կը սպաննէին:

Եկեղեցիին մէջ գտնուողներէն ոմանք զինուած էին: Փախուստի միջոցին փողոցը միթրայեօզ մը գտնելով միասին առեր էին: Զէնք ճարելը, այդ օրերը ամենադիրին բան մըն էր, որովհետեւ փողոցները շատ զէնք ձգուած էր եւ քաղքին մէջ կատարեալ անիշխանութիւն կը տիրէր: Եկեղեցիին շրջափակը երեք երեսէն պատերով եւ չորրորդ երեսէն ալ եկեղեցապատկան խանութներով փակուած էր: Ոչ մէկ տեղ պատուհան: Հետեւաբար կարելի չէր դուրսի անցած դարձածը տեսնել կամ թշնամիին ուր գտնուիլը ճշտել զէնք արծակելու համար: Ս. Ստեփաննոսի զանգակատունին բարձունքէն միայն կարելի էր փողոցը տեսնել:

Թուրքերը, որոնք արդէն Հայնոցը թալլելու վրայ էին, շուտով կը պաշարեն եկեղեցին: Ոչ մէկ զէնք կ'արծակուի ներսէն: Պաշարողները նախ կը հրաւիրեն Հայերը որ անձնատուր ըլլան եւ շատ խոստումներ կ'ընեն զանոնք համոզելու համար, սակայն ջաջողելով, կը փորձեն առաջնորդարանին, ինչպէս եկեղեցիին երկու դուռները խորտակել: Բայց դուռերը երկաթէ եւ շատ հաստատուն ըլլալով կը դիմանան: Այն ատեն թուրքերը պօմպա կը նետեն ներս, չորս անգամ յաջորդաբար, եւ քանի մը հոգի կը վիրաւորեն:

Եկեղեցիին մէջ գտնուողները 48 ժամ պաշարուած կը մնան: Ուտելիք ալ չունէին: Թուրքերը ոչ միայն չեն հեռանար, այլ հետզհետէ աւելի կը ստուարանան, եւ չկարենալով պատերով պաշտպանուած կողմերէն ներս անցնիլ, կը սկսին խորտակել առաջնորդարանին կից, Պուլվարին երկայնքը գտնուող խանութները, այն կողմէն անցք մը բանալու համար: Պաշարուած Հայեր որոնք այդ կողմը հսկողութիւն կը կատարէին, վտանգը կ'իմացնեն ներսիններուն: Ուրիշ Հայեր կը

փութան անոնց մօտ, պաշտպանութեան հնար մը գտնելու համար, երբ յանկարծ, փլցուած խանութի մը մէջէն կը նշմարեն ֆրանսացի Ֆրէր մը որ անկէ կ'անցնէր, եւ ծայն կու տան անոր: Ֆրէրը կը մօտենայ խանութին: Հայերը կը նկարագրեն իրենց դրութիւնը եւ կը խնդրեն որ Դաշնակիցներուն մօտ միջնորդէ իրենց ազատութեան համար: Կը յայտնեն թէ պատրաստ են մեկնելու դաշնակիցներուն յանձնուելու, եւ եկեղեցիին բանալիներն ալ ֆրէրներուն կամ օտար իշխանութեանց յանձնելու, պայմանաւ որ ազատօրէն կարենան քարափ իջնել եւ իրենց զինաթափութիւնն ալ այնտեղ կատարուի Դաշնակիցներու կողմէ:

Ֆրէրը կը դիմէ ֆրանսական իշխանութեանց: Չորս ֆրանսացի սպաներ, որոնց կ'ընկերանային նաեւ իտալացի եւ թուրք սպաներ, ֆրէրներ եւ պաշտօնեաներ, կը փութան եկեղեցի, յայտնելով ժողովուրդին թէ կրնան անվախ դուրս ելլել: Ատոր վրայ, ժողովուրդը կը սկսի պարպուիլ, բայց թուրքերը չեն յարգեր Դաշնակից սպաներուն տրուած խոստումը:

Ոչ միայն պաշարուած Հայերը կը բռնադատեն զէնքերը ձգելու, այլ թուրք խուժանը կը յարձակի անոնց վրայ եւ կը սկսի աննկարագրելի խուճապ մը որուն ընթացքին ոմանք կը սպաննուին տեղին վրայ կամ շրջակայ փողոցներու մէջ, ուրիշներ ձերբակալուելով դէպի Բունթա կը տարուին եւ կը սպաննուին, մաս մը կը յաջողի իջնել քարափ, եւ ուրիշ փոքրաթիւ խումբեր ալ բախտը կ'ունենան ֆրանսացուց կամ ֆրէրներուն, կամ իտալացուց պաշտպանութեան շնորհիւ օտար հաստատութիւնները ապաստանիլ:

Իրենց մէջ գտնուող քահանաները դուս ելլելէ առաջ մօրուքնին կտրած էին, որովհետեւ խուժանը մասնաւոր

ատելութեամբ մը կը հետապնդէր եւ կը սպաննէր եկեղեցականները:

Ըստ ոմանց Պասմահանէի առջեւ ալ Հայերու խումբ մը որ յարձակման ենթարկուած էր թուրք ջարդարարներու կողմէ, ինքնապաշտպանութեան կը դիմէ եւ երկուստեք բաւական մարդիկ կը սպաննուին:

ԿԱԹՈՒԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Թուրքերուն քաղաք մտնելէն ետք, Սիսլեան կառաջարկէ Իզմիրի Հայոց որ խմբովին կաթոլիկ ըլլան, այն յոյսը տալով, թէ այդ կերպով կրնան պաշտպանութեան առարկայ դառնալ Ֆրանսացոց եւ Իտալացոց կողմէ: Ոչ ոք սակայն կը հաւատար թէ Ֆրանսացիք կամ Իտալացիք իրենց պաշտպանութեան համար այդ տեսակ պայման մը ղնել պիտի ուզէին երբեք, մանաւանդ որ Ֆրանսական հաստատութիւնները ինչպէս ֆրէրներու զանազան վարժարանները, մայրապետանոցները, Ալիանս Ֆրանսէզ, ելն., կ'ընդունէին ներկայացող ամէն հայ: Կը կարծուի թէ Սիսլեան ինքնաբերաբար ըրած էր այդ առաջարկը որմէ արդէն ոչ ոք կրնար օգուտ մը ակնկալել լայն զարհուրանքին մէջ որուն այդ միջոցին մատնուած էր քաղաքը:

ԻԶՄԻՐԻ ՇՐՋԱԿԱՆԵՐՆ ՈՒ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐԸ

Իզմիրի շրջակայ գիւղերու բնակիչները գրեթէ ամբողջութեամբ քաղաք իջած էին նահանջող հէլլեն բանակին հետ:

Մանիսա հրկիզուած էր թուրքերուն գալէն առաջ: Թալանի եւ սպանութեան դէպքեր ալ տեղի ունեցած էին այնտեղ:

Պուրնապաթ զերծ կը մնար սոսկումէ, բայց թուրքերը այնտեղ մտած ատեննին շատ չարիք գործեցին եւ նոյնիսկ Անգլիացի սպանեցին:

Պուճայի մէջ ալ թուրքերը թալան կատարեցին եւ հրդեհ ձգեցին: Կողոպտուեցան եւ սպաննուեցան անգլիացիներ:

Կէօզթէփէ նոյն բախտին ենթարկուած ըլլալ կը կարծուի:

Գօրտէլիօի մէջ կը գտնուին մօտաւորապէս 3000 Հայեր, որոնց մէջ շատ մը ծանօթ ընտանիքներ եւ անձնաւորութիւններ:

Դեռ թուրքերը չմտած, մաս մը Գօրտէլիօցիք ապաստանեցան մօտերը կեցող ճապոնական նաւ մը որ զանոնք Պիրէոն փոխադրեց: Թուրքերու մտնելէն ետք ջարդ մը տեղի ունեցաւ հոն: Ֆրանսական միլիսին զինուորներէն մէկը, Պ. Բիէր, որ այնտեղ դրկուած էր, վերադարձին Ալիանս ֆրանսէզի մէջ կը յայտարարէ թէ շատ զարհուրելի բաներ տեղի ունեցած են հոն, եւ թէ այլեւս չպիտի երթայ, որովհետեւ միլիսներու ներկայութիւնը որեւէ օգուտ չըներ:

Մուսթաֆա Քէմալ փաշա Գօրտէլիօ իջած ըլլալով, կը յուսացուի որ ջարդ, թալան, եւլն. դադրած ըլլան այնտեղ:

Սէրիքէօյ ալ ամբողջովին այրած է:

ԱԶԱՏՈՂՆԵՐԸ

Շատ մարդիկ կրնային մեկնիլ Իզմիրէն, եթէ երբէք հէլլէն իշխանութիւնները ժողովուրդը տեղեակ պահած ըլլային պատերազմին անցքերուն: Բայց ճշմարտութիւնը ոչ միայն կը ծածկուէր, այլ ընդհակառակը, իշխանութիւններն ու թերթերը կը խաբէին ժողովուրդը: Թուրքերուն քաղաք մտնելէն մէկ քանի օր առաջ նոյնիսկ խոշոր հէլլէնական յաղթանակ մը

ծանուցուած էր Իզմիրի մէջ եւ թերթերը կը գրէին թէ Օսմ. բանակը պաշարուած եւ անձնատուր ըլլալու հարկադրուած է: Ուրիշ թերթեր ժողովուրդը կը յորդորէին հանդարտ իրենց գործին նայիլ, ապահովցնելով թէ Իզմիր քաղքին ոչինչ կը սպառնայ եւ թէ վատութիւն է ձգել երթալը:

Եթէ այս խաբէութիւնը չըլլար, քաղաքը մեծ մասամբ պարպուած կ'ըլլար տակաւին թուրքերը չմտած:

Վերջէն, տագնապի օրերուն, այլեւս դժուար պիտի ըլլար հեռանալ:

Ազատողները մեծ մասամբ անոնք են որոնք յաջողած էին ապաստանիլ ֆրանսական կամ ուրիշ դաշնակից հաստատութիւններ եւ անցագիր ձեռք անցնել: Մաս մըն ալ թուրքերուն մտնելէն առաջ Սեպտեմբեր 6-ին և 7-ին հեռացած էին, ոմանք յունական Ասբազիա շոգենաւով, ինչպէս Արեւելեան Մամուլի տնօրէն Պ. Հրանտ Մամուրեան եւ քաղաքական ժողովոյ անդամներէն մէկ քանին, ոմանք ալ մակոյկներով, ինչպէս Սարեան ընտանիքը, ելն.: Թուրքերուն մտնելէն առաջ, Քօրտէլիօցիներու մէկ մասն ալ յաջողած էր ազատիլ ճապոնական նաւով մը որ Քօրտէլիօի բացերը կը կենար:

Թուրքերը, քաղաք մտնելնուն պէս, ծովեզերքը գտնուող մակոյկները կամ ծակած եւ կամ գրաւած էին, որպէս զի փախուստը կարելի չըլլայ: Յետոյ պահակախումբեր կը շրջէին քարափին երկայնքը, պատրաստ կրակելու մակոյկով փախչողներու վրայ:

Մինչեւ Երեքշաբթի, մինչդեռ քաղքին մէջ կոտորած եւ թալան կը շարունակուէին ոչ ոք կը յաջողի մեկնիր: Երեքշաբթի իրիկուն կը հասնի Մուսթաֆա Քէմալի կողմէ իտալական զինուորական կցորդին եւ ֆրանսական հիւպատոսին միջա-

մտութեան շնորհիւ ձեռք բերուած հրամանը, որով դժգոհները ազատ կը թողուր մեկնելու քաղքէն: Նոյն օրն իսկ, 12 Սեպտեմբեր, ֆրանսացիք կը սկսին Լամարթին շոգենավը փոխադրել իրենց հաստատութեանց մէջ գտնուողները: Փոխադրութիւնը շատ կը դժուարացնեն թուրք ոստիկաններն ու պահակախումբերը, որոնք Հայերէն խօսող կամ հայ եղող բոլոր մարդիկը կ'ուզէին արգիլել, եւ անոնցմէ շատերն ալ ձերբակալելով կ'անէին կը տանէին, նոյնիսկ եթէ բրօթէժէ-ի անցագիր ըլլար իրենց ձեռքը:

Միջոց մը, ուզեցին նոյնիսկ քօնթրօլի ենթարկել ֆրանսական բրօթէժէ-ի բասթօրները, վիզէ ընելու պատրուակով, բայց ֆրանսական իշխանութեանց ընդդիմութեան շնորհիւ չյաջողեցան:

Քարափէն շոգենաւ անցքը դիւրին չէր: Երկու մակոյկ միայն կար ժողովուրդին փոխադրութեան համար, եւ քարափին վրայ խոնուած էր ահագին բազմութիւն մը: Իւրաքանչիւր մակոյկ հազիւ 40 հոգի կրնար առնել, թէեւ մինչեւ 50 հոգի իրարու վրայ կը խոնուէին անոնց մէջ: Մարդիկ կը կռուէին, իրար կը կոխտէին, իրար կը հրմշտկէին առաջ անցնելու եւ մակոյկ ցատկելու համար: Կիներ ու պզտիկներ ոտքի տակ կը մնային: Ամէն մարդ իր անձը կը մտածէր: Ընտանիքի անդամներէ ոմանք մակոյկներուն մէջ, ուրիշներ դուրսը իզուր կը փորձէին իրարու միանալ: Պոռչտութիւն, ողբ, աղաղակներ, կատարեալ սարսափի տեսարան մը: Շատ կիներ կը նուաղէին: Թէեւ ֆրանսացի զինուորներ կը հսկէին, որ միայն անցագիր ունեցողներ իջնէին մակոյկ, բայց այդ թոհ ու բոհին մէջ անցագիր չունեցողներ կը յաջողէին մակոյկ ցատկել եւ ունեցողները կը մնային դուրսը:

Լամարթին շոգենաւը այդ Երեքշաբթի լեցուեցաւ, եւ յաջորդ օրը, երբ արդէն հրդեհը սկսած էր, մեկնեցաւ: Հազիւ 100 Հայ կրցած էր առնել: Չորեքշաբթի, հրդեհին զարհուրանքին մէջ, նոյն պայմաններով լեցուեցաւ նաեւ բաքէի Ֆրիժի շոգենաւը, որուն մէջ կրցան մտնել 150-ի մօտ Հայեր, եւ որ մեկնեցաւ Հինգշաբթի:

Իտալական Պարլէթա շոգենաւը որ թուրքերուն մտնելէն օր մը առաջ, ուրբաթ մեկնած էր, բաւական Հայեր առած էր միասին եւ տարած Հռոդոս, ուր հէլլէն իշխանութիւնները մերժած էին ընդունիլ փախստականները: Պարլէթա վերադարձած էր Իզմիր, Հինգշաբթի, երբ Ֆրիժի կը մեկնէր:

Բարեբախտաբար Պարլէթայի մէջ գտնուող Հայերը դուրս չելան, եւ շոգենաւը Պիրէոն ու Պրինտիզի տարաւ զիրենք:

Հրդեհին հետեւող Ուրբաթ օրը Բունթայի մէջ, Տէսօի բաղնիքին շուրջը խոնուած ահագին բազմութենէն մաս մըն ալ յաջողեցան անցնիլ բացը կեցող իտալական Քուիրինալ շոգենաւը, որուն նաւապետը արտակարգ հոգածութիւն եւ բարեացակամութիւն ցոյց տուաւ մասնաւորաբար Հայոց մասին: Մակուկավարները ծովեզերքին շոգենաւ փոխադրութեան համար ահագին գումարներ կը պահանջէին: Նալպանտեան ընտանիքը, 4 հոգի, 300 ոսկի տուեր էին իրենց համար: Քուիրինալ մեկնեցաւ նոյն Ուրբաթ օրը եւ միասին առած Հայերէն մեծ մասը Պիրէոն թողուց ու մէկ քանին ալ բերաւ Պրինտիզի: Այդ շոգենաւով Պաքրձեաններու մեծ եղբայրը Յակոբ:

Որոշ թուով Հայեր ալ կրցան ապաստանիլ օտար մարտանաւեր եւ ուրիշ շոգենաւեր: Դժբախտաբար տրամադրելի

նաւերը շատ քիչ էին, մինչդեռ աւելի քան 200 000 ժողովուրդ կար քարափին երկայնքը, պատրաստ մեկնելու: Ստուարագոյն մեծամասնութիւնը ոչինչ կրցեր էր առնել միասին: Շատեր նոյնիսկ դրամ ալ չունէին, եւ անօթի կը շրջէին:

Իզմիրէն փոխադրուծ փախստականները հանուեցան Միտիլի, Քիոս, Հռոդոս, Պիրէոն, Նաբօլի, Պրինտիզի, Մալթա եւ Մարսելլ: Պզտիկ մաս մըն ալ Պոլիս կրցաւ անցնիլ:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ԱՐԻՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ



Զմյուռնիայի նավահանգիստը
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը



Զմյուռնիայի նավամատույցը
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը



Նավահանգստային անցուղարձ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Զմյուռնիայի կենտրոնը
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Սուրբ Ստեփանոս հայկական եկեղեցին
Օսլանդո Կալումենոյի հավաքածու



Սուրբ Ֆոթինի հունական եկեղեցին
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



*Մեսրոպյան վարժարանը
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ*



*Հռիփսիմյանց վարժարանը
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ*



Υποθηραδθι υτεαυρανήνιερ
 Λαυηη ηεηλαυαυάνυηυάν ράνηαυρανή-ήνυηηηυηυ





Հրկիզման տեսարաններ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Ավերված Ջմյունիան

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Սուրբ Կատերինի եկեղեցին

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Սուրբ Իրանիս եկեղեցին
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Զմյուռնիայում ԱՄՆ հյուպատոսարանը
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Suisi, S^a Maria
Cimitero

Սուրբ Մարիա եկեղեցին
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Զմյուռնիայից հեռացող տարագիրներ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Դասամիջոցի խաղեր Դուրդութի Հայ ավետարանական
եկեղեցու դպրոցում, 1924

«Արմենիկա» ամսագրի արխիվ



Խնամքի կենտրոն Պագրատիի
ՀԲԸՄ հիվանդանոցում, 1924/1925

«Արմենիկա» ամսագրի արխիվ



«Արարատյան» վարժարանի սաները, Կոկինիա, 1934-1935
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ



Կորֆուի մանկատան սաները (կենտրոնում՝ ուսուցիչ և
մտավորական Գևորգ Կառվարենցը) 1923/1924
«Արմենիկա» ամսագրի արխիվ



Հայ գաղթականները կառուցում են իրենց տունը,
ՀԲԸՄ, 1925

Նուբարյան գրադարանի արխիվ



Հայ գաղթականները Դրապեցոնայում, ՀԲԸՄ, 1925

Նուբարյան գրադարանի արխիվ



Օննիկ Ղազերյանն ընտանիքի հետ
(առաջին շարքում՝ աջից առաջինը)
Ղազերյան ընտանիքի արխիվ



Կարապետ Խաչերյանը կնոջ և զավակների՝
Վարդուհու և Հովհաննեսի հետ, Սալոնիկ, 1934
Խաչերյան ընտանիքի արխիվ



*Մկրտիչ Ավետյանը կնոջ և որդիների հետ
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ*



*Միքայել Բարթիկյանը կնոջ և որդիների հետ
Բարթիկյան ընտանիքի արխիվ*



Գառնիկ Սվազյանը կնոջ՝ Սիրարփի Սվազյանի,
դուստրերի՝ Զարուհու և Վերժինեի հետ, 1939
Սվազյան ընտանիքի արխիվ

26 Avril 1921

TELEGRAMME

DELEGATION NATIONALE
ARMENIENNE PARIS

NOUVEAU SERVICE

LE 26 AVRIL 1921

A DÉCHIFFRER 65181

Paris 26.4.21

SWIRNE 458-10-28-8x45 MTE -
SOUS OCCUPATION HELLENIQUE COMPRIS ILES EGEEENNES VIVENT
ENVIRON CENT MILLE ARMÉNIENS DONT MAJORITE NECESSITUSE
ARCHEVEQUE TOURIAN

26.4.21
L'Arménie
C'est la terre
de l'humanité

CC 4278 16-

Sept 21 1867

Sept 21 1867

Sept 21 1867

Sept 21 1867

(1867. 4)

Sept 21 1867

Sept 21 1867

Sept 21 1867

The first of these is the fact that the
 Government is not prepared to pay for the
 interest on the bonds which it has issued
 for the purpose of raising money to
 meet the expenses of the war.

The second is the fact that the
 Government is not prepared to pay for the
 interest on the bonds which it has issued
 for the purpose of raising money to
 meet the expenses of the war.

The third is the fact that the
 Government is not prepared to pay for the
 interest on the bonds which it has issued
 for the purpose of raising money to
 meet the expenses of the war.

The fourth is the fact that the Government is not prepared to pay for the interest on the bonds which it has issued for the purpose of raising money to meet the expenses of the war.

The fifth is the fact that the
 Government is not prepared to pay for the
 interest on the bonds which it has issued
 for the purpose of raising money to
 meet the expenses of the war.

The sixth is the fact that the
 Government is not prepared to pay for the
 interest on the bonds which it has issued
 for the purpose of raising money to
 meet the expenses of the war.

The seventh is the fact that the Government is not prepared to pay for the interest on the bonds which it has issued for the purpose of raising money to meet the expenses of the war.

The eighth is the fact that the
 Government is not prepared to pay for the
 interest on the bonds which it has issued
 for the purpose of raising money to
 meet the expenses of the war.

Memorandum for the President

Re: Memorandum for the President dated 1/18/52
and the fact that the President has not yet
received the 25-40 sugar tax money and
10 sugar tax bonds for 1952. The fact that
the sugar tax bonds were not paid immediately
in August of 1951 is a serious matter and
sugar 1952 money, for which the responsibility
falls on the

fact that the 5000 independent
sugar growers in 1951 in the government in
6-7 sugar tax bonds 1952

When the government is paying for the
sugar bonds and the fact that the government
is not paying for the sugar bonds immediately
This is not a very serious matter and the
country's independence is not being affected
from the fact that the government is not
paying for the

21 Nov 1952
SMP

[Signature]

Handwritten header text at the top of the page.

Handwritten text line, possibly a date or location.

18481

Main body of handwritten text, appearing to be a letter or report.

6 Ellipsoide 1922

Handwritten text line following the date.

Final paragraph of handwritten text at the bottom of the page.

SUMMARY

THE CONTINUATION OF THE GENOCIDAL POLICY IN SMYRNA (1922)

Tehmine Martoyan

Mechanisms to continue genocidal policy were developed and implemented by the criminal regime of a criminal state. Hatred towards Christian minorities had always been used as a driving force within Turkish society. Successive Turkish authorities consistently maintained, systematically transferred and openly implemented the state policy of the genocide.

Denialism, as part of Turkey's foreign policy agenda manifested in pan-Turkism, should be seen as a lasting threat. The civilized world, considering the historical roots of the continuous persecution of Christians, must prevent the policy of permissiveness and annihilation.

Research on the continuous genocidal policy used against the Armenians becomes meaningful, particularly in regard to the possible settlement of key issues of foreign policy and national security in the Republic of Armenia. The historical realities of the annihilation of the Armenian and Greek populations of Smyrna and the subsequent arson of the Christian neighborhoods have been examined in this context. The Kemalist regime, having adopted the Young Turks' genocidal agenda, openly applied measures of extreme political and religious intolerance.

There are a few Armenian historians, both in the Republic of Armenia and in the Diaspora, who have studied the motives and consequences of the anti-Greek policies of the Ottoman state during the First World War and the following years. The scholars have

addressed the issue either in the contexts of the Armenian Genocide and anti-Armenian policies or contemporary Graeco-Turkish relations.

As a result of the genocide committed by the Ottoman state at the beginning of the 20th century, one more Christian nation was annihilated, forcibly Islamised and deported. Greek civilization in Thrace, Asia Minor, and Pontus ended. To some extent the pre-genocidal and genocidal periods referring to the Greeks as Ottoman subjects to some extent have been covered by Manvel Zulalyan, John Kirakosyan, Hrach Bartikyan, Vahakn Dadrian, Richard Hovannisian, Hovhannes Injikyan, Hrachik Simonyan, Arman Kirakosyan, Arsen Avagyan, Gevork Kilimjyan Artem Ulunyan and others in Armenian historiographic literature.

The well-known sociologist-historian Vahakn Dadrian, historians Richard Hovannisian, Benny Morris, Dror Ze'evi, Ronald Suny and others have all referred to the thesis of the “continuation” of the Armenian Genocide in their research.

More than a century has passed since September 1922, when the peaceful and unarmed Armenian and Greek Christian populations of Smyrna were annihilated and their neighborhoods lay in ruins afterwards destroyed by arson. Numerous innocent victims of the brutal policies of the Kemalists, who had come to power in Turkey, were elderly people, women and children. The tragedy of Smyrna deeply affected contemporaries and, to this day, continues to draw the attention of many scholars; having its importance in research on the Armenian and Greek genocides.

The terms “disaster,” “fire,” “massacre,” “annihilation” and other expressions are often found in scientific literature dedicated to this topic. The great tragedy is being referred to which, being an action indicating the end of the Kemalist regime’s genocidal policy,

should be specially defined. As such, this study aims to clarify the motives of this pre-planned and deliberately executed greatest crime, aimed at annihilating of Smyrna's Armenians and Greeks. It also attempts to re-evaluate and clarify the events that are considered to be contradictory.

An accurate definition or assessment of the crime perpetrated in Smyrna in 1922 is possible by analyzing the universal norms of international law and principles, as well as through international conventions, declarations on human rights, orders accepted by the criminal state and the trusted and valuable testimonies of accredited diplomats residing in Smyrna at that time, as well on the diaries of eyewitnesses.

This study presents the historic outline of Smyrna's Armenian community and explores the motives behind the massacre of the Armenians and Greeks and the arson of the city. An attempt has been made to reconstruct, based on the descriptions of killings derived from the testimonies of eyewitnesses and survivors, the annihilation process used against the Armenians and Greeks by the Turks, to study the mass resettlements of deported Christians and to present an international legal assessment.

The study of the subject and the conclusions drawn refute one of the hypotheses being manipulated by the Turkish denialist historiography: as if the Armenians and Greeks burned down the city. Thus, any existence of annihilation intent, purpose or project is denied in order to avoid responsibility and to justify the actions taken.

The Armenian community of Smyrna played an important role in the process of creating national values. The Armenians were the bearers of the Armenian culture, playing an integral role in historical memory and national self-awareness. The success of the

Smyrna Armenians in the fields of education, science, literature, and the press was invaluable in terms of the development of culture and the preservation of Armenian identity.

The expulsion of the Christian population of Smyrna – both Armenian and Greek – was an action taken to exclude their further presence in the region. By skillfully using political developments, the Ankara government did not receive any attention from the international communities.

Mustafa Kemal laid the foundation of the new state by shedding innocent people's blood and confiscating their assets. This was a repetition of the method used by the Ottoman state, which established and reinforced its hold by “blood and fire” through the centuries.

The previously determined plan, to set the Christian neighborhoods of the city on fire, was distinguished by the application of simplistic yet extremely inhumane methods. It aimed at annihilating the Armenians and Greeks and then concealing the traces of the crime through arson. The burning of Smyrna made it impossible to accurately determine and present the number of those killed. As a result of the fire, the valuable cultural legacy created by the Christian population was also destroyed.

The resettlement of Smyrna Armenians and Greeks in Greece took place as a result of forced expatriation. Greece, as the host country, as well as different international organizations, exceptional and ordinary people all united around humanitarianism. Their efforts greatly aided exiled people to rethink their lives and regain their lost faith in the future.

The targeted annihilation of the Armenians and Greeks should be viewed as a continuation of genocidal policy: it completely corresponds with the definition stated in the UN Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide.

ΠΕΡΙΛΗΨΗ

Η ΣΥΝΕΧΙΣΗ ΤΗΣ ΓΕΝΟΚΤΟΝΙΚΗΣ ΠΟΛΙΤΙΚΗΣ ΣΤΗΝ ΣΜΥΡΝΗ (1922)

Τεχμινέ Μαρτοϊάν

Οι μηχανισμοί για τη συνέχιση της γενοκτονικής πολιτικής αναπτύσσονται και εφαρμόζονται από το εγκληματικό καθεστώς του κακουργηματικού κράτους. Το αίσθημα μίσους προς τις χριστιανικές μειονότητες διατηρείται πάντα ζωντανό ως κινητήριος δύναμη στην τουρκική κοινωνία. Οι διαδοχικές κυβερνήσεις στην Τουρκία έχουν διατηρήσει, οργανώσει και εφαρμόσει αποκάλυπτα την πολιτική της γενοκτονίας.

Η άρνηση της Τουρκίας ως προς την εφαρμογή της συγκεκριμένης πολιτικής δεν είναι εφησυχαστική, αντιθέτως, η συνεχής άνοδος του παντουρκικού πολιτικού ρεύματος πρέπει να θεωρείται μόνιμη απειλή. Λαμβάνοντας υπόψη την ιστορική βάση του μακροχρόνιου διωγμού των Χριστιανών, ο πολιτισμένος κόσμος πρέπει να καταδικάσει την πολιτική εξόντωσης του εγκληματικού κράτους, να εγκαταλείψει την ανεκτικότητα του και να αποτρέψει παρόμοια γεγονότα.

Η μελέτη για την διαιώνιση της γενοκτονικής πολιτικής εις βάρος των Αρμενίων έχει σημαντική αξία για την Δημοκρατία της Αρμενίας, καθώς πιθανόν διευκολύνει την διευθέτηση των σημαντικότερων ζητημάτων της εξωτερικής της πολιτικής και της εθνικής της ασφάλειας. Στο πλαίσιο της μελέτης αυτής, εξετάσαμε την ιστορική πραγματικότητα της εξόντωσης του αρμενικού και ελληνικού πληθυσμού της Σμύρνης και της πυρπόλησης των χριστιανικών συνοικιών. Το καθεστώς του Κεμάλ,

με την υποστήριξη των Νεότουρκων, υιοθέτησε ακραίες στάσεις και πρακτικές που ενέτειναν την πολιτική και θρησκευτική μισαλλοδοξία στη Σμύρνη το 1922.

Τόσο στη Δημοκρατία της Αρμενίας όσο και στη Διασπορά, ελάχιστοι είναι οι Αρμένιοι ιστορικοί που έχουν ερευνήσει τα κίνητρα και τις συνέπειες της ανθελληνικής πολιτικής του οθωμανικού κράτους κατά τον Α' Παγκόσμιο Πόλεμο και στα χρόνια που ακολούθησαν. Οι ερευνητές έχουν ασχοληθεί με το θέμα είτε στο πλαίσιο της γενοκτονίας των Αρμενίων και της αντιαρμενικής πολιτικής, είτε στο πλαίσιο των ελληνοτουρκικών σχέσεων εκείνης της εποχής.

Στις αρχές του 20ου αιώνα, ως αποτέλεσμα της γενοκτονίας που πραγματοποίησε το οθωμανικό κράτος, ένα άλλο χριστιανικό έθνος εξοντώθηκε, εξισλαμίστηκε και εκτοπίστηκε βίαια. Ο ελληνικός πολιτισμός έσβησε στη Θράκη, τη Μικρά Ασία και τον Πόντο. Στην αρμενική ιστοριογραφία, οι Μανβέλ Ζουλαλιάν, Τζον Κιρακοσιάν, Χράτς Μπαρτικιάν, Βαχάκν Νταντριάν, Ρίτσαρντ Χοβανισιάν, Χοβανές Ιντσικιάν, Χρατσίκ Σιμονιάν, Αρμάν Κιρακόσιαν, Αρσέν Αβαγκιάν, Γκεβόργκ Κιλιμιτζιάν, Αρτέμ Ουλουιάν και άλλοι έχουν θίξει την προγενοκτονία και την περίοδο της γενοκτονίας στην ιστορία των Οθωμανών - Ελλήνων.

Τη θέση τους, σχετικά με τη «συνέχιση» της γενοκτονίας των Αρμενίων, διατύπωσαν στην έρευνά τους ο διάσημος κοινωνιολόγος και ιστορικός Βαχάκν Νταντριάν, οι ιστορικοί Ρίτσαρντ Χοβανισιάν, Μπένι Μορίς, Ντρορ Ζεέβι, Ρόναλντ Σούνι και άλλοι.

Έχει περάσει σχεδόν ένας αιώνας από τον Σεπτέμβριο του 1922, την εξόντωση του ειρηνικού και άοπλου χριστιανικού πληθυσμού της Σμύρνης, Αρμενίων και Ελλήνων, την πυρπόληση

και την καταστροφή των συνοικιών τους. Αμέτρητα ήταν τα αθώα θύματα, ηλικιωμένοι, γυναίκες και παιδιά, της ωμής πολιτικής των Κεμαλικών που ανέλαβαν την εξουσία στην Τουρκία. Η τραγωδία της Σμύρνης άφησε πίσω της «βαριά» παρακαταθήκη στους σύγχρονους ερευνητές και απαιτεί τη διερεύνηση των φρικαλέων πράξεων που συντελέστηκαν εις βάρος των Αρμενίων και των Ελλήνων.

Στην επιστημονική βιβλιογραφία σχετικά με το θέμα αυτό, συναντάμε συχνά τις λέξεις «καταστροφή», «φωτιά», «σφαγή», «κάψιμο» και άλλους όρους σε μια προσπάθεια περιγραφής της πράξης. Είναι προφανές όμως ότι δεν μιλάμε για μια απλή πράξη, αλλά για μια μεγάλη τραγωδία, η οποία απαιτεί την εύρεση ενός ειδικού χαρακτηρισμού, ώστε να αποδίδεται το μέγεθος της αποτρόπαιας πράξης και να σηματοδοτεί το τέλος της γενοκτονικής πολιτικής του κεμαλικού καθεστώτος. Σύμφωνα με αυτό, σκοπός της έρευνάς μας ήταν μια προσπάθεια αποσαφήνισης των κινήτρων του προσχεδιασμένου, ειδεχθούς εγκλήματος με στόχο την εξόντωση των Αρμενίων και των Ελλήνων της Σμύρνης, όπως επίσης και η επαναξιολόγησή τους και η διαλεύκανση των γεγονότων με αντιφατικές ερμηνείες.

Ο ακριβής αξιολόγηση ή εκτίμηση του εγκλήματος που έλαβε χώρα στη Σμύρνη το 1922, βασίστηκε πιθανόν στην ανάλυση είτε παγκόσμιων, διεθνών, νομικών κανόνων και αρχών, καθώς και διεθνών συμβάσεων, διακηρύξεων για τα ανθρώπινα δικαιώματα, εντολών που εγκρίθηκαν από το εγκληματικό κράτος, είτε αξιόπιστων και πολύτιμων μαρτυριών διαπιστευμένων διπλωματών στη Σμύρνη εκείνης της περιόδου καθώς επίσης και εγγραφών σε ημερολόγια αυτοπτών μαρτύρων.

Στο πλαίσιο της μελέτης παρουσιάζουμε το περίγραμμα της ιστορίας του αρμενικού οικισμού της Σμύρνης, τονίζουμε τους λόγους εκτόπισης Αρμενίων και Ελλήνων, την πυρπόληση της πόλης, με βάση τις περιγραφές των δολοφονιών στις καταθέσεις επιζώντων μαρτύρων, προσπαθούμε να αποκαταστήσουμε τη διαδικασία εξόντωσης Αρμενίων και Ελλήνων, μελετάμε τη μαζική επανεγκατάσταση εξόριστων χριστιανών, παρουσιάζουμε τη διεθνή νομική αξιολόγηση.

Η μελέτη του θέματος και τα συμπεράσματα αυτής διαφεύδουν μια από τις υποθέσεις, σύμφωνα με την τουρκική ιστοριογραφία, που εικάζει ότι οι Αρμένιοι και οι Έλληνες πυρπόλησαν την πόλη, και μάλιστα οι ίδιοι αρνούνται την ύπαρξη οποιασδήποτε πρόθεσης, σκοπού ή σχεδίου σχετικά με την εξόντωση ώστε να αποφύγουν τις συνέπειες της πράξης τους.

Έτσι, ο αρμενικός οικισμός της Σμύρνης έπαιξε σημαντικό ρόλο στη διαδικασία δημιουργίας εθνικών αξιών και ήταν ο φορέας και το αναπόσπαστο κομμάτι του αρμενικού πολιτισμού, της ιστορικής μνήμης, της εθνικής συνείδησης. Οι επιτυχίες των Αρμενίων της Σμύρνης στους τομείς της εκπαίδευσης, της επιστήμης, της λογοτεχνίας, του τύπου είναι ανεκτίμητες από την άποψη της πολιτιστικής ανάπτυξης και της διατήρησης της αρμενικής ταυτότητας.

Οι εκτοπίσεις του χριστιανικού πληθυσμού της Σμύρνης, των Αρμενίων και των Ελλήνων, ήταν ενέργειες με στόχο τον αποκλεισμό της περαιτέρω παρουσίας τους στην περιοχή.

Χρησιμοποιώντας επιδέξια τις πολιτικές εξελίξεις, η κυβέρνηση της Άγκυρας απέφυγε την προσοχή της διεθνούς κοινότητας.

Ο Μουσταφά Κεμάλ έθεσε τα θεμέλια της νέας του πολιτείας χύνοντας το αίμα αθών λαών, των οποίων την περιουσία οικειοποιήθηκε. Όπως το οθωμανικό κράτος δημιουργήθηκε και ενισχύθηκε στο πέρασμα των αιώνων με «αίμα και φωτιά», με τον ίδιο τρόπο δημιουργήθηκε και η Τουρκία.

Το προμελετημένο σχέδιο των Τούρκων να πυρπολήσουν τις χριστιανικές συνοικίες της πόλης, με τη χρήση απλών, αλλά εξαιρετικά απάνθρωπων μεθόδων, είχε ως στόχο την εξόντωση των Αρμενίων και των Ελλήνων και στη συνέχεια την κάλυψη των ιχνών του εγκλήματος με φωτιά. Η Μεγάλη Πυρκαγιά της Σμύρνης κατέστησε αδύνατη την εξακρίβωση του αριθμού των νεκρών. Αποτέλεσμα της πυρκαγιάς ήταν η καταστροφή του πολύτιμου πολιτισμού των χριστιανών της πόλης.

Η επανεγκατάσταση των Αρμενίων και των Ελλήνων της Σμύρνης στην Ελλάδα έγινε ως αποτέλεσμα της αναγκαστικής μετανάστευσης. Την Ελλάδα, ως χώρα υποδοχής, και τους πάσης φύσεως διεθνείς οργανισμούς, πρόσωπα και απλούς ανθρώπους ένωσε ο ανθρωπισμός. Οι προσπάθειες στήριξης των εκτοπισμένων συνέβαλαν σε μεγάλο βαθμό στην ανάκτηση της χαμένης τους πίστης και ελπίδας για το μέλλον.

Η σκόπιμη εξόντωση Αρμενίων και Ελλήνων θα πρέπει να θεωρηθεί ως συνέχεια της γενοκτονικής πολιτικής, η οποία συμμορφώνεται πλήρως με τις διατάξεις της Σύμβασης των Ηνωμένων Εθνών «για την Πρόληψη και Τιμωρία του Εγκλήματος της Γενοκτονίας».

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

I. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՁԵՆԱԳԻՐ ՆՅՈՒԹԵՐ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդեր (ՀՅԹԻ)

ՀՅԹԻ, բաժին 8, *Ձեռագիր օրագրեր և հուշապատումներ*, ֆ. հ. 128, թղթ. 92:

ՀՅԹԻ, բաժին 8, *Ձեռագիր օրագրեր և հուշապատումներ*, ֆ. հ. 263, թղթ. 165:

ՀՅԹԻ, բաժին 32, *Թուրքիայի Հանրապետությունը և Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանությունը*, ֆ. հ. 1, թղթ. 1:

ՀՅԹԻ նախնական ֆոնդ, թղթ. 231:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 308:

ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 607:

ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 740:

ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 744:

ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 745:

ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 747:

ՀԱԱ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 748:

ՀԱԱ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 3470:

ՀԱԱ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 3471:

II. ՏՊԱԳԻՐ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Ալիս Թորեան**, Մանկութիւնս առանց գարունի (ակնանատեսի վկայութիւններ Իզմիրի աղէտէն) (Պէյրութ, Ատլաս, 1975):
- **Ալմա Յուհանսոն**, *Աքսորյալ ժողովուրդ: Մեկ տարի հայոց պատմությունից* (Երևան, ՀՅԹԻ, 2008):
- **Բիզանդ Ճամպազեան**, *Պատանի կեանքի մը պատմությունը* (Լիբանան, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960):
- **Դորա Սաքայան**, *Զմյուռնիա 1922. բժիշկ Կարապետ Խաչէրյանի օրագիրը* (Երևան, Նահապետ, 2005):

- **Միքայել Բարթիկյան, Արնաշաղախ Իզմիրը, Օհանէս (Օն-նիկ) Ղազերեան, Կենսագրական նօթեր** (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2022), «Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններ», 9: Խմբագիր, առաջաբանների և ծանոթագրությունների հեղինակ՝ Թեհմինե Մարտոյան:
- **Ռենե Պյուտ, Չմյունխայի վախճանը** (Երևան, ՀՅԹԻ, 2001):
- **Տիգրանուհի Արթինեան, Հայ մօր յուշեր** (Տորոնտո, 2005):

III. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՂՈՎԱԾՈՒՆԵՐ

- *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)*, խմբ.՝ պրոֆ. **Ջոն Կիրակոսյան** (Երևան, Հայաստան, 1972):
- *Геноцид армян, Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий*, т. 2, ч. 2, ред. профессор **Ю. Г. Барсегов** (Москва: Гардарики, 2005).
- *American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces, September 1922*, ed. by **Constantine G. Hatzidimitriou** (New York: Melissa International, 2005).
- *The Role of the Sabbatean DONME “Jewish-Turkish” Sect in the Armenian Genocide*, the Planned, Organized, Executed Genocide of Armenians by **Jack Manuelian**, April 24, 2005.
- **Varoujean Poghosyan**, *Le désastre de Smyrne de 1922 (recueil de documents)* (Erevan: Éditions de l’Université d’État d’Erevan, 2011).

IV. ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Ալբերտ Խառատյան, Չմյունխայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես)** (Երևան, Գիտություն, 2022):
- **Ալբերտ Խառատյան, Հասարակական միտքը Չմյունխայի հայ պարբերական մամուլում (1840-1900)** (Երևան, Գիտություն, 1995):
- **Ալեքսանդր Խատիսեան, Քաղաքապետի մը յիշատակները** (Պէյրոս, Համազգայինի Վահէ Սէթեան, 1991):
- **Ամջա Հասան, Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը)** (Երևան, Գասփրինթ, 2007):

- **Անժելա Տերյան**, *Հայաստանը Արարչագործության և Քաղաքակրթության բնօրրան* (Երևան, Ոսկան Երևանցի, 2002):
- **Աշոտ Աբրահամյան**, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հատոր Բ (Երևան, Հայպետհրատ, 1967):
- **Աշոտ Հայրունի**, *Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը* (Երևան, Նաիրի, 2002):
- **Ասյա Գրիգորյան, Վաչիկ Բրուտյան**, *Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր* (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.) (Երևան, Իրավունք, 2007):
- **Արման Կիրակոսյան**, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.) (Երևան, Գիտություն, 1999):
- **Արմեն Մարուքյան**, *Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները* (Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2014):
- **Գառնիկ Ստեփանյան**, *Ուրվագիծ արևմտահայ թափրոնի պատմության*, հատոր Ա (Երևան, ՀԽՍՀ ԳԱ, 1962):
- **Գևորգ Վարդանյան**, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը, 1914-1923 թթ.* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012):
- **Գևորգ Քիլիմջյան**, *Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թթ.* (Երևան, Երևանի համալսարան, 1988):
- **Գյուստավ Լը Բոն**, *Ամբոխների հոգեբանությունը* (Երևան, Անտարես, 2020):
- **Թեոֆանիս Մալկիդիս**, *Հույների ցեղասպանությունը, Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս*, հեղինակագործված թարգմանությունը՝ Թեոմինե Մարտոյանի (Ալեքսանդրուպոլիս, 2014):
- **Թուրքիայի Հանրապետության պատմություն**: Բուիական դասագիրք, պատասխանատու խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան (Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2018):
- **Լիպարիտ Ազատեան**, *Հայ որբերը Մեծ եղեռնի* (Լոս-Անճելես, Ապրիլ, 1995-2002):
- **Ծատուր Աղայան**, *Հայերը՝ Թուրքիայում* (Երևան, Հայաստան, 1994):

- **Հ. Յակոբ վ. Քուեան**, *Հայք ի Ջմիռնիա եւ ի շրջակայս*, հատոր Ա, Ջմիռնիա եւ Հայք (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1899):
- **Հակոբ Հակոբյան**, *Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը* (Երևան, Ասողիկ, 2000):
- **Հասմիկ Գրիգորյան**, *Ջանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* (Երևան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017) (Հիշողության ազգագրություն, 6):
- **Հովիկ Մելիքսեթյան**, *Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.)* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1985):
- **Հովհաննես Ինճիկյան**, *Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ* (Երևան, Հայաստան, 1984):
- **Հրաչ Բարթիկյան**, *Հայ-բյուզանդական հեղափոխություններ*, հատոր 1 (Երևան, Աճեմյան մատենաշար, 2022):
- **Հրաչիկ Սիմոնյան**, *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունն ու քաղաքականությունը* (Երևան, Հայաստան, 1986):
- **Հրաչյա Աճառյան**, *Հայ գաղթականության պատմություն* (Երևան, Ջանգակ, 2002):
- **Մելինե Անումյան**, Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, մատենաշար 2 (Երևան, Էդիթ Պրինտ, 2011):
- **Մելինե Անումյան**, Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.) (Երևան, Կոլաժ, 2013):
- **Մեր Ջմիռնիան** (Նիւ Եորք, Ջմիռնահայ միություն, 1961):
- **Մելվան Ջատէ Բիֆաթ**, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհապի հայաջինջ ծրագիրները* (Պէլլուրթ, Կ. Տօնիկեան եւ որդիք, 1968):
- **Մինաս Տէր Սարգիսեան**, *Իզմիրի անկումը եւ այլ էջեր* (Պէլլուրթ, Արագ, 1975):
- **Յակոբ Պողոսեան**, *Հայ ցեղը եւ հայածանքները հոգեբանութեան լոյսին տակ* (Բոստոն, Երան, 1919):

- **Յակովոս Ալցողլու**, *Անիծված առյուծի բնաջնջումը: Մեր Անապոլիայի հելլենականության մեթոդավորված բնաջնջման գործընթացի իրար հաջորդող փուլերը* (Երևան, Ճարտարագետ, 2007):
- **Յուշամարեան Մեծ եղեռնի**, 1915-1965 (Պէլրուֆ, Ատլաս, 1965):
- **Նիկոլայ Հովհաննիսյան**, *Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում* (Երևան, Զանգակ-97, 2002):
- **Նիկոլայ Սերբացի**, *Պատերազմ և Աստվածաշունչ* (Երևան, Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցի, 2023):
- **Պետրոս Կոկինոս**, *Հունահայ գաղութի պատմությունից 1918-1927* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1965):
- **Պետրոս Սիմոնեան**, *Յուշամարեան, Հայկական Զմիռնիան*, հրատարակութիւն Զմիռնիոյ եւ շրջաններու հայրենակցական վերաշինաց միութեան (Փարիզ, Արաքս, 1936):
- **Ջոն Կիրակոսյան**, *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.)* (Երևան, Հայաստան, 1978):
- **Ռիչարդ Հովհաննիսյան**, *Հայաստանի Հանրապետություն*, հատոր 1 (Երևան, ՀՀ ԳԱԱ, 2005):
- **Ռոնալդ Գրիգոր Սյունի**, *Հայոց ցեղասպանության պատմություն*, «նրանք կարող են ապրել միայն անապատում», թարգմ.՝ Մարիա Սադոյան, թարգմ. խմբ. և վերիֆիկանտ՝ Սևակ Ղազարյան, թարգմ. գիտ. խմբ.՝ Թեհմինե Մարտոյան (Երևան, Մագաղաթ, 2022):
- **Ռուբեն Սաֆրաստյան**, *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության երկու ծրագիր (1876-1915 թթ.)*, Ուսումնամեթոդական ձեռնարկ (Երևան, Լուսակն, 2007):
- **Ռուբեն Սաֆրաստյան**, *Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)* (Երևան, Լուսակն, 2009):
- **Սամվել Պողոսյան**, *Կիլիկիան ազատագրելու նախագծերը 1914-1918 թթ.: Հայկական (Արևելյան) լեգեոնը* (Երևան, Քոփի Փրինթ, 2023):

- **Սամվել Ռամազյան**, *Հայ-հունական ռազմական տանջությունների և համագործակցության պատմություն* (Աթենք, 2010):
 - **Սիմեոն Երեւանցի**, *Ջամբո* (Վաղարշապատ, Տպարան Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 1873):
 - **Վահագն Տատրեան**, *Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պարմագիտական քննարկումներով* (Մասաչուսեթս, Պայքար, 1995):
 - **Վահրամ Փափազյան**, *Սէր, սէր, սէր* (Պեյրութ, Սևան, 1962):
 - **Վերժինե Սվազյան**, *Հայոց ցեղասպանություն, Ականաբես վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2011):
 - **Վերժինե Սվազյան**, *Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովոյթում* (Երևան, Գիտություն, 2021):
 - **Վլադիմիր Վարդանյան**, *Հայոց ցեղասպանության ճանաչման, դաբապարման և հետևանքների վերացման հիմնախնդիրները* (Երևան, ԵՊՀ, 2017):
-
- **Арсен Авакян**, *Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений* (Ереван: Гитутюн, 1999).
 - **Арсен Авакян**, *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)*, отв. ред. Г. Аветисян (Ереван: Гитутюн, 2001).
 - **Артем Улунян**, *Политическая история современной Греции (конец XVIII в. – 90-е гг. XX в.)* (Москва: ИВИ РАН, 1998).
 - **Мустафа Кемаль Ататюрк**, *Избранные речи и выступления* (Москва: Прогресс, 1966).
 - **Мустафа Кемаль**, *Путь новой Турции 1919-1927, Первые шаги национально-освободительного движения* (Москва: Литиздат НКВД, 1929).
 - **Мустафа Кемаль**, *Путь новой Турции 1919-1927, Подготовка Ангорский базы, 1919-1920*, т. II (Москва: Государственное социально-экономическое издательство, 1932).
 - **Оганнес Инджикян**, *Буржуазия Османской империи* (Ереван: АН Арм. ССР, 1977).
 - **Танер Акчам**, *Турецкое национальное “Я” и Армянский вопрос* (Москва: Арио-никс, 1995).
 - **Юрий Мухин**, *Власть над властью* (Москва: Алгоритм-Книга, 2007).

- **Юрий Петросян**, *Измир* (совм. с А. Р. Юсуповым) (Москва: Наука, 1973).
- “*Armenian Pontus, The Trebizond-Black Sea Communities*,” ed. by **Richard G. Hovannisian** (California: Mazda Publishers, 2009).
- **Abraham H. Hartunian**, *Neither to Laugh nor to Weep. A Memoir of the Armenian Genocide* (translated from the Original Armenian Manuscripts by Vartan Hartunian) (Boston: Beacon, 1968).
- **Alexes Alexandres**, *The Greek Minority of Istanbul and Greek-Turkish relations 1918-1974* (Athens: Center for Asia Minor Studies, 1983).
- **Arnold Toynbee**, *The Western Question in Greece and Turkey, A Study in the Contact of Civilizations* (London: Constable and company, 1922).
- **Benny Morris & Dror Ze’evi**, *The Thirty-Year Genocide: Turkey’s Destruction of its Christian Minorities, 1894-1924* (Cambridge: Massachusetts and London, England: Harvard University Press, 2019).
- **Charis Tsirkinidis**, *The Red River... The Tragedy of Hellenism of Anatolia 1908-1923, A Historical Tale* (Thessaloniki: Kyriakidi Afoi, 1999).
- **Charles Dobson**, *The Smyrna Holocaust* (London: The Anglo-Hellenic League, 1923).
- **Christos Papoutsy**, *Ships of Mercy, The True Story of the Rescue of the Greeks, Smyrna, September 1922* (Portland: UNKNO, 2008).
- **Constantine Hatzidimitriou**, *American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces, September 1922* (New York: Caratzas, 2005).
- **Edward Hale Bierstadt**, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem* (N. Y.: R. M. McBride & Company, 1924).
- **Eric Hobsbawm**, *Age of Extremes, The Short Twentieth Century 1914-1991* (London: Time Warner Books, 1995).
- **Ernest Hemingway**, *In Our Time* (New York: Scribner, 1930).

- **George Horton**, *Report on Turkey, USA Consular Documents* (Athens: Journalists' Union of the Athens Daily Newspaper, 1985).
- **George Horton**, *The Blight of Asia, An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna* (Indianapolis: The Bobbs-Merrill Company, 1926).
- **Giles Milton**, *Paradise Lost, Smyrna 1922, The Destruction of Islam's City of Tolerance* (London: Sceptre, 2008).
- **Harry N. Howard**, *The Partition of Turkey, A Diplomatic History 1913-1923* (New York: Howard Fertig, 1966).
- **Helen Fein**, *Genocide: A Sociological Perspective* (London: SAGE Publications Ltd, 1993).
- **Henry Morgenthau**, *I was Sent to Athens* (New York: Doubleday, Doran & Company, 1929).
- **James L. Barton**, *Story of Near East Relief (1915-1930), An Interpretation* (New York: The Macmillan Company, 1930).
- **Jensine Oerts Peters**, *Tests and Triumphs of Armenians in Turkey and Macedonia* (USA: Zondervan, 1940).
- **Lord Kinross**, *Ataturk, The Rebirth of a Nation* (London: Weidenfeld and Nicolson, 1964).
- **Luke Roman** and **Monica Roman**, *Encyclopedia of Greek and Roman Mythology* (New York, 2010).
- **Lysimachos Œconomos**, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom* (London: George Allen and Unwin, 1922).
- **Lysimachos Œconomos**, *The Tragedy of the Christian Near East*, **Charles Dobson**, *The Smyrna Holocaust* (London: The Anglo-Hellenic League, 1923).
- **Marc David Baer**, *The Dönme: Jewish converts, Muslim revolutionaries, and secular Turks* (California: Stanford University Press, 2010).
- **Marjorie Housepian Dobkin**, *Smyrna 1922, the Destruction of a City* (New York: Newmark, 1998).
- **Mary Anne Warren**, *Gendercide: The Implications of Sex Selection, Totowa* (New Jersey: Rowman & Allanheld, 1985).
- **René Puaux**, *La mort de Smyrne. Les derniers jours de Smyrne* (Reunis et presentes par Varoujean Poghosyan) (Erevan, 2012).

- **Richard Brodie**, *The Virus of the Mind: The New Science of the Meme* (London/N. Y.: Paperback, 2004).
- **Richard Hovannisian**, *Armenia on the Road to Independence, 1918* (Los Angeles: University of California Press, 1967).
- **Richard Hovannisian**, *The Armenian Question, 1878-1923, A Crime of Silence- The Armenian Genocide Permanent Peoples' Tribunal* (London: Zed Books, 1985).
- **Richard Hovannisian**, "Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide," *The Armenian Genocide, History, Politics, Ethics* (New York: St. Martin's Press, 1992).
- **Rifat N. Bali**, *The Saga of a Friendship, Asa Kent Jennings and the American Friends of Turkey* (Istanbul: Libra Kitap, 2009).
- **Ronald Grigor Suny**, "They Can Live in the Desert but Nowhere Else," *A History of the Armenian Genocide* (New Jersey: Princeton University Press, 2015).
- **Stephen P. Ladas**, *The Exchange of Minorities, Bulgaria, Greece and Turkey* (New York: The Macmillan Company, 1932).
- **Stanford J. Shaw, Ezel Kural Shaw**, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, v. II (New York: Cambridge University Press, 1977).
- **Susan Brownmiller**, *Against Our Will: Men, Women, and Rape* (New York: The Random House Publishing Group, 1975).
- The Genocide of the Ottoman Greeks, Studies on the State-Sponsored Campaign of Extermination of the Christians of Asia Minor (1912-1922) and its Aftermath: History, Law, Memory: Edited by **Tessa Hofmann, Matthias Bjørnlund, Vasileios Meichanetsidis** (New York & Athens: Aristide D. Caratzas, 2011).
- **Vahagn Dadrian**, *Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict* (New Brunswick: Transaction Publishers, 1999).
- **Vahagn Dadrian**, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the; Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict* (New Brunswick: Transaction Publishers, 1999).

- **Αντζελ Κουρτιαν**, ΕΡΜΕΝΙ Τρεις μαρτυρίες Αρμενίων για τη γενοκτονία Εισαγωγή: Μιχάλης Χαραλαμπιδής Βιβλιοπωλείον της «Εστίας» Ι.Δ Κολλαρου και Σιας Α. Ε (Αθήνα, 1990).
- “Το Σφαγείο της Σμύρνης,” *Εμπρός*, 4 Σεπτεμβρίου, 1922.
- **Α. Θωμοπούλου**, Σμύρνη. Ο εξαστισμός μίας μικρασιατικής πόλης στο Σμύρνη (Αθήνα, 2008).
- **Γεώργιος Τρακάκης**, *Η βιομηχανία εν Σμύρνη και εντη ελληνική Μικρασία: Οικονομική μελέτη* (Σμύρνη: Τροχαλία, 1920).
- **Γιάννης Καψής**, 1922, *Η Μαύρη Βίβλος: οι μαρτυρικές καταθέσεις των θυμάτων, που δεν δημοσιεύθηκαν ποτέ: ιστορικό ντοκουμέντο* (Αθήνα: Νέα Σύνορα, 1992).
- **Θεοφάνης Μαλκίδης**, *Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος*, (Λευκωσία: Εκδόσεις Αιγαίου, 2010).
- **Θεοφάνης Μαλκίδης**, Ο Ελληνισμός της Μικράς Ασίας και το κεμαλικό κίνημα. Πρακτικά Συνεδρίου Στ' Πανελλήνιου Συνεδρίου για τον Ελληνισμό της Μικράς Ασίας. Ο Ελληνισμός της Μικράς Ασίας από την Κλασική Αρχαιότητα έως τον εικοστό αιώνα. Πολιτική ιστορία και ιστορία του πολιτισμού (Θεσσαλονίκη: Αριστοτέλειο Πανεπιστήμιο Θεσσαλονίκης, 2002).
- **Ιστορία του Ελληνικού Έθνους** (Αθήνα: Εκδοτική Αθηνών, 1977).
- **Ιωάννης Χασιώτης**, *Οι διωγμοί των Ελλήνων και η γενοκτονία στο Σμύρνη. Μικρασία* (Αθήνα: Κυκλοφορεί, 2006).
- **Οι Έλληνες στη Μικρασία** (Αθήνα, 1997).
- **Σαμβέλ Ραμαζιάν**, *Ιστορία των Αρμενο-Ελληνικών στρατιωτικών σχέσεων καί συνεργασίας* (Αθήνα, 2010).
- **Τεχμινε Μαρτογιαν**, Η ανέκδοτη μαρτυρία ενός Αρμένιου αυτόπτη μάρτυρα για την καταστροφή της Σμύρνης, *Τετράδια: Πολιτικού διαλόγου έρευνας και κριτικής*, φθινόπωρο 2022, χειμώνας 2023.
- **Χρήστος Σωλομονίδης**, *Σμύρνης Χρυσόστομος* (Αθήνα: Ειρμός, 1993).
- **Χρήστος Σωλομονίδης**, *Η Εκκλησία της Σμύρνης* (Αθήνα, 1960).
- Τα τετράδια Της **Άντζελ Κουρτιαν** (Μνήμες από τη Μικρασία, 1915-1924), Επιμέλεια - Πρόλογος Κατερίνα (Αθήνα: Πλασσαρα Πλεθρον, 1980).

Վ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾ- ՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

- «Զմիւռնահայ կեանքը զինադադարէն յետոյ, Ահաւոր փլուզումը», *Նոր օր*, 3 (1924):
- 100 տարի Փոքր Ասիոյ աղէտէն, *Ազատ օր* օրաթերթ, բացառիկ 2022:
- **Ալբերտ Խառատյան**, «Զմյուռնիայի հայ գաղթօջախը եղեռնի տարիներին», Հայոց Մեծ եղեռն-90, *Հողվածների ժողովածու* (Երևան, ԵՊՀ, 2005):
- **Ալբերտ Խառատյան**, «Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ ազգաբնակչության տեղահանումների շուրջ (1915-1916 թթ.)», *Պատմաբանասիրական հանդես* 1 (2016):
- **Աննա Վարդանյան, Թեհմինե Մարտոյան**, «Ճապոնական նավի հետագծով. Զմյուռնիայի հայերի և հույների փրկուղին», *Յեղասպանագիտական հանդես* 8 (2), 2020:
- **Արամ Ալավերդյան**, «Ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված քեմալականության դրույթների մշակումը Էրզրումի 1919 թ. համաժողովում», *Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, հոդվածների ժողովածու (Երևան, Գիտություն, 2011):
- *Արեւ* օրաթերթ, քաղաքական, գրական եւ տնտեսական (Գահիրէ, 19 յունուար, 1934):
- **Գևորգ Վարդանյան**, «Լոզանի կոնֆերանսն ու «Թուրքիայի և Հունաստանի բնակչության փոխանակման վերաբերյալ պայմանագիրը»», *Մխիթար Գոշ գիտամեթոդական հանդես*, հասարակական գիտություններ 4 (28):
- **Գևորգ Քիլիմջյան**, «Երիտթուրքերի ազգային քաղաքականության հարցի շուրջը», *Լրաբեր հասարակական գիտությունների* 8 (1970):
- **Գևորգ Քիլիմջյան**, «Թուրքիոնական հարաբերություններն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1913-1914)», *Լրաբեր հասարակական գիտությունների* 10 (1976):
- **Գոհար Խանումյան**, «Էսթեր Փոլ Լավջոյ. ամերիկացի բժշկուհու փորձառությունը Զմյուռնիայի աղետի ժամանակ», *Յեղասպանագիտական հանդես* 10 (2), 2022:

- **Էդիտա Գզոյան**, «Հայոց ցեղասպանության ժխտումը՝ որպես հայերի հանդեպ ռասիզմի դրսևորում. Թուրքիայի պատասխանատվության հարցը միջազգային իրավունքում», *Յեղասպանագիտական հանդես* 2 (2), 2014:
- **Թեհմինե Մարտոյան**, «Զմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր)», *Հայագիտության հարցեր* (2014):
- **Թեհմինե Ռ. Մարտոյան**, «Հույների ցեղասպանության պատմության հիմնահարցը հայ պատմագրության մեջ», *Յեղասպանագիտական հանդես* 7 (1), 2019:
- **Թեհմինե Ռ. Մարտոյան**, «Օսմանյան պետության սահմաններից դուրս. հայերի բնաջնջումը Իրանի Խոյ ու Սալմաստ քաղաքներում 1914-1915 թթ.», *Յեղասպանագիտական հանդես* 7 (2), 2019:
- **Թեհմինե Մարտոյան**, «1922 Սեպտեմբեր. Զմյուռնիայի հայերի եւ յոյների բնաջնջումը եւ քրիստոնեաբնակ թաղամասերի հրկիզումը», *Հայկազյան հայագիտական հանդես* 41 (2021):
- **Թեհմինե Ռ. Մարտոյան**, «Զմյուռնիայից Միտիլինի. Մկրտիչ Ավետյանի վերապրման պատմությունը», *Յեղասպանագիտական հանդես* 10 (2), 2022:
- **Թեհմինե Մարտոյան, Աշոտ Մկրյան**, «Տարագիր արցախցիները Զմյուռնիայում», *Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրապրու* 29 (1), 2023:
- **Կարինե Նալչաջյան**, «Յեղասպանությունը՝ որպես հոգեբանական ֆենոմեն», Հայոց Մեծ եղեռն-90, *Հողվածների ժողովածու* (Երևան, ԵՊՀ, 2005):
- **Հասմիկ Աբրահամյան**, «Վահե Փանոսյան. ցեղասպանության հոգեբանությունը», *Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր*, հատոր 10-11 (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005):
- **Հասմիկ Գրիգորյան**, «Ինքնասպանությունը՝ որպես մարզինալ մշակույթ Հայոց ցեղասպանության համատեքստում», *Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, VIII, հողվածների ժողովածու (Երևան, Լուսակն, 2012):
- **Հարություն Մարության**, «Թուրքերի կողմից հայերի փրկության խնդիրը Յեղասպանության տարիներին Հոլոքոստի

ուսումնասիրության լույսի ներքո», *Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հարուցում*, Միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ (Երևան, Գիտություն, 2015):

- **Հարություն Մարության**, «Հայոց ցեղասպանության և Հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», *Պատմաբանասիրական հանդես* 187, no. 2 (2011):
- **Հարություն Մարության**, «Հայոց ցեղասպանության տարիներին հայերի իրական և կեղծ փրկության խնդրի շուրջ», *Լրաբեր հասարակական գիտությունների*, no. 2 (2018):
- **Հրաչ Բարթիկյան**, «Հունական «Հիդրա» հանրագիտարանը Հայաստանի և հայերի մասին», *Պատմա-բանասիրական հանդես* 2 (1981):
- **Հրաչ Բարթիկյան**, «Ռուսաստանի և Խորհրդային Միության հույները: Վերաբնակեցումներ և տեղահանություններ», *Պատմաբանասիրական հանդես* 2-3 (1999):
- **Մանվել Ջուլայան**, ««Դեվչիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական և հայկական աղբյուրների», *Պատմա-բանասիրական հանդես* 2-3 (1959):
- Մատենաշար Դուրեան Յանձնախումբի, թիւ 3, 8 (Նիւ Եորք, 1934):
- **Մելինե Անումյան**, «Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում (1919 թ.)», *Բանբեր Հայաստանի արխիվների* I (107), 2006:
- **Յունահայ տարեգիրք**, 1928, Բ տարի, *Նոր օր*, Աթէնք:
- **Նարինե Հակոբյան**, «1894-96 թթ. արևմտահայերի կոտորածներն արևմտյան անգլալեզու պատմագիտական գործերում (1970-ական-2010-ական թթ.)», *Յեղասպանագիտական հանդես* 8 (2), 2020:
- **Ռեգինա Գալուստյան**, «Մուստաֆա Քեմալի 1927 թ. ճառը՝ որպես թուրքական պատմագրության կառուցման հիմնաքար», *Յեղասպանագիտական հանդես* 2 (2), 2014:
- **Ռոբերտ Ա. Թաթոյան**, «Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցի շուրջ», *Յեղասպանագիտական հանդես* 10 (2), 2022:

- **Սեդա Բուզիկանեան**, Յակոբ Տէրենց, «Իզմիրի աղէտը եւ մեծ հրդեհին մանրամասնութիւնները», *Ազգ օրաթերթ* 8, 2007:
- **Սուրեն Մանուկյան**, «Քրեական հանցագործների օգտագործման խնդիրը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ», *Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ*, VIII, հոդվածների ժողովածու (Երևան, Լուսակն, 2012):
- **Քնարիկ Ավագյան**, «ԱՄՆ-ի հայերի մասնակցությունն ու նպաստը կիլիկյան կամավորական շարժմանը (1916–1920) (1918 թ. Արարայի ճակատամարտում «Հայկական լեգեոնի» տարած հաղթանակի 100-ամյակի առթիվ)», *Պատմաբանասիրական հանդես* 2 (2018):
- **Albert Kharatian**, “The Armenian Communities of Smyrna and the Aegean Region from the Middle Ages to the Nineteenth-Century Tanzimat,” *Armenian Smyrna/Izmir, The Aegean Communities*, edited by R. Hovannisian (California: C. Mesa, 2012).
- **Berta Morley**, “The Smyrna Disaster,” *The New Armenia*, v. XIV, November–December, 1922.
- **Claudia Card**, “Genocide and Social Death,” in *the Feminist Philosophy and the Problem of Evil* (Bloomington: Wiley, 2003).
- **E. Grantham**, “The Betrayal of Our Faith in the Near East,” *Asia*, February, 1923.
- From the Chargé d’Affaires at the Embassy in Constantinople (Radowitz) to the Reichskanzler (Bethmann Hollweg), Report No. 703, Pera, 13 November 1916.
- **“Japanese at Smyrna,”** *Boston Globe* (Boston), 3 December 1922.
- **Jennifer Balint**, “Rape as a tool of Genocide” in *the Encyclopedia of Genocide*, v. II (Oxford: ABC-CLIO, 1999).
- **Tehmine Martoyan**, “Denying the Possibility of Annihilation during Genocide: A Case Study of the Armenians and Greeks, 1915–1922,” *New Perspectives on the Genocide of the Greeks in the Ottoman Empire, 1913–1923*, edited by George N. Shirinian (Chicago, IL: Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2019).

- **Tehmine Martoyan**, “The Destruction of Smyrna in 1922: An Armenian and Greek Shared Tragedy,” *Genocide in the Ottoman Empire, Armenians, Assyrians, and Greeks, 1913-1923*, ed. George N. Shirinian (New York: Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2017).
- **Vahakn Dadrian**, “*The Determinants of the Armenian Genocide*,” working paper GS 02 (Yale Center for International and Area Studies, H.F. Guggenheim Foundation, 1998).
- **William Linn Westermann**, “Who are the Turks?” *Asia*, The American Magazine on the Orient, December 1922.

VI. ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- https://www.un.org/en/genocideprevention/documents/atrocity-crimes/Doc.1_Convention%20on%20the%20Prevention%20and%20Punishment%20of%20the%20Crime%20of%20Genocide.pdf
- <http://www.genocide-museum.am/arm/23.10.2020.php>
- <http://www.genocide-museum.am/arm/23.10.2020.php>
- <https://www.youtube.com/watch?v=bFn9zEAOuHY>
- <https://www.aa.com.tr/tr/gundem/cumhurbaskani-erdogan-yunanistana-tek-cumlemiz-var-izmiri-unutma/2675987>
- <http://www.genocide-museum.am/arm/17.09.22.php>
- <http://akunq.net/am/?p=17711>
- <https://www.lifo.gr/san-simera/i-smyrni-kapote-mesa-apo-77-spanies-eikones>
- <http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/WebStart-En?OpenFrameset>
- <http://hyetert.blogspot.com/2012/01/izmir-1922-hristiyan-hayat-ogun-izmir.html>
- http://www.kentvebellek.com/guzel-izmir_31.html
- <http://akunq.net/am/?p=33647>
- <http://www.genocide-museum.am/arm/18.02.2021.php>
- http://www.greece.org/main/index.php?option=com_content&id=59&Itemid=82
- <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/28545/?lang=1>

- <https://www.nytimes.com/1922/09/18/archives/smyrnas-ravagers-fired-on-americans-ymca-workers-were-held-up-and.html>
- http://hermes-ir.lib.hit-u.ac.jp/rs/bitstream/10086/28545/1/chichukai0002301350.pdf?fbclid=IwAR1ofuy_YeODB8K1ZzCrc4SwS0ZaqDAsF8TnHcGtM3b9Uaqfl_iS9sRWfvl
- <https://hellenicresearchcenter.org/education/lectures-2/destruction-of-smyrna/>
- <https://www.kathimerini.gr/culture/cinema/562416259/i-neapatrída-i-sygklonístiki-istoría-ton-proton-armenion-stin-ellada/>
- https://www.tert.am/am/news/2017/08/15/izmir/2457941?fbclid=IwAR3BXISIW0Nc32DHgqAWjot1HFXaz0I_vkh-uUB6BvaPIQ1ElutAN_X_kxk
- <http://www.genocide-museum.am/arm/1.19.01.23.php>
- https://genocidescholars.org/wp-content/uploads/2022/10/IAGS-EB-Statement-Armenia-Azerbaijan-Oct-2022_update.pdf
- <https://genocidescholars.org/wp-content/uploads/2023/02/IAGS-EB-AB-Statement-on-Azeri-Blockade-of-Artsakh.pdf>
- <http://www.genocide-museum.am/arm/01.8.23.php>
- https://un.mfa.am/file_manager/un_mission/Preliminary%20Opinion%20-%2
- https://www.lemkininstitute.com/_files/ugd/9bc553_ceb61de5918f4670bec931b3a79d1baa.pdf
- <https://www.youtube.com/watch?v=7KIQMRQ8uRk>

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աարոն Ս. Մերիլ – 121
Աբաս Ա – 26
Աբգար Տեր-Գալստյան – 91
Աբդուլ Համիդ – 182, 183, 191
Աբրահամ Հարթունյան – 80
Ադոնիս – 24
Ալբերտ Խառատյան – 27, 32, 37, 43, 44, 279, 288
Ալեքսանդր Խատիսյան – 55, 136
Ալիս Թորբան – 20, 145, 206, 278
Ալիս Վահրիմու Նդերիտու – 177
Ալմա Յուհանսոն – 161, 278
Ահմեդ (Փեհլիվան) Քադրի – 42
Ահմեդ Ջեմալ – 42
Ադասար – 28
Անդրուպոմոս – 40
Անեստոս Սերրաս – 210
Անժել Քուրոյան – 149
Աննա Հարլոու-Բիրզ – 142
Աշճը Հակոբ – 73
Աշոտ Օհանյան – 203
Ասա Ջեննինգս – 139
Ավագ Վարդանյան – 73
Ավետիս Ալլահվերդյան – 73
Արամ Հրաչիկի Սիմոնյան – 5
Արթին Քեմջյան, տե՛ս Գայլ Արթին – 91
Արիստոտել Օնասիս – 89
Արման Կիրակոսյան – 11, 280
Արմենակ Կեմճեան – 91
Արշակունի Պետրոսյան – 201
Արսեն Ավագյան – 11
Արսեն Չավուշ – 73
Արտեմ Ուլունյան – 12
Արփիինե Բարթիկյան – 114, 202
Աֆրոդիտե – 24
Բարդուղիմեոս քն.
Հակոբյան – 23
Բարնետ – 171
Բեթման Հուլվեգ – 44
Բենի Մորիս – 13
Բիզանդ Ճամպազեան – 20, 72, 146, 278
Բյուզանդ Մորուքյան – 198
Գաբրիել Նորատունկյան – 130
Գաբրիել Աբերեան – 91
Գալուստ Կոստանդյան – 32
Գառնիկ Ագսարլեան – 91
Գառնիկ Ստեփանյան – 34, 280
Գեղամ Խաչատրյան – 203
Գևորգ Վարդանյան – 12, 129, 157, 280, 288

Գևորգ Տեր-Գալստյան – 91,
208
Գևորգ Քիլիմջյան – 12, 280,
288
Գլադսթոն – 109
Գոլթթ – 46
Գորդոն – 92, 93
Գուրգեն Բեկզադյան – 71
Գրիգոր Էֆենդի
 Մնացականյան – 91, 208
Գրիգոր Նուպարյան – 32
Գրիգոր Չիլինկիրյան – 32
Գրիգոր Տետեյան – 32
Դամադ Ֆերիդ փաշա – 49
Դան Յորդակաս – 145
Դակալիոն – 40
Դիմիտրիոս Կակլամանոս –
70
Դորա Սաքայան – 20, 21, 22,
278
Դրոր Ջենի – 13
Եղիազար – 28
Եղիշե Դուրյան – 67
Ենսինե Օրց – 150
Եսթեր Ստեփանյան – 205
Եվգենիդես – 148
Եփրեմ Վարդանյան – 72
Զավեն պատրիարք – 154
Զեքի բեյ – 221
Էդվարդ Հեյլ Բիերսթադթ –
21, 90

Էլեվթերիոս Վենիզելոս – 55,
70, 124, 156, 163, 184, 188,
221
Էմիլի Մակկալամ – 131, 190
Էռնեստ Հեմինգուեյ – 90
Էրիկ Հոբսբաում – 149
Թաթիկյան – 32
Թեոֆանիս Մակկիդիս – 10,
22, 280
Թորգոմ (Արսեն - Արշակ –
 Խարիտոն Նագաշյան) –
70, 71, 72, 73, 205, 225,
227, 228, 229, 230, 256
Թորոս Թորոսյան – 73
Իզմեթ փաշա – 219, 220
Իզմիրյան – 67
Իոանիս Խասիոտիս – 22
Իռա Բարթիկյան – 114, 115
Իսմայիլ Էնվեր – 41
Իրվինգ Լուիս Հորոուից – 167
Լիման ֆոն Սանդերս – 7, 44,
46
Լիսիմախոս Օեկոնոմոս – 21,
85
Լյուդ Ջորջ – 133
Լուիս Մորենո Օկամպո – 178
Խաչատուր Ճիզմեճեան – 91
Խուան Մենդեզ – 178
Խրիստոստոմոս Կալաֆատիս
– 68, 99, 101, 102, 103
Կարապետ Դարբինեան – 91

Կարապետ Խաչերյան – 21,
78, 79, 141
Կյուլման – 45
Կոնստանդին Հաճի-
դիմիտրիու – 172
Կոնստանդին Սկազիրիս –
210
Կոնստանտինոս Գեորգո-
պոլոս – 149
Կոնտիկ Մինաս – 28
Հալիդե Էդիփ Ադըվար – 51
Հակոբ Հակոբյան – 83, 281
Հակոբ Տերենց (Տեր-
Հակոբյան) – 136
Հակոբ Քոսյան – 26
Հայկ Թադիկեան – 91
Հայկ Նահապետ – 40
Հայկանուշ Նիքսայան – 209
Հայկանուշ Չեչմեջյան – 203
Հասան Ամջա – 42
Հասան Վասֆի, տե՛ս Հասան
Ամջա – 42
Հարություն Բերբերյան – 22,
207
Հարություն Սիսյան – 79
Հարություն Սվաճյան – 33
Հարություն Տետեյան – 33
Հելեն Ֆայն – 167, 175
Հենրի Մորգենթաու – 21, 93,
152, 153, 155

Հերկուլես Բոստանձողլու –
106
Հեփես Պիեռ – 29
Հիսուս Քրիստոս – 16, 17, 25,
144, 192
Հոկտեմբերիկ Ավետիքյան –
22, 208
Հոմերոս – 37
Հոռոփիկ Դարբինեան – 91
Հովհաննես Ավետարանիչ –
16
Հովհաննես
Դրասխանակերտցի – 40
Հովհաննես Ինճիկյան – 11,
281
Հովհաննես Մելքոնյան – 72,
73
Հովհաննես Չելեպ – 32
Հովսեփ վարդապետ – 28
Հրանտ Մամուրեան – 235,
265
Հրանտ Նիկոտյան – 56
Հրաչ Բարթիկյան – 11, 20,
202, 281, 290
Հրաչիկ Սիմոնյան – 11, 281
Ղազար կաթողիկոս – 28
Ղևոնդ Դուրյան (Զմապյան) –
67, 68, 72, 73, 85, 86, 88,
255, 258, 290
Ղուկաս Պալտազարյան – 33
Ճորբաջիս – 110

Ճորուքօղի – 105
Մահմուդ Ջելալ (Բայար) – 48
Մահտեսի Մարկոս – 32
Մահտեսի Պողոս – 32
Մանոլիս Մեղալոկոնոմոս –
71
Մանուկ Դարբինեան – 74
Մանվել Զուլայան – 11, 290
Մատթեոս Մամուրյան – 32,
34
Մարի Ոսկերչյան – 198
Մարիա Սադոյան – 13, 282
Մարկ Բրիստոլ – 121, 171, 172
Մարկոս Աղաբեկյան – 32, 34
Մարջորի Հուսեփյան-Դոբկին
– 144,
Մարտիրոս Սարյան – 56
Մելինե Թերզյան – 204
Մելիք Մավիսակալյան – 22,
207
Մելիքսեր Մուրադյան – 28
Մելքոն Երամեան – 28, 29
Մեհմեդ VI Վահիդեդին – 49
Մեհմեդ Թալեաթ – 41, 44, 60
Մեհմեդ Նյուրեդդին
(Սաքալլը) – 86, 99, 100,
101, 102, 170, 238, 255,
256
Մեհմեդ Ջամիլ բեյ – 217, 219
Մեհմեթ Արիֆ (Այըջը) – 169
Մեհմեթ Շերեֆ – 134

Մեյբըլ Էլիոթ – 109
Մեսրոպ Նուպարյան – 32
Միհրան Սվազլու – 126
Մինաս Ջիհանյան – 74
Միննի Միլս – 119
Միքայել Բարթիկյան – 20,
46, 47, 49, 64, 88, 97, 114,
115, 134, 202, 279
Միքայել Նալբանդյան – 35
Մկրտիչ Ավետյան – 20, 25,
26, 30, 31, 57, 81, 91, 98,
120, 207, 208, 289
Մունիր բեյ – 217, 218, 219
Մուսթաֆա Իսմեթ Ինյունյու –
124
Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրք
– 8, 15, 54, 80, 92, 95, 96,
97, 99, 185, 189, 195, 220
Մսեր Տետեյան – 32
Յակոբ վ. Քոսեան – 25, 26,
30, 38
Յովսէփ Թադիկեան – 91
Նադիր շահ – 26
Նազարեթ Ժամկոչյան – 146
Նազարեթ Ներսեսյան
(Հիլմի) – 89, 257
Նազըմ – 60
Նանակո Մուրատա-
Սավայանազի – 147
Նարինե Հակոբյան – 13, 290

- Ներսէս Գարանֆիլեան – 75,
91
- Նիկոլայ Սերբացի – 54, 282
- Նիկոլաոս Պլաստիրաս – 71
- Նիկոլաոս Պոլիտիս – 55
- Նուբար Բերբերյան – 22, 24,
206
- Նունե Բարթիկյան – 22
- Շաբաթայ Տվի – 50
- Չարլզ Դոբսոն – 110
- Պարզև Մակարյան – 206
- Պետրոս (Պիեռ) Սիմոնյան –
29
- Պերճ Ժամկոչյան – 146
- Պերճուհի Ավետյան – 22, 208
- Պողոս Թաքթաքյան – 28
- Պողոս Նուբար – 69, 136
- Պողոս Չելեբի – 28
- Պրոխորոն – 16
- Պրոմեթևս – 40
- Ջեյմս Է. Մակգրիվի – 174
- Ջեյմս Լ. Բարթըն – 150
- Ջոն Կիրակոսյան – 11, 123,
279
- Ջորջ Հորթոն – 21, 86, 93,
94, 95, 96, 101, 108, 109,
111, 118, 130, 131, 181, 197
- Ջորջ Նաթանիել Քերզոն –
125
- Ջորջ Պատակի – 174
- Ռահմի բեյ – 43, 44
- Ռենե Պյուո – 94, 100, 279
- Ռեջեփ Թայիփ Էրդողան –
14, 15, 16, 174
- Ռիչարդ Հովհաննիսյան – 11,
13, 129, 138
- Ռոբերտ Մելսոն – 167
- Ռոզ Բերբերյան-Կաչոյան –
74
- Ռոնալդ Սյունի – 13, 282
- Ռուբեն Անդրեաս
Փափազյան – 28
- Ռուբեն Կարախանյան (Քե-
մանչիստ Ռուբեն) – 146
- Ռուբեն Սաֆրաստյան – 15,
167, 168, 280, 282
- Սաթենիկ Գույումճյան – 200
- Սաիթ Չեթինօղլու – 130
- Սայիդ Հալիմ – 41
- Սարգիս Ավետյան – 22, 207
- Սարգիս Եթերյան – 200
- Սարգիս Ջրոխյան-
Ճարպիկյան – 22, 24
- Սարգիս-Միրզա Վանանդեցի
– 34
- Սելայ Էրթեմ – 122, 123
- Սևակ Ղազարյան – 13, 282
- Սթերդիադիս – 185, 186, 187
- Սիմեոն կաթողիկոս Երևանցի
– 27
- Սիմոն Կեսարացի – 28
- Սմբյուլ Բերբերյան – 202

Սոկրատես Օնասիս – 89
Ստավրոս Թերրի Ստավրի-
դիս – 147
Ստեփան Ոսկանյան – 32
Վազգեն Սադաթյան – 204
Վահագն Դադրյան – 11, 12,
166
Վահան Պարտիզպանյան –
56
Վահրամ Փափազյան – 154,
283
Վաղարշակ-Սարգիս
Հովնանյան – 33
Վերժինե Սվազյան – 22, 198,
199, 200, 283
Տեր Գալուստ քահանա – 91,
208

Տեր Հովնան Միրզայան Վա-
նանդեցի – 28
Տիգրանուհի Արթինեան – 20,
75, 279
Րեֆի Զեադ Ուլունայ – 42
Փանոս Մեսրոպ – 73
Քյազիմ բեյ – 45, 108
Քրիստինա Ալեքսանյան –
149
Օհանես (Օննիկ) Ղազերյան –
20, 56, 279
Օրան Ռաբեր – 121
Օրմանյան – 67
Ֆիլիո Հայդեմենու – 210
Ֆրիտյոֆ Նանսեն – 152

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Ադանա – 74, 145
Ադրբեջան – 14, 23, 175, 176,
177, 178, 179, 180
Ադրիանուպոլիս (Էդիրնե) –
55
Աթենք – 20, 31, 38, 55, 56,
67, 70, 72, 83, 109, 136,
145, 149, 150, 152, 154,
156, 158, 181, 202, 209
Ալաշեհիր – 30, 220
Ալբանիա – 84
Ալեքսանդրուպոլիս – 10, 149,
280
Ամերիկայի Միացյալ
Նահանգներ – 31, 181, 197
Այա Ֆոթինի – 38
Այդըն – 30, 34, 43, 169
Անգլիա – 35, 122, 222
Անկարա – 48, 55, 58, 74,
170, 171
Արաբիա – 84
Արևելյան Թրակիա – 49, 55
Արևելյան Հայաստան – 26,
27
Արևելյան Հռոմեական
կայսրություն – 49
Արևմտյան Թրակիա – 69
Արևմտյան Հայաստան – 51,
82, 206
Արցախի Հանրապետություն
– 14, 175, 179
Աֆիոն Գարահիսար – 58,
114, 230
Բալլքեսիր – 55
Բալթիմոր – 155
Բալկաններ – 49
Բալչովա – 71
Բայանդուր – 34
Բայրաքլը – 108
Բեյրութ, տե՛ս Պեյրութ – 23
Բերձոր (Լաչին) – 175, 177
Բյուզանդիա – 21, 85
Բոստոն – 61, 151, 155
Բուդապեշտ – 20
Բուլղարիա – 49, 70
Բուջա – 92
Բուրնաբադ – 108
Բրուսա – 55
Գանձակ – 28
Գերմանիա – 7, 35, 44, 45,
122
Գոդթն – 28
Դենիզլի – 25, 43, 208
Դեր Ջոր – 114
Դիդիմոտիլոս – 149
Դիքիլի – 43
Դումլուփլընար – 59
Դրապեցոնա – 163

Եվրոպա – 30, 39, 70, 93,
 121, 153, 188, 193, 196, 215
 Երեբունի – 28
 Զմյուռնիա – 5, 7, 8, 9, 10, 16,
 17, 19, 20, 23, 25, 26, 27,
 28, 29-40, 41-80, 81-136,
 137-169, 171-174, 181-223
 Էգեյան – 27, 30, 129, 152
 Էոդեմիշ – 43
 Էսքիշեհիր – 58, 130, 220
 Էվբես – 152
 Էրզրում (Կարին) – 51, 52, 53,
 59
 Թաթավլա (Ստամբուլ) – 135
 Թալաս – 75
 Թիֆլիս – 28, 34
 Թուրգուպլու – 220
 Թուրքիայի Հանրապետու-
 թյուն – 8, 9, 13, 14, 15, 49,
 50, 51, 55, 70, 83, 86, 94,
 95, 96, 124, 127, 134
 Թրակիա – 10, 49, 55, 69,
 82, 84, 151, 156, 161, 194,
 238, 280
 Իզմիր – 15, 16, 20, 25, 29,
 30, 31, 46, 47, 50, 54, 56,
 57, 58, 64, 65, 75, 79, 81,
 82, 85, 87, 88, 89, 91, 97,
 98, 100, 126, 134, 136, 145,
 151, 164, 199, 200, 201-206,
 211-213, 226-230, 235, 237,
 238, 239, 247-249, 252,
 255, 257, 258, 259, 260,
 263, 264, 265, 267, 268
 Ինոնյու – 58
 Իրան – 13, 25, 30, 35, 289
 Լավրիո – 149
 Լեոնային Ղարաբաղ – 178,
 179
 Լիբազմա – 156
 Լիբանան – 20, 23, 72
 Լոզան – 86, 123, 157, 219,
 220, 288
 Լոնդոն – 21, 70, 85, 136
 Լուրաքի – 160, 161
 Խարիլաոս – 162
 Խեյրմանքյո – 162
 Խոյ – 13
 Խորհրդային Միություն – 11
 Կանադա – 23
 Կապադովկիա – 70
 Կարին – 51, 70
 Կեսարիա – 70, 75
 Կիլիկիա – 70, 72, 82, 206
 Կիպրոս – 24
 Կոկինիա – 149, 156, 163
 Կոմոտինի – 149
 Կոստանդնուպոլիս – 21, 27,
 33, 43, 44, 45, 122, 130,
 157, 182, 191, 194, 221, 222
 Կովկաս – 14, 176

Կորդելիո, տե՛ս Քորտելիո –
91, 113, 207, 208
Կրետե – 152, 154, 156
Հալքափինար – 73
Հայաստանի Հանրապետու-
թյուն – 9, 10, 14, 15, 23,
57, 142, 176
Հայնց – 25, 73, 84, 127, 198,
200, 202, 236, 238, 241,
242, 245, 248, 251, 252,
253, 254, 260
Հարավային Կովկաս – 176
Հնդկաստան – 185, 195, 196
Հոլանդիա – 30
Հոնիական ծով – 24
Հունաստան – 3, 15, 16, 19,
23, 35, 37, 49, 51, 55, 70,
86, 114, 126, 136, 147, 148,
149, 151, 152, 153, 155,
156, 157, 158, 160, 163,
174, 181, 187, 188, 191,
199, 202, 205, 207, 213,
233
Ճապոնիա – 143, 147, 148
Մակեդոնիա – 84, 151, 183
Մայնի Ֆրանկֆուրտ – 122
Մանաման – 27
Մանդալիաթ – 28
Մանիսա – 27, 30, 32, 34, 43,
56, 199, 229, 244, 263
Մանչեսթեր – 30

Մարսել – 30, 124
Մեծ Բրիտանիա – 69, 123,
133, 172, 185, 195
Մերձավոր Արևելք – 21, 53,
90, 93, 94, 95, 109, 150,
165, 172, 181, 182, 187,
192, 193, 195
Միտիլինի – 73, 98, 140, 152,
156, 159, 160, 208, 209
Մոսկվա – 57
Մոսուլ – 46
Նազլի – 38
Նեոս Կոսմոս – 149
Նիդերլանդներ – 23
Նիկոմեդիա – 130
Նյու Յորք – 31, 67, 155, 174
Նյու Ջերսի – 174
Նոր Եփեսոս – 185
Նոր Զմյուռնիա – 20, 23
Նուբարաշեն – 23, 24
Շաշիգետ – 28
Չեխիա – 23
Չեչմե (Կրիսի) – 71
Պանդերմա – 130, 218
Պատմոս կղզի – 16
Պեյրուս – 20, 56, 61
Պիրեա – 142, 150, 152, 154,
156
Պոնտոս – 10, 20, 82, 174, 191
Պրուսա – 130
Ջուլա – 28

Ռումելիա – 49
 Ռումինիա – 93
 Ռուսաստան – 11, 35, 57
 Սալիիլի – 220
 Սալմաստ – 13, 289
 Սալոնիկ – 23, 43, 44, 149,
 152, 154, 156, 161, 162,
 202, 207
 Սամաթյա – 135
 Սամոս – 156
 Սամսուն – 15
 Սանգարիոս (Սաքարիա) – 58
 Սուրբ Էջմիածին – 28, 283
 Սեբաստիա (Սվազ) – 53, 59
 Սենեմեն – 34
 Սևր – 55
 Սիրիա – 70, 84
 Սիրոս – 149
 Ստոկհոլմ – 154
 Վաշինգտոն – 93
 Վասպուրական – 34, 35
 Վենետիկ – 30
 Վիեննա – 20, 26
 Վուզլա – 97
 Տորոնտո – 90, 20,
 Տրապիզոն – 51
 Փարիզ – 24, 29, 49, 69, 72,
 126
 Փոքր Ասիա – 10, 16, 20, 30,
 31, 55, 70, 82, 85, 86, 93,
 94, 106, 117, 124, 125, 126,
 129, 156, 157, 174, 181,
 184, 185, 188, 191, 197
 Քասաբա – 89
 Քըրքաղաչ – 43
 Քիոս – 71, 72, 152, 156, 268
 Քիֆիսիա – 163
 Քյոթահիա – 130
 Քորտելիո – 56, 91
 Քուշադաս – 43
 Քուրթուլուշ – 135
 Քսանթի – 149
 Օսմանյան կայսրություն – 11,
 12, 14, 140, 168, 173, 182,
 183, 190, 193, 290
 Ֆիլադելֆիա – 155
 Ֆիքս (Դուրդուֆի) – 159, 160,
 163

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԵԿՄԻՆԵ ՌՈՒԲՐԻԿԻ ՄԱՐՏՈՅԱՆ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ (1922)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ք. Վարդանյանի
Սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Տպագրված է « Մոնոպրինտ» ՍՊԸ:
Ք. Երևան, Անդրանիկի փ. 96, 8 բն.:

Ստորագրված է տպագրության՝ 12.08.2024:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 19 + 44 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y su.am



ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԱՍՐՈՒՄԻ
ԵՐԵՎԱՆ 2024
publishing.ysu.am